[illegible]

891.71
S-80

ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ
ԱՌԻԹՈՎ

ԹԱՐԳՄ. ՍՏ. ՁՈՐՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1928

891.71
Տ-80

19 NOV 2010

ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

1. ՍԵՎԱՍՏՈՊՈԼ
2. ՊՈԼԻԿՈՒՇԿԱ
3. ԼՅՈՒՑԵՐՆ

Թարգմ. ՍՏ. ԶՈՐՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1928

3.08.2013
19 NOV 2010
ЗУФА Арм.ССР
2343-54

Գրառեպվար № 890 բ. Հ. 998 Տիրաժ 2000

Պետհրատի 2-րդ տպարան Յերևանում.—Պատ. № 823

ՍԵՎԱՍՏՈՊՈԼԸ

1855 թվի մայիսին

I.

Արդեն վեց ամիս էր անցել այն օրից, յերբ առաջին ռումբը վորոտաց Սևաստոպոլի բաստիոններից ու տակնուվրա արավ հողը թշնամու աշխատանքների վայրում, և այդ օրվանից հազարավոր ռումբեր, հրետագնդեր ու գնդակներ անընդհատ թռչում եին բաստիոններից դեպի խրամատները և խրամատներից դեպի բաստիոնները, ու մահվան հրեշտակն անդադար սավառնում էր նրանց գլխավերև։

Հազարավոր մարդկային ինքնասիրություններ վիրավորվել եին արդեն, հազարավորները՝ բավարարվել, փքվել, հազարավորները—հանգստացել մահվան գրկում։ Բայց ելի նույն ձայներն են լսվում բաստիոններից, ելի պայծառ յերեկոներին նույն ակամա սրտդողով ու ահով են նայում Ֆրանսիացիներն իրենց բանակից Սևաստոպոլի բաստիոնների քանդքնդորված դեղնավուն հողին, նրանց վրա շարժվող մեր նավաստիների սև կերպարանքներին և համրում հրակնատները (ամբրազուր), վորոնցից անկվել-նայում են թուջե թնդանոթներ, նույնպես հեռագրի դիտանոցից նավային յենթասպան հեռադիտակով նայում է Ֆրանսիացիների խայտաբղետ կերպարանքներին, նրանց մարտկոցներին, վրաններին, զորասյուներին, վոր շարժվում են կանաչ սարով, և այն ծխերին, վոր բռնկում են խրամատներում, և ելի շարունակ նույն յեռանդով աշխարհի տարբեր կողմերից մարդկանց տարբեր բազմություններ, ել ավելի տարբեր ցանկություններով, շտապում

են այդ ճակատագրական վայրը։ Իսկ դիմանագետների կողմից չլուծված խնդիրը դեռ չի լուծվում վառոդով ու արյունով։

II

Պաշարված Սևաստոպոլի բուլվարում, տաղավարի մոտ նվագում եր գնդի յերաժշտախումբը, և զինվորականների ու կանանց բազմությունները տոնական տեսքով շրջում եին ծառուղիներում։ Գարնան պայծառ արևն առավոտից դուրս գալով լուսավորեց անգլիական խրամատներում կատարվող աշխատանքները, հետո՝ բաստիոնները, ապա քաղաքը, Նիկոլայևսկի զորանոցը և, ամենքին հավասարապես ուրախ լույս տալով, այժմ իջնում եր դեպի հեռավոր կապույտ ծովը, վոր հանդարտ որորվելով, շողշողում եր արծաթե փայլով։

Մի բարձրահասակ, փոքր ինչ կռացած հետևակ սպա, հագնելով վոչ բոլորովին ճերմակ, բայց մաքուր ձեռնոցները, դուրս յեկավ Մորսկոյ փողոցի ձախ կողմը շինված նավաստիական փոքրիկ տնակներից և, մտախոհ իր առջևը նայելով՝ գնաց դեպի բուլվար։ Նրա վոչ գեղեցիկ դեմքը արտահայտում եր վոչ այնքան մտավոր մեծ ընդունակություն, վորքան՝ բարեհոգություն, լրջմտություն և ազնվություն։ Նա վայելչակազմ չեր, վոչ ել այնքան ճարպիկ և ամոթխած եր կարծես իր շարժումների մեջ։ Նրա գլխինը՝ քիչ գործածված գլխարկ եր, հագինը՝ նուրբ, փոքր ինչ ոտարոտի մուգ-մանիշակագույն շինել, վորի տակից յերևում եր ժամացույցի վոսկե շղթան, վոտներինը՝ շտրիպկայով վարտիք եր և մաքուր, փայլուն հորթի կաշվից կարած կոշիկներ։ Նա պետք է վոր կամ գերմանացի լիներ, յեթե դիմագծերը չմատնեին նրա զուտ ռուսական ծագումը, կամ համհարզ, կամ գնդի բնակապետ (բայց այդ դեպքում նա պետք է խթաններ ունենար), կամ մի սպա, վոր պատերազմի պատճառով, ժամանակա-

վորապես տեղափոխվել է հեծելազորից, գուցե և գվարդիայից։ Նա իսկապես վոր հեծելազորից տեղափոխված սպա եր, և այժմ դեպի բուլվար գնալով մտածում եր այն նամակի մասին, վոր հենց նոր ստացել եր նախկին ընկերոջից (հիմա պաշտոնաթող, կալվածատեր Տ. նահանգում) ու նրա կնոջից՝ կապուտաչյա Նատաշայից՝ իր լավ բարեկամուհուց։ Նա հիշում եր նամակի այն տեղը, ուր ընկերը գրում եր։

«Յերբ Ինվալիդը բերում են, Պուպկան (այսպես եր անվանում պաշտոնաթող ուլանն իր կնոջը) իրեն նետում է նախասենյակ, առնում է թերթն ու վազում զրուցարանը, հյուրասենյակը (ուր, հիշում ես փառավոր ժամանակ եինք անցնում ձմրան յերեկոները), յերբ գունդը գտնվում եր մեր քաղաքում) և այնպիսի հետաքրքրությամբ է կարդում ձեր հերոսական գործի մասին, վոր յերևակայել չես կարող։ Նա հաճախ քո մասին ասում է. «Այ, Միխայլովն, ասում է, հոգի է։ Յես պատրաստ եմ համբուրել նրան, յերբ տեսնեմ. Նա կռվում է բաստիոնների վրա և անպայման Գեորգիի խաչ կստանա, և նրա մասին լրագրներում կգրեն...» և այլն, և այլն... այնպես վոր յես ուղղակի խանդում եմ»։ Մի այլ տեղում նա գրում եր. «Լրագրները մեզ հասնում են շատ ուշ, և թեև բանավոր նորությունները շատ են, բայց ամեն բանի չի կարելի հավատալ։ Որինակ, քեզ ծանոթ յերաժշտասեր որիորդները յերեկ պատմում եին, վոր Նապոլեոնն արդեն բռնված է մեր կազակների կողմից և ուղարկված է Պետերբուրգ. բայց դու գիտես, թե վորքան կարող եմ հավատալ այդ բանին։ Իսկ Պետերբուրգից յեկած մեկը (նա առանձին հանձնարարությունների պաշտոնյա է մինիստրի մոտ, մի շատ հաճելի մարդ և այժմ, յերբ քաղաքում վոչ-վոք չկա, մեզ համար մի այնպիսի ռեսուրս է, վոր յերևակայել չես կարող...) պատմում է հաստատապես, վոր մերոնք գրավել են Յեվպատորիան,

այնպես վոր ֆրանսիացիներն էլ կապ, հաղորդակցություն չունեն Բալակլավայի հետ, և վոր մեր կողմից այդտեղ սպանվել է 200 հոգի, իսկ ֆրանսիացիներից՝ մինչև 15 հազար մարդ։ Այդ պատճառով կլինս այնպիսի խանդավառ տրամադրության մեջ ընկավ, վոր ամբողջ գիշեր խմեց, և ասում է, վոր դու անպայման, իր նախազգացումով, յեղել ես այդ կռվում ու աչքի ես ընկել»։

Չնայած այն խոսքերին ու արտահայտություններին, վոր յես դիտմամբ ընդգծեցի, և՝ նամակի ամբողջ տոնին, փոխ-կապիտան Միխայլովն անասելի տխրագին հաճույքով եր հիշում իր գունատ բարեկամուհուն և այն, թե ինչպես ինքը յերբեմն նստում եր նրա հետ զրուցարանում ու խոսում զգացումների մասին· հիշում եր իր բարի ընկեր-ուլանին, թե ինչպես նա բարկանում ու տանուլ եր տալիս, յերբ նրանք, պատահում եր, առանձնասենյակում դրամով խաղ եին սարքում, և ինչպես կինը ծիծաղում եր նրա վրա· հիշում եր այդ մարդկանց՝ իրեն ցույց տված բարեկամությունը (գուցե և, նրան թվում եր, թե մի ինչ վոր ավելի բան կար գունատ բարեկամուհու կողմից)· այս բոլոր դեմքերը՝ շրջապատող հանգամանքներով անցնում եին նրա յերևակայության միջով զարմանալի քաղցր սփոփիչ հիշողությամբ, և նա գոհունակությամբ ժպտալով, ձեռը դիպցրեց գրպանին, ուր գտնվում եր նրա համար այնքան սիրելի նամակը։

Փոխ-գնդապետ Միխայլովը հիշողություններից հետո ակամա տարվեց յերազանքներով ու հույսերով· «Յեվ վորքա՜ն կզարմանա ու կուրախանա Նատաշան,—մտածում եր նա նեղլիկ նրբանցքով քայլելով,—յերբ հանկարծ Ինվալիդում կարդա մի նկարագրություն, թե ինչպես յես առաջինը բարձրացել եմ թնդանոթի վրա և Գեորգի (շքանշան) եմ ստացել։ Կապիտանի աստիճան յես կստանամ առաջուց ներկայացվածի համաձայն։ Հետո շատ հեշտությամբ, հենց այս տարի, կարող եմ մայորություն ստանալ, վորովհետև շատ են սպանվել, և դեռ, հավանական է, շատերին էլ սպանեն այս կռվում։ Յեվ հետո արդեն ինձ, վորպես հայտնի մարդու, գունդ կհանձնեն... փոխ-գնդապետ... Աննայի շքանշանը վզիս... գնդապետ...»—և նա արդեն գեներալ եր, ու Նատաշային, իր ընկերոջ այրուն, արժանացնում եր ընդունելության (նրա յերազանքների համաձայն՝ ընկերը այդ ժամանակ մեռած պիտի լիներ), յերբ բուլվարի յերաժշտության ձայնը հասավ նրա ականջին, տեսավ մարդկանց բազմությունները, և նա բուլվար մտավ էլի վորպես առաջվա հետևակ փոխ-կապիտանը։

III

Նախ մոտեցավ տաղավարին, վորի մոտ կանգնած եին յերաժիշտները, վորոնց առջև նոտակալների (պյուպիտրների) փոխարեն նույն գնդի այլ զինվորներ բաց արած բռնել եին նոտաները, և վորոնց շուրջը՝ ավելի նայելու քան լսելու համար, շրջան եին կազմել գրագիրները, յունկերները և դայակները՝ յերեխաների հետ։ Տաղավարի շուրջը կանգնել, նստել և շրջում եին մեծ մասամբ ծովայիններ, համհարզներ ու սպաներ՝ սպիտակ ձեռնոցներով։ Բուլվարի մեծ ծառուղով գնում-գալիս եին ամեն տեսակի սպաներ ու ամեն տեսակի կանայք՝ շատ քչերը գլխարկով, մեծ մասամբ գլխաշոր կապած (կային և առանց գլխաշորի ու առանց գլխարկի), բայց կանանցից վոչ մեկը պառավ չեր, այլ զարմանալի կերպով բոլորն էլ ջահել։ Ներքև՝ սպիտակ ակացիների բուրալից ծառուղիներում շրջում և նստոտել եին առանձնացած խմբակներ։

Վոչ-վոք առանձնապես գոհ չեղավ փոխ-կապիտան Միխայլովին բուլվարում հանդիպելով, բացառությամբ, գուցե, նրա գնդի կապիտան Ոբժոգովից և կապիտան Սուսլիկովից, վորոնք ջերմորեն սեղմեցին նրա ձեռը· բայց

այնպես որ ֆրանսիացիներն էլ կապ, հաղորդակցություն չունեն Բալակլավայի հետ, և որ մեր կողմից այդտեղ սպանվել է 200 հոգի, իսկ ֆրանսիացիներից՝ մինչև 15 հազար մարդ։ Այդ պատճառով կլինս այնպիսի խանդավառ տրամադրության մեջ ընկավ, որ ամբողջ գիշեր խմեց, և ասում է, որ դու անպայման, իր նախազգացումով, յեղել ես այդ կռվում ու աչքի ես ընկել»։

Չնայած այն խոսքերին ու արտահայտություններին, որ յես դիտմամբ ընդգծեցի, և՝ նամակի ամբողջ տոնին, փոխ-կապիտան Միխայլովն անասելի տխրագին հաճույքով եր հիշում իր գունատ բարեկամուհուն և այն, թե ինչպես ինքը յերբեմն նստում եր նրա հետ զրուցարանում ու խոսում զգացումների մասին. հիշում եր իր բարի ընկեր-ուլանին, թե ինչպես նա բարկանում ու տանուլ եր տալիս, յերբ նրանք, պատահում եր, առանձնասենյակում դրամով խաղ եին սարքում, և ինչպես կինը ծիծաղում եր նրա վրա. հիշում եր այդ մարդկանց՝ իրեն ցույց տված բարեկամությունը (գուցե և, նրան թվում եր, թե մի ինչ որ ավելի բան կար գունատ բարեկամուհու կողմից). այս բոլոր դեմքերը՝ շրջապատող հանգամանքներով անցնում եին նրա յերևակայության միջով զարմանալի քաղցր սփոփիչ հիշողությամբ, և նա գոհունակությամբ ժպտալով, ձեռը դիպցրեց գրպանին, ուր գտնվում եր նրա համար այնքան սիրելի նամակը։

Փոխ-գնդապետ Միխայլովը հիշողություններից հետո ակամա տարվեց յերազանքներով ու հույսերով. «Յեվ որքա՜ն կզարմանա ու կուրախանա Նատաշան,— մտածում եր նա նեղլիկ նրբանցքով քայլելով,— յերբ հանկարծ Ինվալիդում կարդա մի նկարագրություն, թե ինչպես յես առաջինը բարձրացել եմ թնդանոթի վրա և Գեորգի (շքանշան) եմ ստացել։ Կապիտանի աստիճան յես կստանամ առաջուց ներկայացվածի համաձայն։ Հետո շատ հեշտու-

թյամբ, հենց այս տարի, կարող եմ մայորություն ստանալ, որովհետև շատ են սպանվել, և դեռ, հավանական է, շատերին էլ սպանեն այս կռվում։ Յեվ հետո արդեն ինձ, որպես հայտնի մարդու, գունդ կհանձնեն... փոխ-գնդապետ... Աննայի շքանշանը վզիս... գնդապետ...»— և նա արդեն գեներալ եր, ու Նատաշային, իր ընկերոջ այրուն, արժանացնում եր ընդունելության (նրա յերազանքների համաձայն՝ ընկերը այդ ժամանակ մեռած պիտի լիներ), յերբ բուլվարի յերաժշտության ձայնը հասավ նրա ականջին, տեսավ մարդկանց բազմությունները, և նա բուլվար մտավ էլի որպես առաջվա հետևակ փոխ-կապիտանը։

III

Նախ մոտեցավ տաղավարին, որի մոտ կանգնած եին յերաժիշտները, որոնց առջև նոտակալների (պյուպիտրների) փոխարեն նույն գնդի այլ զինվորներ բաց արած բռնել եին նոտաները, և որոնց շուրջը՝ ավելի նայելու քան լսելու համար, շրջան եին կազմել գրագիրները, յունկերները և դայակները՝ յերեխաների հետ։ Տաղավարի շուրջը կանգնել, նստել և շրջում եին մեծ մասամբ ծովայիններ, համհարզներ ու սպաներ՝ սպիտակ ձեռնոցներով։ Բուլվարի մեծ ծառուղով գնում-գալիս եին ամեն տեսակի սպաներ ու ամեն տեսակի կանայք՝ շատ քչերը գլխարկով, մեծ մասամբ գլխաշոր կապած (կային և առանց գլխաշորի ու առանց գլխարկի), բայց կանանցից ոչ մեկը պառավ չեր, այլ զարմանալի կերպով բոլորն էլ ջահել։ Ներքև՝ սպիտակ ակացիների բուրալից ծառուղիներում շրջում և նստոտել եին առանձնացած խմբակներ։

Վոչ-վոք առանձնապես գոհ չեղավ փոխ-կապիտան Միխայլովին բուլվարում հանդիպելով, բացառությամբ, գուցե, նրա գնդի կապիտան Ոբժոգովից և կապիտան Սուսլիկովից, որոնք ջերմորեն սեղմեցին նրա ձեռը. բայց

առաջինը ուղղակի բրդից պատրաստած վարտիկով էր, առանց ձեռնոցների, մաշված շինելով և այնպիսի կարմիր քրտնած դեմքով, իսկ յերկրորդն այնպես բարձր էր խոսում ու սանձարձակ, վոր մարդ ամաչում էր նրանց հետ ման գալ, ժանյավանդ ճերմակ ձեռնոցներով սպաների առջև (վորոնցից մեկին՝ մի համհարզի փոխ-կապիտան Միխայլովը բարևեց, մյուսին էլ՝ մի շտաբ-սպայի կարող էր բարևել, վորովհետև յերկու անգամ հանդիպել էր նրան մի ընդհանուր ծանոթի մոտ)։ Բացի դրանից, վորքա՜ն հաճելի և ուրախալի էր ման գալ այդ պարոնների՝ Օբժոգովի և Սուսլիկովի հետ, յերբ ինքը առանց այն էլ օրը վեց անգամ հանդիպում ու սեղմում էր նրանց ձեռները։ Նա հո դրա համար չէր յեկել բուլվար։

Նա կուզեր մոտենալ համհարզին, վորին բարևեց, և խոսել այդ պարոնների հետ, բոլորովին նրա համար չէ, վորպեսզի կապիտաններ Օբժոգովն ու Սուսլիկովը և տեղակալ (պորուչիկ) Պաշտեցկին ու մյուսները տեսնեյին, թե նա խոսում է նրանց հետ, այլ պարզապես նրա համար, վոր նրանք հաճելի մարդիկ են, բացի դրանից, գիտեյին բոլոր նորությունները — կարող են պատմել։

Բայց ինչո՞ւ է փոխ-կապիտան Միխայլովը վախենում և չի համարձակվում մոտենալ նրանց։ «Իսկ յեթե հանկարծ չբարևե՞ն, — մտածում է նա, — կամ բարևեն ու շարունակեն խոսել միմյանց հետ, իբր թե յես չկամ էլ, կամ բոլորովին հեռանան ինձանից, ու յես մնամ այնտեղ արիստոկրատների շրջանում մենակ»։ Արիստոկրատներ (բարձր, ընտիր շրջան իմաստով, վոր դասում էլ ուզում է լինի այդ շրջանը) բառը վորոշ ժամանակից մեզանում՝ Ռուսաստանում, ուր, կարծես, նա բնավ չպետք էլ լիներ, ստացել է մեծ ժողովրդականություն և մուտք է գործել մեր յերկրի բոլոր անկյունները և հասարակության բոլոր խավերը, ուր մուտք է գործել միայն սնափառությունը (իսկ ժամանակի վո՞ր պայմաններում ու

հանգամանքներում է վոր մուտք չի գործում այդ խղճուկ հակումը). Նա մուտք է գործել վաճառականների, աստիճանավորների, գրագիրների, սպաների շրջանը, Սարատով, Մամադիշի, Վիննիցի, ամենուրեք, ուր մարդ կա։ Յեվ վորովհետև պաշարված Սևաստոպոլում մարդ շատ կար, հետևաբար սնափառությունն էլ շատ էր, այսինքն արիստոկրատները, չնայած վոր ամեն րոպե մահը կախված էր արիստոկրատի և վոչ արիստոկրատի գլխին։

Կապիտան Օբժ․գովի համար փոխ-գնդապետ Միխայլովը արիստոկրատ է, փոխ-կապիտան Միխայլովի համար համհարզ Կալուգինը արիստոկրատ է, վորովհետև համհարզ է և մյուս համհարզի հետ «դու»-ով է խոսում։ Համհարզ Կալուգինի համար արիստոկրատ է կոմս Նորդովը, վորովհետև նա ֆլիգել — ադյուտանտ է։

Սնափառություն, սնափառություն ու սնափառություն ամեն տեղ, մինչև անգամ գերեզմանի յեզրին և այն մարդկանց մեջ, վորոնք բարձր համոզումի համար պատրաստ են մեռնելու։ Սնափառությո՜ւն։

Փոխ-կապիտանը յերկու անգամ անվճռականությամբ անցավ իր արիստոկրատների խմբի կողքով, յերրորդ անգամին ուժ գործ դրեց ու մոտեցավ նրանց։ Այդ խումբը կազմում եին չորս սպա — համհարզ Կալուգինը, վոր Միխայլովի ծանոթն էր, համհարզ իշխան Գալցինը, վոր փոքր ինչ արիստոկրատ էր հենց իրա Կալուգինի համար, գնդապետ Նեֆերդովը, մեկն այսպես անվանված հարյուր քսան յերկու աշխարհիկ մարդկանցից (վոր թեև պաշտոնաթող, բայց ծառայության եին մտել այս պատերազմին), և ռոտմիստր Պրասկուխինը, նույնպես մեկն այդ հարյուր քսան յերկուսից։ Միխայլովը բախտից Կալուգինը շատ լավ տրամադրության մեջ էր (հենց նոր գեներալը ըստ ամենայնի վստահաբար խոսել էր նրա հետ և իշխան Գալցինը, Պետերբուրգից գալով,

իջևանել էր նրա մոտ). Նա ստորացուցիչ բան չհամարեց ձեռ տալ փոխ-գնդապետ Միխայլովին, ինչ վոր, սակայն չարավ Պրասկուխինը, վոր բաստիոնում հաճախ հանդիպում էր Միխայլովի հետ, բազմիցս խմել էր նրա գինին ու օղին և մինչև անգամ պրեֆերանսում պարտ էր մնացել նրան տասներկու ռուբլի հիսուն կոպեկ: Իշխան Գալցինին դեռ լավ չճանաչելով, չէր ուզում նա տեսնի, վոր ինքը ծանոթ է հասարակ հետևակ փոխ-կապիտանին: Նա թեթև գլուխ տվեց:

— Հը՛, կապիտան,— ասաց Կալուգինը,— յե՞րբ ենք նորից բաստիոն գնում: Հիշո՞ւմ եք, ինչպես հանդիպեցինք Շվարցի ռեդուտում. վտանգավոր էր, չէ՞:

— Այո, շա՛տ,— ասաց Միխայլովը, հիշելով այն գիշերը, յերբ խրամատով բաստիոն գնալիս հանդիպեց Կալուգինին, վոր քաջաբար քայլում էր, թուրը գետնին շրխկացնելով:

— Յես, իսկապես, ստիպված եմ վաղը գնալ. մեզ մոտ,— շարունակեց Միխայլովը,— մի սպա հիվանդ է, այնպես վոր...

Նա ուզում էր պատմել, վոր հերթն իրենը չէ, բայց վորովհետև 8-րդ վաշտի հրամանատարը հիվանդ էր, իսկ վաշտում մնում էր միայն մի վառակիր (պրապորշչիկ), ուստի նա իր պարտքը համարեց տեղակալ Նեպշիսեցկու փոխարեն առաջարկել իրեն և այդ պատճառով այժմ գնալու էր բաստիոն: Կալուգինը մինչև վերջը չլսեց նրան:

— Իսկ յես զգում եմ, վոր այս որերս մի բան կլինի,— ասաց նա իշխան Գալցինին:

— Իսկ այսօր արդյո՞ք վոչինչ չի լինի,— յերկչոտ հարցրեց Միխայլովը, նայելով մեկ Կալուգինին, մեկ Գալցինին:

Նրան վոչ վոք չպատասխանեց: Իշխան Գալցինը դեմքը խոժոռեց մի տեսակ և, փոքր ինչ լռելով, ասաց.

— Լավ աղջիկ է այդ կարմիր գլխաշորով աղջիկը: Դուք նրան չե՞ք ճանաչում, կապիտան:

— Դա ապրում է իմ տան կողքին, նավաստու աղջիկ է,— պատասխանեց փոխ-կապիտանը:

— Գնանք մի լավ նայենք:

Յեվ իշխան Գալցինը թևանցուկ արավ մի կողմից Կալուգինին, մյուս կողմից փոխ-կապիտանին, նախապես վստահ լինելով, վոր չի կարող վերջինս մեծ բավականություն չպատճառել, ինչ վոր, իսկապես, իրավացի էր:

Փոխ-կապիտանը սնահավատ էր և մեծ մեղք էր համարում կռվից առաջ զբաղվել կանանցով. Բայց այս դեպքում նա անառակ էր ձևանում, վորին ըստ յերևույթին չէյին հավատում իշխան Գալցինն ու Կալուգինը և վոր չափազանց զարմացրեց կարմիր գլխաշորով աղջկան, վոր շատ անգամ էր նկատել, թե ինչպես փոխ-կապիտանը կարմրել էր իր լուսամուտի մոտով անցնելիս: Պրասկուխինը գնում էր նրանց յետևից և շարունակ հրում էր իշխան Գալցինի թևը, ֆրանսերեն լեզվով զանազան նկատողություններ անելով. բայց վորովհետև չորսով դժվար էր գնալ ծառուղով, նա ստիպված յեղավ մենակ գնալ և միայն ճամբին՝ թեքվելու տեղում թևանցուկ արավ յետևից մոտեցող և խոսք բաց անող հայտնի քաջ ծովային սպա Սերվյագինին, վոր նույնպես ցանկանում էր միանալ արիստոկրատների խմբին: Յեվ հայտնի քաջը իր թևն ուրախությամբ տվեց Պրասկուխինին, վորը բոլորին և իրեն Սերվյագինին լավ հայտնի էր վոչ իբրև այնքան լավ մարդ: Յերբ Պրասկուխինը իշխան Գալցինին բացատրելով իր ծանոթությունն այդ ծովայինի հետ, շշնջաց, թե դա հայտնի քաջն է, իշխան Գալցինը, վոր յերեկ յեղել էր չորրորդ բաստիոնում և տեսել էր քանի քայլ իրենցից հեռու պայթող ռումբը, իրեն վոչ պակաս քաջ համարելով քան այդ պարոնն էր, և յենթադրելով, վոր շատ հռչակներ ձեռք են բերվում իզուր տեղը, վոչ մի ուշադրություն չդարձրեց Սերվյագինի վրա:

Փոխ-կապիտան Միխայլովին այնպես հաճելի էր

զբոսնել այդ մարդկանց հետ, որ նա մոռացավ Տ-ից ստացած սիրելի նամակը և իր մռայլ մտքերը, որ պաշարել էին նրան բաստիոն գնալու առիթով. Նա նրանց հետ մնաց այնքան ժամանակ, մինչև որ նրանք չխոսեցին բացառապես իրար հետ, խուսափելով նրա հայացքներից, այդպիսով հասկացնելով, որ նա կարող է գնալ, և, վերջապես, բոլորովին հեռացան նրանից։ Բայց փոխ-կապիտանն այնուամենայնիվ գոհ էր և, անցնելով յունկեր բարոն Պեստի կողքով, որ առանձնապես հպարտ ու ինքնավստահ էր դարձել յերեկ գիշերվանից, որը նա առաջին անգամ անցրել էր հինգերորդ բաստիոնի բլինդաժում ու դրա հետևանքով իրեն համարում էր հերոս, Միխայլովը բնավ չվշտացավ այն կասկածելի—մեծամիտ արտահայտությունից, որով յունկերը ձգվեց ու գլխարկ հանեց նրա առաջ։

IV

Բայց հազիվ փոխ-կապիտանը ոտքը դրեց իր տան շեմքից ներս, նրան պաշարեցին բոլորովին այլ մտքեր. Նա տեսավ իր փոքրիկ սենյակը՝ հողե անհարթ հատակով ու թղթով կպցրած ծուռ լուսամուտներով, իր մահճակալը՝ վերևը կախած գորգով, որի վրա նախշով պատկերված էր մի ամազոնկա և կախված էին Տուլայի յերկու փշտոլ. տեսավ իր հետ ապրող յունկերի չթե վերմակով կեղտոտ անկողինը. տեսավ իր սպասավոր Նիկիտին, որ խռիվ յուղոտ մազերով, իրեն քորելով, վեր կացավ գետնից. տեսավ իր հին շինելը, կոշիկները և կապոցը, որից յերևում էր պանրի ծայրը և օղու շշի վիզը, որ պատրաստված էր իր համար բաստիոն տանելու, և հանկարծ հիշեց, որ ինքն այսոր ամբողջ գիշեր վաշտի հետ պիտի գնա լոժեմենտները (շտապով շինած ամրություններ)։

«Յես այսոր, անկասկած, կսպանվեմ,— մտածում էր փոխ-կապիտանը,— զգում եմ։ Յեվ բանն այն է, որ գընացողը յես չպիտի լինեյի, այլ ինքս մեջ ընկա։ Յեվ միշտ սպանվում են նրանք, ովքեր իրենք են մեջ ընկնում։ Յեվ տեսնես ինչո՞վ է հիվանդ այդ անիծած Նեպշիսեցկին։ Շատ կարելի յե, որ սկի հիվանդ էլ չի, իսկ նրա պատճառով մարդ պիտի սպանեն. անպայման կսպանեն։ Բայց յեթե չսպանեն, անպայման կներկայացնեն։ Յես նկատեցի, թե ինչպես գնդի հրամանատարին դուր յեկավ, յերբ ասի— թույլ տվեք յես գնամ, քանի որ տեղակալ Նեպշիսեցկին հիվանդ է։ Յեթե մայորություն չստանամ, Վլադիմիրն (շքանշան) անկասկած է։ Չէ՞ որ տասներեքերորդ անգամն է յես բաստիոն եմ գնում։ Ո՜, 13-ը— վատ թիվ է։ Անպատճառ կսպանեն. զգում եմ որ կըսպանեն. բայց պետք է վորևե մեկը գնա, գունդը հո չըպետք է վառակիրը (պրապորշչիկը) տանի։ Հանկարծ մի բան պատահի. չէ՞ որ դա գնդի պատիվն է, բանակի պատիվը դրանից է կախված. Իմ պարտքն էր գնալ... այո, սրբազան պարտքը։ Բայց ինչ-որ բան եմ նախազգում»։ Փոխ-կապիտանը մոռանում էր, որ նման նախազգացում ավել կամ պակաս չափով նա առաջին անգամը չէր ունենում, յերբ պետք էր լինում բաստիոն գնալ, և չէր իմանում, որ նույն նախազգացումն ավել կամ պակաս ապրում է կռիվ գնացող ամեն մեկը։ Հանգստացնելով իրան պարտքի հասկացողությամբ, որ փոխ-կապիտանի մեջ առանձնապես զարգացած և ուժեղ էր, նա նստեց սեղանի մոտ և սկսեց հրաժեշտի նամակ գրել իր հորը։ Տաս րոպեյից հետո, նամակը գրելով, նա արցունքից թըրջված աչքերով վեր կացավ սեղանի մոտից և, գիտցած բոլոր աղոթքները մտքում ասելով, սկսեց հագնվել։ Քիչ ու միչ հարբած ու կոպիտ սպասավորը ծուլաբար տվեց նրան նոր սյուրթուկը (հինը, որ փոխ-կապիտանը հագնում էր բաստիոն գնալիս, կարկատված չէր)։

— Ինչու՞ չի կարկատված։ Քու բանն այն է շարունակ քնես միայն, ծույլ,— բարկացած ասաց Միխայլովը։

— Ի՞նչ քնել,— քրթմնջաց Նիկիտան։— Սաղ օրը շան պես քաշ եմ գալիս. հալից ընկնում եմ, դեռ հլա ասում եք չքնեմ։

— Դու դարձյալ հարբած ես. տեսնում եմ։

— Հո ձեր փողով չե՞մ խմել. ինչ եք հանդիմանում։

— Լա՛վ, հայվան,— գոռաց փոխ-կապիտանը, պատրաստ նրան խփելու, դեռ առաջուց գրգռված, իսկ այժմ Նիկիտինի կոպտությունից վերջնականապես համբերությունից ելած ու զայրացած։ Նա սիրում ու մինչև անգամ՝ յերես էր տալիս Նիկիտին, վորի հետ 12 տարի ապրել էր։

— Հայվա՛ն, վայվա՛ն,— կրկնեց սպասավորը։— Ինչո՞ւ եք հայհոյում պարոն. ախր հիմի ենպես ժամանակ է վոր... հայհոյելը լավ չի։

Միխայլովը հիշեց, թե ուր է գնում, և ամաչեց ասածի համար։

— Ախր յեթե քար էլ լինի մարդ՝ դու համբերությունից կհանես, Նիկիտա,— ասաց նա հեզ ձայնով։— Այն նամակը հայրիկիս եմ գրել, թող սեղանի վրա մնա, ձեռ չտաս,— ավելացրեց նա շառագունելով։

— Լսում եմ,— ասաց Նիկիտան, բոլորովին զգացված գինու ազդեցության տակ, վոր խմել էր, ինչպես ինքն էր ասում, իր փ ո ղ ո վ. Նա աչքերը թարթեց լաց լինելու ակնհայտ ցանկությամբ։

Իսկ յերբ մուտքի առաջ փոխ-կապիտանն ասաց. «մնաս բարով, Նիկիտա», Նիկիտան հանկարծ հեկեկաց և նետվեց իր պարոնի ձեռները համբուրելու։ «Գնաք բարով, պարոն», ասաց նա հեծկլտալով։ Հարևան պառավը՝ նավաստու այրին, վոր կանգնած էր իր տան առջև, վորպես կին չկարողացավ իրեն պահել և միացավ այս սրտաշարժ տեսարանին, սկսեց աչքերը սրբել կեղտոտ թևով

քով և խոսել այն մասին, վոր ազա մարդիկ էլ չեն ազատվում տանջանքներից և վոր ինքը աղքատ կին է, վորբևայրի մնացած, և հարյուրերորդ անգամը պատմեց հարբած Նիկիտին իր վիշտը, թե ինչպես մարդուն սպանեցին դեռ առաջին բ ա կ ո ծ ու թ յ ա ն ժամանակ և ինչպես իր տունը քար ու քանդ արին (այն, վորի մեջ ապրում էր — իրեն չէր պատկանում) և այլն։ Պարոնի գնալուց հետո Նիկիտան չիբուխը հանեց՝ ծխեց, տանտիրոջ աղջկանը խնդրեց գնալ օղի բերելու և շուտով թողեց լացն ու, ընդհակառակը, սկսեց կռվել պառավի հետ ինչ-վոր փոքրիկ դույլի համար, վոր պառավն իբրև թե տրորել էր։

«Գուցե և միայն վիրավորեն,— խոսում էր ինքն իրեն փոխ-կապիտանը, արդեն մթնշաղին վաշտի հետ դեպի բաստիոնը գնալով։— Բայց վորտե՞ղից կվիրավորեն. ինչպե՞ս. այստեղի՞ց թե այստեղից,— մտածում էր նա մտովի ցույց տալով փորն ու կուրծքը։— Այ յեթե այստեղից վիրավորեն (նրա մտածումը վերաբերում էր վոտի վերին մասերին) վոչինչ։ Բայց յեթե այստեղս վիրավորեն, այն էլ ռումբի կտորով— բանս վերջացած է»։

Փոխ-կապիտանը խրամատներով հաջողությամբ հասավ հապճեպով շինած ամրություններին ու, մի սակրավոր սպայի հետ, արդեն կատարյալ մթության մեջ, զինվորներին դասավորեց և նստեց պատվարի տակ՝ մի փոսում։ Հրակոցները սակավ էին. յերբեմն միայն մեկ մեզ մոտ, մեկ նրանց մոտ բռնկում էին կայծակներ, և ռումբի լուսավոր փողը, հրեղեն աղեղ էր գծում մութ, աստղալից յերկնքում։ Բայց բոլոր ռումբերն ընկնում էին այն ամրությունից հեռու, ուր փոխ-կապիտանը նստած էր փոսի մեջ։ Նա օղի խմեց, հետո պանիր կերավ, պապիրոս ծխեց և, աստծուն աղոթելով, ուզեց քնել մի քիչ։

V

Իշխան Գալցինը, փոխ-գնդապետ Նեֆերդովը և Պրասկուխինը, վորին վոչ-վոք չկանչեց, վորի հետ վոչ վոք

չխոսեց, բայց վորը յետ չեր մնամ նրանցից,—բոլորը բուլվարից գնացին Կալուգինի մոտ՝ թեյ խմելու։

— Ե՛, դու այդպես էլ չվերջացրիր քո պատմությունը Վասկա Մենդելի մասին,—ասաց Կալուգինը շինելը հանելով, լուսամուտի մոտ դրված փափուկ, հանգիստ բազկաթոռում տեղավորվելով և հոլանդական մաքուր ոսլայած շապկի օձիքը բանալով։—Նա ինչպես ամուսնացավ։

— Շատ ծիծաղելի յե ! je vous dis, il y avait un temps, on ne parlait que de ça à Petersbourg*)—ասաց իշխան Գալցինը ծիծաղելով ու նստած տեղից՝ դաշնամուրի մոտից. վեր կենալով, գնաց նստեց լուսամուտի գոգին։—Ուղղակի ծիծաղից մեռնելու բան է։ Ցես արդեն բոլորը մանրամասն գիտեմ։

Յեվ նա զվարթ, խելացի ու աշխույժ կերպով սկսեց ինչ-վոր սիրային պատմություն անել, վորը մենք կթողնենք, վորովհետև մեզ հետաքրքիր չէ։ Բայց զարմանալին այն է, վոր վոչ միայն իշխան Գալցինը այլ և բոլոր այդ պարոնները, վոր տեղավորվել եյին այստեղ՝ վորը լուսամուտում, վորը վոտները վեր տնկած, վորը դաշնամուրի մոտ, թվում եյին բոլորովին այլ մարդիկ, քան բուլվարում. չկար այն ծիծաղելի փքվածությունը, հպարտությունը, վոր ցույց եյին տալիս հետևակ սպաներին։ Այստեղ նրանք յուրայինների մեջ եյին—հաճելի, ուրախ և բարի տղաների հետ։ Խոսում եյին Պետերբուրգի պաշտոնակիցների և ծանոթների մասին։

— Ի՞նչ է անում Մասլովսկին։

— Վո՞րը. լեյբ-ուլանը թե հեծելագվարդիականը։

— Ցես յերկուսին էլ ճանաչում եմ։ Իմ ժամանակ հեծելագվարդիականը պատանի յեր, դպրոցից հենց նոր եր դուրս յեկել։ Մեծը ռոտմիստր է։

*) Ցես ձեզ ասում եմ, ժամանակ կար, վոր Պետերբուրգում միայն դրա մասին եյին խոսում։

— Ո՛, վաղուց։

— Հը՛, ելի քա՞շ է գալիս իր գնչուհու հետ։

— Ձե՛, թողել է... Յեվ այլն, այս ձևով։

Ապա իշխան Գալցինը նստեց դաշնամուրի առաջ և գեղեցկորեն յերգեց գնչուական մի յերգ։ Պրասկուխինը, թեև վոչ-վոք նրան չխնդրեց, սկսեց ձայնակցել, և այնպես լավ, վոր խնդրեցին արդեն կրկնել, ինչ-վոր նրան մեծ բավականություն պատճառեց։

Սպասավորը արծաթե մատուցարանով բերեց թեյ, սեր և կ ր ե ն դ ե լ։

— Մատուցիր իշխանին,—ասաց Կալուգինը։

— Բայց տարօրինակ է մտածել,—ասաց Գալցինը, բաժակը վերցնելով և լուսամուտին մոտենալով,—վոր մենք այստեղ պաշարված քաղաքում ենք. դաշնամուր, սերով թեյ, այնպիսի բնակարան, վորի նմանը իսկապես կուզեյի ունենալ Պետերբուրգում։

— Ե՛, արդեն այս էլ վոր չլիներ,—ասաց ամենից դժգոհ ծեր փոխ-գնդապետը,—ուղղակի անտանելի կլիներ այս ինչ-վոր բանի մշտական սպասումը... Տեսնել, թե ինչպես ամեն օր զարկում են, զարկում, ու ելի վերջ չկա, և այս պայմաններում էլ մարդ ապրի կեղտի մեջ ու առանց հարմարությունների։

— Հապա ինչպե՞ս են անում մեր հետևակ սպաները,—ասաց Կալուգինը,—վոր ապրում են բաստիոններում զինվորների հետ, բ լ ի ն դ ա ժ ո ւ մ և ուտում են զինվորական բորշ. հապա ինչպե՞ս են անում։

— Ի՞նչպե՞ս են անում։ Նրանք թեև, ճիշտ է, տասն օրը մի անգամ սպիտակեղեն չեն փոխում, բայց հերոսներ են, զարմանալի մարդիկ։

Այդ ժամանակ սենյակ մտավ մի հետևակ սպա։

— Ցես... ինձ հրամայված է... կարո՞ղ եմ ներկայանալ գեն... Նորին գերազանցության գեներալ N-ի կողմից,—հարցրեց նա ամաչկոտ [illegible] տալով։

ZUUՌ Арм.ССР
2343-54

Կալուգինը վեր կացավ, բայց առանց սպայի բարևին պատասխանելու՝ վիրավորական քաղաքավարությամբ և սառը պաշտոնական ժպիտով հարցրեց սպային, թե արդյոք նա չի հաճի փոքր ինչ սպասել և, առանց խնդրելու որ նստի, այլևս ուշ չդարձնելով նրա վրա, շուռ յեկավ դեպի Գալցինն ու սկսեց ֆրանսերեն խոսել, այնպես որ խեղճ սպան, սենյակի մեջտեղը կանգնած՝ չգիտեր ուղղակի ինչ անի։

—Շատ հարկավոր գործի համար է,—ասաց սպան րոպեյական լռությունից հետո։

—Հա՛, ուրեմն համեցեք,—ասաց Կալուգինը շինելը հագնելով և նրան դեպի դուռն ուղեկցելով։

—Eh bien, messieurs, je crois, que cela chauffera cette nuit,*)—ասաց Կալուգինը, գեներալի մոտից դուրս գալով։

—Հը՞, ինչ կա. մերոնք դո՞ւրս են գալիս,—սկսեցին հարցնել բոլորը։

—Չգիտեմ արդեն, ինքներդ կտեսնեք,—պատասխանեց Կալուգինը խորհրդավոր ժպիտով։

—Իմ հրամանատարն էլ բաստիոնումն է. նշանակում է յես էլ պիտի գնամ,—ասաց Պրասկուխինը, թուրը կապելով։

Բայց ոչ-ոք չպատասխանեց նրա՛ն. դա իրա իմանալու բանն էր—պիտի գնար արդյոք թե ոչ։

Պրասկուխինն ու Նեֆերդովը դուրս յեկան, որ գնան իրենց տեղերը։—«Մնա՛ք բարով, պարոններ»։—«Ցտեսություն, պարոններ։ Այս գիշեր դեռ կտեսնվե՛նք», ձայնեց Կալուգինը լուսամուտից, յերբ Պրասկուխինն ու Նեֆերդովը, թամբերի կեխի վրա կռացած՝ քշում եին ձիերը ճանապարհով։ Կազակական ձիերի ոտնատրոփը մարեց շուտով մութ փողոցում։

---

*) Է, պարոններ, կարծեմ, սա կտաքացնի այս գիշեր։

—Non, dites moi,est-ce qu'il y auravérita blement quelque chose cette nuit,*)—ասաց Գալցինը, Կալուգինի հետ միասին լուսամուտում պառկելով ու ռումբերին նայելով, որ բարձրանում եյին բաստիոններից վեր։

—Յես քեզ կարող եմ պատմել... Դու հո բաստիոններում յեղե՞լ ես։ (Գալցինը համաձայնության նշան արավ, թեև նա յեղել եր միայն մի անգամ 4-րդ բաստիոնում)։ Այսպես մեր լ յ ո ւ ն ե տ ի (ամրաշինության) դիմաց խրամատ կար,—և Կալուգինը որպես ոչ բանագետ մարդ, թեև իր ռազմական դատողությունները համարում եր ըստ ամենայնի ճիշտ, սկսեց, փոքրինչ խառն ու շփոթ և ռազմական խոսքերը հեղաշրջելով պատմել մեր ու թշնամու աշխատանքների դրությունը և յենթադրվող կռվի ծրագիրը։

—Սակայն սկսում են կրակել։ Ոհո՛. սա մե՞րն է թե ն ր ա ն ց ը... ա՛յ պայթեց,—ասում եյին նրանք լուսամուտում պառկած, նայելով ռումբերի հրեղեն գծերին, որ խաչաձևվում եյին օդում, թնդանոթների կրակոցների կայծակներին, մի ակնթարթ լուսավորվող մութ-կապույտ յերկնքին ու վառոդի սպիտակ ծխին, և ականջ եյին դնում հետզհետե սաստկացող հրաձգության։

—Quel charmant coup d'oell*) հը՞,—ասաց Կալուգինը իր հյուրի ուշադրությունը դարձնելով այդ իսկապես որ գեղեցիկ տեսարանի վրա։—Գիտես, յերբեմն չես տարբերում աստղերն ռումբերից։

—Այո. հենց հիմա կարծում եյի, թե դա աստղ է, բայց իջավ... ա՛յ պայթեց։ Իսկ այդ մեծ աստղը ինչպես է կոչվում. կարծես ռումբ լինի։

---

*) Չէ, ասեք ինձ, արդյո՞ք այս գիշեր իսկապես մի բան կպատահի՞։

---

*) Ինչ հմայիչ տեսարան։

Կալուգինը վեր կացավ, բայց առանց սպայի բարևին պատասխանելու, վիրավորական քաղաքավարությամբ և սառը պաշտոնական ժպիտով հարցրեց սպային, թե արդյոք ն ա չի հաճի փոքր ինչ սպասել և, առանց խնդրելու վոր նստի, այլևս ուշ չդարձնելով նրա վրա, շուռ յեկավ դեպի Գալցինն ու սկսեց ֆրանսերեն խոսել, այնպես վոր խեղճ սպան, սենյակի մեջտեղը կանգնած՝ չգիտեր ուղղակի ինչ անի։

—Շատ կարևոր գործի համար է,—ասաց սպան րոպեյական լռությունից հետո։

—Հա՛, ուրեմն համեցեք,—ասաց Կալուգինը շինելը հագնելով և նրան դեպի դուռն ուղեկցելով։

—Eh bien, messieurs, je crois, que cela chauffera cette nuit,*)—ասաց Կալուգինը, գեներալի մոտից դուրս գալով։

—Հը՞, ինչ կա. մերոնք դո՞ւրս են գալիս,—սկսեցին հարցնել բոլորը։

—Չգիտեմ արդեն, ինքներդ կտեսնեք,—պատասխանեց Կալուգինը խորհրդավոր ժպիտով։

—Իմ հրամանատարն էլ բաստիոնումն է. նշանակում է յես էլ պիտի գնամ,—ասաց Պրասկուխինը, թուրը կապելով։

Բայց վոչ-վոք չպատասխանեց նրան. դա իրա իմանալու բանն եր—պիտի գնար արդյոք թե վոչ։

Պրասկուխինն ու Նեֆերդովը դուրս յեկան, վոր գնան իրենց տեղերը։—«Մնաք բարով, պարոններ»։—«Ցտեսություն, պարոններ։ Այս գիշեր դեռ կտեսնվենք», ձայնեց Կալուգինը լուսամուտից, յերբ Պրասկուխինն ու Նեֆերդովը, թամբերի կեռի վրա կռացած՝ քշում եյին ձիերը ճանապարհով։ Կազակական ձիերի վոտնատրոփը մարեց շուտով մութ փողոցում։

*) Է, պարոններ, կարծեմ, սա կտաքացնի այս գիշեր։

—Non, dites moi,est-ce qu'il y auravérita blement quelque chose cette nuit,*)—ասաց Գալցինը, Կալուգինի հետ միասին լուսամուտում պառկելով ու ռումբերին նայելով, վոր բարձրանում եյին բաստիոններից վեր։

—Յես քեզ կարող եմ պատմել... Դու հո բաստիոններում յեղե՞լ ես։ (Գալցինը համաձայնության նշան արավ, թեև նա յեղել եր միայն մի անգամ 4-րդ բաստիոնում)։ Այսպես մեր լ յ ու ն ե տ ի (ամրաշինության) դիմաց խրամատ կար,—և Կալուգինը վորպես վոչ բասնագետ մարդ, թեև իր ռազմական դատողությունները համարում եր ըստ ամենայնի ճիշտ, սկսեց, փոքրինչ խառն ու շփոթ և ռազմական խոսքերը հեղաշրջելով պատմել մեր ու թշնամու աշխատանքների դրությունը և յենթադրվող կռվի ծրագիրը։

—Սակայն սկսում են կրակել։ Ոհո՛. սա մե՞րն է թե ն ր ա ն ց ը... ա՛յ պայթեց,—ասում եյին նրանք լուսամուտում պառկած, նայելով ռումբերի հրեղեն գծերին, վոր խաչաձևվում եյին օդում, թնդանոթների կրակոցների կայծակներին, մի ակնթարթ լուսավորվող մութ-կապույտ յերկնքին ու վառոդի սպիտակ ծխին, և ականջ եյին դնում հետզհետե սաստկացող հրաձգության։

—Quel charmant coup d'oell*) հը՞,—ասաց Կալուգինը իր հյուրի ուշադրությունը դարձնելով այդ իսկապես վոր գեղեցիկ տեսարանի վրա։—Գիտես, յերբեմն չես տարբերում աստղերն ռումբերից։

—Այո. հենց հիմա կարծում եյի, թե դա աստղ է, բայց իջավ... ա՛յ պայթեց։ Իսկ այդ մեծ աստղը ինչպես է կոչվում. կարծես ռումբ լինի։

*) Ձե, ասեք ինձ, արդյո՞ք այս գիշեր իսկապես մի բան կպատահի՞։

*) Ինչ հմայիչ տեսարան։

—Գիտես, յես այն աստիճան ընտելացել եմ այս ռումբերին, վոր, համոզված եմ, Ռուսաստանում առաջալից գիշերն ինձ թվալու է, թե այդ բոլորն ռումբեր են. այնպես ես ընտելանում:

—Յես չգնա՞մ արդյոք այդ արտելքին (вылазка),—ասաց իշխան Գալցինը րոպեյական լռությունից հետո:

—Թո՛ղ, յեղբայր, մաքիցդ հանիր. յես չեմ էլ թողնի,—պատասխանեց Կալուգինը:—Դեռ ժամանակ շատ կա:

—Լո՞ւրջ: Կարծում ես գնալու կարիք չկա՞, հը՞...

Այդ ժամանակ այն ուղղությամբ, ուր նայում եյին այդ պարոնները, հրետանային վորոտի յետևից լսվեց հրացանաձգության մի սարսափելի ճռճռոց, ու հազարավոր մանրիկ կրակներ, անդադար բռնկելով, փայլփլեցին ամբողջ ռազմագծի յերկարությամբ.

—Ահա, սկսվեց խխկանը,—ասաց Կալուգինը:—Հրացանների այդ ձայնը յես սառնասիրտ լսել չեմ կարող. գիտես, մի տեսակ գրավում է: Ահա և ո ւ ռ ա-ն,—ավելացրեց նա, ականջ դնելով հարյուրավոր ձայների հեռավոր ծավալուն վորոտին.—«աա-ա-ա՜» գալիս եր բաստիոնից:

—Սա ո՞ւմ ո ւ ռ ա ն է. նրանցը՞ թե մերը.

—Չգիտեմ. բայց յերևում է արդեն ձեռնամարտ է սկսվել, վորովհետև կրակոցը դադարեց:

Այդ ժամանակ սրարշավ դռանը մոտեցավ մի սպա՝ կազակը հետը, և իջավ ձիուց:

—Վորտեղի՞ց եք գալիս:

—Բաստիոնից: Գեներալին պետք է տեսնեմ:

—Գնանք: Հը, ի՞նչ կա:

—Հարձակվեցին մեր նոր շինած ամրությունների վրա... գրավեցին...Ֆրանսիացիք ահագին ուժեր բերին... գրոհ տվին... մերը միայն յերկու գումարտակ եր.—հևասպառ ասում եր նույն այն սպան, վոր յերեկոյան յեկավ. նա խոսում եր դժվարությամբ շունչ քաշելով, բայց բոլորովին համարձակ կերպով դեպի դուռը գնալով:

—Հետո՞. նահանջեցի՞ք,—հարցրեց Գալցինը:

—Ոչ,—բարկացած պատասխանեց սպան,—մի գումարտակ ոգնության հասավ—յետ քշեցինք, բայց գնդի հրամանատարն սպանված է, և շատ սպաներ: Հրամայված է ոգնություն խնդրել...

Յեվ այս խոսքերով նա Կալուգինի հետ մտավ գեներալի մոտ:

Հինգ րոպե անց Կալուգինն արդեն ձի նստած գնում եր դեպի բաստիոն միքանի հրամաններ հայտնելու և կռվի վերջնական հետևանքի մասին տեղեկություն առնելու. իսկ իշխան Գալցինը այն ծանր հուզումի ազդեցության ներքո,—հուզում, վոր կռվի մերձավոր նշանները պատճառում են սովորաբար կռվին անմասնակից-դիտողին,—դուրս յեկավ փողոց և սկսեց աննպատակ գնալ-գալ:

VI.

Զինվորները պատգարակներով ու թևերը մտած վիրավորներ եյին բերում: Փողոցը բոլորովին մութն եր. հազիվ վարեն տեղ լույս եր յերևում—հիվանդանոցի լուսամուտներում կամ դեռ չքնած սպաների բնակարաններում: Բաստիոններից լսվում եյին թնդանոթների նույն վորոտն ու հրացանային կրակոցները, և նույն կրակներն եյին բռնկում մութ յերկնքում: Յերբեմն լսելի եյին լինում սրարշավ յեկող սուրհանդակի (որդինարեց) ձիու վոտնատրոփը, վիրավորի հեծեծանքը, պատգարակիրների քայլերն ու ձայնը կամ վախեցած բնակիչների խոսակցությունը, վորոնք դուրս եյին յեկել իրենց տների շեմքը՝ թնդանոթաձգությունը տեսնելու:

Վերջիններիս թվումն եյին մեզ ծանոթ Նիկիտան, նավաստու պառավը, վորի հետ Նիկիտան հաշտվել եր արդեն, և պառավի տասը տարեկան աղջիկը. «Տեր աստված, ո՛վ սուրբ Տիրամայր»,—հառաչելով ասում եր պառավը՝ ինքն իրեն, նայում ռումբերին, վորոնք հրեղեն

խաղագնդակների նման անդադար թռչում էին մի կողմից մյուսը,—ինչ հերոսանալ էր։ Ո՛յ-ո՛յ-ո՛յ։ Առաջին բ ա կ ո ծ ու թ յ ա ն ժամանակ էլ եսպես չէր։ Տես, վորտեղ տրաքեց անիծածը. հենց մեր տան գլխին։

—Չե, դա հեռու է։ Արինա հորաքրոջ այգում են խըփում,— ասաց աղջիկը։

—Իսկ իմ աղեն, տեսնես, վորտեղ է հիմի,— ասաց Նիկիտան յերգեցիկ ձայնով և դեռ ես փոքր ինչ հարբած։ —Էնպես եմ սիրում իմ աղին, վոր ինքս էլ չգիտեմ ինչպես եմ սիրում, վոր յեթե, աստված վո՛չ անի, սպանեն, էն ժամանակ, հավատացեք, հոքուր, դրանից հետո չգիտեմ ինչ կարող եմ անել ինքս ինձ, աստված վկա։ Էնպես մի մարդ է, վոր հաար չկա։ Իսկի կարելի է համեմատել եսոնց հետ, վոր եստեղ թուղթ են խաղում։ Սա ի՞նչ է—թու։ Մի խոսքով...,—վերջացրեց Նիկիտան, ցույց տալով իր աղայի սենյակի լուսավորված լուսամուտը. այնտեղ, փոխ-կապիտանի բացակայությամբ, յունկեր Ժվադչեսկին, խաչ ստանալու առիթով, քեֆի յեր կանչել փոխ-տեղակալ Ուգրովիչին և փոխ-տեղակալ Նեպշիսեցկուն, վորի յերեսն ուռել էր ատամից...

—Աստղերը, աստղերը թռչում են մի գլուխ,—յերկինքին նայելով ասաց պառավի աղջիկը։ —Հրե՛, հրե՛ մեկն էլ ընկավ։ Եդ ինչի՞ց է եդպես, մայրիկ, հը՞։

—Մեր տունը բոլորովին քարուքանդ են անելու,— ասաց պառավը հառաչելով և աղջկա հարցին չպատասխանելով։

—Բա քիչ առաջ մենք քեռու հետ վո՞նց գնացինք էնտեղ, մայրիկ,—շարունակեց աղջիկը յերգեցիկ ձայնով.—Է՛նպես մի մեծ ռումբ էր ընկած սենյակում, շկափի կողքին վոր... ինչպես յերևում է, հաշտի պատը քանդել է, սենյակն ընկել... էնքա՛ն մեծ է—չես կարող բարձրացնել։

—Ով մարդ ու փող ուներ դուրս գնաց,—ասաց պա-

ռավը,—իսկ յես մի ծակուռ ունեյի, էն էլ քանդեցին։ Տես, տես վո՛նց են կրակում, գրողը ձեզ տանի։ Տե՛ր, տե՛ր, դո՛ւ վողորմաս։

—Իսկ մենք դուրս յեկանք թե չէ, մի ռումբ յեկավ ու էնպես տրաքեց, վոր հողը տակն ու վրա արավ, ու քիչ մնաց կտորները ինձ ու քեռուն դիպչեն։

VII

Իշխան Գալցինին հանդիպում էին հետզհետե ավելի ու ավելի վիրավորներ, վորոնց տանում էին պատգարակներով կամ թևերից բռնած, և վորոնք բարձրաձայն խոսում էին միմյանց հետ։

—Հենց վոր նրանք մոտ վազեցին, ախպեր ջան,— ասում էր թավ ձայնով մի բարձրահասակ զինվոր, ուսին յերկու հրացան դրած,—հենց մոտ վազեցին ու ձայն ավին՝ «Ալլահ, ալլահ»*)—հարձակվեցին մեզ վրա։ Մեկին խփում ես՝ մյուսն է գալիս. էլ ճար չկա։ Անթիվ-անհամար են...

Պատմության այս տեղում Գալցինը կանգնեցրեց նրան։

—Դու բաստիոնի՞ց ես գալիս։

—Ճիշտ այդպես, ձերդ ազնվություն։

—Հը, ի՞նչ յեղավ այնտեղ։ Պատմի՛ր։

—Ի՞նչ պիտի ըլեր։ Նրանք ուժ առացան, ձերդ ազնվություն, ու հարձակվեցին, պրծավ գնաց։ Հալից բոլորովին գցեցին, հաղթեցին, ձերդ ազնվություն։

—Ի՞նչպես թե հաղթեցին։ Չէ՞ վոր դուք յետ եք քշել նրանց։

—Վո՛րտեղից ենք յետ քշել, յերբ նրանց ամբողջ

---

*) Մեր զինվորները, թուրքերի հետ կռվելով, այնպես էին ընտելացել թշնամու այդ բացականչությանը, վոր այժմ պատմում էին, թե ֆրանսացիները նույնպես «ալլահ» են կանչում։

Ծանոթ. հեղինակի

ուժը յեկել ե․ մերոնց բոլորին կոտորեց։ Ոգնություն ել չեն հասցնում։

Զինվորը սխալվում եր, վորովհետև խրամատը մեր ձեռին եր․ բայց դա մի տարորինակություն ե, վոր ամեն մարդ կարող ե նկատել․ կռվում վիրավորված զինվորը համարում ե այն տանուլ տված և սարսափելի արյունահեղ։

—Հապա ինչո՞ւ ինձ ասին, թե յետ են մղել,—ասաց Գալցինը սրտնեղած։—Գուցե քեզանից հեռու՞ են յետ մղել։ Դու վաղո՞ւց ես դուրս յեկել այնտեղից։

—Հենց հիմա, ձերդ ազնվություն,—պատասխանեց զինվորը։—Հազիվ թե... խրամատը նրանց ձեռին մնաց... բոլորովին հաղթեց։

—Հապա ի՞նչպես չամաչեցիք խրամատը տվիք։ Դա սարսափելի ե,—ասաց Գալցինը, զինվորի անտարբերությունից վշտացած։

—Ի՞նչ արած, յերբ ուժով ե,—քրթմնջաց զինվորը։

—Ախր, ձերդ ազնվություն,—խոսեց այդ ժամանակ մի զինվոր պատգարակից, վոր հավասարվեց նրանց,—ի՞նչպես չտալ, յերբ բոլորին կոտորեց համարյա։ Յեթե մենք ուժ ունենայինք, յերբեք չեյինք տա։ Բայց ինչ կարող ես անել։ Յես մեկի փորը ծակեցի, բայց ենպես խփեց վոր... Ո՜ո՜... կամա՛ց, յեղբայրներ, կամա՛ց... մի՛ շարժեք... ոո՜,—հեծեծաց վիրավորը։

—Բայց իսկապես, կարծես, ավելորդ մարդիկ շատ են գալիս,—ասաց Գալցինը, կանգնեցնելով դարձյալ նույն բարձրահասակ, յերկու հրացան ուսած զինվորին։—Դու ինչո՞ւ ես գնում։ Ե՛յ, կանգնիր։

Զինվորը կանգ առավ և ձախ ձեռով գլխարկը վերցրեց։

—Ո՞ւր ես գնում և ինչո՞ւ,—խստությամբ գոռաց նա զինվորի վրա։

Բայց այդ ժամանակ, կից մոտենալով զինվորին,

նկատեց, վոր նրա աջ ձեռը շինելի թևքի մեջ ե ու արմունկից վերև արյունոտված։

—Վիրավորված եմ, ձերդ ազնվություն։

—Ինչո՞վ ես վիրավորված։

—Ստեղից, յերևի գնդակով,—ասաց զինվորը ձեռը ցույց տալով,—իսկ ստեղս արդեն չգիտեմ ինչ ե դիպել,—և գլուխը կռացնելով, ցույց տվեց արյունոտված ու մազերը կպած ծոծրակը։

—Իսկ այս մյուս հրացանն ո՞ւմն ե։

—Ֆրանսական շտուցեր ե, ձերդ ազնվություն... խլել եմ։ Յես չեյի ել գա, յեթե ես զինվորին ուղեկցելու բանը չլեր․ թե չե, մեկ ել տեսար, ընկավ,—ավելացրեց նա, ցույց տալով զինվորին, վոր գնում եր նրանից մի քիչ առաջ, հրացանին հենած և ձախ վոտքը դժվարությամբ փոխելով։

Իշխան Գալցինը հանկարծ սարսափելի ամոթ զգաց իր անարդար կասկածանքի համար։ Նա զգաց, վոր կարմրում ե, շուռ յեկավ և, այլես վիրավորներին չհարցուփորձելով ու նրանց յետևից չնայելով, գնաց վիրակապության կայանը։

Մուտքի առաջ հետևակ վիրավորների ու պատգարակիրների (վոր վիրավորներ եյին տանում ներս և մեռելներ եյին դուրս բերում) միջով, դժվարությամբ ճանապարհ բանալով, Գալցինը մտավ առաջին սենյակը, նայեց ու իսկույն և եթ ակամա շուռ յեկավ ու դուրս փախավ փողոց․ դա չափից ավելի սարսափելի եր։

VIII

Ընդարձակ, բարձր, մութ դահլիճը, վոր լուսավորված եր միայն չորս թե հինգ մոմերով (վորոնցով բժիշկները մոտենում եյին վիրավորներին նայելու)—լեփ-լեցուն եր։ Պատգարակիրներն անդադար վիրավորներ եյին բերում ներս, գնում եյին մեկը մյուսի կողքին հատակի վրա (ուր այնքան

նեղված էր արդէն, որ թշվառները գիպչում էին իրար և թրջվում միմյանց արյան մեջ) ու գնում նորերը բերելու։ Արյան լճակները, որ յերևում էին չբռնված տեղերում, միքանի հարյուր մարդու տաք շնչառությունը և պատգարակիրների քրտնահոտը առաջ էին բերել մի ինչ-վոր առանձին ծանր, թանձր գարշահոտություն, վորի մեջ պղտոր կերպով վառվում էին մոմերը դահլիճի տարբեր ծայրերում։ Բազմազան տնքոցների, հառաչանքների, խռռոցների ձայնը, վոր յերբեմն ընդհատվում էր մի սուր ճիչով, բռնել էր ամբողջ սենյակը։ Գթությա՜ն քույրերը հանգիստ դեմքերով և վոչ թե կանացի հիվանդագին-արցունքոտ դատարկ կարեկցության արտահայտությամբ, այլ այստեղ, այնտեղ հասնելու գործոն մասնակցությամբ, դեղ, ջուր, վիրակապ ու ծվատը (քուրփի) ձեռներին, լուռ տալով անցնում էին վիրավորների վրայից, յերևում էին արյունոտված շինելների ու շապիկների արանքում։ Բժիշկները թևքերը վեր քշտած չոքել էին վիրավորների առաջ, վորոնց մոտ բուժակները մոմ էին բռնել, նայում էին, շոշափում և վերքերը չափում, չնայած խեղճերի սարսափելի հեծեծանքներին ու աղերսանքներին։ Բժիշկներից մեկը նստած էր դռան մոտ մի փոքրիկ սեղանի առաջ և այն րոպեյին, յերբ Գալցինը սենյակ մտավ, գրում էր արդեն 532։

—Իվան Բողայև, Ս. գնդի 3-րդ վաշտի շարքային, fractura fermoris complicata!,—բարձր ասում էր մի ուրիշ բժիշկ դահլիճի ծայրից, վիրավորի ջարդված վոտը շոշափելով.—Մի շուռ տուր սրան։

—Վա՜յ, հայրիկ ջան. կամա՜ց, հայրիկ ջան,—ճղճղում էր վիրավորը, աղերսելով վոր իրեն ձեռ չտան։

—Perforatio capitis.

—Սեմյոն Նեֆերդով, N. հետևակ գնդի փոխ-գնդապետ։ Դուք փոքր ինչ համբերեցեք, գնդապետ, թե չէ այդպես չի կարելի. կթողնեմ,—ասում էր յերրորդը ինչ-

վոր կեռ բանով թշվառ փոխ-գնդապետի գլուխը քչփորելով։

—Ո՜յ, հարկավոր չի։ Ո՜յ, իսեր աստծո, շուտ, շուտ արեք, ի սեր... ա-ա-ա՜։

—Perforatio pectoris... Սեվաստյան Սերեդա, շարքային... վո՞ր գնդի։ Ասենք, մի՛ գրեք. moritur*)։ Տարե՛ք սրան,—ասաց բժիշկը, հեռանալով զինվորից, վոր, աչքերը շուռ տալով, խռխռացնում էր արդեն։

Քառասուն զինվոր-պատգարակիրներ, վոր սպասում էին վերքերը կապած վիրավորներին հիվանդանոց և մեռելներին մատուռ տանելու, կանգնել էին դռների մոտ և լուռ, յերբեմն ծանր հառաչելով, նայում էին այդ պատկերին։

IX

Բաստիոն տանող ճանապարհին Կալուգինը հանդիպեց շատ վիրավորների. բայց, փորձով իմանալով, թե կռվի մեջ ինչ վատ է ազդում մարդու տրամադրության վրա այդ տեսարանը, նա վոչ միայն կանգ չառավ նրանց հարցուփորձելու, այլ ընդհակառակը, աշխատեց վոչ մի ուշադրություն չդարձնել նրանց վրա։ Սարի տակ նա հանդիպեց մի սուրհանդակի, վոր սրարշավ գալիս էր բաստիոնից։

—Զոբկին, Զոբկին. կանգնեցե՛ք մի րոպե։

—Հը, ի՞նչ կա։

—Վո՞րտեղից եք գալիս։

—Նոր շինած ամրություններից։

—Հը, բանն ինչպես է այնտեղ։ Կռիվը տա՞ք է։

—Ո՛հ, սարսափելի է։

Ու սուրհանդակը սլացավ առաջ։

Իսկապես, թեև հրացանաձգությունը պակասել էր

* Մեռնում է։

բայց թնդանոթաձգությունը վերսկսվել էր նոր կատաղի թափով

«Ե՜հ, վատ է», մտածեց Կալուգինը ինչ-որ անհաճո զգացումով, և նա նույնպես նախազգացում ունեցավ. այսինքն՝ մի շատ հասարակ մտածում մահվան մասին։ Բայց Կալուգինն ինքնասեր էր և փայտե նյարդերով օժտված, այն, ինչ-որ մի խոսքով անվանում են քաջ։ Նա չենթարկվեց առաջին զգացումին և սկսեց քաջալերել իրեն, հիշելով, կարծյոք, Նապոլեոնի մի համհարզին, որ հրամանը հայտնելով, քառատրոփ վազքով, արյունոտած գլխով գալիս է Նապոլեոնի մոտ.

"Vous êtes blesse?„*) ասում է նրան Նապոլեոնը։ "Je vous demande pardon, sire, je suis mort**)„, և համհարզն ընկնում է ձիուց և տեղն ու տեղը մեռնում։

Նրան թվում էր, որ դա շատ լավ է, և իրեն յերևակայեց անգամ մի քիչ այդ համհարզը, ապա մտրակով խըփեց ձիուն և էլ ավելի քաջ կ ա զ ա կ ա յ ի ն ն ս տ վ ա ծ ք ընդունեց, յետ նայեց կազակին, որ ասպանդակներում կանգնած, մնգմնգալով գալիս էր իր յետևից, ու բոլորովին քաջարար հասավ այն տեղը, ուր պետք էր ձիուց իջնել։ Այստեղ նա տեսավ չորս զինվորի, որոնք, քարերին նստոտած, ծխամորճ եյին ծխում։

—Ի՞նչ եք անում այստեղ,—գոռաց Կալուգինը նրանց վրա։

— Վիրավոր տարանք, ձերդ ազնվություն, ու նստեցինք քիչ հանգստանալու, – պատասխանեց նրանցից մեկը, ծխամորճը յետևը թաքցնելով ու գլխարկը վերցնելով։

—Հանգստանում։ Գնացեք ձեր տեղերը։

Յեվ ինքը նրանց հետ միասին խրամատով գնաց դեպի սարը՝ յուրաքանչյուր քայլափոխին վիրավորների

* «Դուք վիրավորված եք։

** «Ներողություն եմ խնդրում ձեզանից, ձերդ մեծություն, յես մեռած եմ»։

հանդիպելով։ Սարը բարձրանալով, նա թեքվեց դեպի ձախ, և այդպես մի քանի քայլ գնալով, մնաց բոլորովին մենակ։ Նրան մոտիկ ռումբի մի կտոր վժժաց ու խրամատին զիպավ։ Մի ուրիշ ռումբ բարձրացավ նրա դիմաց և, թվաց, գալիս է ուղիղ իր վրա։ Նա հանկարծ սարսափ զգաց. մնգմնգալով վազեց մի հինգ քայլ ու պառկեց գետնին։ Իսկ յերբ ռումբը պայթեց, և իրենից հեռու, նա սաստիկ նեղացավ ինքն իր վրա ու վեր կացավ, շուրջը նայելով, թե վորևե մեկը չի տեսել արդյոք իր պառկելը. բայց վոչ-վոք չկար։

Մի անգամ արդեն մարդու սիրտը մտած վախը իր տեղը շուտով չի զիջում մի ուրիշ զգացումի։ Նա, ով միշտ պարծենում էր, թե յերբեք չի կռանա, արագավազ քայլերով և գրեթե չորեքթաթ սողալով գնաց խրամատով։ «Եհ, ինչ վատ է, մտածեց նա գայթելով,—անկասկած սպանելու յեն», և, զգալով թե վորքան դժվար է շնչում և ինչպես քրտինքը ծածկել էր ամբողջ մարմինը, նա զարմանում էր ինքն իր վրա, բայց այլևս փորձ չէր անում իր այդ զգացումը հաղթահարելու։

Հանկարծ իր առջև լսեց ինչ-որ մեկի քայլերը։ Նա արագորեն ուղղվեց, գլուխը բարձրացրեց և, թուրը խիզախորեն շրխկացնելով, գնաց վոչ այնպես արագ քայլերով, ինչպես առաջ։ Նա ինքն իրեն անճանաչելի էր թվում։ Յերբ մոտեցավ իրեն հանդիպած սակրավոր սպային ու նավաստուն և յերբ առաջինը ձայն տվեց նրան՝ «պառկեցե՛ք», ցույց տալով ռումբի լուսավոր կետը, որ հետզհետե լուսավորվելով ու արագությամբ մոտենալով՝ շրփաց խրամատի մոտ, Կալուգինը փոքր ինչ և ակամա, վախեցած ձայնի ազդեցության ներքո, գլուխը կռացրեց ու առաջ գնաց։

— Տե՛ս, ի՜նչ քաջ է, –ասաց նավաստին, որ հանգիստ նայում էր ընկած ռումբին և փորձ աչքով իսկույն հաշվեց, որ նրա կտորտանքները չեն կարող խրամատին դիպչել,—պառկել էլ չի ուզում, է։

Արդեն մի քանի քայլ եր մնում, վոր Կալուգինն անցնի բաստիոնի հրամանատարի բլինդաժից դեպի ընկած հրապարակը, յերբ կրկին այդ հիմար վախը տիրեց նրան. սիրտն արագորեն խփեց, արյունը տվեց գլուխը, և հարկ յեղավ ջանք գործադրել իր վրա, վորպեսզի մինչև բլինդաժ հասնի։

—Ինչո՞ւ եք այդպես հևում,—ասաց գեներալը, յերբ Կալուգինը հայտնեց նրան հրամանները։

—Շատ արագ եմ յեկել, ձերդ գերազանցություն։

—Չեյի՞ք ցանկանա մի բաժակ գինի։

Կալուգինը մի բաժակ գինի խմեց ու պապիրոսը վառեց։ Տաք կռիվն ընդհատվել եր արդեն. միայն ուժեղ թնդանոթաձգությունն եր շարունակվում յերկու կողմից։ Բլինդաժում նստած եյին գեներալ N-ն, բաստիոնի հրամանատարը և ելի մի վեց սպա, վորոնց թվում և Պրասկուխինը, ու խոսում եյին կռվի զանազան մանրամասնությունների մասին։ Նստելով այդ կոկիկ սենյակում, վոր ծածկված եր յերկնագույն պաստառներով, ուր կար բազմոց, մահճակալ, սեղան, (վորի վրա թղթեր եյին դրված), պատի ժամացույց և սրբի պատկեր, վորի առջև կանթեղ եր վառվում, նայելով բնակության այդ նշաններին և հաստ արշինանոց գերաններին, վոր առաստաղն եյին կազմում, և լսելով բլինդաժում թույլ թվացող կրակոցները,—Կալուգինն ուղղակի չեր կարողանում հասկանալ, թե ինչպես յերկու անգամ թույլ տվեց, վոր մի այդպիսի աններելի թուլություն հաղթահարի իրեն։ Նա բարկանում եր ինքն իր վրա և ցանկանում եր մի նոր վտանգ, վորպեսզի նորից փորձի իրեն։

—Ուրախ եմ, վոր դուք այստեղ եք, կապիտան,—ասաց նա շտաբ-սպայի շինելով, մեծ բեղերով և Գեորգիի շքանշանով ծովային սպային, վոր այդ ժամանակ խնդրեց գեներալին՝ իրեն բանվորներ տալ, վորպեսզի իր մարտկոցում յերկու հրակնատ (ամբրազուր) կարգի բերի, վո-

րոնք ծածկվել եյին հողով։—Գեներալն ինձ հրամայել ե իմանալ,—շարունակեց Կալուգինը, յերբ մարտկոցի հրամանատարը վերջացրեց իր ասելիքը գեներալին,—կարո՞ղ են արդյոք ձեր թնդանոթները կրակել խրամատների վրա։

—Միայն մի թնդանոթ կարող ե,—մռայլ պատասխանեց կապիտանը։

—Այնուամենայնիվ գնանք տեսնենք։

Կապիտանը մռայլվեց և բարկացած կռնչաց։

—Ամբողջ գիշերն այնտեղ վոտի վրա եմ յեղել, յեկել եմ գեթ մի փոքր հանգստանամ,—ասաց նա։—Չի՞ կարելի արդյոք մենակ գնաք։ Իմ ոգնականը՝ լեյտենանտ Կարցը այնտեղ ե. ամեն բան ցույց կտա ձեզ։

Կապիտանն արդեն վեց ամիս եր ինչ վարում եր այդ ամենավտանգավոր մարտկոցներից մեկի հրամանատարությունը և մինչև անգամ, յերբ բ լ ի ն դ ա ժ ն ե ր էլ չկային, նա առանց դուրս գալու, պաշարման սկզբից ապրում եր բաստիոնում և ծովայինների շրջանում քաջ մարդու հռչակ ուներ։ Այդ պատճառով նրա հրաժարվելն ապշեցրեց ու զարմացրեց Կալուգինին։ «Ա՛յ քեզ հռչակ», մտածեց նա։

—Ե, ուրեմն յես մենակ կերթամ, յեթե թույլ կտաք,—ասաց նա փոքր ինչ հեգնական յեղանակով կապիտանին, վորը, սակայն, նրա խոսքերին վոչ մի ուշադրություն չդարձրեց։

Բայց Կալուգինը չեր հասկանում, վոր ինքը տարբեր ժամանակ բաստիոններում յեղել ե ընդամենը հիսուն ժամ, այնինչ կապիտանն այնտեղ ապրել ե վեց ամիս։ Կալուգինին դեռ խթանում եյին սնափառությունը, փայլելու ցանկությունը, պարգևների, հռչակի հույսը և խիզախելու հրապույրը, իսկ կապիտանն արդեն ապրել—տեսել եր այդ բոլորը։ Սկզբում սնապարծություն եր անում, քաջ եր ձևանում, խիզախում եր, սպասում եր պարգևնե-

րի ու հաչակի և մինչև անգամ ձեռք բերեց դրանք, բայց այժմ արդեն այդ խմթան հանդիսացող միջոցները կորցրել էին իրենց հրապույրը նրա համար, և նա գործին նայում էր այլ կերպ — ճշտությամբ կատարում էր իր պարտականությունը։ Բայց, լավ իմանալով, թե որքան քիչ պատահական կյանք է մնում իրեն վեց ամիս բաստիոնում մնալուց հետո, այլևս վտանգի չէր յենթարկում այդ պատահական կյանքը առանց խիստ անհրաժեշտության, այնպես որ ջահել լեյտենանտը, — որ մի շաբաթ առաջ էր ծառայության մտել մարտկոցը և այժմ ցույց տալով այն Կալուգինին, որի հետ անօգուտ տեղը միմյանց առջև գլուխները կոխում էին հրակնատների մեջ և դուրս էին գալիս հրետաթմբերը (բանկետները), — թվում էր կապիտանից տասն անգամ ավելի քաջ։

Մարտկոցը նայելով և յետ դեպի բ լ ի ն դ ա ժ ը գնալով, Կալուգինը մթան մեջ հանդիպեց գեներալին, որ իր համհարզներով գնում էր դեպի դիտանոցը։

— Ռոտմիստր Պրասկուխին, — ասաց գեներալը, — գնացեք, խնդրեմ, առաջին լոժեմենտը և այնտեղ աշխատող N.* գնդի յերկրորդ գումարտակին ասացեք, որ աշխատանքը թողնի, առանց աղմուկի դուրս գա այնտեղից և միանա իր գնդին, որ, իբրև պահեստի ուժ կանգնած էր սարի տակ... Հասկացա՞ք։ Ինքներդ տարեք գնդի մոտ։

— Լսում եմ։

Յեվ Պրասկուխինը ձին սնգանգալով քշեց դեպի լոժեմենտը։

Հրաձգությունը թուլացել էր։

X

— Սա N* գնդի յերկրորդ գումարտա՞կն է, — հարցրեց Պրասկուխինը, հասնելով նշանակված տեղը և հանդիպելով զինվորների, որ պարկերով հող էին կրում։

— Այո, ճիշտ այդպես է։

— Ո՞ւր է հրամանատարը։

Միխայլովը, յենթադրելով թե վաշտի հրամանատարին են հարցնում, դուրս յեկավ իր փոսից և, Պրասկուխինին պետի տեղ դնելով, ձեռը քունքի մոտ բռնած՝ մոտեցավ նրան։

— Գեներալը հրամայեց... ձեզ... հաճեցեք գնալ... շուտով... և, որ գլխավորն է, անձայն, առանց աղմուկի... յետ գնացեք... ոչ թե յետ, այլ պահեստի ուժի մոտ, — ասաց Պրասկուխինը, խեթ նայելով թշնամու կրակների ուղղությամբ։

Պրասկուխինին ճանաչելով, ձեռն իջեցնելով և գլխի ընկնելով, թե բանն ինչումն է, Միխայլովը հայտնեց հրամանը, ու գումարտակը շարժվեց. զինվորները հրացանները հավաքեցին, շինելները հագան ու ճանապարհ ընկան։

Ով չի ապրել, նա չի կարող յերևակայել այն հրճվանքը, որ զգում է մարդ, հեռանալով յերեք ժամվա ռմբակոծությունից հետո մի այնպիսի վտանգավոր տեղից, որպիսին լոժեմենտներն են (ձեռաց շինած ամրությունները)։ Միխայլովն այդ յերեք ժամվա մեջ, արդեն մի քանի անգամ և ոչ առանց հիմքի համարելով իր վերջն անխուսափելի, ընտելացավ այն մտքին, որ իրեն սպանելու յեն անպատճառ և որ ինքն արդեն այս աշխարհին չի պատկանում։ Չնայած դրան, սակայն, նա հազիվ էր պահում իրեն, որ չվազի, յերբ վաշտի առաջն ընկած՝ Պրասկուխինի հետ միասին դուրս յեկան լոժեմենտներից։

— Ցտեսություն, — ասաց նրան մայորը՝ մյուս գումարտակի հրամանատարը, որ մնաց լոժեմենտներում և որի հետ նրանք հաց ու պանիր էին կերել փոսում նստած։ — Բարի ճանապարհ։

— Ձեզ էլ ցանկանում եմ բարով մնաք։ Հիմի, կարծես, հանդարտացավ։

Բայց հազիվ նա կարողացել էր ասել այս, յերբ թշնամին, յերևի լոժեմենտներում շարժում նկատելով, սկսեց իրար յետևից կրակել։ Մերոնք պատասխանեցին նրան,

և նորից սկսվեց սաստիկ թնդանոթաձգություն։ Աստղերը բարձր, բայց վոչ պայծառ պսպղում եյին յերկնքում։ Գիշերը մութն եր. մատդ մարդու աչք կոխիր—չեր տեսնի. միայն հրաձգության կրակները և պայթող ռումբերն եին մի ակնթարթ լուսավորում առարկաները։ Զինվորները քայլում եին շտապով ու լուռ, և ակամա վազում եյին իրար յետևից. կրակոցների անդադար ճռճռոցի մեջ լսվում եյին միայն նրանց՝ չոր ճանապարհին զարկվող քայլերի համաչափ ձայնը, իրար դիպչող սվինների զնգոցը կամ հառաչանքն ու աղոթքը մի վորևե զինվորի. «Տեր աստված, տեր աստված, ես ինչ բան ա»։ Յերբեմն լսվում եյին վիրավորի հեծեծանքն ու ձայներ. «պատգարակ»։ (Միխայլովի հրամանատարության տակ գտնվող վաշտից մի հրետային ռումբից գիշերն ընկան 26 մարդ)։ Մութ հեռու հորիզոնում կայծակը բռնկում եր, բաստիոնի պահակը ձայն եր տալիս. «ռումբ», և ռումբը, վաշտի գլխավերևը դժժալով, քանդում եր հողը ու քարերն այս ու այն կողմ նետում։

«Գրողը տանի, ինչքան կամաց են գնում»,—մտածում եր Պրասկուխինը, անդադար յետ նայելով ու Միխայլովի կողքին քայլելով,—իսկապես, ավելի լավ ե առաջ վազեմ. մի բան վոր հրամանը հայտնեցի... Ասե ք—չե. կարող են հետո պատմել, թե վախլոտ եմ։ Ինչ կլինի թող լինի—կերթամ սրա հետ»։

«Սա ինչու յե ինձ հետ գալիս», մտածում եր իր հերթին Միխայլովը.—Վորքան նկատել եմ, սա միշտ դժբախտություն ե բերում։ Ա՛յ. հրեն թռած գալիս ե, կարծես, ուղիղ այստեղ»։

Անցնելով մի քանի հարյուր քայլ, հանդիպեցին Կալուգինին, վորը, թուրն աշխուժորեն շխկացնելով, գնում եր դեպի լոժեմենտները, վորպեսզի, գեներալի հրամանի համաձայն, իմանա, թե աշխատանքներն ինչ դրության մեջ են այնտեղ։ Բայց, Միխայլովին հանդիպելով, նա մտա-

ծեց, փոխանակ ինքն այդ սարսափելի կրակի տակով այնտեղ գնալու, ինչ վոր հրամայված էլ չեր իրեն, կարող ե մանրամասն հարցնել այնտեղ յեղած սպայից։ Յեվ իսկապես Միխայլովը մանրամասն պատմեց աշխատանքների մասին։ Փոքր ինչ էլ նրա հետ գնալով, Կալուգինը ծռեց-մտավ խրամատը, վոր տանում եր դեպի բլինդաժը։

— Հը, ինչ նորություն,—հարցրեց սպան, վորը, ընթրելով, մենակ նստել եր սենյակում։

— Վոչինչ. թվում ե թե էլ բան չի լինելու։

— Ինչպե՞ս թե։ Ընդհակառակը, գեներալը հենց հիմա կրկին գնաց դիտանոցը։ Մի գունդ էլ յեկավ։ Ա՛յ... լսում եք. նորից հրացանաձգություն։ Մի՛ գնաք։ Ի՞նչ գործ ունեք,—ավելացրեց սպան, նկատելով այն շարժումը, վոր արավ Կալուգինը։

«Իսկապես ասած յես անպայման այնտեղ պիտի լինեյի,—մտածեց Կալուգինը,—բայց յես այսօր արդեն շատ վտանգի յենթարկեցի ինձ. սարսափելի հրաձգություն ե»։

— Յեվ իսկապես, ավելի լավ ե նրան այստեղ սպասեմ.—ասաց նա։

Հիրավի, քսան րոպեից հետո գեներալը վերադարձավ իր հետ գնացած սպաների հետ միասին. դրանց թվումն եր և յունկերը, բարոն Պեստը, բայց Պրասկուխինը չկար։ Մերոնք թշնամուն յետ եին մղել և լոժեմենտները գրավել։

Կռվի մասին մանրամասն տեղեկություններ ստանալով, Կալուգինը Պեստի հետ միասին դուրս յեկավ բլինդաժից։

XI.

— Ձեր շինելն արյունոտ ե. միթե ձեռնակռվի մեջ եք յեղել,—հարցրեց նրան Կալուգինը։

— Ո՜հ, սարսափելի՛ յե։ Կարո՞ղ եք յերևակայել...

Յեվ Պեստն սկսեց պատմել, թե ինչպես ե յառաջ տարել

և նորից սկսվեց սաստիկ թնդանոթաձգություն։ Աստղերը բարձր, բայց վոչ պայծառ պսպղում եյին յերկնքում։ Գիշերը մութն եր. մատդ մարդու աչք կոխեիր—չեր տեսնի. միայն հրաձգության կրակները և պայթող ռումբերն եյին մի ակնթարթ լուսավորում առարկաները։ Զինվորները քայլում եյին շտապով ու լուռ, և ակամա վազում եյին իրար յետևից. կրակոցների անդադար ճռճռոցի մեջ լսվում եյին միայն նրանց՝ չոր ճանապարհին զարկվող քայլերի համաչափ ձայնը, իրար դիպչող սվինների զնգոցը կամ հառաչանքն ու աղոթքը մի վորևե զինվորի. «Տեր աստված, տեր աստված, ես ինչ բան ա»։ Յերբեմն լսվում եյին վիրավորի հեծեծանքն ու ձայներ. «պատգարակ»։ (Միխայլովի հրամանատարության տակ գտնվող վաշտից մի հրետային ռումբից գիշերն ընկան 26 մարդ)։ Մութ հեռու հորիզոնում կայծակը բռնկում եր, բաստիոնի պահակը ձայն եր տալիս. «ռումբ», և ռումբը, վաշտի գլխավերևը դժժալով, քանդում եր հողը ու քարերն այս ու այն կողմ նետում։

«Գրողը տանի, ինչքան կամաց են գնում»,—մտածում եր Պրասկուխինը, անդադար յետ նայելով ու Միխայլովի կողքին քայլելով,—իսկապես, ավելի լավ ե առաջ վազեմ. մի բան վոր հրամանը հայտնեցի... Ասենք—չե. կարող են հետո պատմել, թե վախլոտ եմ։ Ինչ կլինի թող լինի—կերթամ սրա հետ»։

«Սա ինչու յե ինձ հետ գալիս», մտածում եր իր հերթին Միխայլովը.—Վորքան նկատել եմ, սա միշտ դժբախտություն ե բերում։ Այ. հրեն թռած գալիս ե, կարծես, ուղիղ այստեղ»։

Անցնելով մի քանի հարյուր քայլ, հանդիպեցին Կալուգինին, վորը, թուրն աշխուժորեն շխկացնելով, գնում եր դեպի լոժեմենտները, վորպեսզի, գեներալի հրամանի համաձայն, իմանա, թե աշխատանքներն ինչ դրության մեջ են այնտեղ։ Բայց, Միխայլովին հանդիպելով, նա մտա-

ծեց, փոխանակ ինքն այդ սարսափելի կրակի տակով այնտեղ գնալու, ինչ վոր հրամայված էլ չեր իրեն, կարող ե մանրամասն հարցնել այնտեղ յեղած սպայից։ Յեվ իսկապես Միխայլովը մանրամասն պատմեց աշխատանքների մասին։ Փոքր ինչ էլ նրա հետ գնալով, Կալուգինը ծռեց-մտավ խրամատը, վոր տանում եր դեպի բլինդաժը։

— Հը, ինչ նորություն,—հարցրեց սպան, վորը, ընթրելով, մենակ նստել եր սենյակում։

— Վոչինչ. թվում ե թե էլ բան չի լինելու։

— Ինչպե՞ս թե։ Ընդհակառակը, գեներալը հենց հիմա կրկին գնաց դիտանոցը։ Մի գունդ էլ յեկավ։ Այ...լսում եք. նորից հրացանաձգություն։ Մի՛ գնաք։ Ի՞նչ գործ ունեք,—ավելացրեց սպան, նկատելով այն շարժումը, վոր արավ Կալուգինը։

«Իսկապես ասած յես անպայման այնտեղ պիտի լինեյի,—մտածեց Կալուգինը,—բայց յես այսօր արդեն շատ վտանգի յենթարկեցի ինձ. սարսափելի հրաձգություն ե»։

— Յեվ իսկապես, ավելի լավ ե նրան այստեղ սպասեմ,—ասաց նա։

Հիրավի, քսան րոպեից հետո գեներալը վերադարձավ իր հետ գնացած սպաների հետ միասին. դրանց թվումն եր և յունկերը, բարոն Պեստը, բայց Պրասկուխինը չկար։ Մերոնք թշնամուն յետ եյին մղել և լոժեմենտները գրավել։

Կռվի մասին մանրամասն տեղեկություններ ստանալով, Կալուգինը Պեստի հետ միասին դուրս յեկավ բլինդաժից։

XI.

— Ձեր շինելն արյունոտ ե. միթե ձեռնակռվի մեջ եք յեղել,—հարցրեց նրան Կալուգինը։

— Ո՛հ, սարսափելի՛ յե։ Կարո՞ղ եք յերևակայել...

Յեվ Պեստն սկսեց պատմել, թե ինչպես ե առաջ տարել

էր վաշտը, ինչպես է վաշտապետը սպանվել, ինչպես է ինքը սրախողող արել մի ֆրանսիացու և ինչպես, եթե ինքը չլիներ, բանը տանուլ էին տալու։

Այդ պատմության հիմնականը՝ թե վաշտապետը սպանվել էր և Պեստը սպանել էր ֆրանսիացու, ճիշտ էր, բայց, մանրամասնությունները պատմելով, յունկերը հնարում էր ու պարծենում։

Նա պարծենում էր ակամա, որովհետև կռվի ժամանակ գտնվում էր ինչ-որ մշուշի ու այն աստիճան ինքնամոռացության մեջ, որ բոլորը, ինչ պատահել էր, թվում էր նրան պատահել է ինչ-որ մի տեղ, ինչ-որ մի ժամանակ և ինչ որ մեկի հետ։ Շատ բնական է, որ նա աշխատում էր այդ մանրամասնությունները վերարտադրել իրեն համար նպաստավոր կողմից։ Բայց ահավասիկ բանն ինչպես էր յեղել իսկապես։

Գումարտակը, ուր գործուղված էր յունկերն արտայերքին (вылазка) մասնակցելու համար, յերկու ժամ կրակի տակ կանգնած էր ինչ-որ պատվարի մոտ։ ապա գումարտակի հրամանատարն առջևում ինչ-որ բան ասաց և վաշտապետները շարժվեցին, գումարտակը քայլեց, դուրս յեկավ պատվարի հետևից և, հարյուր քայլ անելով, կանգ առավ զորասյուներ կազմելու։ Պեստին ասին, որ կանգնի յերկրորդ վաշտի աջ թևում։

Իրեն բոլորովին հաշիվ չտալով, թե ուր է գնում ինքն և ինչու համար, յունկերը բռնեց իր տեղը, և ակամա զսպած շնչառությամբ ու սառը մի դողով, որ անցնում էր նրա մեջքով, անգիտակցաբար նայեց առաջ՝ դեպի մութ հեռուն, սպասելով ինչ-որ սարսափելի բանի։ Նա, ասենք, այնքան սարսափ չէր զգում, որովհետև հրաձգություն չկար, որքան վայրենի, տարօրինակ էր մտածել, որ ինքը գտնվում է բերդից դուրս, դաշտում։ Նորից գումարտակի հրամանատարն ինչ-որ բան ասաց առջևում։ Կրկին սպաները խոսեցին փսփսալով, հրամաններ հայտնելով իրար,

և առաջին վաշտի սև պատն իջավ հանկարծ։ Հրամայված էր պառկել։ Նույնպես պառկեց և յերկրորդ վաշտը, ու Պեստը, պառկելիս, ձեռը ծակեց ինչ-որ սուր բանով։ Չպառկեց միայն յերկրորդ վաշտի հրամանատարը։ Նրա կարճ հասակը ձեռի սուսերով, որը նա թափահարում էր անդադար խոսելով, շարժվում էր վաշտի առաջին։

Տղերք, տեսեք հա, քաջ յեղեք։ Հրացաններից չկրակեք, այլ սվիններով դրանց, այդ սրիկաներին։ Յերբ «ուռա» կանչեմ, յեկեք իմ յետևից, յետ չմնաք... գլխավորն է — համերաշխ... ցույց տանք, ամոթով չմնանք. այնպես չէ՞, տղերք։

— Ի՞նչպես է մեր վաշտապետի ազգանունը,— հարցրեց Պեստը յունկերից, որ պառկած էր իր կողքին։— Ի՞նչ քաջն է։

— Այո, նա կռվի մեջ միշտ այդպես է...,— պատասխանեց յունկերը։— Ազգանունը Լիխինկովսկի է։

Այդ ժամանակ վաշտի առաջ մի ակնթարթում մի բոց բռնկեց, լսվեց բոմբյուն, որ խլացրեց ամբողջ վաշտը, և բարձր օդի մեջ փռփռացին քարեր ու ռումբի կտորտանքներ (գոնե հիսուն րոպե անց մի քար ընկավ վերևից և ջարդեց զինվորի ոտքը)։

Այդ ռումբը էլեվացիոն հրանոթակալից էր, և այն հանգամանքը, որ նա դիպավ վաշտին, ցույց էր տալիս, որ ֆրանսիացիները նկատել են զորասյունը։

—Ռումբեր ես նետում... Սպասիր մի տեղ հասնենք, այն ժամանակ կտեսնես ռուսի յերեքզեհանի սվինի համը, անիծած,— ասաց վաշտապետն այնքան բարձր, որ գումարտակի հրամանատարն ստիպված էր հրամայել, որ լռի և այդքան չաղմկի։

Դրանից հետո առաջին վաշտը վեր կացավ, նրա յետևից յերկրորդը։ Հրամայվեց հրացանները պատրաստ բռնել սվինամարտի համար, և գումարտակն առաջ գնաց։ Պեստն այնպիսի ահ ու սարսափի մեջ էր, որ ուղղակի չէր հի-

էր փաշտը, ինչպես է վաշտապետը սպանվել, ինչպես է ինքը սրախողող արել մի ֆրանսիացու և ինչպես, յեթե ինքը չլիներ, բանը տանուլ երին տալու:

Այդ պատմության հիմնականը՝ թե վաշտապետը սպանվել էր և Պեստը սպանել էր ֆրանսիացու, ճիշտ էր, բայց, մանրամասնությունները պատմելով, յունկերը հնարում էր ու պարծենում:

Նա պարծենում էր ակամա, վորովհետև կռվի ժամանակ գտնվում էր ինչ-վոր մշուշի ու այն աստիճան ինքնամոռացության մեջ, վոր բոլորը, ինչ պատահել էր, թվում էր նրան պատահել է ինչ-վոր մի տեղ, ինչ-վոր մի ժամանակ և ինչ վոր մեկի հետ: Շատ բնական է, վոր նա աշխատում էր այդ մանրամասնությունները վերարտադրել իրեն համար նպաստավոր կողմից: Բայց ահավասիկ բանն ինչպես էր յեղել իսկապես:

Գումարտակը, ուր գործուղված էր յունկերն արտյելքին (вылазка) մասնակցելու համար, յերկու ժամ կրակի տակ կանգնած էր ինչ-վոր պատվարի մոտ: ապա գումարտակի հրամանատարն առջևում ինչ-վոր բան ասաց և վաշտապետները շարժվեցին, գումարտակը քայլեց, դուրս յեկավ պատվարի հետևից և, հարյուր քայլ անելով, կանգ առավ զորասյուներ կազմելու: Պեստին ասին, վոր կանգնի յերկրորդ վաշտի աջ թևում:

Իրեն բոլորովին հաշիվ չտալով, թե ուր է գնում ինքը և ինչու համար, յունկերը բռնեց իր տեղը, և ակամա զսպած շնչառությամբ ու սառը մի դողով, վոր անցնում էր նրա մեջքով, անգիտակցաբար նայեց առաջ՝ դեպի մութ հեռուն, սպասելով ինչ-վոր սարսափելի բանի: Նա, ասենք, այնքան սարսափ չեր զգում, վորովհետև հրաձգություն չկար, վորքան վայրենի, տարօրինակ էր մտածել, վոր ինքը գտնվում է բերդից դուրս, դաշտում: Նորից գումարտակի հրամանատարն ինչ-վոր բան ասաց առջևում: Կրկին սպաները խոսեցին փսփսուկով, հրամաններ հայտնելով իրար,

և առաջին վաշտի սև պատն իջավ հանկարծ: Հրամայված էր պառկել: Նույնպես պառկեց և յերկրորդ վաշտը, ու Պեստը, պառկելիս, ձեռը ծակեց ինչ-վոր սուր բանով: Չպառկեց միայն յերկրորդ վաշտի հրամանատարը: Նրա կարճ հասակը ձեռի սուսերով, վորը նա թափահարում էր անդադար խոսելով, շարժվում էր վաշտի առաջին:

Տղերք, տեսեք հա, քաջ յեղեք: Հրացաններից չկրակեք, այլ սվիններով դրանց, այդ սրիկաներին: Յերբ «ուռա» կանչեմ, յեկեք իմ յետևից, յետ չմնաք... գլխավորն է—համերաշխ... ցույց տանք, ամոթով չմնանք. այնպես չէ, տղերք:

— Ի՞նչպես է մեր վաշտապետի ազգանունը,—հարցրեց Պեստը յունկերից, վոր պառկած էր իր կողքին:— Ի՞նչ քաջն է:

— Այո, նա կռվի մեջ միշտ այդպես է...,—պատասխանեց յունկերը:—Ազգանունը Լիխինկովսկի է:

Այդ ժամանակ վաշտի առաջ մի ակնթարթում մի բոց բռնկեց, լսվեց բոմբյուն, վոր խլացրեց ամբողջ վաշտը, և բարձր օդի մեջ ֆիֆռացին քարեր ու ռումբի կտորտանքներ (գոնե հիսուն րոպե անց մի քար ընկավ վերևից և ջարդեց զինվորի վոտքը):

Այդ ռումբը էլեվացիոն հրանոթակալից էր, և այն հանգամանքը, վոր նա դիպավ վաշտին, ցույց էր տալիս, վոր ֆրանսացիները նկատել են զորասյունը:

—Ռումբեր ես նետում... Սպասիր մի տեղ հասնենք, այն ժամանակ կտեսնես ռուսի յերեքզեհանի սվինի համը, անիծյալ,—ասաց վաշտապետն այնքան բարձր, վոր գումարտակի հրամանատարն ստիպված էր հրամայել, վոր լռի և այդքան չաղմկի:

Դրանից հետո առաջին վաշտը վեր կացավ, նրա յետևից յերկրորդը: Հրամայվեց հրացանները պատրաստ բռնել սվինամարտի համար, և գումարտակն առաջ գնաց: Պեստն այնպիսի ահ ու սարսափի մեջ էր, վոր ուղղակի չեր հի-

շում վորքան ժամանակ են գնում, ուր են գնում և ինչ են ուզում։ Նա գնում էր հարբածի պես։ Բայց հանկարծ ամեն կողմից միլիոնավոր կրակներ փայլփլեցին, ինչ վոր սուլոց ու ճռճռոց լսվեց։ Նա ճչաց ու վազեց ինչ-վոր կողմ, վորովհետև բոլորն էլ վազում, բոլորն էլ ճչում եին։ Ապա նա գայթեց ու ընկավ ինչ-վոր բանի վրա։ Դա վաշտապետն էր (վոր վիրավորվել էր վաշտի առջևում. նա յունկերին ֆրանսիացու տեղ դնելով, բռնեց նրա վոտից)։ Հետո, յերբ Պեստը վոտն ազատեց ու վեր կացավ, մթության մեջ թիկունքով նրան դիպավ ինչ-վոր մարդ և քիչ մնաց նորից վայր գցեր նրան. մի ուրիշ մարդ ձայն տվեց. «զարկիր, ինչ ես կանգնել»։ Նա հրացանը վերցրեց ու խրեց ինչ-վոր փափուկ բանի մեջ. «Ah, Dieu!»*) ճչաց մեկը սարսափելի, ականջ ծակող ձայնով, և այստեղ միայն Պեստը հասկացավ, վոր ինքը սվինով ծակել է ֆրանսիացու։ Սառը քրտինքը պատեց նրա ամբողջ մարմինը, նա դողաց, ինչպես տենդի մեջ, ու հրացանը նետեց։ Բայց դա տևեց միայն մի ակնթարթ. Նա հանկարծ գլխի ընկավ, վոր ինքը հերոս է։ Նա հրացանը վերցրեց և, բազմության հետ միասին «ուռա» կանչելով, վազեց հեռացավ սպանված ֆրանսիացուց։ Վազելով քսան քայլ, նա հասավ խրամատը։ Այնտեղ եյին մերոնք և գումարտակի հրամանատարը։

— Յես սվինով սպանեցի մեկին,— ասաց նա գումարտակի հրամանատարին։

— Կեցցես, բարոն։

XII.

— Գիտեք, Պրասկուխինն սպանվել է,— ասաց Պեստը, ուղեկցելով Կալուգինին, վոր գնացել էր նրա մոտ։

— Չի կարող պատահել։

— Ինչպես չէ, յես ինքս տեսա։

— Մնաք բարով. յես շտապում եմ։

*) Ահ, Աստված։

«Յես շատ գոհ եմ,— մտածում էր Կալուգինը տուն վերադառնալով.— առաջին անգամ իմ հերթապահության ժամանակ բախտս բանեց։ Շատ լավ է։ Յես թե վողջ եմ և թե անվնաս, կներկայացվեմ լավ վկայություններով և վոսկե թուր կստանամ անպայման։ Յես, ասենք, արժանի էլ եմ դրան»։

Զեկուցելով գեներալին բոլորը, ինչ հարկավոր էր, նա գնաց իր սենյակը, ուր վաղուց արդեն վերադարձել և նստած նրան էր սպասում իշխան Գալցինը՝ մի գիրք ձեռին, վոր գտել էր Կալուգինի սեղանի վրա։

Զարմանալի բավականություն զգաց Կալուգինը, վոր ինքը տանն է, վտանգից հեռու, և, գիշերային շապիկը հագնելով, անկողնում պառկած արդեն, Գալցինին պատմեց կռվի մանրամասնությունները, վերարտադրելով դրանք, ըստ ամենայնի բնականորեն, այն տեսակետից, վոր այդ մանրամասնություններն ապացուցում եյին, վոր Կալուգինը շատ գործունյա և քաջ սպա յե, վորի մասին, իմ կարծիքով, ավելորդ էր ակնարկել, վորովհետև բոլորն էլ գիտեյին և վոչ մի իրավունք ու առիթ չունեյին կասկածելու, բացառությամբ, գուցե, հանգուցյալ ռոտմիստր Պրասկուխինից, վորը, չնայած վոր մեծ բախտ էր համարում Կալուգինի հետ թևանցուկ զբոսնելը, յերեկ միայն, իբրև գաղտնիք, մի ընկերոջ պատմեց, թե Կալուգինը շատ լավ մարդ է, բայց, խոսքը մեր մեջ մնա, սարսափելի չի սիրում գնալ բաստիոնները։

Նոր միայն Պրասկուխինը, Միխայլովի կողքին քայլելով, բաժանվեց Կալուգինից և, պակաս վտանգավոր տեղ մոտենալով, սկսել էր արդեն աշխուժանալ փոքր ինչ, յերբ իր յետևը պայծառ փայլող մի շանթ տեսավ, լսեց պահակի «ռումբը» և յետևից յեկող մի զինվորի խոսքը. «հենց բատալիոնի վրա յե գալիս»։

Միխայլովը յետ նայեց։ Ռումբի լուսավոր կետը, թվում էր, կանգ է առել իր զենիթում այն դրության

մեջ, յերբ բոլորովին անկարելի յե վորոշել նրա ուղղությունը: Բայց դա մի ակնթարթ տևեց միայն. ռումբն արագորեն, հետզհետե մոտեցավ (այնպես, վոր տեսնվում եյին արդեն նրանից թափվող կայծերը և լսելի յեր ճակատագրական փշփշոցը) և իջավ գումարտակի ուղիղ մեջտեղը:

— Պառկի՛ր,—ձայն տվեց մեկը:

Միխայլովն ու Պրասկուխինը պառկեցին գետնին: Պրասկուխինը, աչքերը փակած՝ լսեց միայն, թե ինչպես ռումբը մի ինչ-վոր շատ մոտիկ տեղ շրխաց պինդ հողի վրա: Անցավ մի վայրկյան, վոր թվաց մի ժամ—ռումբը չը պայթեց: Պրասկուխինը վախեցավ. արդյոք անտեղի չե՞ր իր յերկյուղը. գուցե, ռումբն ընկել է հեռու, և նրան թվացել է միայն, թե հենց այստեղ է փշշում: Նա աչքերը բացեց և ուրախությամբ նկատեց, վոր Միխայլովը հենց իր վոտների մոտ անշարժ պառկած է գետնին: Բայց հենց այդտեղ ել նրա աչքն ընկավ իրենից քիչ հեռու պտտվող ու վառվող ռումբի վրա:

Սարսափը, սառը, բոլոր այլ մտքերն ու զգացումները վանող սարսափը տիրեց նրա վողջ եյությանը: Նա յերեսը ծածկեց ձեռներով:

Անցավ ելի մի վայրկյան.—մի վայրկյան, վորի ընթացքում զգացումների, մտքերի, հույսերի, հիշողությունների մի ամբողջ աշխարհ անցավ նրա յերևակայության միջով:

«Ո՞ւմ է սպանելու. ինձ թե Միխայլովին, թե՞ յերկուսիս ել միասին: Իսկ յեթե ինձ—վորտե՞ղս է դիպչելու: Գլխի՞ս դիպչի՝ ամեն ինչ վերջացած է. իսկ յեթե վոտս—կկտրեն, և յես կխնդրեմ, վոր անդամահատությունը կատարեն անպայման խլորաֆորմով, և յես կարող եմ դեռ վողջ մնալ: Բայց գուցե միայն Միխայլովին է սպանում. այն ժամանակ յես կպատմեմ, թե ինչպես կողք-կողքի գնում եյինք, նրան սպանեց և նրա արյան ցայքունները դիպան ինձ: Չե, ինձ ավելի մոտ է... Ինձ կդիպչի»:

Այստեղ նա հիշեց այն տասներկու ռուբլու մասին, վոր պարտ եր Միխայլովին. հիշեց ելի Պետերբուրգի մի պարտք, վոր վաղուց պետք է վճարած լիներ. գնչուական յեղանակը, վոր յերգում եր յերեկ, միտն ընկավ: Կինը, վորին սիրում եր, նրա յերևակայությանը պատկերացավ մուգ-մանիշակագույն ժապավեններ ունեցող գլխանոցով. մի մարդ, վոր հինգ տարի առաջ վիրավորել եր իրեն և վորին ինքն այդ վիրավորանքի համար չեր պատասխանել—մտաբերեց, թեև, դրա և հազարավոր այլ հիշողությունների հետ միասին, իրականության զգացումը—մահվան սպասումը մի ակնթարթ անգամ չեր հեռանում նրանից: «Ասենք, գուցե և չի պայթելու», մտածեց նա և հուսահատ վճռականությամբ ուզեց աչքերը բանալ: Բայց այդ վայրկյանին, դեռ փակ կոպերի միջից նրա աչքերը տալշեցին կարմիր կրակից. սարսափելի բոմբյունով ինչ-վոր մի բան դիպավ նրա կրծքի մեջտեղը. նա վազեց դեպի ինչ-վոր կողմ, սայթաքեց վոտի տակն ընկած թրի պատյանով և ընկավ կողքի վրա:

«Փառք աստծո, միայն սալջարդ յեղա»,—յեղավ նրա առաջին միտքը,—և նա ուզեց ձեռը տանել դեպի կուրծքը, բայց ձեռները թվացին կապված, ու ինչ-վոր ճնշիչներ սեղմում եյին գլուխը: Նրա աչքին զինվորներ յերևացին, և նա անգիտակցաբար հաշվեց նրանց. «մե՛կ, յերկո՛ւ, յերե՛ք զինվոր, ահա և փաթաթված շինելով սպա», մտածեց նա: Հետո շանթը փայլեց նրա աչքերում, և նա մտածեց—այս ինչից կրակեցին—հրանոթի՞ց (մորտիր) թե թնդանոթից: Յերևի, թնդանոթից: Այ, ելի կրակեցին. այ, դարձյալ զինվորներ. հինգ, վե՛ց, յո՛թը զինվոր, գնում են շարունակ կողքովս: Նա հանկարծ սարսափեց, վոր իրեն կարող են վոտնատակ տալ: Նա ուզեց ձայն տալ, վոր սալջարդ է յեղել, բայց բերանն այնքան չոր եր, վոր լեզուն կպել եր քիմքին, և սաստիկ ծարավը տանջում եր նրան: Նա զգում եր, թե ինչպես կրծքի մոտերքը թաց

մեջ, յերբ բոլորովին անկարելի յե վորոշել նրա ուղղությունը։ Բայց դա մի ակնթարթ տևեց միայն. ռումբն արագորեն, հետզհետե մոտեցավ (այնպես, վոր տեսնվում եյին արդեն նրանից թափվող կայծերը և լսելի յեր ճակատագրական փշփշոցը) և իջավ դումարտակի ուղիղ մեջտեղը։

— Պառկի՛ր,—ձայն տվեց մեկը։

Միխայլովն ու Պրասկուխինը պառկեցին գետնին։ Պրասկուխինը, աչքերը փակած՝ լսեց միայն, թե ինչպես ռումբը մի ինչ-վոր շատ մոտիկ տեղ շրփաց պինդ հողի վրա։ Անցավ մի վայրկյան, վոր թվաց մի ժամ—ռումբը չը պայթեց։ Պրասկուխինը վախեցավ. արդյոք անտեղի չե՞ր իր յերկյուղը. գուցե, ռումբն ընկել է հեռու, և նրան թվացել ե միայն, թե հենց այստեղ ե փշշում։ Նա աչքերը բացեց և ուրախությամբ նկատեց, վոր Միխայլովը հենց իր վոտների մոտ անշարժ պառկած ե գետնին։ Բայց հենց այդտեղ էլ նրա աչքն ընկավ իրենից քիչ հեռու պտտվող ու վառվող ռումբի վրա։

Սարսափը, սառը, բոլոր այլ մտքերն ու զգացումները վանող սարսափը տիրեց նրա վողջ եյությանը։ Նա յերեսը ծածկեց ձեռներով։

Անցավ ելի մի վայրկյան.—մի վայրկյան, վորի ընթացքում զգացումների, մտքերի, հույսերի, հիշողությունների մի ամբողջ աշխարհ անցավ նրա յերևակայության միջով։

«Ո՞ւմ ե սպանելու. ինձ թե Միխայլովին, թե՞ յերկուսիս էլ միասին։ Իսկ յեթե ինձ—վորտե՞ղս ե դիպչելու։ Գլխիս դիպչի՝ ամեն ինչ վերջացած ե. իսկ յեթե վոտիս—կկտրեն, և յես կխնդրեմ, վոր անդամահատությունը կատարեն անպայման խլորաֆորմով, և յես կարող եմ դեռ վողջ մնալ։ Բայց գուցե միայն Միխայլովին ե սպանում. այն ժամանակ յես կպատմեմ, թե ինչպես կողք-կողքի գնում եյինք, նրան սպանեց և նրա արյան ցայքուները դիպան ինձ։ Չե, ինձ ավելի մոտ ե... Ինձ կդիպչի»։

Այստեղ նա հիշեց այն տասներկու ռուբլու մասին, վոր պարտ եր Միխայլովին. հիշեց ելի Պետերբուրգի մի պարտք, վոր վաղուց պետք ե վճարած լիներ. գնչուական յեղանակը, վոր յերգում եր յերեկ, միտն ընկավ։ Կինը, վորին սիրում եր, նրա յերևակայությանը պատկերացավ մուգ-մանիշակագույն ժապավեններ ունեցող գլխանոցով. մի մարդ, վոր հինգ տարի առաջ վիրավորել եր իրեն և վորին ինքն այդ վիրավորանքի համար չեր պատասխանել—մտաբերեց, թեև, դրա և հազարավոր այլ հիշողությունների հետ միասին, իրականության զգացումը—մահվան սպասումը մի ակնթարթ անգամ չեր հեռանում նրանից։ «Սակայն, գուցե և չի պայթելու», մտածեց նա և հուսահատ վճռականությամբ ուզեց աչքերը բանալ։ Բայց այդ վայրկյանին, դեռ փակ կոպերի միջից նրա աչքերը ապշեցին կարմիր կրակից. սարսափելի բոմբյունով ինչ-վոր մի բան դիպավ նրա կրծքի մեջտեղը. նա վազեց դեպի ինչ-վոր կողմ, սայթաքեց վոտի տակն ընկած թրի պատճառով և ընկավ կողքի վրա։

«Փառք աստծո, միայն սալջարդ յեղա»,—յեղավ նրա առաջին միտքը,—և նա ուզեց ձեռը տանել դեպի կուրծքը, բայց ձեռները թվացին կապված, ու ինչ-վոր ճնշիչներ սեղմում եյին գլուխը։ Նրա աչքին զինվորներ յերևացին, և նա անգիտակցաբար հաշվեց նրանց. «մե՛կ, յերկո՛ւ, յերե՛ք զինվոր, ահա և փաթաթած շինելով սպա», մտածեց նա։ Հետո շանթը փայլեց նրա աչքերում, և նա մտածեց—այս ինչից կրակեցին—հրասանդի՞ց (մորտիր) թե թնդանոթից։ Յերևի, թնդանոթից։ Ա՛յ, ելի կրակեցին. ա՛յ, դարձյալ զինվորներ. հինգ, վե՛ց, յո՛թը զինվոր, գնում են շարունակ կողքովս։ Նա հանկարծ սարսափեց, վոր իրեն կարող են վոտնատակ տալ։ Նա ուզեց ձայն տալ, վոր սալջարդ ե յեղել, բայց բերանն այնքան չոր եր, վոր լեզուն կպել եր քիմքին, և սաստիկ ծարավը տանջում եր նրան։ Նա զգում եր, թե ինչպես կրծքի մոտերքը թաց

են։ Թացության այդ զգացումը հիշեցրեց ջրի մասին, և նա ուզում էր խմել մինչև անգամ այն, ինչով կուրծքը թաց էր։ «Յերևի ընկնելիս կուրծքս ջարդել-արյունոտել եմ», մտածեց, և հետզհետե ավելի ու ավելի վախենալով, թե կողքից անցնող զինվորները կտրորեն իրեն, նա հավաքեց իր ամբողջ ուժը և ուզեց պոռալ. «ինձ տարե՛ք», բայց դրա փոխարեն հեծեծաց այնպես սարսափելի, որ ինքն էլ զարհուրեց իր ձայնից։ Հետո ինչ-որ կարմիր կրակներ թռչկոտացին նրա աչքերում,—իսկ իրեն թվում էր, թե զինվորները քարեր են դնում իր վրա. կրակների ցատկոտը հետզհետե պակասեց, քարերը, որ դնում էին նրա վրա, ավելի ու ավելի ճնշում էին նրան։ Նա ջանք գործ դրեց, որ քարերը շարժի, ձգվեց ու այլևս ոչ տեսնում էր, ոչ լսում, ոչ մտածում և ոչ էլ զգում։ Նա սպանվեց տեղն ու տեղը ռումբի կտորով, որ դիպել էր կրծքին։

XIII

Միխայլովը, ռումբը տեսնելով, ընկավ գետին և նույնպես, ինչպես Պրասկուխինը, անչափ շատ բան մտածեց ու զգաց այն յերկու վայրկյանում, յերբ ռումբը դեռ չէր պայթել։ Նա մտքում աղոթում էր աստծուն և շարունակ կրկնում. «Թող քո կամքը լինի։ Յեվ ինչո՞ւ յես զինվորական ծառայության մտա,—միաժամանակ մտածում էր նա,—և այն էլ հետևակ զորքն անցա, որ մասնակցեմ կռվին։ Ավելի լա՞վ չէր լինի մնայի ուլան գնդում Տ. քաղաքում, և ժամանակ անցնեյի իմ բարեկամ Նատաշայի հետ։ Իսկ հիմա այ թե ինչ յեղավ»։ Ու նա սկսեց համրել. մե՛կ, յերկո՛ւ, յերե՛ք, չորս, գուշակելով, որ յեթե ռումբը տրաքի զույգ թվի վրա, նշանակում է ինքը կապրի, իսկ յեթե կենտ թվի վրա պայթի—կսպանվի։ «Ամեն ինչ վերջացավ, սպանվեցի», մտածեց նա, յերբ ռումբը պայթեց (նա չէր հիշում զույգ թե կենտ թվի վրա) և նա մի հարված ու խիստ ցավ զգաց գլխում։ «Տե՛ր, նե-

րիր մեղքերս», ասաց նա, ձեռները շարժելով բարձրացավ ու անշունչ ընկավ յերեսն իվայր։

Առաջին բանը, որ աչքերը բանալիս զգաց նա—արյուն էր, որ հոսում էր քթից, և գլխի ցավը, որ ավելի թուլացել էր. «Հոգիս ավանդում եմ,—մտածեց նա։—Ի՞նչ է լինելու այնտեղ։ Տեր, ընդունիր հոգիս խաղաղությամբ։ Միայն մի բան տարօրինակ է,—դատում էր նա, որ, մեռնելիս, այսպես պարզ լսում եմ զինվորների քայլերն ու կրակոցների ձայնը»։

— Պատգարակը բեր, է՛յ... վաշտապետն սպանված է,—կանչեց նրա գլխավերևը մի ձայն, որ նա ակամա դրեց թմբկահար Իգնատևի ձայնի տեղ։

Ինչ-որ մեկը բռնեց նրա ուսերից։ Նա փորձեց աչքերը բանալ և գլխավերևը տեսավ մութ-կապույտ յերկինքը, մի խումբ աստղեր և յերկու ռումբ, որ թռչում էին իրենից վերև, աշխատելով մեկը մյուսին հասնել. տեսավ Իգնատևին, պատգարակով և հրացանավոր զինվորներին, հողաթումբը, խրամատները և հանկարծ զգաց-հավատաց, որ ինքն այն աշխարհում չէ։

Նա քարով թեթև վիրավորվել էր գլխից։ Ամենաառաջին տպավորությունը կարծես ափսոսանքն էր. նա այնպես լավ, հանգիստ պատրաստվում էր այնտեղ գնալու, որ անհաճո ազդեցություն արավ իրականությունն իր ռումբերով, խրամատներով ու արյունով. յերկրորդ տպավորությունը անգիտակից ուրախությունն էր, որ ինքը ողջ է, իսկ յերրորդը—որքան կարելի յե շուտով հեռանալ բաստիոնից։ Թմբկահարը թաշկինակով կապեց իր հրամանատարի գլուխը և, նրա թևը մտնելով, տարավ վիրակապային կայան։

«Ո՞ւր և ինչո՞ւ եմ գնում սակայն,—մտածեց փոխկապիտանը, յերբ փոքր ինչ ուշքի յեկավ։—Իմ պարտքն է վաշտի հետ լինել և ոչ թե առաջ գնալ,—մանավանդ որ վաշտն էլ շուտով դուրս է գալու կրակի տակից», շշնջաց նրան ինչ-որ ձայն։

— Հարկավոր չի, ախպեր,—ասաց նա թեք խլելով պատրաստակամ թմբկահարի ձեռից,—յես վիրակապային կայան չեմ գնա. յես կմնամ վաշտի մոտ։

Յեվ յետ դարձավ։

— Ավելի լավ ա, ձերդ ազնվություն, ձեր վերքը կապել տաք, ինչպես կարգն ա,—ասաց Իգնատևը. - դեռ տաք-տաք ա—դրա համար թվում ա վոչինչ չկա. թե չե վերքը վատ ա. եստեղ հրեն ինչ տուր-տրաքոց ա… իսկապես, ձերդ ազնվություն։

Միխայլովը մի րոպե կանգ առավ անվճռականության մեջ և, կարծես, պիտի հետևեր Իգնատևի խորհրդին, յեթե չհիշեր, թե վորքան ծանր վիրավորներ կան վիրակապային կայանում։ «Գուցե բժիշկները ժպտան իմ քերծվածքի վրա», մտածեց փոխ-կապիտանը և ուզգակի, չնայելով թմբկահարի պատճառաբանություններին, գնաց յետ՝ դեպի վաշտը։

— Իսկ ո՞ւր է սուրհանդակ (օրդինարեց) Պրասկուխինը, վոր գալիս եր ինձ հետ,—հարցրեց նա վաշտը վարող վառակիրին, յերբ հանդիպեցին։

— Չգիտեմ… սպանված է, կարծես, դժկամ պատասխանեց վառակիրը։

— Սպանվա՞ծ է թե վիրավորված, ինչպես է վոր դուք չգիտեք. չէ՞ վոր նա մեզ հետ եր գալիս։ Յեվ ինչո՞ւ դուք նրան չեք վերցրել։

— Ի՞նչպես վերցնեյինք այս տուր-տրաքոցի մեջ։

— Ա՛խ, ինչպես թե, ինչ եք ասում, Միխայիլ Իվանիչ,—ասաց Միխայլովը բարկացած,—ինչպես կարելի յե թողնել, յեթե կենդանի յե. յեթե սպանված ել լիներ, այնուամենայնիվ մարմինը պետք եր վերցնել։

— Վորտեղից է կենդանի, յերբ, ասում եմ՝ յես ինքս մոտեցել եմ և տեսել,—ասաց վառակիրը։—Ներեցեք, մերոնց հազիվ տեղափոխենք։ Տե՛ս. անզգամը հիմի յել սկսեց հրագնդեր արձակել,—ավելացրեց նա։

Միխայլովը նստեց ու բռնեց գլուխը, վոր չարժվելուց սարսափելի ցավել սկսեց։

— Չե, անպայման պետք է գնալ վերցնել. գուցե դեռ վողջ է,—ասաց Միխայլովը։—Դա մեր պ ա ր տ ք ն է, Միխայիլ Իվանիչ։

Միխայիլ Իվանիչը չպատասխանեց։

«Այ այն ժամանակ չի վերցրել, իսկ հիմա պետք է զինվորներին մենակ ուղարկել. և ինչպես ուղարկես այս սարսափելի կրակի տակ. կարող են իզուր տեղն սպանել», մտածում եր Միխայլովը։

— Տղերք, պետք է յետ գնալ վերցնել այն սպային, վոր վիրավորված-ընկած է կանավում,—ասաց նա վոչ այնքան բարձր ու հրամայաբար, զգալով թե վորքան անհաճո պիտի լինի զինվորների համար այդ հրամանը կատարելը։ Յեվ իրոք, վորովհետև նա վոչ-վոքի չդիմեց հատկապես, վոչ-վոք չելավ նրա ասածը կատարելու։

«Յեվ ճշմարիտ, գուցե մեռել է արդեն և չ ա ր ժ ի մարդկանց ի զուր վտանգի յենթարկել. մեղավոր եմ միայն յես, վոր հոգ չտարա։ Կերթամ ինքս կտեսնեմ՝ կենդանի յե արդյոք։ Դա իմ պ ա ր տ ք ն է», ասաց ինքն իրեն Միխայլովը։

— Միխայիլ Իվանիչ, դուք վաշտը տարեք, յես ձեզ կհասնեմ,—ասաց նա և, մի ձեռով շինելը հավաքելով, մյուս ձեռով վզի ս. Միտրոֆանի պատկերը շոշափելով, դեպի վորը նա առանձին հավատ ուներ, անգանգալով վազեց խրամատով։

Համոզվելով, վոր Պրասկուխինը սպանված է, Միխայլովը փուքսի պես փնչացնելով և ձեռով պահելով գլխի ընկնող կապն ու գլուխը, վոր սկսել եր սաստիկ ցավել, յետ դարձավ։ Գումարտակն արդեն սարի տակն եր և կրակի շրջանից գրեթե դուրս, յերբ Միխայլովը հասավ նրան։ Յես ասում եմ կրակի շրջանից գ ր ե թ ե դուրս, վորովհետև յերբեմն այստեղ ել պատահական գնդակներ եյին թռչում։

«Պետք ե, սակայն, վաղը գնալ վիրակապային կայան ցուցակագրվելու», մտածեց փոխ-կապիտանը այն ժամանակ, յերբ յեկած բուժակը կապում եր նրա գլուխը։

XIV

Մարդկային հարյուրավոր արյունոտված մարմիններ, վոր յերկու ժամ առաջ լի եյին բազմազան, մեծ ու փոքր հույսերով ու ցանկություններով, ընդարմացած անդամներով պառկած եյին բաստիոնը խրամատից բաժանող ցողվետ ծաղկած հովտում և Մեռյալների մատուռի դաշտում. հարյուրավոր մարդիկ՝ անեծքներն ու աղոթքները չորացած շրթունքներին, սողում, շուռ ու մուռ եյին գալիս ու հեծեծում, վոմանք ծաղկած հովտի դիակների արանքում, մյուսները. պատգարակներում, վիրակապային կայանի մահճակալներում ու արյունոտ հատակին. և շարունակ ելի, ինչպես և առաջին օրերը, արշալույսը բռնկվում եր Սապուն լեռան վերևը, գունատվում եյին առկայծող աստղերը, աղմկող մութ ծովից ձգվում եր ճերմակ մշուշը, վառվում եր կարմիր արշալույսն արևելքում, կարմրավուն յերկարուկ ամպերը ցրիվ եյին գալիս պայծառ-լազուր հորիզոնում, և նույնպես ելի, ինչպես առաջին օրերը, կենդանացած աշխարհում ամենքին ուրախություն, սեր և յերջանկություն խոստանալով՝ դուրս եր լողում հզոր ու չքնաղ լուսատուն։

XV

Մյուս օրը յերեկոյան յեգերական յերաժշտախումբը կրկին նվագում եր բուլվարում, և սպաները, յունկերները, զինվորներն ու ջահել կանայք կրկին տոնական ձևով զբոսնում եյին տաղավարի շուրջը և ծաղկած բուրավետ սպիտակ ակացիների ներքևի ծառուղիներում։

Կալուգինը, իշխան Գալցինը և ինչ-վոր մի գնդապետ թևանցուկ քայլում եյին տաղավարի շուրջը և խոսում յերեկվա կռվի մասին։ Զրույցի գլխավոր ուղեցույց

թելը, ինչպես միշտ լինում ե այդպիսի դեպքերում, վոչ թե ինքը կռիվն եր, այլ այն մասնակցությունը, վոր ունեցել ե պատմողը կռվի մեջ։ Նրանց դեմքն ու ձայնի հնչյունները լուրջ, գրեթե տխուր արտահայտություն ունեյին, կարծես, յերեկվա կորուստները սաստիկ հուզել և վշտացրել եյին յուրաքանչյուրին։ Բայց ճիշտն ասած, վորովհետև նրանցից վոչ մեկը չեր կորցրել շատ մոտիկ մարդու, վշտի այդ արտահայտությունը պաշտոնական եր, վոր նրանք պարտավոր եյին համարում արտահայտել միայն։ Ընդհակառակը, Կալուգինն ու գնդապետը պատրաստ եյին ամեն որ այդպիսի կռիվ տեսնել, այն պայմանով միայն, վոր յուրաքանչյուր անգամ վոսկե թուր և գեներալ-մայորություն ստանան, չնայած վոր իրենք սքանչելի մարդիկ եյին։ Յես սիրում եմ, յերբ հրեշ են անվանում իր փառասիրության համար միլիոնավոր մարդիկ վոչնչացնող վորևե նվաճողի։ Հապա այդ մասին հարց տվեք վառակիր Պետրուշովին և փոխ-տեղակալ Անտոնովին և այլն. մեզանից ամեն մեկը մի փոքրիկ Նապոլեոն ե, մի փոքրիկ հրեշ, և իսկույն պատրաստ ե կռիվ սարքել և հարյուրավոր մարդիկ սպանել նրա համար միայն, վորպեսզի ավելորդ աստղիկ (շքանշան) ստանա և ռոճիկի մի յերրորդը։

— Վոչ, ներեցեք,—ասում եր գնդապետը.—առաջ սկսվեց ձախ թևում։ Չե վոր ինքս այնտեղ եյի։

— Գուցե՛,—պատասխանում եր Կալուգինը.—յես ավելի շատ աջ կողմում եյի. յես յերկու անգամ այնտեղ գնացի. մի անգամ գեներալին եյի վորոնում, մյուս անգամ այնպես, գնացի լոժեմենտները տեսնելու։ Ա՛յ վորտեղ եր տաք կռիվը։

— Դե արդեն Կալուգինը գիտի,—ասաց Գալցինը գնդապետին։ Քիչ առաջ ինձ Վ.—Ն... քո մասին պատմեց, վոր դու քաջի պես...

— Կորուստներ միայն, սարսափելի կորուստներ,—

ասաց գնդապետը.— իմ գնդից չորս հարյուր մարդ ընկավ։ Զարմանալի յե, թե յես ինչպես վողջ մնացի։

Այդ ժամանակ այս պարոնների դիմաց յեկավ բուլվարի մյուս ծայրից Միխայլովը՝ գլուխը կապած։

— Հը՞, դուք վիրավորվա՞ծ եք, կապիտան,—ասաց Կալուգինը։

— Այո, մի քիչ, քարով,—պատասխանեց Միխայլովը։

— Est-ce que le pavillon est baissiè dèjà?*) հարցրեց իշխան Գալցինը, փոխ-կապիտանի գլխարկի կողքով դենը նայելով և վոչ-վոքին առանձնապես չդիմելով։

— Non, pas encore*),—պատասխանեց Միխայլովը, վոր ուզում եր ցույց տալ, թե ինքը ֆրանսերեն խոսել ել գիտի։

— Մի՞թե զինադադարը դեռ շարունակվում է,—ասաց Գալցինը, քաղաքավարությամբ դառնալով դեպի նա ռուսերեն և դրանով կարծես կամենալով ասել—ինչպես այդ թվաց փոխ-կապիտանին—թե ձեզ համար յերևի դժվար կլինի ֆրանսերեն խոսել, ուստի ավելի լավ չի պարզապես ռուսերեն... Յեվ դրանից հետո համհարզները հեռացան նրանից։ Փոխ-կապիտանը նույնպես ելի, ինչպես յերեկ, իրեն սաստիկ մենակ զգաց և, բարևելով զանազան պարոնների—վոմանց չկամենալով միանալ, իսկ մյուսներին մոտենալ չհամարձակվելով, նստեց Կազարսկու արձանի մոտ և պապիրոս ծխեց։

Բարոն Պեստը նույնպես յեկավ բուլվար։ Նա պատմեց, վոր ինքը ներկա յե յեղել զինադադարին և խոսել է ֆրանսիացի սպայի հետ, վոր իբր թե մի ֆրանսիացի սպա նրան ասել է. «s'l n'avait pas fait claire encor pendant une demi-heure, les embuscades auraient èté rep-

*) Մի՞թե այս տաղավարն իջել է։

*) Դեռ ևս վոչ։

rises*), և թե ինչպես ինքը պատասխանել է նրան. “monsieur! je ne dis pas non, pour ne pas vous donner un démenti„**), և թե ինչպես լավ է ասել, և այլն։

Իսկապես, նա թեև զինադադարին յեղել եր, բայց չեր կարողացել այնտեղ առանձին մի բան ասել, թեև ինքը շատ եր ցանկանում խոսել ֆրանսիացիների հետ (չե վոր դա շատ հաճելի բան է խոսել ֆրանսիացիների հետ)։ Յունկեր բարոն Պեստը յերկար շրջում եր առաջագծում և հարցնում իրենից մոտիկ գտնվող ֆրանսիացիներին. “de quel régiment êtes-vous?„***)։ Նրան պատասխանում եյին և ուրիշ վոչինչ։ Յերբ նա առաջագծից շատ հեռու անցավ, ֆրանսիական պահակը, չկարծելով թե այդ զինվորը ֆրանսերեն գիտի, յերրորդ դեմքով հայհոյեց նրան։ “Il vient regarder nos travaux ce sacré„****), ասաց նա, վորից հետո, յունկեր բարոն Պեստը, զինադադարի մեջ այլ ևս շահեկան բան չգտնելով, գնաց տուն, ճանապարհին հնարելով այն ֆրանսերեն ֆրազները, վոր պատմում եր այժմ։ Բուլվարումն եյին և կապիտան Զոբովը, վոր բարձրաձայն խոսում եր, և կապիտան Ոբժոգովը ծվատված դեմքով և հրետային կապիտանը, վոր վոչ մեկին չեր քծնում, և սիրո մեջ բախտավոր յունկերը, և բոլոր նույն դեմքերը յերեկվա, ելի նույն հավիտենական ցանկություններով, սնափառությամբ ու թեթևամտությամբ։ Չկային միայն Պրասկուխինը, Նեֆերդովը և ելի մի քանի հոգի, վորոնց մասին հազիվ թե հիշում ու մտածում եր վորևե մեկն այժմ, յերբ դեռ նրանց մարմինները չեյին կարողացել կարգի բերել, լվալ ու թաղել։

*) «Յեթե մի կես ժամի չափ ել դեռ ևս լույս չլիներ—դարանը վերցված կլիներ»։

**) «Պարոն, յես չեմ ասում՝ վոչ, վորպեսզի ստում ասած չլինեմ»։

***) «Վո՞ր գնդի՞ց եք».

****) Յեկել է մեր աշխատանքները տեսնելու այս անիծածը։

XVI

Մեր բաստիոնի վրա և ֆրանսիական խրամատի վրա տնկված են սպիտակ դրոշակներ, և նրանց արանքում, ծաղկած հովտի մեջ կույտերով, առանց կոշիկների, գորշ ու կապույտ հագուստներով պառկած են այլանդակված դիակներ, որ բանվորները տանում-դարսում են սայլի վրա: Մեռելահոտը բռնել է օդը: Թե Սևաստոպոլից և թե ֆրանսիական բանակից մարդկանց բազմություններ են դուրս թափվել այդ տեսարանը դիտելու և ագահ ու բարեհաճ հետաքրքրությամբ արագորեն գնում են մեկը դեպի մյուսը:

Լսեցեք, թե ինչ են խոսում այս մարդիկ իրար հետ:

Ահա մի խմբում, ուր հավաքվել են ռուսներ ու ֆրանսիացիներ, մի ջահել սպա, թեև վատ, բայց բավականաչափ լավ, որ իրեն հասկանան, ֆրանսերեն խոսելով դիտում է մի գվարդիական պայուսակ:

— Է սեսի պուրկուա սե ուազո լիե*)—ասում է նա:

— Parce que c'est une giberne d'un régiment de la garde, monsieur, qui porte l'aigle imperial.

— Է վու դե լա գարդ?

— Pardon, monsieur, du 6-ème de ligne.

— Է սեսի ու աշտե?—հարցնում է սպան, մատնացույց անելով ֆրանսիացու փայտե դեղին սիգարատուփը:

— A Balaclava, monsieur!. C'est tout simple en bois de palme.

---

*) Այս թռչունը ինչու համար է կապված (աղավաղված ֆրանսերեն):

— Որովհետև սա մի մեծ գնդի փամփուշտակալ է, պարոն, որի վրա կայսերական արծիվ կա:

— Դուք գվարդիակա՞ն եք. (աղավաղված):

— Ներողություն, պարոն, 6-դ գծայինից (գորք) եմ:

— Սա որտե՞ղ եք գնել:

— Բալակլավայում եմ առել, պարոն: Ամբողջն արմավենու փայտից է:

— Ժոլի*), — ասում է սպան, ղեկավարվելով զրույցի մեջ ոչ այնքան սեփական կամքով, որքան գիտցած խոսքերով:

— Si vous voulez bien garder cela comme souvenir de cette rencontre, vous m'obligerez**):

Յեվ քաղաքավարի ֆրանսիացին փչում է պապիրոսն ու սև սիգարատուփն սպային մեկնում թեթևակի գլուխ տալով: Սպան իրենը տալիս է նրան, և խմբի մեջ յեղած բոլոր մարդիկ, ինչպես ֆրանսիացիները, այնպես էլ ռուսները, թվում է, շատ գոհ են ու ժպտում են:

Ահա մի ժիր ռուս հետևակ զինվոր՝ վարդագույն բըլուզ հագած և շինելն ուսերին գցած, ուղեկցությամբ ուրիշ զինվորների (որոնք, ձեռները յետևները դրած, ուրախ հետաքրքիր դեմքերով կանգնել են նրա յետև) մոտեցավ մի ֆրանսիացու և իր ծխամորճը կպցնելու համար կրակ խնդրեց նրանից: Ֆրանսիացին բորբոքում, քչփորում է իր ծխամորճը և կրակ տալիս ռուսին:

— Թութունը բուն***), — ասում է վարդագույն վերնաշապկով զինվորը, և ներկաները ժպտում են:

— Oui, bon tabac, tabac turc, — ասում է ֆրանսիացին, — et chez vous autres, tabac—Russe? bon?****)

— Ռուս բուն, — ասում է վարդագույն վերնաշապկավոր զինվորը, և ներկա յեղողները քրքջում են: — Ֆ ր ա ն ս ե չ ե բ ո ւ ն, բոնժուր, մուսյո! *****) — ասում է վարդագույն վերնաշապկով զինվորը, միանգամից սպառելով իր ֆրանսերենի պաշարը, և խփում է ֆրանսիացու փորին ու ծիծաղում: Ֆրանսիացիք նույնպես ծիծաղում են:

---

*) Գեղեցիկ:

**) Յեթե կամենայիք իբրև հիշատակ այս հանդիպման վերցնել սա, ինձ կը պարտավորեիք:

***) Թութունը լավ (աղավաղված ֆրանսերեն):

****) Այո լավ թութուն է, տաճկական թութուն է, — ասում է ֆրանսիացին, — իսկ շատերիդ մոտ ռուսական թութու՞ն է: Լա՞վն է:

*****) Ռուս լավ ...ֆրանսիացին չէ լավ: Բարև պարոն:

— Ils ne sont pas jolis ces b... de Russes,*),—ասում է մի զուավ ֆրանսիացիների խմբի միջից։

— De quoi de ce qu'ils rient donc!**),—ասում է մի ուրիշը, սևը, իտալական առոգանությամբ, ու մոտենում է մերոնց։

— Կաֆտան բու՜ն***),—ասում է մեր զինվորը, նայելով զուավի աղագործ փեշերին, ու կրկին ծիծաղում են։

— Ne sors pas de ta ligne, é vos places, sacré nom!****) ձայն է տալիս ֆրանսիական կապրալը (կրտսեր յենթասպա), և զինվորները ցրվում են նկատելի անբավականությամբ։

Ահավասիկ մեր հեծելազորի մի ջահել սպա ֆրանսիական սպաների խմբում շաղակրատում է։ Խոսքը ինչ-վոր comte Sazonoff-ի մասին է, que j'ai beaucoup connu, monsieur,—ասում է միայն մի ուսադիր ունեցող ֆրանսիացի սպան,— c'est un de ces vrais comtes rousses, comme nous les aimons*****).

— Il y aun Sazonoff, que j'ai connu,—ասում է հեծելազորի սպան,—mais il nest pas comte, á moins, que je sâche, un petit brun de votre âgcà peu près.

— C'est ça, monsieur, c'est lui. Oh, que je voudrais le voir ce cher comte. Si vous le voyez, je vous prie bien de lui faire mes complimente. Capitaine Latour,—ասում է նա, գլուխ տալով։

— N'est-ce pas terrible la triste besogne, que nous

---

*) Սիրուն չեն այս քո...ռուսները։

**) Լավ, ինչո՞ւ վրա են ծիծաղում։

***) Վերարկուն լավ։

****) Դուրս մի գա քո քծից։ Տեղներդ, անպիտաններ։

*****) Խոսքը ինչ-վոր կոմս Սազոնովի մասին է, վորին լավ ճանաչում եյի, պարոն... սա մեկն է այն իսկական ռուս կոմսերից, վորպիսիներին մենք սիրում ենք։

faisons? Ça chauffait cette nuit, n'est-ce pas?*)—ասում է հեծելազորի սպան, խոսակցությունը պահել կամենալով և դիակները ցույց տալով։

— Oh, monsieur, c'est affreux! Mais quels gaillards vos soldats, quels gaillards! C'est un plaisir, que de se battre avec des gaillards comme eux.

— Il faut avouer que les vötres ne se mouchent pas du pied non plus,**)—ասում է հեծելազորի սպան, գլուխ տալով ու յերևակայելով, թե ինքը շատ սիրալիր է։

Բայց բավական է։

Ավելի լավ է նայեցեք այս տաս տարեկան տղային, վորը մի հին, յերևի, հոր գլխարկով, կոշիկները բոբիկ, անդուլպա վոտներին հագած և ն ա ն կ ի ն ի շալվարով, դինադադարի հենց սկզբից դուրս եր յեկել հողապատնեշի այն կողմը և բոլոր ժամանակ պտտվում եր ձորակում, և բութ հետաքրքրությամբ նայելով ֆրանսիացիներին ու գետնին պառկած դիակներին, քաղում եր դաշտային կապույտ ծաղիկներ, վորոնցով լիքն է այդ հովիտը։ Մի մեծ փունջ ձեռին տուն վերադառնալով, նա, քամու բերած նեխահոտից քիթը բռնած, կանգ առավ մի խումբ դիակների մոտ և յերկար նայում եր մի սարսափելի անգլուխ դիակի, վոր

---

*)—Մի Սազոնով կա, վորին յես ճանաչում եյի,—ասում է հեծելազորի սպան,—բայց նա համենայն դեպս կոմս չի իմ գիտենալովս։ Մի փոքրիկ շեկ մարդ է, մոտավորապես ձեր տարիքին։

— Այդպես է, պարոն. հենց նա յէ։ Ո՜հ, ինչպես կըկամենայի այդ սիրելի կոմսին տեսնել։ Յեթե դուք նրան տեսնում եք, շատ խնդրում եմ ձեզ, իմ վողջագուրանքները հայտնեք նրան։ Կապիտան Լատուր։

— Արդյո՞ք սա՝ մի սարսափելի տխուր գործ չե, վորով զբաղված ենք մենք։ Ուրեմն սա այս գիշեր կտաքացնի, այնպես չէ՞։

**) Ո՜հ, պարոն, սարսափելի յէ։ Բայց ինչ զվարճախոսներ են ձեր զինվորները. ինչ զվարճախոսներ։ Հաճույք է կռվել այդպիսի զվարճախոսների հետ միասին։

—Պետք է խոստովանել, վոր ձերոնք էլ ամոթով չեն թողնի։

ավելի մոտ էր իրեն։ Բավական յերկար կանգնած մընալով, նա մոտ գնաց ավելի ու վոտը դիպցրեց դիակի փայտացած ձեռին։ Ձեռը շարժվեց մի քիչ և կըրկին բռնեց իր տեղը։ Փոքրիկ տղան հանկարծ ճչաց, յերեսը թաղեց ծաղիկների մեջ և, վորքան վոտներումն ուժ կար, վազեց առաջ, դեպի բերդը։

Այո, բաստիոնի վրա, և խրամատի վրա պարզված են սպիտակ դրոշակներ, ծաղկազարդ հովիտը լցված է մեռած մարմիններով, չքնաղ արևն իջնում է դեպի կապույտ ծովը, և կապույտ ծովը, որորվելով, շողշողում է արևի վոսկե շողերի տակ։ Հազարավոր մարդիկ խմբվում, նայում, խոսում և ժպտում են միմյանց... ու չեն չզղջում իրենց արածը...Ճերմակ դրոշակները վերցվում են, պահվում և նորից վորոտում են մահվան ու տանջանքի գործիքները, նորից հոսում է անմեղ արյունը և նորից լսվում են հեծծանքներ ու անեծքներ։

Վո՞րն է այս վիպակում չարիքի արտահայտությունը, վորից պիտի խուսափել։ Վո՞րն է բարու արտահայտությունը, վորին պետք է որինակել։ Ո՞վ է սրա չարագործը, ո՞վ է հերոսը։

Բոլորը լավ են և բոլորը վատ։

Վոչ Կալուգինն իր փայլուն քաջությամբ—bravoure de gentilomme—ու սնափառությամբ, վոր շարժիչն է մարդկային բոլոր վարմունքների, վոչ Պրասկուխինը, դատարկ, անվնաս մի մարդ, թեև ընկավ կռվի դաշտում...վոչ Միխայլովն իր յերկչոտությամբ ու սահմանափակ հայացքքով, վոչ Պեստը՝ մի յերեխա առանց կայուն համոզմունքների ու սկզբունքների, չեն կարող լինել այս վիպակի վոչ չարագործները, վոչ հերոսները։

Իմ վիպակի հերոսը, վորին յես սիրում եմ ամբողջ հոգով, վորին աշխատել եմ վերարտադրել իր բովանդակ գեղեցկությամբ և վորը միշտ յեղել է ու կլինի գեղեցիկ,—ճշմարտությունն է։

ՊՈԼԻԿՈՒՇԿԱ

(1860)

ՊՈԼԻԿՈՒՇԿԱ

— Ի՛նչպես կհրամայեք, տիրուհի։ Միայն թե Դուտլովները մեղք են։ Բոլորն էլ լավ տղերք են. յեթե մեր ճորտ-ծառաներից մեկին չտանք, նրանց տղեն անխուսափելիորեն պիտի գնա,—ասում էր կառավարիչը.—հիմա առանց այն էլ նրանից են մատնացույց անում։ Ասենք, կամքը ձերն է։

Յեվ նա աջ ձեռը ձախի վրա դնելով, յերկուսն էլ բռնեց փորի վրա, գլուխը թեքեց մի կողմ, բարակ շրթները, գրեթե չպպացնելով, իրան քաշեց, աչքերը սուզեց կոպերի տակ ու ձայնը կորեց ակներև մտադրությամբ յերկար լռել և առանց առարկության լսել այն բոլոր անհեթեթությունը, որ պետք է ասեր նրան տիրուհին

Այդ կառավարիչը ճորտ-ծառաներից եր, դեմքն ածիլած, յերկար սյուրթուկով (հատուկ ձևի), որ աշնան մի յերեկո զեկուցում եր տալիս իր տիրուհուն։ Զեկուցումը, տիրուհու հասկացողությամբ, այն եր, որ հաշվետվություն լսի կատարված տնտեսական գործերի մասին և կարգադրություններ անի ապագայի նկատմամբ։ Կառավարիչ՝ Յեգոր Միխայլովիչի հասկացողությամբ՝ զեկուցումը մի ծես եր, յերբ ինքը յերկու ծռված ոտների վրա ուղիղ պիտի կանգներ անկյունում, յերեսը դեպի բազմոցը դարձրած, լսեր գործին չվերաբերող ամեն տեսակ դատարկաբանություններ ու զանազան միջոցներով տիրուհուն հասցներ այն տեղը, որպեսզի նա Յեգոր Միխայլովիչի բոլոր առաջարկներին շուտով ու անհամբերությամբ ասեր. «լավ, լավ»։

Խոսքն այժմ զինվորակոչի մասին եր։ Պոկրովսկ գյուղից պետք եր յերեք զինվորացու տալ։ Յերկուսին ար-

դեն, ընտանեկան, բարոյական և տնտեսական պայմանների զուգադիպությամբ, նշանակել էր բախտն ինքը։ Նրանց նկատմամբ տատանում ու վեճ չէր կարող լինել վոչ գյուղի հասարակության կողմից, վոչ տիրուհու, վոչ էլ հասարակական կարծիքի կողմից։ Յերրորդը վիճելի չէր։ Կառավարիչն ուզում էր պաշտպանել յերեք տղա ունեցող Դուտլովին և տալ տանու ճորտ-ծառա Պոլիկուշկին, վոր շատ վատ համբավ ուներ, բազմիցս բռնվել էր պարկերի, յերասանների ու խոտի գողության մեջ. իսկ տիրուհին, վոր հաճախ փայփայում էր Պոլիկուշկի ցնցոտիապատ յերեխաներին և ավետարանական ներշնչման միջոցով ուղղում նրա բարոյականը, չէր ուզում նրան տալ։ Դրա հետ միասին, վատ բան չէր ցանկանում և Դուտլովներին, վորոնց չէր ճանաչում և յերբեք չէր տեսել։ Բայց, չգիտես ինչու, տիրուհին վոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, իսկ կառավարիչը չէր համարձակվում ուղղակի բացատրել նրան այն, վոր յեթե Պոլիկուշկան չգնա, գնալու յե Դուտլովը։ «Յես չեմ ուզում Դուտլովների դժբախտությունը», —ասում էր տիրուհին զգացված։ «Յեթե չեք ուզում, յերեք հարյուր ռուբլի վճարեցեք նորակոչի համար», ահավասիկ ինչ պատասխան պիտի տվեր նրան։ Բայց քաղաքականությունը թույլ չէր տալիս այդ անելու։

Այնպես ուրեմն. Յեգոր Միխայլովիչը աչքերը հառած, աննկատելիորեն մինչև անգամ դռան շեմափայտին հենվելով, և, դեմքին ստորաքարշություն տված՝ սկսեց նայել, թե ինչպես են տիրուհու շրթները շարժվում, ինչպես է նրա գլխանոցի վրայի ռյուշը թռչկոտում պատի վրա ընկած նրա ստվերի հետ միասին։ Բայց Յեգոր Միխայլովիչն իսկի կարևոր չէր համարում հասկանալ տիրուհու խոսքերի միտքը։ Տիրուհին խոսեց յերկար ու շատ։ Նրա խոսքի հնչյունները մինչև անգամ հաճելի եյին Յեգոր Միխայլովիչին և նա հորանջելու գրգիռ էր զգում ականջների յետևում, բայց այդ բանը ճարպկությամբ փո-

խեց հազի, դեմքը ձեռով ծածկելով։ Յես վերջերս տեսա, թե ինչպես լորդ Պալմերստոնը նստել էր գլխարկը գլխին այն ժամանակ, յերբ օպպոզիցիայի անդամը հարվածում էր մինիստրությանը, և հանկարծ, նա վեր կացավ, յերեք ժամ տևող ճառով պատասխանեց հակառակորդի բոլոր կետերին։ Յես այս տեսա և չզարմացա, վորովհետև, գրեթե, դրա նման բան յես հազար անգամ եմ տեսել Յեգոր Միխայլովիչի և նրա տիրուհու միջև։ Վախենում էր Յեգոր Միխայլովիչը քնել թե՞ թվում էր, վոր տիրուհին շատ է արդեն հափշտակվում,—նա իր մարմնի ծանրությունը ձախ վոտից գցեց աջի վրա և սկսեց, ինչպես միշտ, սակրամենտալ նախաբանով։

— Կամքը ձերն է, տիրուհի, միայն թե... միայն թե ժողովը սպասում է գրասենյակի առաջ, պետք է մի բան անել-վերջացնել։ Հրամանում ասված է, մինչև Աստվածածնա տոնը պետք է նորակոչիկներին քաղաք տանել։ Իսկ գյուղացիները շարունակ Դուտլովներին են մատնացույց անում, և էլ ուրիշ վոչ մեկին։ Իսկ հասարակությունը ձեր շահը չի պաշտպանում։ Նրանց համար միևնույն է, թե մենք Դուտլովների տունը կքանդենք թե չէ։ Յես գիտեմ ախր, թե ինչպես են նրանք տանջվել։ Այն որվանից, ինչ յես եմ կառավարում, բոլոր ժամանակ ապրում եյին աղքատության մեջ։ Հազիվ հազ ծերունին յեղբոր փոքր վորդուն հասցրեց, պետք է հիմի նորից քայքայել նրանց։ Իսկ յես, ինչպես գիտեք, ձեր սեփականության մասին հոգում եմ իմ ինչպես պետք։ Ափսոս են, տիրուհի. ինչպես ձեզ հաճելի չէ։ Նրանք վոչ իմ յեղբայրն են, վոչ իմ խնամին, վոչ էլ նրանցից մի բան եմ վերցրել...

— Յես այդ բանը չեմ էլ մտածում, Յեգոր,—ընդհատեց տիրուհին և իսկույն և եթ մտածեց, վոր նա կաշառված է Դուտլովների կողմից։

— ...միայն թե ամբողջ Պակրովսկու մեջ ամենալավ ընտանիքն են աստվածավախ, աշխատասեր գյուղացիներ

են։ Ծերունին յերեսուն տարի յեկեղեցու յերեցփոխ է, վոչ ողի յէ խմում, վոչ հայհոյել գիտի, յեկեղեցի յէ գնում (կառավարիչը գիտեր ինչով կաշառել)։ Յեվ, գլխավորը, պետք է ասեմ ձեզ, նա յերկու վորդի ունի միայն, մնացածը յեղբոր տղերք են։ Հասարակությունն ասում է, բայց նրան իսկապես յերկուսի վիճակ պիտի գցել։ Յերեք վորդի ունեցողները բաժանվել են իրար չհարմարվելու պատճառով, և հիմա իրավացի յեն, իսկ սրանք իրենց առաքինության համար պետք է տուժեն։

Սրանից արդեն տիրուհին վոչինչ չեր հասկանում,— չեր հասկանում ինչ են նշանակում «յերկու վիճակ» և «առաքինություն»։ Նա հնչյուններ եր լսում միայն և դիտում եր կառավարչի ս յ ո ւ ր թ ո ւ կ ի կոճակները. վերին կոճակը նա, յերևի, քիչ եր մեր գցում, այնպես պինդ կարված եր մնացել, իսկ միջինը բոլորովին ձգվել, կախ եր ընկել, այնպես վոր վաղուց պետք եր կարել։ Բայց, ինչպես բոլորին հայտնի յէ, խոսակցության համար, մանավանդ գործնական խոսակցության, բոլորովին հարկավոր էլ չի հասկանալ այն, ինչ ասում են ձեզ, այլ պետք է հիշել միայն, թե ինքդ ինչ ես ուզում ասել։ Այդպես էլ արավ տիրուհին,

— Ի՞նչպես չես ուզում դու հասկանալ, Յեգոր Միխայլովիչ,— ասաց նա։— Յես բնավ չեմ ուզում, վոր Դուտլովը զինվոր գնա։ Կարծեմ, վորքան ինձ ճանաչում ես, կարող ես դատել, վոր յես ձեռիցս յեկածը կանեմ, վորպեսզի օգնեմ իմ գյուղացիներին, ու նրանց դժբախտությունը չեմ ցանկանում։ Դու գիտես, վոր յես պատրաստ եմ ամեն ինչ զոհաբերել, վորպեսզի ազատվեմ այդ տխուր անհրաժեշտությունից և չտալ վոչ Դուտլովին, վոչ Խրյուշկինին։ (Չգիտեմ կառավարիչը մտածում եր արդյոք, թե, տխուր անհրաժեշտությունից ազատվելու համար, հարկավոր չի զոհաբերել ա մ ե ն ի ն չ, այլ պետք է յերեք հարյուր ռուբլի. բայց այդ միտքը հեշտությամբ կարող եր

ծագել նրա գլխում)։ Մի բան կասեմ միայն քեզ, վոր Պոլիկեյին վոչ մի դեպքում չեմ տա։ Յերբ ժամացույցի դեպքից հետո նա ինքը խոստովանեց ինձ ու լաց յեղավ, և յերդվեց, վոր կուղղվի, յես յերկար խոսեցի նրա հետ ու տեսա, վոր նա անկեղծորեն զղջացել է։ Այդ օրվանից յոթ ամիս է անցել ահա, և նա վոչ մի անգամ չի հարբել ու իրեն շատ լավ է պահում։ Նրա կինն ինձ ասաց, վոր բոլորովին այլ մարդ է դառել։ Յեվ ինչո՞ւ ես դու ուզում, վոր յես նրան պատժեմ այժմ, յերբ նա ուղղվել է։ Յեվ մի՞թե դա ամարդի բան չի—զինվոր տալ մի մարդու, վոր հինգ յերեխա ունի, և նա միակ կերակրողն է։ Չէ՛, ավելի լավ է այդ մասին մի խոսի, Յեգոր...

Յեվ տիրուհին խմեց աջից դրված մուրաբով ջուրը։

Յեգոր Միխայլովիչը հետևեց, թե ինչպես է ջուրը գնում նրա կոկորդով և ապա կարճ ու չոր ասաց.

— Ուրեմն, հրամայում եք Դուտլովին նշանակել։

Տիրուհին ձեռներն իրար խփեց զարմանքից։

— Դու ինչու չես ուզում ինձ հասկանալ։ Մի՞թե յես ցանկանում եմ Դուտլովների դժբախտությունը, մի՞թե յես վորևէ բան ունեմ նրանց դեմ։ Վկա յէ աստված, վոր յես պատրաստ եմ ամեն ինչ անել նրանց համար։ (Նա նայեց անկյունի պատկերին, բայց հիշեց, վոր դա աստված չի. «Եհ, բոլորը մեկ է, բանը դրանում չէ» մտածեց նա։ Դարձյալ տարօրինակ եր, վոր նա չմտածեց յերեք հարյուր ռուբլու մասին)։ Բայց յես ինչ անեմ։ Մի՞թե գիտեմ ինչ պիտի անել։ Յես այդ չեմ կարող իմանալ։ Եհ, վստահում եմ քեզ. դու գիտես ինչ եմ ցանկանում։ Այնպես արա, վոր բոլորը գոհ լինեն, որենքով լինի։ Ի՞նչ արած։ Մենակ նրանք չեն. ամենքն էլ ծանր բոպեների մեջ լինում են։ Միայն թե Պոլիկեյին չի կարելի տալ։ Հասկացիր, վոր դա սարսափելի բան կլիներ իմ կողմից։

Նա դեռ յերկար կխոսեր—այնպես եր վոգևորվել, բայց այդ ժամանակ սենյակ մտավ սպասավոր աղջիկը։

— Ի՞նչ կա, Դունյաշա։

— Մի գեղացի յե յեկել, ասում ե՝ հարցրու Յեգոր Միխայլովիչից, թե հրամայո՞ւմ ե, վոր սպասենք ժողովում, — ասաց Դունյաշան և բարկացած նայեց Յեգոր Միխայլովիչին («ինչ տեսակ կառավարիչ ե, — մտածեց Դունյաշան, — վոր հուզել ե տիրուհուն, ելի մինչև ժամը յերկուսը չի քնելու»)։

— Ուրեմն գնա, Յեգոր, ասաց տիրուհին, — արա ինչ ամենից լավ ե։

— Լսում եմ։ (Նա ել վոչինչ չասաց Դուտլովի մասին)։ Իսկ ո՞ւմ կհրամայեք ուղարկել այգեպանի մոտ փողը բերելու։

— Մի՞թե Պետրուշան դեռ չի յեկել քաղաքից։

— Վոչ։

— Իսկ Նիկոլայը չի՞ կարող գնալ։

— Հերը մեջքի ցավից պառկած ե, ասաց Դունյաշան։

— Կհրամայեք գուցե յես ինքս գնամ վաղը, — հարցրեց կառավարիչը։

— Չե, դու այստեղ պետք ես, Յեգոր։ (Տիրուհին մտածեց)։ Վորքա՞ն ե փողը։

— 462 ռուբլի։

— Պոլիկեյին ուղարկիր, ասաց Տիրուհին վճռականորեն Յեգոր Միխայլովիչի յերեսին նայելով։

Յեգոր Միխայլովիչը, առանց ատամները բանալու, շուրթերը ձգեց, կարծես թե ժպտաց, բայց դեմքը չփոխվեց։

— Լսում եմ։

— Ուղարկիր նրան ինձ մոտ։

— Լսում եմ, — և Յեգոր Միխայլովիչը գնաց գրասենյակ։

II

Պոլիկեյը, վորպես աննշան ու արատավոր մարդ, և այն ել ուրիշ գյուղից, հովանավոր չուներ. նրան վոչ մառանապետուհին եր հովանավորում, վոչ բուֆետպանը, վոչ կառավարիչը, վոչ ել սպասուհին, ու նրա ա ն կ յ ու ն ն ել ամենից վատն եր, չնայած վոր ինքը, կինն ու յերեխաները յոթ հոգի եյին։ Ա ն կ յ ու ն ն ե ր ը դեռ հանգուցյալ աղան շինել եր տվել այսպես. տաս արշինանոց քարե խրճիթի մեջտեղը կանգնած եր ռուսական փեչը*), դրա շուրջը միջանցք եր, իսկ յուրաքանչյուր անկյունում տախտակներով պատած ա ն կ յ ու ն ն եր։ Տեղն, ուրեմն նեղ եր, մանավանդ Պոլիկեյի անկյունը, վոր գտնվում եր դռան մոտ։ Ամուսինների անկողինը՝ մեկդակած վերմակով ու չթե բարձերով, յերեխայի օրորոցը, յեռոտանի սեղանը, վորի վրա կերակուր եյին յեփում, լվացք եյին անում, անայլն ամեն տեսակ իրեր եյին դնում և վորի վրա աշխատում եր ինքը Պոլիկեյը (նա ձիու հեքիմ եր), ջրի և թթվի տակառները, հագուստները, հավերը, հորթը և իրենք յոթ հոգով լցնում եյին ամբողջ ա ն կ յ ու ն ը ու շարժվել չեյին կարող, յեթե ընդհանուր փեչը չտրամադրեր նրանց իր քառորդ մասը, վորի վրա պառկում եյին և՛ իրերը և՛ մարդիկ, ու մեկ ել յեթե անկարելի լիներ մուտքի առաջը դուրս գալ։ Դա, ասենք, և անկարելի յեր. հոկտեմբերը ցուրտ ե, իսկ նրանք յոթ հոգով ունեն միայն մի տաք քուրք. բայց դրա փոխարեն յերեխաները վազվզելով կարող եյին տաքանալ, մեծերն աշխատելով, և, բացի դրանից, բոլորը միասին կարող եյին բարձրանալ փեչի գլուխը, ուր 40 աստիճան տաքություն եր

---

*) Ռուսական փեչը փռուի չափ մեծ վառարան ե՝ աղյուսներից շինած՝ վորի մեջ կերակուր են յեփում, ջուր են տաքացնում և վրան քնում են։

Ծանոթ. թարգմ.

լինում։ Թվում է թե սարսափելի յէ ապրել այսպիսի պայմաններում, բայց նրանց համար վոչինչ — ապրում եյին։ Ակուլինան լվանում, լողացնում եր յերեխաներին ու մարդուն, կարում-կարկատում եր նրանց շորերը, մանում, գործում եր, ճերմակացնում եր իր քաթաները, յեփում եր, թրխում ընդհանուր փեչի մեջ, հայհոյում ու բամբասանք եր անում հարևանների հետ։ Ամսական ալյուրը, վոր ստանում եր տիրուհուց, հերքում եր վոչ միայն յերեխաներին, այլ և կովի առաջն ածելու։ Վառելափայտը ձրի յեր, անասունների կերը՝ նույնպես։ Տիրուհու անասուններին արվող խոտից Պոլիկեյին էլ բաժին եր ընկնում։ Ունեին մի փոքրիկ բանջարանոց։ Կովը ծնեց, իրենց հավերն ունեյին։ Պոլիկեյն աշխատում եր գոմում, պահում — խնամում եր յերկու վորձ ձի և ձիերից ու տավարից արյուն եր առնում, մաքրում եր նրանց սմբակները, իբրև դեղ գործ եր ածում իր հնարած մահլամը. և դրա համար նրան տալիս եյին փող ու մթերք։ Տիրոջ վարսակից նույնպես ավելանում-մնում եր նրան։ Շենում կար մի գյուղացի, վոր ամսե-ամիս կանոնավոր կերպով յերկու չափ ցորենով տալիս եր քսան ֆունտ վոչխարի միս։ Ապրել կարելի յեր, յեթե հոգեկան վիշտ չունենայիք։ Բայց ամբողջ ընտանիքի վիշտը մեծ եր։ Պոլիկեյը մանկուց ապրել եր ուրիշ գյուղում — ձիաբուծարանում։ Ձիապանը, վորի ձեռն ընկավ Պոլիկեյը, առաջին գողն եր ամբողջ շրջանում. այդ պատճառով նրան քշեցին հեռու տեղ։ Պոլիկեյն այդ ձիապանից շատ բան սովորեց և ջահելության շնորհիվ այնպես ընտելացավ այդ հասարակ բաներին, վոր հետո ուրախ էլ կլիներ թարկը տալ — բայց չիկարողանում։ Նա ջահել, թույլ կամքի տեր մարդ եր. հայր, մայր չուներ և խրատող էլ չկար։ Պոլիկեյը սիրում եր խմել և չեր սիրում, յերբ մի բան աչքից հեռու, ծառից դրված եր լինում։ Պարան լիներ, թամբ, կողպեք, ձող թե մի քիչ ավելի թանկարժեք բան, — բոլորի համար Պոլիկեյ Իլիչը տեղ եր գտնում։ Ամեն

տեղ կային մարդիկ, վոր այդ իրերն ընդունում եյին և դրանց համար ողի կամ փող վճարում, ըստ համաձայնության։ Դա ամենահեշտ աշխատանքն է, ինչպես ասում է ժողովուրդը. վոչ ուսում է հարկավոր, վոչ ջանք, ու յեթե մի անգամ փորձում-սովորում ես, էլ ուրիշ բան անել չես ուզում։ Միայն թե այդ աշխատանքի մեջ մի բան վատ է. թեև ամեն ինչ ձեռք է բերվում հեշտությամբ ու առանց դժվարության, ու ապրելն էլ հաճելի յէ լինում, բայց հանկարծ չար մարդկանց յերեսից կարող ես ֆչասվել, և այն ժամանակ ստիպված կլինես բոլոր արարքներիդ համար միանգամից պատասխան տալ ու կյանքդ էլ կխավարի։

Այդպես էլ Պոլիկեյին պատահեց։ Ամուսնացավ Պոլիկեյը, և բախտավորվեց. կինը, տավարածի աղջիկը, առողջ, խելոք, աշխատասեր կին դուրս յեկավ, մեկը մյուսից լավ յերեխաներ բերեց նրա համար։ Պոլիկեյն իր արհեստն էլի չթողեց, և ամեն բան լավ եր գնում։ Բայց հանկարծ անաջողություն պատահեց, և նա բռնվեց։ Բռնվեց հասարակ բանի համար. թագցրել եր մի գյուղացու փոկե յերասանները։ Գտան, ծեծեցին, բանը հասցրին տիրուհուն և նկատի առան։ Բռնվեց յերկրորդ, յերրորդ անգամը։ Ժողովուրդն սկսեց թքել-մրել, կառավարիչն սպառնաց ուղարկել զինվոր, տիրուհին հանդիմանեց, իսկ կինը՝ սկսեց լալ, վայ տալ գլխին. ու ամեն ինչ բոլորովին թարսվեց։ Նա բարի մարդ եր և գեշ չեր, բայց թույլ եր, — սիրում եր խմել, ու այնպես վատ սովորեց դրան, վոր վոչ մի կերպ չեր կարողանում իրեն պահել։ Պատահում եր, կինն սկսում եր հայհոյել նրան, մինչև անգամ ծեծել, հենց վոր հարբած տուն եր գալիս, իսկ Պոլիկեյը լաց եր լինում։ «Յես, — ասում եր, — անբախտ մարդ եմ. ինչ անեմ։ Աչքերս դուրս գան, թե թարկը չտամ. էլ չեմ խմելու»։ Բայց տեսար մեկ էլ, մի ամիս հետո, գնաց տնից, հարբեց ու յերկու որով կորավ։ «Յերևի մի տեղից փող է վերցնում

քեֆի համար», ասում էին մարդիկ։ Նրա վերջին գողացած բանը գրասենյակի ժամացույցն էր։ Գրասենյակում մի հին պատի ժամացույց կար, վոր վաղուց արդեն չէր բանում։ Պատահեց մի անգամ մտավ բաց գրասենյակը. ժամացույցը գրավեց նրան — վերցրեց ու տարավ քաղաքում ծախեց։ Հակառակի պես, այն խանութպանը, վոր ժամացույցը գնել էր, դուրս յեկավ տանու ճորտերից մեկի խնամին և մի տոն որ յեկավ գյուղ ու պատմեց ժամացույցի մասին։ Սկսեցին խորամանկությամբ հարց ու փորձել, կարծես դա մեկին պետք էր։ Առանձնապես կառավարիչը Պոլիկեյին չէր սիրում։ Յեվ գտան։ Հայտնեցին տիրուհուն։ Տիրուհին կանչեց Պոլիկեյին։ Պոլիկեյն իսկույն տիրուհու վոտներն ընկավ ու զգացված, հուզված ամեն ինչ խոստովանեց, ինչպես կինը սովորեցրել էր։ Նա ամեն բան կատարեց շատ լավ։ Տիրուհին սկսեց խրատել, խելք հասկացնել նրան, խոսեց և աստծու մասին, և առաքինության մասին, և ապագա կյանքի մասին, և կնոջ ու յերեխաների մասին։ Խոսեց այնքան, մինչև վոր Պոլիկեյը լաց յեղավ։ Տիրուհին ասաց.

—Յես քեզ ներում եմ. միայն թե խոստացիր ինձ, վոր էլ յերբեք այդպիսի բան չես անի։

- Կյանքումս չեմ անի։ Մեռնեմ թե սուտ եմ ասում, ասաց Պոլիկեյը և սրտառուչ լաց յեղավ։

Պոլիկեյը տուն յեկավ և տանն էլ, հորթի նման, ամբողջ որը բղավեց ու մնաց փեչի վրա պառկած։ Այդ որվանից վոչ մի անգամ չնկատվեց գողության մեջ։ Միայն թե կյանքը դարձավ անուրախ. ժողովուրդը նրան նայում էր վորպես գողի և հենց վոր զինվորակոչի ժամանակն յեկավ, բոլորն սկսեցին նրան մատնացույց անել։

Պոլիկեյն, ինչպես ասինք, ձիու հեքիմ էր։ Թե ինչպես էր ձիաբույժ դարձել, դա հայտնի չէր վոչ-վոքի և ավելի քիչ իրեն։ Ձիաբուծարանում, ձիապահի մոտ, վորին քշել էին հեռու տեղ, նա ուրիշ վոչ մի պաշտոն չէր

կատարում, բացի ագալների աղբը մաքրելուց, յերբեմն էլ ձիերն էր մաքրում ու ջուր կրում։ Այնտեղ չէր կարող բան սովորել։ Հետո յեղավ ջուլհակ, ապա աշխատեց այգում, ուր մաքրում էր ճանապարհները. հետո դռնապան յեղավ մի վաճառականի մոտ։ Նշանակում է, այստեղ էլ չէր կարող փորձ ունենալ։ Բայց վերջին անգամ յերբ տուն յեկավ, ինչպես յեղավ, կամաց-կամաց տարածվել սկսեց նրա անսովոր, մինչև անգամ մի քիչ գերբնական ձիաբուժական արվեստի հռչակը։ Նա մի քանի անգամ արյուն առավ ձիերից, հետո մի ձի վար գցեց ու սկսեց ազդրը քչփորել, հետո պահանջեց, վոր ձին տանեն դագդյանի մոտ, ուր սկսեց ձիու սմբակի տակը կտրել մինչև արյունոտելը, չնայած վոր ձին քացի-քացի յեր անում և մինչև անգամ ճղճղում, ու ասաց, թե դա նշանակում է «ձիու վոտի տակից արյուն առնել»։ Հետո նա բացատրեց գյուղացուն, թե «ավելի թեթևության համար անհրաժեշտ է յերկու յերակից էլ արյուն առնել», ու սկսեց թակով խփել բութ նշտարին. ապա դռնապանի ձիու փորի տակը կապեց կնոջ գլխաշորից պոկած յերիզով. վերջապես, սկսեց ամեն մի ցավող տեղի վրա արջասպ լցնել և յերբեմն հիվանդ ձիուն խմացնել ինչ խելքը կտրում էր։ Յեվ վորքան շատ ձիեր էր տանջում ու սպանում, այնքան ավելի էին հավատում նրան և ավելի շատ էին ձի բերում նրա մոտ։

III

Այն իսկ յերեկոյան, յերբ նորակոչ ընտրելու համար հավաքված ժողովն աղմկում էր գրասենյակի մոտ, հոկտեմբերյան գիշերի ցուրտ մթնում, Պոլիկեյը նստել էր իր տախտի ծայրին, սեղանի մոտ և դրա վրա շշով դեղ էր շինում. մի դեղ, վոր չգիտեր թե ինչ է, և ձիու մի հիվանդության դեմ, վորը նույնպես չգիտեր ինչ է։ Այդտեղ կար սուլեմա, ծծումբ, գլաուբերյան աղ և մի խոտ,

վոր Պոլիկեյը քաղել-հավաքել եր, յերևակայելով թե դա շատ օգտակար է ձիու սրտացավի դեմ, ու ավելորդ չեր համարում այդ նույն խոտը տալ և ուրիշ հիվանդությունների դեպքում։ Յերեխաներն արդեն պառկած եյին. յերկուսը փեչի վրա, յերկուսը մահճակալի, մեկն օրորոցում, վորի մոտ նստած եր Ակուլինան՝ մանածը ձեռին։ Տիրուհու տնից թոցրած մոմի մնացորդը՝ փայտե մոմակալի մեջ՝ հալվում եր լուսամուտում, և վորպեսզի մարդն իր կարևոր աշխատանքից չկտրվի, Ակուլինան վեր կացավ մոմի պատրույգը մատներով ուղղելու։ Կային ազատախոհ մարդիկ, վորոնք Պոլիկեյին համարում եյին սուտ ձիաբույժ և դատարկ մարդ։ Ուրիշները նրան համարում եյին վատ մարդ, բայց իր գործի մեջ մեծ վարպետ։ Իսկ Ակուլինան, չնայած վոր հաճախ հայհոյում և մինչև անգամ ծեծում եր մարդուն, նրան համարում եր անկասկած աշխարհի առաջին ձիաբույժն ու առաջին մարդը։ Պոլիկեյը բռան մեջ լցրեց դեղերի ինչ-վոր խառնուրդ։ (Նա կշեռք չեր գործածում և հեգնանքով եր խոսում գերմանացիների մասին, վոր կշեռք եյին գործածում։ «Սա,— ասում եր նա, — դեղատուն չի»)։ Պոլիկեյը դեղերի խառնուրդը ծանր ու թեթև արավ, բայց նրան թվաց քիչ է, և բուռը լցրեց տասն անգամ ավելի։ «Բոլորը դնեմ ավելի լավ կոգնի», ասաց նա ինքն իրեն։ Ակուլինան արագ շուռ յեկավ իր գլխի տիրոջ ձայնի վրա, նրա հրամանին սպասելով. բայց, տեսնելով, վոր բանն իրեն չի վերաբերում, ուսերը թոթվեց. «Տես, ինչ փորձվածն է. վորտեղից էլ իմանում է», մտածեց նա և կրկին սկսեց մանել։ Թուղթը, վորից Պոլիկեյը դեղերի խառնուրդը թափեց բռան մեջ, ընկավ սեղանի տակ։ Ակուլինայի աչքից չվրիպեց այդ։

— Անյուտկա, կանչեց նա,— տես, հերդ թուղթը քցեց, վերցրու։

Անյուտկան բարակ մերկ վոտները հանեց իր վրա

գցած մոր կ ա պ ո տ ի տակից, կատվի ձագի պես մտավ սեղանի տակ ու թուղթը վերցրեց։

— Առ, հայրիկ, — ասաց նա և սառած վոտներով կրկին մտավ անկողին։

— Ի՞նչ ես դիպցում, — ծվծված նրա փոքր քույրը ավավացնելով ու քնկոտ ձայնով։

— Յես ձեզ,— ասաց Ակուլինան, և յերկու գլուխն էլ թաղնվեցին կապոտի տակ։

— Յերեք ռուբլի կտամ,— ասաց Պոլիկեյը, շշի բերանը խցանելով,— ձին կլավացնեմ։ Դեռ եժան է, — ավելացրեց նա։ Ակուլինա, գնա մի Նիկիտից թութուն ուզի։ Եգուց կտամ։

Ու Պոլիկեյը վարտիքի գրպանից հանեց լորենուց շինած ու ներկած չիբուխի կոթը և սկսեց չիբուխը կարգի բերել։

Ակուլինան իլիկը թողեց ու դուրս գնաց, աշխատելով չկպչել նրան, ինչ վոր շատ դժվար եր։ Պոլիկեյը պահարանը բաց արավ, շիշը դրեց այնտեղ և դատարկ շ տ ո ֆ ը քաշեց գլխին, բայց ողի չկար։ Նա դեմքը կնճռեց, բայց յերբ կինը թութուն բերեց և նա ծխամորճը լցրեց, ծխեց ու նստեց մահճակալի վրա, նրա դեմքը փայլեց իր օրվան աշխատանքը վերջացրած մարդու բավականությամբ ու հպարտությամբ։ Մտածո՞ւմ եր արդյոք այն մասին, թե վաղը, ձիու լեզուն բռնելով, նրա բերանն է լցնելու այս զարմանալի դեղերի խառնուրդը թե՞ խորհրդածում եր այն մասին. վոր պետքական մարդուն վոչ-վոք բան չի մերժում, և վոր ա՛յ Նիկիտան թութուն է ղրկել,—նա իրեն լավ եր զգում։ Հանկարծ մի ողի վրա կախված դուռը յետ գնաց, և Պոլիկեյի ա ն կ յ ո ւ ն ը մտավ տիրուհու սպասավոր աղջիկը, վոչ թե յերկրորդը, այլ յերրորդը, փոքրը, վորին պահում եյին գնա ու դեն ուղարկելու համար։ Ակսյուտկան,— այսպես եյին անվանում աղջկան — տեղ ուղարկելիս գնդակի պես թռչում եր, և այդ ժամանակ նրա

կոները չէյին ծալված, այլ ճոճվում էյին ճոճանակի պես իր շարժման արագության համաձայն, վոչ թե կողերի յերկարությամբ, այլ առջևը. Նրա այտերը միշտ հագի վարդագույն շորից ավելի կարմիր էյին. Նրա լեզուն միշտ շարժվում եր նույնպես արագ, ինչպես և վոտները։ Նա ներս ընկավ սենյակ և, չգիտես ինչու, փեշից բռնելով, սկսեց և, կարծես կամենալով միանգամից անպատճառ յերկու-յերեք խոսք ասել, հանկարծ, շունչը կտրելով, Ակուլինային դիմելով, ասաց հետևյալը.

— Տիրուհին հրամայեց Պոլիկեյ Իլիչին էս րոպեյին վերև գա, հրամայեց... (Նա կանգ առավ և ծանր շունչ քաշեց)։ Յեգոր Միխայլովիչը տիրուհու մոտ եր, խոսում էյին նորակոչների մասին, Պոլիկեյ Իլիչին հիշեցին... Ավդոտյա Միկոլաևնան հրամայեց էս րոպեյին գալ։ Ավդոտյա Միկոլաևնան հրամայեց... (կրկին հոգոց) էս րոպեյին գալ։

Կես րոպեյի մեջ Ակսյուտկան նայեց Պոլիկեյին, Ակուլինային յերեխաներին, վոր գլուխները հանել էյին վերմակի տակից, վերցրեց փեչի վրա ընկած ընկույզի կճեպը, նետեց դեպի Անյուտկան և, մի անգամ ել «էս րոպեյին գալ» ասելով, մրրկի պես դուրս վազեց սենյակից, և ճոճանակները սովորական արագությամբ ճոճվեցին նրա առջև։

Ակուլինան վեր կացավ կրկին և մարդու յերկարաճիտ կոշիկները հանեց։ Դրանք վատ, պատառոտված, զինվորական կոշիկներ էյին։ Վերցրեց փեչի վրա կախ տված կաֆտանն ու տվեց նրան, առանց յերեսին նայելու։

— Իլիչ, շապիկդ չե՞ս փոխում։

— Չէ, ասաց Պոլիկեյը։

Ակուլինան վոչ մի անգամ չնայեց նրա դեմքին այն ժամանակ, յերբ նա լուռ հագնվում եր, և լավ արավ, վոր չնայեց. Պոլիկեյի դեմքը գունատ եր, ներքին ծնոտը դողում եր, և աչքերում կար արտասվագին ու հնազանդ, խորը դժբախտության մի արտահայտություն, վոր ունե-

նում են միայն բարի, թույլ և մեղավոր մարդիկ։ Նա սանրվեց և ուզեց դուրս գալ, կինը կանգնեցրեց և նրա վերնաշապիկն ուղղեց, ապա գլխարկը դրեց գլխին։

— Ի՞նչ է, Պոլիկեյ Իլիչ, տիրուհին քեզ կանչե՞լ ա,— լսվեց դուրգարի կնոջ ձայնը տախտակե միջնորմի յետևից։

Դուրգարի կինը հենց այսոր առավոտ Ակուլինայի հետ տաք կռիվ եր ունեցել մի աման մոխրաջրի համար, վոր թափել էյին Պոլիկեյի յերեխաները, և առաջին րոպեյին նա ուրախացավ, յերբ լսեց, վոր Պոլիկեյին կանչում են տիրուհու մոտ. յերևի լավ բանի համար չեն կանչում։ Բացի դրանից, նա հոտառու, քաղաքագետ և սուր լեզվի տեր կին եր։ Վոչ-վոք նրա պես չեր կարող մարդ շշպրել. գեթ այդպես եր մտածում նա ինքն իր մասին։

— Ով գիտի քաղաք են ուզում ղրկել՝ բան-ման առնելու,—շարունակեց նա։—Յես կարծում եմ, իբրև հավատարիմ մարդ, ձեզ են ղրկում։ Են ժամանակ, Պոլիկեյ Իլիչ, մի չետվերտ չայ առեք ինձ համար։

Ակուլինան արցունքները զսպեց, և նրա շրթները չար արտահայտություն ստացան։ Այնպես կուզեր մի այդ անզգամի՝ դուրգարի կնոջ կեղտոտ մազերից բռնել ու քաշե՜լ։ Բայց յերբ նայեց իր յերեխաներին ու մտածեց, վոր նրանք վորբ են մնալու, իսկ ինքը զինվորի այրի կին, մոռացավ դուրգարի չարալեզու կնոջը, յերեսը ձեռներով ծածկեց, նստեց անկողնի վրա, և նրա գլուխն իջավ բարձերին։

— Մայրիկ, ինձ սեղմեցիր, - քրթմնջաց սվսվացող աղջիկը, իր շապիկը մոր արմունկի տակից քաշելով։

— Բոլորդ մեռնեյիք՝ պրծնեյի։ Դարդ ու բալա եղաք ինձ համար,—ճչաց Ակուլինան և լաց յեղավ բարձրաձայն, ձայնը գցեց սենյակը ի ուրախություն դուրգարի կնոջ, վոր առավոտվա մոխրաջուրը դեռ չեր մոռացել։

IV

Անցավ կես ժամ։ Յերևան ճչաց որոտացում։ Ակուլինան վեր կացավ ու կերակրեց նրան։ Նա այլևս չեր լալիս, բայց իր՝ տակավին գեղեցիկ նիհար դեմքը որորոցին հենած՝ աչքերը հառեց հառնող մոմին ու մտածեց, թե ինչու մարդու գնաց, թե այդքան զինվորն ինչու յե պետք, մտածեց նաև այն մասին, թե ինչպես փոխարենը հատուցի գուրգարի կնոջը։

Լսվեց մարդու քայլերի ձայնը. նա արտասուքի հետքերը սրբեց ու վոտքի յելավ, վոր նրան ճանապարհ տա։ Պոլիկեյը ներս մտավ հաղթական, գլխարկ նետեց մահճակալի վրա, փքվեց ու սկսեց գոտին արձակել։

— Հը, ինչ կար, ինչո՞ւ յեր կանչում։

— Հը՛մ... հայտնի բան ե։ Պոլիկուշկան յեռնյալ մարդ ե համարվում, բայց հենց վոր մի բան ա հարկավորվում, ո՞ւմ ասենք։ Պոլիկուշկին։

— Ի՞նչ բան ա։

Պոլիկեյը չեր շտապում պատասխանելու. նա ծխամորճը քաշեց ու թքեց.

— Հրամայեց գնալ վաճառականի մոտ՝ փող բերելու։

— Փո՞ղ բերելու,—հարցրեց Ակուլինան։

Պոլիկեյը քմծիծաղ տվեց ու գլուխն որորեց։

— Ի՞նչ ել խոսել գիդի։ Դու, ասում ե, նկատողության տակ ես յեղել, վոր անհավատարիմ մարդ ես, բայց յես քեզ ավելի յեմ հավատում, քան մի ուրիշին (Պոլիկեյը բարձր ե խոսում, վոր հարևանները լսեն)։ Դու ինձ խոստացել ես ուղղվել, ասում ե. ահա քեզ առաջին ապացույցը, վոր քեզ հավատում եմ։ Գնա, ասում ե, վաճառականի մոտ, փողն առ ու արի։ Յես, ասում եմ, տիրուհի, մենք, ասում եմ, բոլորս ձեր ճորտերն ենք, ու պիտի ծառայենք ինչպես աստծուն, ենպես ել ձեզ, դրա համար յես զգում եմ, վոր ամեն ինչ կարող եմ անել ձեր

առողջության համար և վոչ մի պաշտոնից, գործից չեմ կարող հրաժարվել. ինչ կհրամայեք, են ել կկատարեմ, քանի վոր յես ձեր ստրուկն եմ (նա կրկին ժպտաց թույլ բարի և մեղավոր մարդու առանձնահատուկ ժպիտով)։ Այդպես ուրեմն, ասում ե, կկատարե՞ս հավատարմությամբ։ Դու, ասում ե, հասկանո՞ւմ ես, վոր քո ճակատագիրը սրանից ե կախված։ Ինչպես կարող եմ չհասկանալ, վոր յես ամեն ինչ կարող եմ անել։ Յեթե ինձ վրա շառ են գցել, եդպես հո ամենքին կարելի յե մեղադրել, իսկ յես յերբեք վոչ մի բանով, կարծեմ, ձեր առողջությանը հակառակ չեմ յեղել ու մտքով ել չեմ անցրել։ Եդպես, ուրեմն, վոր խոսեցի՝ տիրուհիս փափկեց։ Դու, ասում ե, իմ մարդկանցից առաջինը կլինես։ (Նա լռեց, և նույն ժպիտը կրկին յերևաց նրա դեմքին)։ Յես շատ լավ գիտեմ ինչպես պիտի դրանց հետ խոսել։ Բեգյարի գնալիս, պատահում եր, մեկը վրա չեր պրծնում։ Բավական եր հետը խոսեյի, գլուխն ենպես հոպոպի յեղ եյի քսում, վոր փափուկ աբրեշում եր դառնում։

— Շա՞տ փող ա,—հարցրեց ելի Ակուլինան։

— Յերեք կես հազար մանեթ ե,—անփույթ պատասխանեց Պոլիկեյը։

Կինը գլուխն որորեց։

— Յե՞րբ պիտի գնաս։

— Կարգադրեց՝ վաղը։ Վերցրու, ասում ե, վոր ձին ուզում ես, գնա գրասենյակ ու աստուծով ճամփա ընկի։

— Փա՜ռք քեզ, տեր,—ասաց Ակուլինան, վեր կենալով ու յերեսը խաչակնքելով։ Աստված հարեհաս ըլի, Իլիչ,—ավելացրեց նա շշնջալով, վոր տախտակե պատի յետևը չլսեն, և մարդու շապկի թևքը բռնելով.—Իլիչ, ականջ արա, քրիստոսի անունով խնդրվում եմ, յերբ գնաս, յերդվի, վոր բերանդ կաթիլ չես առնի։

— Զե՜ մի. եդքան փողը ձեռիս, խմե՞լու յեմ,—փնչացրեց նա։—Ենտեղ մեկն ենպես լավ, հունարով փոր-

տոպյան եր ածում վոր—հրմշք,—ավելացրեց նա ժպտալով։—Յերեկ, որիորդն եր։ Յես կանգնած եյի տիրուհու առաջ, իսկ որիորդն ընտեղ, դռան յետևը, կլկլացնում եր։ Ածում եր, ածում, մեկ էլ վոր իրար չեր գցում—պրծավ։ Յես կարող եյի, գիտես, փորտոպյան ածել։ Կսովորեյի։ Յես եդպես բաներում ճարպիկ եմ։ Եգուց մաքուր շալիկ կտաս ինձ։

Յեվ նրանք յերջանիկ պառկեցին քնելու։

V

Մինչ այդ գյուղացիների ժողովն աղմկում եր գրասենյակի առաջ։ Գյուղացիները գրեթե բոլորը հավաքվել եյին, և այն ժամանակ, յերբ Յեգոր Միխայլովիչը գնաց տիրուհու մոտ, նրանք գլուխները ծածկեցին, ավելի շատ ձայներ սկսեցին խոսել հանկարծ, ու ձայները դարձան ավելի բարձր։ Ոդում կանգնած եր թավ ձայների մռմռոց, վոր յերբեմն ընդհատվում եր շնչակտուր խռպոտ ճչուն խոսքերով, ու այդ մռմռոցն, ինչպես աղմկող ծովի ձայն, հասնում եր մինչև տիրուհու լուսամուտները, վորը տանել չեր կարողանում այդ ձայները ու, դրա հետ միասին, նյարդային անհանգստություն եր զգում, վոր նման եր ուժեղ փոթորկի հարուցած զգացման. չգիտես սարսափում եր, թե տհաճություն եր զգում։ Նրան թվում եր, թե ահա մի քիչ էլ վոր բարձր խոսեն՝ և՛ ձայները կշատանան, և՛ ինչ-վոր բան կը պատահի։ «Կարծես թե չի կարելի ամեն բան անել հանդարտ, խաղաղ, առանց վեճի ու աղմուկի,—մտածում եր նա,—քրիստոնեական, յեղբայրասիրական ու հեզության որենքով»։

Շատ ձայներ խոսեցին հանկարծ, բայց ամենից բարձր ճչում եր դուրգար Ֆեոդոր Ռեզունը։ Նա յերկու տղա ուներ և հարձակվում եր Դուտլովների վրա։ Ծերունի Դուտլովը պաշտպանվում եր. նա դուրս յեկավ բազմության առաջ, վորի առջև կանգնած եր հենց սկզբից, և,

շնչասպառ լինելով, ձեռները լայն տարածելով ու միրուքը բռնելով, այնպես շուտ-շուտ խնթխնթացրեց, վոր ինքն էլ դժվարությամբ կըմբռներ, թե ինչ ե ասում։ Նրա տղաներն ու յեղբոր վորդիները, հսկաների պես, իրար կպած կանգնել եյին նրա յետևը, և Դուտլովը նմանվում եր ճուտերն ուրուրից պաշտպանող թխսկանի։ Ուրուրը Ռեզունն եր. վոչ միայն Ռեզունը, այլ բոլոր յերկու և մի տղա ունեցողները, գրեթե ամբողջ ժողովը, վոր հարձակվում եր Դուտլովի վրա։ Բանն այն եր, վոր Դուտլովի յեղբայրը յերեսուն տարի առաջ զինվոր եր տարվել, այդ պատճառով էլ նա չեր ուզում յերեք տղա ունեցողների թվում լինել, այլ ուզում եր, վոր իր յեղբոր ծառայությունը հաշվեն և իրեն, ընդհանուր վիճակահանության մեջ, հավասարեցնեն յերկու տղա ունեցողներին, և հետո արդեն նրանցից կվերցնեյին յերրորդ նորակոչը։ Դուտլովից բացի յերեք տղա ունեցողների թիվը հասնում եր չորսի. բայց մեկը գյուղապետն եր, և տիրուհին նրան ազատել եր. մյուս ընտանիքից նորակոչ տրվել եր անցյալ տարվա զինվորակոչությանը։ Մնացած յերկու ընտանիքից նշանակվել եյին յերկուսը, և դրանցից մեկը մինչև անգամ ժողով չեր յեկել. միայն նրա կինն եր յեկել ու տխուր կանգնել բոլորի հետև, անհանգստությամբ սպասելով, թե իր բախտի անիվը դուցե մի կերպ շուռ գա. Նշանակված յերկուսից մյուսն էլ՝ շիկակարմիր Ռոմանը, թեև աղքատ չեր, բայց մի պատառոտուն վերնաշոր հագած՝ հենված կանգնել եր գրասենյակի մուտքի մոտ և, գլուխը կախ, բոլոր ժամանակ լուռ եր. յերբեմն միայն ուշադիր նայում եր նրան, ով բարձր եր խոսում, և կրկին իջեցնում եր գլուխը։ Նրա ամբողջ կերպարանքից թշվառություն եր թափվում։ Ծերունի Սիմոն Դուտլովն այնպիսի մարդ եր, վոր նրան փոքր ի շատե ճանաչող մեկը, հարյուրներ ու հազարներ պահ կտար նրան։ Նա լուրջ, աստվածավախ, ունևոր մարդ եր և, բացի դրանից, յեկեղեցու յերեցփոխ։

Դրա համար ել շատ զարմանալի չեր նրա խոսելու գըր-գված լեզվանակը։

Դուրգար Ռեզունն, ընդհակառակը, բարձրահասակ, սև, կատաղի, հաբեցող, համարձակ մարդ եր և մանավանդ ճարպիկ՝ ժողովներում, շուկայում՝ բանվորների, վաճառականների, գյուղացիների կամ աղաների հետ վիճելիս ու խոսելիս։ Այժմ նա հանգիստ եր, խայթող և իր բարձր հասակով, իր հնչյուն ձայնի ամբողջ ուժով և հռետորական տաղանդով ճնշում եր չնչտապառ յեղող և իր լըջության հավասարակշռությունը կորցրած՝ յեկեղեցու յերեցփոխին։ Վեճին մասնակցում եյին նաև կլորադեմ, ջահել տեսքով, քառակուսի գլխով և խուճուճ մորուքով, պնդակազմ Գարասկա Կոպիլովը, վոր Ռեզունից հետո, ավելի ջահել սերնդի խոսողներից մեկն եր, վոր աչքի յեր ընկնում միշտ իր սուր խոսքերով, և ժողովներում արդեն կշիռ ուներ։ Հետո նույնպես ջահել Ֆյոդոր Մելնիչնին — դեղնավուն, նիհար, յերկար, կուացած մի գյուղացի, վոր ցանցառ մորուք ուներ և մանրիկ աչքեր. միշտ մաղձոտ, մռայլ, ամեն բանի մեջ տեսնում եր վատ կողմը և հաճախ տարակուսանքի մեջ եր գցում ժողովն իր անսպասելի ու անկապ հարցերով ու նկատողություններով։ Այս յերկու շատախոսն ել Ռեզունի կողմն եյին։ Բացի դրանից, յերբեմն խոսակցության մեջ եյին մտնում յերկու դատարկախոս ել. մեկը բարեհոգի տեսքով և լայն մորուքով Խրապկովը, վոր խոսքի տակի-գլխի կրկնում եր. «սիրելի բարեկամ», և մյուսը՝ փոքրահասակ, թռչունի դեմքով Ժիդկովը, վոր նույնպես խոսքի տակի-գլխի կրկնում եր. «դուրս է գալի, ախպեր ջան», դիմում եր բոլորին և հարթ ել խոսում եր, բայց նրա ասածները յերբեք խընդրին չեյին վերաբերում։ Նրանք յերկուսն ել մեկ սրա կողմն եյին կանգնում, մեկ՝ նրա, բայց նրանց վոչվոք չեր լսում։ Սրանց նման ուրիշներն ել կային, բայց այս յերկուսը պտտվում եյին ժողովրդի մեջ, գոռում եյին ամե-

նից շատ, վախեցնելով ամբոխին. ամենից քիչ լոզ նրանք ունեյին, բայց աղմուկից ու գոռում-գոչյուններից հիմարացած՝ միանգամայն անձնատուր եյին յեղել լեզուները քորելու բավականությանը։ Կային և շատ տարբեր բնավորության տեր մարդիկ. կային մռայլ, վայելուչ, անտարբեր և ընկճված մարդիկ. կային և կանայք, վոր կանգնել եյին գյուղացիների յետև... Իսկ բազմությունը կազմված եր ընդհանրապես գյուղացիներից, վորոնք ժողովում կանգնել եյին այնպես, ինչպես յեկեղեցում, և շատերը յետևում շշուկով խոսում եյին իրենց տնային գործերի մասին կամ լուռ սպասում եյին, թե շուտ կվերջացնեն արդյոք գոռում-գոչյունը։ Կային հարուստներ, վորոնց բարեկեցությունը ժողովը վոչ կարող եր ավելացնել, վոչ պակասեցնել։ Այդպիսին եր Յերմիլը՝ լայն, փայլուն դեմքով մի մարդ, վորին գյուղացիները հաստափոր եյին անվանում նրա համար, վոր հարուստ եր։ Այդպիսին եր նաև Ստարոստինը, վորի դեմքին կար իշխանավորի ինքնագոհ արտահայտություն. «դուք այդտեղ ինչ ուզում եք խոսեք, ինձ վոչ-վոք ձեռք չի տա։ Չորս տղա ունեմ, բայց վոչ մեկին ել զինվոր չեն զրկի»։ Յերբեմն նրանց ել եյին կպչում ազատախոսները, ինչպես Կոպիլովն ու Ռեզունը, և նրանք պատասխանում եյին, բայց հանգիստ ու հաստատ ձայնով, իրենց անձեռնմխելիության գիտակցությամբ։ Յեթե Դուտլովը նմանում եր ճուտերն ուրուրից պաշտպանող թխսկանի, բայց նրա տղերքը՝ այնքան ել ճուտերի նման չեյին - դես ու դեն չեյին ընկնում, չեյին ծվծվում, այլ հանգիստ կանգնել եյին նրա յետև։ Ավագը՝ Իգնատն արդեն յերեսուն տարեկան եր, յերկրորդը՝ Վասիլը, նույնպես ամուսնացած եր, բայց զինվորության համար անպետք. յերրորդը՝ Իլյուշկան, Դուտլովի յեղբոր վորդին, վոր նոր եր ամուսնացել, սպիտակ ու կարմիր դեմքով, մի շքեղ տուլուպ հագած՝ (նա կառապանություն եր անում) կանգնել-նայում եր ժողովրդին, յերբեմն ծոծրակը

քորելով, կարծես բանն իրեն չեր վերաբերում, բայց ուրուրները հենց նրան եյին ուզում խլել։

— Եդպես հո իմ պապն ել ե գինվոր յեղել, ասում եր մեկը,—եդպես յես ել կհրաժարվեմ վիճակից։ Եդպես, ախպերս, որենք չկա։ Անցած գինվորակոչությանը Միխեիչեին տարան, իսկ նրա հորեղբայրը դեռ տուն չի յեկել։

— Քու վոչ հերը, վոչ հորեղբայրը թագավորին չեն ծառայել,—միաժամանակ ասում եր Դուտլովը,—դու ինքդ ել վո՛չ աղաներին ես ծառայել, վոչ հասարակությանը, միայն քեֆ ես արել, և տղերքդ քեզանից բաժանվեցին։ Քեզ հետ ապրել անկարելի յե, դու դեռ ուրիշների մասին ես խոսում, իսկ յես տասը տարի տանուտերի ոգնական եմ յեղել, տանուտեր եմ յեղել, յերկու անգամ տունս կրակ ե ընկել-վառվել մեկը չի ոգնել, հիմի վոր տանս ու դռանս ամեն ինչ կարգին ե—ուզում եք տունս քանդե՞լ։ Դե վոր եդպես ե—ախպորս յետ տվեք։ Գուցե և մեռել ե ենտեղ։ Արդար յեղե՛ք, խղճմտանք ունեցեք, թե չե հարբածի մեկը մի բան ե ասում, պետք ե լսե՞ք։

Այդ միևնույն ժամանակ Գերասիմն ասում եր Դուտլովին։

— Դու ախպորդ անունն ես տալի, բայց նրան հասարակությունը չի տվել, այլ աղաները՝ նրա անկարգության համար, ենպես վոր նա քեզ համար պատճառ չի։

Դեռ Գերասիմը չեր վերջացրել, յերբ մռայլ կերպով խոսել սկսեց դեղնավուն ու յերկար Ֆեոդոր Մելնիչնին, առաջ գալով.

— Եդ աղաները, տալիս են ո՛ւմ խելքները փչում ե, հետո հասարակությունը պըտի ջոկի։ Հասարակությունը վճռել ե, վոր քու տղեն գնա, չես ուզում՝ տիրուհուն խնդրիր, նա գուցե կարգադրի, վոր յես գնամ։ Այ քեզ որենք,—ասաց նա մաղձոտ և կրկին ձեռը թափ տալով կանգնեց նախկին տեղը։

Շիկակարմիր Ռոմանը, վորի վորդին նշանակված եր արդեն, գլուխը բարձրացրեց ու ասաց. «Ա՛յ եդպես, եդպես», և մինչև անգամ, բարկությունից, նստեց պատի դուրս ընկած տեղը։

Բայց սրանք դեռ բոլոր ձայները չեյին, վոր խոսեցին հանկարծ։ Բացի նրանցից, վորոնք, յետևում կանգնած, խոսում եյին իրենց գործերի մասին, դատարկախոսներն ել չեյին մոռանում իրենց պաշտոնը։

— Ճիշտ ե, այ խալխ, ասում եր փոքրահասակ Ժիգլովը, կրկնելով Դուտլովի խոսքերը, — պետք ե քրիստոնեաբար վարվել։ Ուրեմն, ախպեր ջան, պետք ե քրիստոնեաբար։

— Պետք ե խղճով դատել, սիրելի բարեկամ,—ասում եր բարեսիրտ Խրապկովը, կրկնելով Կոպիլովի խոսքերը և Դուտլովի տուլուպից քաշելով,—են աղաների կամքն ե յեղել, վո՛չ թե հասարակության վորոշումը։

— Դրուստ ա։ Ե՛դպես ա, - ասում եյին մյուսները։

— Ո՞վ ե հարբած դուրս տալիս,—առարկում եր Ռեզունը։—Դո՞ւ յես ինձ խմացրել ինչ ե, թե տղեդ, վորին հարբած տեղը ճամբից են վեր քաշում, նա պետք ե նախատի ինձ գինու համար… Ե, պետք ե, ախպեր, մի վորոշում հանել։ Յեթե ուզում եք Դուտլովին վողորմալ, ներել, վոչ թե յերկու տղա ունեցողների, մի տղա ունեցողի յել նշանակեք, նա մեզ վրա պըտի ծիծաղի։

— Դուտլովը պըտի գնա, ել ինչ խոսք։

— Հայտնի բան ա. առաջին յերեք տղա ունեցողները պըտի վիճակ հանեն,—լսվեցին ձայներ։

— Տեսնենք տիրուհին ինչ ե հրամայում, — ասաց մեկը։

Այդ նկատողությունը փոքր ինչ կանգնեցրեց վեճը, բայց շուտով կրկին բռնկվեց և նորից անցավ անձնականի։

Իգնատը, վորի մասին Ռեզունն ասաց, թե նրան ճամբից են վեր քաշել, սկսեց ապացուցել Ռեզունին, վոր նա

անցորդ գուրգարներից սղոց է գողացել և հարբած ժամանակ քիչ է մնացել կնոջը ծեծելով սպանի։

Ռեզունը պատասխանեց, թե ինքը կնոջը ծեծում է թե՛ լուրջ թե՛ հարբած ժամանակ, ու դա դեռ քիչ է, և դրանով բոլորին ծիծաղեցրեց։ Իսկ սղոցի համար նա հանկարծ վիրավորվեց, ավելի մոտեցավ Իգնատին ու հարցրեց։

— Ո՞վ է գողացել։

— Դու ես գողացել,—համարձակ պատասխանեց քաջառողջ Իգնատը, ել ավելի մոտենալով նրան։

– Ո՞վ է գողացել։ Դու չե՞ս գողացել,—ճչաց Ռեզունը։

— Չէ, դո՛ւ,—ճչաց Իգնատը։

Սղոցից հետո բանը հասավ գողացված ձիու, փարսակով լիքը տոպրակի և ինչ-վոր մեռած մարմնի։ Ու յերկուսն էլ այնպիսի սարսափելի բաներ ասին իրար, վոր, յեթե դրանց մի հարյուրերորդը ճիշտ լիներ, նրանց պետք էր օրենքով, Սիբիր քշել։

Այն ինչ ծերունի Դուտլովը պաշտպանության ուրիշ յեղանակ ընտրեց։ Նրան դուր չէր գալիս վորդու գոռոցը. նա, նրան կանգնեցնելով, ասաց. «մեղք բաներ մի՛ ասի. թարկը տուր, քեզ ասում են», իսկ ինքն սկսեց ապացուցել, վոր յերեքականները մենակ նրանք չեն, ում յերեք վորդին ապրում են միասին, այլև նրանք, վորոնք բաժանվել են։ Յեվ նա մատնացույց արավ նաև Ստարոստինի վրա։

Ստարոստինը թեթևակի ժպտաց, կոկորդը մաքրեց և, մորուքը հարուստ գյուղացու ձևով սղալելով, պատասխանեց, թե այդ բանում կամքը տիրուհունն է։ Իր վորդին, յերևի, արժանի յե, վոր հրամայել են թողնել։

Իսկ բաժանված ընտանիքների նկատմամբ՝ Գերասիմը նույնպես ջախջախեց Դուտլովի պատճառաբանությունները նկատելով, թե բաժանվելը չպիտի թույլատրվեր,

ինչպես հին աղայի օրով էր, թե հիմա մենակներին հո չպիտի զինվոր տալ։

— Հալբաթ մեր քեֆի համար ենք բաժանվե՞լ։ Ինչու նրանց տունը քանդենք հիմի,—լսվեցին բաժանվածների ձայները,—և դատարկախոսները միացան այդ ձայներին։

— Իսկ դու մեկին փող տուր՝ ա՛ռ, յեթե չես ուզում քունը գնա։ Ուժդ կպատի, - ասաց Ռեզունը Դուտլովին։

Դուտլովը հուսահատությամբ կաֆտանը վրա քաշեց ու կանգնեց մյուս գյուղացիների յետև։

— Հալբաթ դու իմ փողերը հաշվել ես,—ասաց նա չարացած։ – Հրե՛ տեսնենք Յեգոր Միխայլովիչն ինչ խաբար է բերում տիրուհուց։

VI

Իսկապես, Յեգոր Միխայլովիչն այդ ժամանակ դուրս յեկավ տիրուհու տնից։ Գլխարկները մեկը մյուսի յետևից բարձրացան գլուխներից և, քանի կառավարիչը մոտենում էր, իրար յետևից բացվում էին ճաղատ, սպիտակահեր, ալեխառն, սև և շեկ գլուխները, ու ձայները հետզհետե լռում էին և, վերջապես, բոլորովին լռեցին։ Յեգոր Միխայլովիչը կանգնեց մուտքի առջև և այնպես ցույց տվեց, թե ուզում է խոսել։ Յեգոր Միխայլովիչն իր յերկար սյուրթուկով, անհարմար կերպով առաջին գրպանները խոթած ձեռներով, ճակատին քաշած գործարանային գլխարկով և չաղ վոտներով, վորոնցով հաստատուն կանգնել էր բարձրության վրա, վորը տիրում-հրամայում էր այդ մերկ և դեպ իրեն դարձած մեծ մասամբ ծեր և մեծ մասամբ գեղեցիկ միրուքավոր գլուխներին,—բոլորովին այլ տեսք ուներ, քան տիրուհու առջև։ Նա վեհ, վսեմ տեսք ուներ։

— Ահա, տիրուհու վճիռը. տանու ճորտերից տալ չի ուզում, և ում վոր դուք կնշանակեք, նա յել կերթա։ Մեզ յերեք հոգի յե հարկավոր։ Իմ կարծիքով,—շարունակեց Յե-

գոր Միխայլովիչը,— Խորյուշկինն ու Միտյուխինի Վասկան պիտի գնան. դա արդեն աստված ինքն է կարգադրել:

— Եղպես է, ճիշտ է,— ասին մի քանի ձայներ:

— Յերրորդը կամ Դուտլովը պիտի գնա կամ յերկու տղա ունեցողներից մեկի տղեն: Ի՞նչպես կհրամայեք:

— Դուտլովը,— ասին ձայներ.— Դուտլովները յերեք են:

Ու նորից կամաց-կամաց սկսվեց գոռգոռոցը, և նորից ելի բանը հասավ գողացած ավլանքների: Յեգոր Միխայլովիչն արդեն քսան տարի յեր կառավարում եր տիրուհու կալվածքը, և խելոք, փորձված մարդ եր: Նա կանգնեց, լսեց մի քառորդ ժամ և հանկարծ բոլորին հրամայեց լռել, իսկ Դուտլովներին՝ վիճակ հանել, տեսնենք յերեքից վորին է ընկնում:

Վիճակն ընկավ Իլյային: Բոլորը լռեցին:

— Ի՞նձ ընկավ, հը: Մի տեսնեմ,— ասաց Իլյան կոտրված ձայնով:

Բոլորը լռեցին: Յեգոր Միխայլովիչը հրամայեց վաղը նորակոչների փողը բերել՝ ծուխը յոթը կոպեկ, և, հայտարարելով, թե ամեն ինչ վերջացած է, ժողովն արձակեց: Բազմությունը շարժվեց, խոսակցությամբ ու քայլերով աղմկելով. նրանք գլուխները ծածկեցին անկյունի յետևը: Կառավարիչը մուտքի առջև կանգնած՝ նայում եր հեռացողներին: Յերբ ջահել-Դուտլովներն անկյունն անցան, նա մոտ կանչեց ծերունուն, վոր ինքնաբերաբար կանգ առավ, և նրա հետ միասին մտավ գրասենյակ:

— Խղճում եմ քեզ, ծերուկ,— ասաց Յեգոր Միխայլովիչը, նստելով սեղանի առջևի բազկաթոռին,— հերթը քոնն է: Հիմի ախպորդ տղի փոխարեն մարդ չե՞ս վարձելու:

Ծերունին, առանց պատասխանելու, նշանակալից նայեց Յեգոր Միխայլովիչին:

— Անխուսափելի յե,— պատասխանեց Յեգոր Միխայլովիչը նրա հայացքին:

— Ուրախ կլինեյի, վոր վարձեյի, բայց ինչո՞վ, Յեգոր Միխայլիչ: Յերկու ձիս ամառը քերթեցին: Ախպորս տղին պսակեցի: Մեր բախտը, յերևի, եղպես է Նրա համար, վոր ազնվաբար ենք ապրում: Նրա գրությունը լավ է, ասում է (նա հիշեց Ռեզունին):

Յեգոր Միխայլովիչը ձեռով յերեսը շփեց ու հորանջեց: Նա, ըստ յերևույթին, ձանձրացել եր, և ժամանակն եր թեյ խմելու:

— Ե՛հ, ծերուկ, հոգուդ մեղք մի անի,— ասաց նա,— մի լավ ման արի, հողեպահուստ կունենաս, գուցե չորս հարյուր մանեթ գտնես: Յես քեզ համար մի այնպես լավ տղա կգտնեմ վոր—քեֆդ գա: Մի յերկու որ առաջ մեկը կար:

— Նահանգո՞ւմ,— հարցրեց Դուտլովը, նահանգ բառի տակ քաղաք հասկանալով:

— Հը՞, կվարձե՞ս:

— Ուրախությամբ կվարձեյի, բայց, ա՛յ, աստծո առաջ և...

Յեգոր Միխայլովիչը խստությամբ ընդհատեց նրան:

— Դե՛, լսիր ինձ, ծերուկ—նայիր Իլյան մի բան չանի իրեն. հենց վոր մարդ ուղարկեմ, այսոր լինի թե վաղը, իսկույն պիտի գնա: Յեթե դու տանես, դու յել պատասխանատու կլինես, իսկ յեթե, աստված վոչ անի, նրան մի բան պատահի, մեծ վորդուդ կտանեմ: Լսո՞ւմ ես:

— Սխր, Յեգոր Միխայլիչ, չի՞ կարելի յերկու տղա ունեցողներից տանեք, սխր մարդու ցավ է պատճառում,— ասաց ծերունին: Ախպերս, ով գիտի զինվորության մեջ մեռած ըլի, հիմի յել վորդուն են տանում. ինչո՞ւ համար է ես քամբախտությունը,— ասաց նա, գրեթե լալով և կառավարչի վոտներն ընկնելու պատրաստ:

— Դե, գնա, գնա,— ասաց Յեգոր Միխայլովիչը,— վոչինչ չի կարելի, կարգ է: Իլյուշկին լավ նայիր, պատասխանատու յես:

Դուտլովը գնաց տուն, ձեռի կլպած փայտը մաս-գրաղ ճանապարհի ցցափայտերին խփելով։

VII

Մյուս օրը վաղ առավոտյան այն տան առաջ, ուր ապրում էր Պոլիկեյը, կանգնած էր միաձի փոքրիկ սայլակը (վորով տեր էր գնում և կառավարիչը), սայլակում լծված էր մեծավոսկոր մուգ-դարչնագույն կտրած ձին, վորին, հայտնի չե ինչու, Բարաբան եյին անվանում։ Անյուտկան, Պոլիկեյի մեծ աղջիկը, չնայած մանրահատ կարկտախառն անձրևին ու սառը քամուն, բոբիկ կանգնել էր ձիու առաջ և հեռվից, ակներև յերկյուղով, մի ձեռով բռնել էր սանձը, մյուսով իր գլխին պահում էր կանացի դեղնա-կանաչ թիկնոցը, վորը Պոլիկեյի ընտանիքում կատարում էր վերմակի, քուրքի, գլխանոցի, գորգի, վերարկուի և ուրիշ շատ պաշտոններ։ Պոլիկեյի անկյունում իրարանցում էր տիրում։ Դեռ բոլորովին չեր լուսացել. անձրևոտ օրվա առավոտյան լույսը հազիվ ներս էր ընկել լուսամուտից, վորին տեղ-տեղ թուղթ էր կպցրած։ Ակուլինան մի առժամանակ թողնելով և կերակուր յեփելը և յերեխաներին (վորոնցից փոքրերը դեռ չեյին վեր կացել ու մրսում եյին, վորովհետև նրանց վերմակը վերցրել եյին անձրևից պաշտպանվելու համար և նրա փոխարեն նրանց ավել եյին մոր գլխաշորը), պատրաստություն էր տեսնում մարդուն ճանապարհ գցելու։ Շապիկը մաքուր էր։ Կոշիկները պատառոտված եյին, և այդ բանը հոգս էր պատճառում կնոջը. նա մի կերպ, վերջապես, կաշվե կտորներ դրեց կոշիկների մեջ ու ծակերը կալավ։ Իլյիչն ինքը վոտները տախտակին դրած-նստած էր. նա զբաղված էր գոտկաշորը շուռ տալով, վորպեսզի նա կեղտոտ թակլի տեսք չունենա։ Իսկ սվսվոցով խոսող բարկացկոտ աղջիկը, վոր գլխիցը հետ ծածկվել է մուշտակի մեջ, ուղարկվեց հարևան Նիկիտի մոտ՝ նրա գլխարկը խնդրելու... Տան ան-

հանգստությունն ավելացնում եյին տանուտերերը, վորոնք գալիս եյին Իլյիչին խնդրելու, վոր նա քաղաքում գնի մեկի համար ասեղ, յերկրորդին՝ թեյ, թութուն, և շաքար դուրգարի կնոջ համար, վորն արդեն սամավար եր դրել և, վորպեսզի Իլյիչի սիրտը շահի, բերել եր նրան մի բաժակ տաք ջուր, վոր նա թեյ եր անվանում։ Թեև Նիկիտան գլխարկը մերժեց և պետք յեղավ իրանը՝ Պոլիկեյինը կարգի բերել, այսինքն, դուրս պրծած ու կախ ընկած բամբակները տեղը դնել ու ձիաբուժական ասեղով ծակերը կարել, թեև մեջը կաշի դրած կոշիկները վոտները չեյին մտնում, թեև Անյուտկան սառավ ու Բարաբանին թողեց և Մաշկան քուրքը հագած գնաց նրան փոխարինելու, իսկ հետո յերբ Մաշկան ստիպված եր քուրքը հանել, ինքն Ակուլինան գնաց Բարաբանին պահելու,—բանը վերջացավ նրանով, վոր Իլյիչը հագավ իր ընտանիքի բոլոր հագուստները, թողնելով միայն թիկնոցը, և սայլակ նստելով, վերնաշորը վրա քաշեց, խոտը դրստեց, նորից շորերը վրա քաշեց, յերասանները ջոկեց, վերնաշորն էլ ավելի վրա քաշեց, ինչպես անում են այդ լուրջ մարդիկ, և ձին շարժեց։

Նրա փոքրիկ տղան՝ Միշկան, դուրս վազելով, պահանջեց, վոր իրեն կառքով ման ածեն։ Սվսվոցով խոսող Մաշկան նույնպես խնդրեց, վոր «իրեն էլ ման ացեն» և վոր ինքն առանց քուրքի յել «ցի մրսում»։ Պոլիկեյը Բարաբանին կանգնեցրեց, ժպտաց իր թույլ ժպիտով, իսկ Ակուլինան յերեխաներին նստացրեց նրա մոտ և, դեպի նա թեքվելով, շշուկով ասաց, վոր նա յերդումը չմոռանա և ճանապարհին բան չխմի։ Պոլիկեյը յերեխաներին տարավ մինչև դարբնոց, իջեցրեց, կրկին փաթաթվեց, կրկին գլխարկն ուղղեց և մեն-մենակ ձին քշեց չափավոր ընթացքով։ Իսկ Մաշկան ու Միշկան բոբիկ վոտներով այնպիսի արագությամբ և այնպիսի աղմուկով վերադարձան տուն սահուն զառիվայրով, վոր գյուղից կալվածատիրա-

Դուտլովը գնաց տուն, ձեռի կլպած փայտը մատագրաղ ճանապարհի ցցափայտերին խփելով։

VII

Մյուս օրը վաղ առավոտյան այն տան առաջ, ուր ապրում էր Պոլիկեյը, կանգնած էր միաձի փոքրիկ սայլակը (վորով տեղ էր գնում և կառավարիչը), սայլակում լծված էր մեծավոսկոր մուգ-դարչնագույն կտրած ձին, վորին, հայտնի չէ ինչու, Բարաբան եյին անվանում։ Անյուտկան, Պոլիկեյի մեծ աղջիկը, չնայած մանրահատ կարկտախառն անձրևին ու սառը քամուն, բոբիկ կանգնել էր ձիու առաջ և հեռվից, ակներև յերկյուղով, մի ձեռով բռնել էր սանձը, մյուսով իր գլխին պահում էր կանացի դեղնա-կանաչ թիկնոցը, վորը Պոլիկեյի ընտանիքում կատարում էր վերմակի, քուրքի, գլխանոցի, գորգի, վերարկուի և ուրիշ շատ պաշտոններ։ Պոլիկեյի անկյունում իրարանցում էր տիրում։ Դեռ բոլորովին չէր լուսացել. անձրևոտ օրվա առավոտյան լույսը հազիվ ներս էր ընկել լուսամուտից, վորին տեղ-տեղ թուղթ էր կպցրած։ Ակուլինան մի առժամանակ թողնելով և կերակուր յեփելը և յերեխաներին (վորոնցից փոքրերը դեռ չեյին վեր կացել ու մրսում եյին, վորովհետև նրանց վերմակը վերցրել եյին անձրևից պաշտպանվելու համար և նրա փոխարեն նրանց ավել եյին մոր գլխաշորը), պատրաստություն էր տեսնում մարդուն ճանապարհ դցելու։ Շապիկը մաքուր էր։ Կոշիկները պատառոտված եյին, և այդ բանը հոգս էր պատճառում կնոջը. նա մի կերպ, վերջապես, կաշվի կտորներ դրեց կոշիկների մեջ ու ծակերը կալավ։ Իլյիչն ինքը վոտները տախտին դրած-նստած էր. նա զբաղված էր գոտկաշորը շուռ տալով, վորպեսզի նա կեղտոտ թակի տեսք չունենա։ Իսկ սխալվելով խոսող բարկացկոտ աղջիկը, վոր գլխիցը հետ ծածկվել է մուշտակի մեջ, ուղարկվեց հարևան Նիկիտի մոտ՝ նրա գլխարկը խնդրելու... Տան ան-

հանգստությունն ավելացնում եյին տանուտերերը, վորոնք գալիս եյին Իլյիչին խնդրելու, վոր նա քաղաքում գնի մեկի համար ասեղ, յերկրորդին՝ թեյ, թութուն, և շաքար դուրգարի կնոջ համար, վորն արդեն սամավար էր դրել և, վորպեսզի Իլյիչի սիրտը շահի, բերել էր նրան մի բաժակ տաք ջուր, վոր նա թեյ էր անվանում։ Թեև Նիկիտան գլխարկը մերժեց և պետք յեղավ իրանը՝ Պոլիկեյինը կարգի բերել, այսինքն, դուրս պրծած ու կախ ընկած բամբակները տեղը դնել ու ձիաբուժական ասեղով ծակերը կարել, թեև մեջը կաշի դրած կոշիկները վոտները չեյին մտնում, թեև Անյուտկան սառավ ու Բարաբանին թողեց և Մաշկան քուրքը հագած գնաց նրան փոխարինելու, իսկ հետո յերբ Մաշկան ստիպված էր քուրքը հանել, ինքն Ակուլինան գնաց Բարաբանին պահելու,—բանը վերջացավ նրանով, վոր Իլյիչը հագավ իր ընտանիքի բոլոր հագուստները, թողնելով միայն թիկնոցը, և սայլակ նստելով, վերնաշորը վրա քաշեց, խոտը դրսեց, նորից շորերը վրա քաշեց, յերասանները ջոկեց, վերնաշորն էլ ավելի վրա քաշեց, ինչպես անում են այդ լուրջ մարդիկ, և ձին շարժեց։

Նրա փոքրիկ տղան՝ Միշկան, դուրս վազելով, պահանջեց, վոր իրեն կառքով ման ածեն։ Սխալվելով խոսող Մաշկան նույնպես խնդրեց, վոր «իրեն էլ ման ացեն» և վոր ինքն առանց քուրքի յել «ցի մրսում»։ Պոլիկեյը Բարաբանին կանգնեցրեց, ժպտաց իր թույլ ժպիտով, իսկ Ակուլինան յերեխաներին նստացրեց նրա մոտ և, դեպի նա թեքվելով, շշուկով ասաց, վոր նա յերդումը չմոռանա և ճանապարհին բան չխմի։ Պոլիկեյը յերեխաներին տարավ մինչև դարբնոց, իջեցրեց, կրկին փաթաթվեց, կրկին գլխարկն ուղղեց և մեն-մենակ ձին քշեց չափավոր ընթացքով։ Իսկ Մաշկան ու Միշկան բոբիկ վոտներով այնպիսի արագությամբ և այնպիսի աղմուկով վերադարձան տուն սահուն դառիվայրով, վոր գյուղից կալվածատիրա-

կան տունը վազող շունը նայեց նրանց և հանկարծ, պոչը վոտների արանքը կոխելով, հաչոցով փախավ տուն, վորից Պոլիկեյի ժառանգների ճիչն ու աղմուկը տաանայակվեց:

Յեղանակը վատ էր, քամին թրի պես կտրում էր յերեսը, և ձյունախառն անձրևն ու բանջարաբուսկը յերբեմն խփում էին Իլիչի դեմքին ու մերկ ձեռներին, վոր նա սառը յերասանների հետ թաղցրել էր վերնազգեստի թևքերի տակ, և խամուտի կաշվին, և Բարաբանի ծեր գլխին, վոր ականջները սեղմում էր և աչքերը կուչ ածում:

Հետո հանկարծ ամեն ինչ դադարեց, մի ակնթարթում պարզվեց. պարզ տեսնվում էին ձյունաբեր կապույտ ամպերը, և արևը, կարծես սկսում էր լուսավորել, բայց անհամարձակ էր և անուրախ, ինչպես իրա Պոլիկեյի ժպիտը: Չնայած դրան՝ Իլիչը խորասուզված էր հաճելի մտքերի մեջ: Նա, վորին ուզում էին զաղթեցնել, վորին սպառնում էին զինվորությամբ, վորին համարյա տեղից վեր կացողը հայհոյում ու ծեծում էր, վորին միշտ վատ բանի էին գնում,—նա հիմա գնում է փող ստանալու, և այն էլ՝ մեծ գումար, և տիրուհին վստահում է նրան. ու գնում է կառավարչի սայլակով, վորին լծված է Բարաբանը, վորով ինքը տիրուհին է տեղ գնում, գնում է ինչպես մի վաճառական՝ փոկե պարաններով ու յերասաններով: Յեվ Պոլիկեյը նստած տեղն ուղղվեց՝ գլխարկի բամբակները դրստեց և ելի փաթաթվեց վերնազգեստի մեջ: Սակայն, յեթե Իլիչը կարծում էր, վոր ինքը բոլորովին նման է հարուստ վաճառականի—սխալվում էր: Ճիշտ է, ամեն մեկը գիտի, վոր տաս հազար ռուբլի ունեցող վաճառականները ճամպա յեն գնում փոկե սարք ունեցող կառքով. սա նման է, բայց այն չէ: Կառքում մեն-մենակ նստած՝ գնում է մի միրուքավոր մարդ՝ կապույտ թե սև կաֆտան հագած. նայում ես միայն՝ կուշտ է արդյոք ձին, ինքը, ինչպես է նստած, ինչպես է լծված ձին, անիվների կապերն ինչպես

են, ինչպես է ինքը զարդարված—իսկույն յերևում է մարդը հազարի առուտուր է անում, թե հարյուրի: Ամեն մի փորձված մարդ հենց վոր մոտիկից նայեր Պոլիկեյին, նրա ձեռներին, նրա դեմքին, նրա վերջերս թողած միրուքին, նրա գոտուն, խոտին, վոր մի կերպ գցել էր արկղի մեջ, նիհար Բարաբանին, անիվների մաշված կապերին, իսկույն կտեսներ, վոր գնացողը ճորտ է, այլ վոչ թե հազար, հարյուր կամ տաս ռուբլի ունեցող վաճառական՝ մեծ առուտուր անող կամ իջևան պահող: Բայց Իլիչն այդպես չէր մտածում, նա մոլորվում էր և հաճելիորեն մոլորվում: Յերեք կես հազար ռուբլին կտանի ծոցը դրած: Կուզենա Բարաբանի գլուխը շուռ կտա դեպի Ոդեսա, ու կերթա, ուր ճամպեն կտանի: Բայց նա այդ բանը չի անի, այլ հավատարմությամբ փողը կտանի տիրուհուն կտա և կասի, թե սրանից պակաս փող չի տարել-բերել սրա-նրա համար: Ոդեսանը հավասարվելով՝ Բարաբանը ձախ յերասանը ձիգ տվեց, վոր կանգնի ու շուռ գա, բայց Պոլիկեյը, չնայած վոր մոտը փող կար, վոր տվել էին գնումների համար, մտրակը շարժեց Բարաբանի վրա և առաջ անցավ: Նույնն արավ և մյուս ոդեսան մոտ, և կեսօրին սայլակից իջնելով և, վաճառականի տան դարպասը բանալով (այդ տանն էին իջևանում տիրուհու բոլոր մարդիկ), սայլակը ներս քաշեց, ձին արձակեց, խոտ տվեց, ինքն էլ ճաշեց վաճառականի բանվորների հետ, չմոռանալով պատմել, թե ինչ կարևոր գործով է յեկել, և նամակը գլխարկի մեջ դրած գնաց այգեպանի մոտ: Այգեպանը, վոր ճանաչում էր Պոլիկեյին, նամակը կարդալով ակներև կասկածանքով հարց ու փորձեց, թե ճի՞շտ վոր նրան է հրամայված փողը տանել: Իլիչն ուզեց վիրավորվել, բայց չկարողացավ, այլ միայն ժպտաց: Այգեպանը մի անգամ էլ կարդաց նամակը և փողը տվեց: Փողն ստանալով՝ Պոլիկեյը դրեց այն ծոցը և գնաց վաճառականի տուն: Վոչ գարեջրատունը, վոչ ոդեսները, վոչինչ չէր գրավում նրան: Նա մի հաճելի

անցորդ գուրգարներից սղոց է գողացել և հարբած ժամանակ քիչ է մնացել կնոջը ծեծելով սպանի։

Ռեզունը պատասխանեց, թե ինքը կնոջը ծեծում է թե լուրջ թե հարբած ժամանակ, ու դա դեռ քիչ է, և դրանով բոլորին ծիծաղեցրեց։ Իսկ սղոցի համար նա հանկարծ վիրավորվեց, ավելի մոտեցավ Իգնատին ու հարցրեց։

— Ո՞վ է գողացել։

— Դու ես գողացել,—համարձակ պատասխանեց քաջառողջ Իգնատը, էլ ավելի մոտենալով նրան։

– Ո՞վ է գողացել։ Դու չե՞ս գողացել,—ճչաց Ռեզունը։

— Չէ, դո՛ւ,—ճչաց Իգնատը։

Սղոցից հետո բանը հասավ գողացված ձիու, վարսակով լիքը տոպրակի և ինչ-որ մեռած մարմնի։ Ու յերկուսն էլ այնպիսի սարսափելի բաներ ասին իրար, որ, յեթե դրանց մի հարյուրերորդը ճիշտ լիներ, նրանց պետք էր, օրենքով, Սիբիր քշել։

Այն ինչ ծերունի Դուտլովը պաշտպանության ուրիշ յեղանակ ընտրեց։ Նրան դուր չէր գալիս որդու գոռոցը․ նա, նրան կանգնեցնելով, ասաց․ «մեղք բաներ մի՛ ասի․ թարկը տուր, քեզ ասում են», իսկ ինքն սկսեց ապացուցել, որ յերեքականները մենակ նրանք չեն, ում յերեք որդին ապրում են միասին, այլև նրանք, որոնք բաժանվել են։ Յեվ նա մատնացույց արավ նաև Ստարոստինի վրա։

Ստարոստին թեթևակի ժպտաց, կոկորդը մաքրեց և, միրուքը հարուստ գյուղացու ձևով ողալելով, պատասխանեց, թե այդ բանում կամքը տիրուհունն է։ Իր որդին, յերևի, արժանի յե, որ հրամայել են թողնել։

Իսկ բաժանված ընտանիքների նկատմամբ՝ Գերասիմը նույնպես ջախջախեց Դուտլովի պատճառաբանությունները նկատելով, թե բաժանվելը չպիտի թույլատրվեր,

ինչպես հին աղայի օրով էր, թե հիմա մենակներին հո չպիտի զինվոր տալ։

— Հալբաթ մեր քեֆի համար ենք բաժանվե՞լ։ Ինչու նրանց տունը քանդենք հիմի,—լսվեցին բաժանվածների ձայները,—և դատարկախոսները միացան այդ ձայներին։

— Իսկ դու մեկին փող տուր՝ մա, յեթե չես ուզում քունը գնա։ Ուժդ կպատի, - ասաց Ռեզունը Դուտլովին։

Դուտլովը հուսահատությամբ կաֆտանը վրա քաշեց ու կանգնեց մյուս գյուղացիների յետև։

— Հալբաթ դու իմ փողերը հաշվել ես,—ասաց նա չարացած։ – Հըմ տեսնենք Յեգոր Միխայլովիչն ինչ խաբար է բերում տիրուհուց։

VI

Իսկապես, Յեգոր Միխայլովիչն այդ ժամանակ դուրս յեկավ տիրուհու տնից։ Գլխարկները մեկը մյուսի յետևից բարձրացան գլուխներից և, քանի կառավարիչը մոտենում էր, իրար յետևից բացվում էյին ճաղատ, սպիտակահեր, ալեխառն, սև և շեկ գլուխները, ու ձայները հետզհետե լռում էյին և, վերջապես, բոլորովին լռեցին։ Յեգոր Միխայլովիչը կանգնեց մուտքի առջև և այնպես ցույց տվեց, թե ուզում է խոսել։ Յեգոր Միխայլովիչն իր յերկար սյուրթուկով, անհարմար կերպով առաջին գրպանները խոթած ձեռներով, ճակատին քաշած գործարանային գլխարկով և չռած վոտներով, վորոնցով հաստատուն կանգնել էր բարձրության վրա, վորը տիրում-հրամայում էր այդ մերկ և դեպ իրեն դարձած մեծ մասամբ ծեր և մեծ մասամբ գեղեցիկ միրուքավոր գլուխներին,—բոլորովին այլ տեսք ուներ, քան տիրուհու առջև։ Նա վեհ, վսեմ տեսք ուներ։

— Ահա, տիրուհու վճիռը․ տանու ճորտերից տալ չի ուզում, և ում վոր դուք կնշանակեք, նա յել կերթա։ Մեզ յերեք հոգի յե հարկավոր։ Իմ կարծիքով,—շարունակեց Յե-

գոր Միխայլովիչը,— Խորյուշկինն ու Միտյուխինի Վասկան պիտի գնան. դա արդեն ասված ինքն է կարգադրել։

— Եդպես է, ճիշտ է,—ասին մի քանի ձայներ։

— Յերրորդը կամ Դուտլովը պիտի գնա կամ յերկու տղա ունեցողներից մեկի տղեն։ Ի՞նչպես կհրամայեք։

— Դուտլովը,—ասին ձայներ.—Դուտլովները յերեք են։

Ու նորից կամաց-կամաց սկսվեց գոռգոռոցը, և նորից եկի բանը հասավ գողացած սայրանքների։ Յեգոր Միխայլովիչն արդեն քսան տարի յեր կառավարում եր սիրուհու կալվածքը, և խելոք, փորձված մարդ եր։ Նա կանգնեց, լսեց մի քառորդ ժամ և հանկարծ բոլորին հրամայեց լռել, իսկ Դուտլովներին՝ վիճակ հանել, տեսնենք յերեքից վորին է ընկնում։

Վիճակն ընկավ Իլյային։ Բոլորը լռեցին։

-- Ի՞նձ ընկավ, հը։ Մի տեսնեմ,—ասաց Իլյան կոտրված ձայնով։

Բոլորը լռեցին։ Յեգոր Միխայլովիչը հրամայեց վաղը նորակոչների փողը բերել՝ ծուխը յոթը կոպեկ, և, հայտարարելով, թե ամեն ինչ վերջացած է, ժողովը արձակեց։ Բազմությունը շարժվեց, խոսակցությամբ ու քայլերով աղմկելով. նրանք գլուխները ծածկեցին անկյունի յետև։ Կառավարիչը մուտքի առջև կանգնած՝ նայում եր հեռացողներին։ Յերբ ջահել-Դուտլովներն անկյունն անցան, նա մոտ կանչեց ծերունուն, վոր ինքնաբերաբար կանգ առավ, և նրա հետ միասին մտավ գրասենյակ։

— Խղճում եմ քեզ, ծերուկ,—ասաց Յեգոր Միխայլովիչը, նստելով սեղանի առջևի բազկաթոռին,—հերթը քոնն է։ Հիմի ախպորդ տղի փոխարեն մարդ չե՞ս վարձելու։

Ծերունին, առանց պատասխանելու, նշանակալից նայեց Յեգոր Միխայլովիչին։

— Անխուսափելի յե,—պատասխանեց Յեգոր Միխայլովիչը նրա հայացքին։

— Ուրախ կլինեյի, վոր վարձեյի, բայց ինչո՞վ, Յեգոր Միխայլիչ։ Յերկու ձիս ամառը քերթեցին։ Ախպորս տղին պսակեցի։ Մեր բախտը, յերևի, եդպես է նրա համար, վոր ազնվաբար ենք ապրում։ Նրա գրությունը լավ է, ասում է (նա հիշեց Ռեզունին)։

Յեգոր Միխայլովիչը ձեռով յերեսը շփեց ու հորանջեց։ Նա, ըստ յերևույթին, ձանձրացել եր, և ժամանակն եր թեյ խմելու։

— Ե՛հ, ծերուկ, հողում մեղք մի անի,—ասաց նա,— մի լավ ման արի, հողեպահուստ կունենաս, գուցե չորս հարյուր մանեթ գտնես։ Յես քեզ համար մի այնպես լավ տղա կգտնեմ վոր—քեֆդ գա։ Մի յերկու օր առաջ մեկը կար։

— Նահանգո՞ւմ,—հարցրեց Դուտլովը, նահանգ բառի տակ քաղաք հասկանալով։

— Հը՞, կվարձե՞ս։

— Ուրախությամբ կվարձեյի, բայց, այ, աստծո առաջ և...

Յեգոր Միխայլովիչը խստությամբ ընդհատեց նրան։

— Դե, լսիր ինձ, ծերուկ—նայիր Իլյան մի բան չանի իրեն. հենց վոր մարդ ուղարկեմ, այսոր լինի թե վաղը, իսկույն պիտի գնա։ Յեթե դու տանես, դու յել պատասխանատու կլինես, իսկ յեթե, աստված վոչ անի, նրան մի բան պատահի, մեծ վորդուդ կտանեմ։ Լսո՞ւմ ես։

— Ախր, Յեգոր Միխայլիչ, չի՞ կարելի յերկու տղա ունեցողներից տանեք, ախր մարդու ցավ է պատճառում,—ասաց ծերունին։ Ախպերս, ով գիտի գինվորության մեջ մեռած ըլի, հիմի յել վորդուն են տանում. ինչո՞ւ համար է ես քամբախտությունը,—ասաց նա, գրեթե լալով և կառավարչի վոտներն ընկնելու պատրաստ։

— Դե, գնա՛, գնա՛,—ասաց Յեգոր Միխայլովիչը,—վոչինչ չի կարելի, կարգ է։ Իլյուշկին լավ նայիր, պատասխանատու յես։

Դուռլովը գնաց տուն, ձեռի կլպած փայտը մառագրաղ ճանապարհի ցցափայտերին խփելով։

VII

Մյուս օրը վաղ առավոտյան այն տան առաջ, ուր ապրում էր Պոլիկեյը, կանգնած էր միաձի փոքրիկ սայլակը (վորով սեղ էր գնում և կառավարիչը), սայլակում լծված էր մեծավոսկոր մուգ-դարչնագույն կտրած ձին, վորին, հայտնի չե ինչու, Բարաբան եյին անվանում։ Անյուտկան, Պոլիկեյի մեծ աղջիկը, չնայած մանրահատ կարկտախառն անձրևին ու սառը քամուն, բոբիկ կանգնել էր ձիու առաջ և հեռվից, ակներև յերկյուղով, մի ձեռով բռնել էր սանձը, մյուսով իր գլխին պահում էր կանացի դեղնա-կանաչ թիկնոցը, վորը Պոլիկեյի ընտանիքում կատարում էր վերմակի, քուրքի, գլխանոցի, գորգի, վերարկուի և ուրիշ շատ պաշտոններ։ Պոլիկեյի անկյունում իրարանցում էր տիրում։ Դեռ բոլորովին չեր լուսացել. անձրևոտ օրվա առավոտյան լույսը հազիվ ներս էր ընկել լուսամուտից, վորին տեղ-տեղ թուղթ էր կպցրած։ Ակուլինան մի առժամանակ թողնելով և կերակուր յեփելը և երեխաներին (վորոնցից փոքրերը դեռ չեյին վեր կացել ու մրսում եյին, վորովհետև նրանց վերմակը վերցրել եյին անձրևից պաշտպանվելու համար և նրա փոխարեն նրանց ավել եյին մոր գլխաշորը), պատրաստություն էր տեսնում մարդուն ճանապարհ դցելու։ Շապիկը մաքուր էր։ Կոշիկները պատառոտված եյին, և այդ բանը հոգս էր պատճառում կնոջը. նա մի կերպ, վերջապես, կաշվի կտորներ դրեց կոշիկների մեջ ու ծակերը կալավ։ Իլիչն ինքը վառները տախտին դրած-նստած էր. նա զբաղված էր գոտկաշորը շուռ տալով, վորպեսզի նա կեղտոտ թակի տեսք չունենա։ Իսկ սվսվոցով խոսող բարկացկոտ աղջիկը, վոր գլուխը հետ ծածկվել է մուշտակի մեջ, ուղարկվեց հարևան Նիկիտի մոտ՝ նրա գլխարկը խնդրելու... Տան ան-

հանգստությունն ավելացնում եյին տանուճորտերը, վորոնք գալիս եյին Իլիչին խնդրելու, վոր նա քաղաքում գնի մեկի համար ասեղ, յերկրորդին՝ թեյ, թութուն, և շաքար դուրգարի կնոջ համար, վորն արդեն սամավար էր դրել և, վորպեսզի Իլիչի սիրտը շահի, բերել էր նրան մի բաժակ տաք ջուր, վոր նա թեյ էր անվանում։ Թեև Նիկիտան գլխարկը մերժեց և պետք յեղավ իրանը՝ Պոլիկեյինը կարգի բերել, այսինքն, դուրս պրծած ու կախ ընկած բամբակները տեղը դնել ու ձիաբուժական ասեղով ծակերը կարել, թեև մեջը կաշի դրած կոշիկները վոտները չեյին մտնում, թեև Անյուտկան սառավ ու Բարաբանին թողեց և Մաշկան քուրքը հագած գնաց նրան փոխարինելու, իսկ հետո յերբ Մաշկան ստիպված էր քուրքը հանել, ինքն Ակուլինան գնաց Բարաբանին պահելու,—բանը վերջացավ նրանով, վոր Իլիչը հագավ իր ընտանիքի բոլոր հագուստները, թողնելով միայն թիկնոցը, և սայլակ նստելով, վերնաշորը վրա քաշեց, խոտը դրատեց, նորից շորերը վրա քաշեց, յերասանները ջոկեց, վերնաշորն էլ ավելի վրա քաշեց, ինչպես անում են այդ լուրջ մարդիկ, և ձին շարժեց։

Նրա փոքրիկ տղան՝ Միշկան, դուրս վազելով, պահանջեց, վոր իրեն կառքով ման ածեն։ Սվսվոցով խոսող Մաշկան նույնպես խնդրեց, վոր «իրեն էլ ման ածեն» և վոր ինքն առանց քուրքի յել «չի մրսում»։ Պոլիկեյը Բարաբանին կանգնեցրեց, ժպտաց իր թույլ ժպիտով, իսկ Ակուլինան յերեխաներին նստացրեց նրա մոտ և, դեպի նա թեքվելով, շշուկով ասաց, վոր նա յերդումը չմոռանա և ճանապարհին բան չխմի։ Պոլիկեյը յերեխաներին տարավ մինչև դարբնոց, իջեցրեց, կրկին փաթաթվեց, կրկին գլխարկն ուղղեց և մեն-մենակ ձին քշեց չափավոր ընթացքով։ Իսկ Մաշկան ու Միշկան բոբիկ վոտներով այնպիսի արագությամբ և այնպիսի աղմուկով վերադարձան տուն սահուն զառիվայրով, վոր գյուղից կալվածատիրա-

կան տունը վազող շունը նայեց նրանց և հանկարծ, պոչը վոտների արանքը կոխելով, հաջոցով փախավ տուն, վորից Գոլիկևյի ժառանգների ճիչն ու աղմուկը տասնապատկվեց։

Յեղանակը վատ եր, քամին թրի պես կտրում եր յերեսը, և ձյունախառն անձրևն ու բանջարաբուսկը յերբեմն խփում եյին Իլիչի դեմքին ու մերկ ձեռներին, վոր նա սառը յերասանների հետ թագցրել եր վերնազգեստի թևքերի տակ, և խամուտի կաշվին, և Բարաբանի ծեր գլխին, վոր ականջները սեղմում եր և աչքերը կուչ ածում։

Հետո հանկարծ ամեն ինչ դադարեց, մի ակնթարթում պարզվեց. պարզ տեսնվում եյին ձյունաբեր կապույտ ամպերը, և արևը, կարծես սկսում եր լուսավորել, բայց անհամարձակ եր և անուրախ, ինչպես իրա Գոլիկևյի ժպիտը։ Չնայած դրան՝ Իլիչը խորասուզված եր հաճելի մտքերի մեջ։ Նա, վորին ուզում եյին գաղթեցնել, վորին սպառնում եյին զինվորությամբ, վորին համարյա տեղից վեր կացողը հայհոյում ու ծեծում եր, վորին միշտ վատ բանի եյին գնում,—նա հիմա գնում ե փող ստանալու, և այն ել՝ մեծ գումար, և տիրուհին վստահում ե նրան. ու գնում ե կառավարչի սայլակով, վորին լծված ե Բարաբանը, վորով ինքը տիրուհին ե տեղ գնում, գնում ե ինչպես մի վաճառական՝ փոկե պարաններով ու յերասաններով։ Յեվ Գոլիկևյը նստած տեղն ուղղվեց՝ գլխարկի բամբակները դրստեց և ելի փաթաթվեց վերնազգեստի մեջ։ Ասենք, յեթե Իլիչը կարծում եր, վոր ինքը բոլորովին նման ե հարուստ վաճառականի—սխալվում եր։ Ճիշտ ե, ամեն մեկը գիտի, վոր տաս հազար ռուբլի ունեցող վաճառականները ճամպա յեն գնում փոկե սարք ունեցող կառքով. սա նման ե, բայց այն չե։ Կառքում մեն-մենակ նստած՝ գնում ե մի միրուքավոր մարդ՝ կապույտ թե սև կանաչ հագած. նայում ես միայն՝ կուշտ ե արդյոք ձին, ինքը, ինչպես ե նստած, ինչպես ե լծված ձին, անիվների կապերն ինչպես

են, ինչպես ե ինքը գոտեպնդված—իսկույն յերևում ե մարդը հազարի տուտուր ե անում, թե հարյուրի։ Ամեն մի փորձված մարդ հենց վոր մոտիկից նայեր Գոլիկևյին, նրա ձեռներին, նրա դեմքին, նրա վերջերս թողած միրուքին, նրա գոտուն, խոտին, վոր մի կերպ դցել եր արկղի մեջ, նիհար Բարաբանին, անիվների մաշված կապերին, իսկույն կտեսներ, վոր գնացողը ճորտ ե, այլ վոչ թե հազար, հարյուր կամ տաս ռուբլի ունեցող վաճառական՝ մեծ տուտուր անող կամ իջևան պահող։ Բայց Իլիչն այդպես չեր մտածում, նա մոլորվում եր և հաճելիորեն մոլորվում։ Յերեք կես հազար ռուբլին կտանի ծոցը դրած։ Կուզենա Բարաբանի գլուխը շուռ կտա դեպի Ողեսա, ու կերթա, ուր ճամպեն կտանի։ Բայց նա այդ բանը չի անի, այլ հավատարմությամբ փողը կտանի տիրուհուն կտա և կասի, թե սրանից պակաս փող չի տարել-բերել սրա-նրա համար։ Ողետանը հավասարվելով՝ Բարաբանը ձախ յերասանը ձիգ տվեց, վոր կանգնի ու շուռ գա, բայց Գոլիկևյը, չնայած վոր մոտը փող կար, վոր տվել եյին գնումների համար, մտրակը շարժեց Բարաբանի վրա և առաջ անցավ։ Նույնն արավ և մյուս ողետան մոտ, և կեսօրին սայլակից իջնելով և, վաճառականի տան դարպասը բանալով (այդ տանն եյին իջևանում տիրուհու բոլոր մարդիկ), սայլակը ներս քաշեց, ձին արձակեց, խոտ տվեց, ինքն ել ճաշեց վաճառականի բանվորների հետ, չմոռանալով պատմել, թե ինչ կարևոր գործով ե յեկել, և նամակը գլխարկի մեջ դրած գնաց այգեպանի մոտ։ Այգեպանը, վոր ճանաչում եր Գոլիկևյին, նամակը կարդալով ակներև կասկածանքով հարց ու փորձեց, թե ճի՞շտ վոր նրան ե հրամայված փողը տանել։ Իլիչն ուզեց վիրավորվել, բայց չկարողացավ, այլ միայն ժպտաց։ Այգեպանը մի անգամ ել կարդաց նամակը և փողը տվեց։ Փողն ստանալով՝ Գոլիկևյը դրեց այն ծոցը և գնաց վաճառականի տուն։ Վոչ գարեջրատունը, վոչ ողետները, վոչինչ չեր գրավում նրան։ Նա մի հաճելի

դըգխը եր զգում իր ամբողջ մարմնի մեջ և բազմիցս կանգ առավ խանութների առջև, ուր ծախում էյին գայթակղեցնող ապրանքներ—կոշիկներ, վերնազգեստներ, գլխարկներ, չիթ և ուտելու բաներ։ Նա, փոքր ինչ կանգ առնելով, հեռանում եր մի հաճելի զգացումով—կարող եմ բոլորը առնել, բայց չեմ անի։ Նա գնաց շուկա՝ գնելու այն բոլորը, ինչ ասել էյին. ամեն ինչ առավ և սկսեց սակարկել մի զարդարած մուշտակ, վորի համար քսանուհինգ ռուբլի էյին ուզում։ Ծախողը չգիտեր ինչու, Պոլիկեյին նայելով, չեր հավատում, վոր Պոլիկեյը կարող ե առնել. բայց Պոլիկեյը ցույց ավեց ծոցագրպանը, ասելով թե նրա ամբողջ խանութը կարող ե առնել, յեթե ուզենա, և պահանջեց փորձելու համար հագնել մուշտակը, ու տրորեց, չափեց և վերջապես, հառաչելով հանեց. «Գինը թանգ ե։ Յեթե տասուհինգով տայիր», ասաց նա։ Վաճառականը բարկացած մուշտակը գցեց սեղանի այն կողմը, իսկ Պոլիկեյը դուրս յեկավ և ուրախ տրամադրությամբ գնաց տուն։ Ընթրելով, Բարաբանին ջուր ու վարսակ տալուց հետո, նա փեշի ղուխը բարձրացավ, ծրարը հանեց ծոցից, յերկար նայեց և գրագետ դռնապանին խնդրեց կարդալ հասցեն ու «Ներփակ հազար վեց հարյուր յոթանասուն ռուբլի՝ թղթադրամով» խոսքերը։ Ծրարը շինված եր հասարակ թղթից, կնիքները դարչնագույն զմուռից էյին, խարիսխի պատկերով. մեկը մեծ եր՝ մեջտեղը, չորսը՝ ծայրերին. մի կողքին էլ զմուռ եր կաթել։ Իլիչն այս բոլորը նայեց և ուսումնասիրեց։ Մի տեսակ մանկական բավականություն եր զգում նա, իմանալով, վոր իր ձեռքին այդքան փող ե գտնվում։ Նա ծրարը կոխեց գլխարկի ծակը, գլխարկը դրեց գլխատակին ու պառկեց, բայց գիշերը մի քանի անգամ զարթնեց ու ծրարը շոշափեց։ Յեվ ամեն անգամ, ծրարն իր տեղը տեսնելով, նա հաճելի զգացում եր ունենում, գիտակցելով, վոր ինքն ահա, խայտառակված, վիրավորված Պոլիկեյը այսպիսի փողեր ե տանում ու կտանի տեղ կհաս-

ցընի համատարմությամբ, այնպիսի համատարմությամբ, վորպիսի համատարմություն ցույց չի տվել և ինքը կառավարիչը։

VIII

Կես գիշերին մոտ թե վաճառականի բանվորները և թե Պոլիկեյը զարթնեցին դարպասի թխկթխկոցից և գյուղացիների ձայներից։ Դրանք Պակրովսկուց բերվող նորակոչներն էյին. բոլոր յեկողները տաս հոգի էյին—Խորյուշկինըն եր, Միտյուշկինը և Իլյան (Դուտլովի յեղբոր տղան), յերկու փոխարինող, տանուտերը, ծերունի Դուտլովը, ու սայլապանները։ Խրճիթում գիշերալամպ եր վառվում, աղախինը քնել եր սրբապատկերի տակ դրված նստարանի վրա։ Նա ծուլ յեղավ տեղից և սկսեց մոմ վառել։ Պոլիկեյը նույնպես զարթնեց և, փեշից կառչելով, սկսեց նայել ներս մտնող գյուղացիներին։ Ներս մտնելով՝ բոլորը խաչակնքում էյին յերեսները և տեղավորվում նստարանի վրա։ Նրանք բարևեցին, ասացին-խոսեցին և ուտելու բան ուզեցին։ Ճիշտ ե, մի քանիսը լուռ էյին և տխուր, բայց մյուսներն անսովոր կերպով ուրախ էյին—ըստ յերևույթին խմած էյին։ Դրանց թվումն եր և Իլյան, վոր մինչև այսօր յերբեք չեր խմած։

— Հը, տղերք, ընթրել եք ուզո՞ւմ թե՞ պառկենք քնենք, —հարցրեց տանուտերը։

— Ընթրել.–պատասխանեց Իլյան, մուշտակի փեշերը յետ տանելով ու նստարանին նստելով։—Ուզարկիր արագ բերեն։

— Հերիք ե ինչքան խմել ես,—պատասխանեց տանուտերն արագ, և նորից դարձավ մյուսներին.—ուրեմն հաց կուտեք, տղերք. մեկ էլ խալխին չզարթեցնենք։

— Արաղ եմ ուզում,—կրկնեց Իլյան վոչ-վոքի չնայելով և այնպիսի ձայնով, վորից յերևում եր, վոր շուտով ձեռ չի քաշելու։

Գյուղացիք լսեցին տանուտերի խորհուրդը, այդտեղից հաց բերին, կերան, կվաս խնդրեցին-խմեցին ու պառկեցին՝ վորը հատակին, վորը փեչի վրա։

Իլյան յերբեմն-յերբեմն կրկնում էր. «արագ տուր, ասում եմ, տո՛ւր»։— Հանկարծ նա տեսավ Պոլիկեյին.— «Իլիչ, ա՛յ Իլիչ, դու եստե՞ղ ես, քաղցր բարեկամ։ Յես ախր զինվոր եմ գնում, ընդմիշտ մնաս բարով ասի մորս, նշանածիս... Վո՛նց էր գոռում։ Զոռով զինվոր դարձրին։ Արագ տո, խմենք։

— Փող չկա,— պատասխանեց Պոլիկեյը։— Աստված կտա, գուցե ազատվես,— ավելացրեց նա մխիթարելով։

— Չէ, ախպեր ջան, մաքուր եմ, վոչ մի հիվանդություն չունեմ, վոր ազատեն։ Թագավորին էլ հենց ես տեսակ զինվոր է հարկավոր։

Պոլիկեյը պատմեց, թե ինչպես մի գյուղացի խփել է բժշկին և դրանով ազատվել։

Իլյան մոտեցավ փեչին ու խոսքի բռնվեց։

— Չէ, Իլիչ, հիմի էլ պրծավ, յես ինքս էլ չեմ ուզում մնալ։ Հորեղբայրս զոռով տվեց։ Դու կարծում ես իմ տեղը չեյի՞նք կարող մարդ վարձել։ Չէ. վորդուն էլ ափսոսում, փողն էլ։ Ինձ տվին... Հիմի ինքս էլ չեմ ուզում։ (Նա խոսում էր կամաց, խոսակցին վստահելով, խաղաղ տխրության ազդեցության տակ)։ Միա՜յն— մորս եմ խղճում. ինչպես էր իրան ուտում խեղճը։ Մեկ էլ— նշանածըս. զուր տեղը անբախտացրինք խեղճին. հիմի կորչելու յէ. զինվորի կնիկ— պրծա՜վ։ Լավ կլիներ չպսակեյին։ Ինչո՞ւ պսակեցին ախր։ Եգուց գալու յեն։

— Բա ինչո՞ւ եսպես շուտ բերին ձեզ,— հարցրեց Պոլիկեյը.— Եղ մասին սկի խոսք չկար. մեկ էլ հանկարծ...

— Վախում են, թե յես ինձ մի բան կանեմ, կփախնեմ,— պատասխանեց Իլյան ժպտալով.— Մի՛ վախեք, հեչ բան էլ չեմ անի։ Յես զինվոր տեղս էլ չեմ կորչի, մի-

այն մորս եմ խղճում։ Ինչո՞ւ պսակեցին ինձ,— ասում էր նա կամաց ու տխուր։

Դուռը բացվեց և ներս մտավ ծերունի Դուտլովը՝ գլխարկը թափ տալով, իր մշտական մեծ տրեխներով, վորոնք կարծես նավակներ լինեյին վոտներին։

— Աֆանասի՛յ,— ասաց նա, խաչակնքելով ու դռնապանին դիմելով.- լապտեր չունե՞ս, ձիերին խրփուկ (վարսակ) ածեմ։

Դուտլովն Իլյային չնայեց ու հանգիստ սկսեց մոմի կտորը վառել։ Ձեռնոցներն ու մտրակը նա խրել էր գոտիկը, իսկ վերնազգեստն ամուր գոտեպնդված էր. կարծես սայլով էր յեկել քաղաք, այնպես սովորական ու պարզ էր նրա դեմքը և հանգիստ ու առորյա հոգսով պատած։

Իլյան, հորեղբորը տեսնելով, լռեց, կրկին աչքերը ցած գցեց մռայլ, նայեց նստարանին և ասաց, տանուտերին դիմելով։

— Արագ տո՛ւր, Յերմիլա։ Ուզում եմ խմեմ։

Նրա ձայնը չար էր ու մռայլ։

— Ի՞նչ արագ հիմի.— պատասխանեց տանուտերը, ամանից կերակուր ուտելով.— տեսնո՞ւմ ես, մարդիկ կերան ու պառկեցին. իսկ դու ի՞նչ ես գժություն անում։

«Գժություն» խոսքը, ըստ յերևույթին, նրան դրդեց գժություն անելու։

— Ա՛յ, տանուտեր, վատ բան կանեմ, յեթե ինձ արագ չտաս։

— Գոնե դու սրան բան հասկացրու,— դիմեց տանուտերը Դուտլովին, վոր լապտերն արդեն վառել, բայց յերևում էր, կանգ էր առել լսելու, թե էլ ինչ է լինելու, ու կողքանց ցավակցաբար նայում էր յեղբոր տղին, զարմանալով կարծես նրա յերեխայության վրա։

Իլյան կրկնեց.

— Արագ տուր, թե չէ վատ բան կանեմ։

— Թարկը տուր, Իլյա,— ասաց տանուտերը հեգնությամբ,— ավելի լավ կլինի, յեթե թարկը տաս։

Բայց հազիվ տանուտերն արտասանել եր այս խոսքերը, յերբ Իլյան ցատկեց տեղից, բռունցքով խփեց ապակուն և ամբողջ ուժով գոռաց.

— Չեք ուզում լսել, ասեք— ու նետվեց դեպի մյուս լուսամուտը, վոր այն էլ ջարդի։

Իլինչը պառկած տեղը մի ակնթարթում գլորվեց յերկու անգամ և թաղնվեց փեչի անկյունում։ Տանուտերը դգալը նետեց ու վազեց դեպի Իլյան։ Դուտլովը դանդաղորեն լապտերը դրեց ցած, գոտին արձակեց, լեզուն չպպացնելով, գլուխն օրորեց ու մոտեցավ Իլյային, վոր արդեն քաշքշում եր տանուտերին ու դռնապանին, վոր չեյին թողնում նրան լուսամուտին մոտենալու։ Նրանք բռնել եյին նրա ձեռները և, թվում եր, ամուր պահում են։ Բայց հենց վոր Իլյան նկատեց գոտին ձեռին բռնած հորեղբորը, նրա ուժը տասնապատկվեց, նա դուրս պրծավ իրեն բռնողների ձեռից, աչքերը խեթեց և սեղմած բռունցքով մոտեցավ Դուտլովին։

— Կսպանեմ, մի մոտենա, դադա։ Դու ինձ փչացրիր, քու ավազակ-վորդիների հետ փչացրիր ինձ։ Ինչու պառկեցրիր ինձ։ Մի մոտենա, թե չե կսպանեմ։

Իլյան սարսափելի յեր։ Նրա դեմքը կարմրել եր, աչքերը քիչ եր մնում դուրս գային բներից. Նրա ջահել առողջ մարմինը դողում եր կարծես տենդի մեջ։ Նա, թվում եր, ուզում եր և կարող եր սպանել բոլոր յերեքին էլ, վոր հարձակվել եյին վրան։

— Յեղբորդ արյունը խմում ես, արնակեր։

Դուտլովի մշտապես-համեստ դեմքի վրա ինչ-վոր բան փայլեց։ Նա մի քայլ արավ դեպի առաջ...

— Խաթրով չես ուզում,— ասաց նա և հանկարծ, վորտեղից այդքան յեռանդ, արագ շարժումով բռնեց յեղբոր տղին, գլորեց գետին և, տանուտերի օգնությամբ, սկսեց

նրա ձեռները վոլորել։ Հինգ րոպեյի չափ կռվում եյին նրանք. վերջապես, Դուտլովը, գյուղացիների օգնությամբ, վեր կացավ, Իլյայի ձեռներն իր մուշտակից պոկելով, հետո բարձրացրեց Իլյային՝ ձեռները յետևը կապկպած ու նստացրեց անկյունում՝ նստարանի վրա։

— Ասի՝ ավելի վատ կլինի,— ասաց Դուտլովը կռվից շնչասպառ լինելով և շապկի գոտին ուղղելով.— ինչ ես անկարգություն անում, բոլորս մեռնելու յենք։ Են վերնաշորը գլխատակը դիր,— ավելացրեց նա, դռնապանին դիմելով,— թե չե արյունը գլուխը կլցվի.— ու ինքը լապտերը վերցնելով, գոտեպնդվեց մի թոկով ու դուրս գնաց կրկին ձիերի մոտ։

Իլյան խճճված մազերով ու գունատ դեմքով դիտում եր սենյակը, կարծես ուզում եր հիշել, թե ուր է ինքը։ Դռնապանը հավաքեց ապակու կտորտանքը և լուսամուտի բաց տեղը մի կիսամուշտակ խրեց, վոր չփչի։ Տանուտերը կրկին նստեց իր կերակրի ամանի մոտ։

— Ե՜հ, Իլյա, Իլյա։ Ափսոսում եմ քեզ։ Ինչ արած։ Հրես Խորյուշկինն էլ պսակված ե. ինչպես յերևում ե, սըրտի տանես. պրծնում չկա։

— Յես իմ չար հորեղբոր պատճառով եմ կորչում,— կրկնեց Իլյան չարությամբ։— Նա իրա տղին ափսոսում ե... Մերս ասավ, կառավարիչն ասել ե՝ իմ տեղը մարդ վարձի. Չի ուզում. ասում ե՝ ուժս չի պատի։ Մի՞թե մենք քիչ աշխատանք ենք բերել եդ տուն... Չարակամ մարդ ե...

Դուտլովը մտավ խրճիթ, աղոթեց սրբապատկերներին նայելով, հանվեց ու նստեց տանուտերի մոտ։ Ագախինը նրան էլ կվաս ու գդալ տվեց։ Իլյան լռեց և, աչքերը փակելով, պառկեց, գլուխը վերնազգեստի վրա դնելով։ Տանուտերը լուռ ցույց տվեց նրա վրա ու գլուխն օրորեց։ Դուտլովը ձեռը թափ տվեց։

— Բա մեղք չի՞։ Չե՞ վոր հարազատ յեղբորս տղեն ե։ Բավական չի մեղք ե, դեռ ինձ էլ նրա աչքում չարա-

գործ գարձրին։ Նշանածը, շատ էլ ջահել է, բայց խորամանկ է, նրա գլուխն է մտցրել, թե մենք ինչ-որ փող ունենք, թե կարող ենք նրա տեղը մարդ բռնել։ Դրա համար էլ կշտամբում է։ Բայց ինչպէ՞ս եմ ափսոսում խեղճ աղին...

— Հա, լա՜վ տղա չէ,— ասաց տանուտերը։

— Էլ սիրտ չունեմ դրա մոտ մնալու։ Եգուց Իգնատին կղրկեմ, իրա նշանածն էլ եր ուզում գալ։

— Լավ, ուղարկի,— ասաց տանուտերը, և վեր կացավ ու յելավ փեչի գլուխը։— Փողն ինչ է որ։ Փողն ու հողը մեկ է։

— Փող լինեը, ո՜վ կլինայեր,— խոսեց վաճառականի բանվորը, գլուխը բարձրացնելով։

— Է՛հ, փողը, փողը։ Փողից շատ մեծ բաներ են պատահում,— արձագանք տվեց Դուտլովը։— Աշխարքի յերեսին ոչ մի բանից էնքան մեծ բան չի պատահում, ինչքան փողից, էդ բանը սուրբ գրքի մեջ էլ գրված է։

— Ամեն ինչ գրված է,— կրկնեց դռնապանը։— Մի անգամ մարդի մեկն ինձ պատմեց,— մի վաճառական է լինում, շատ փող է դիզում ու մեռնելիս ոչինչ չի ուզում թողնել. իր փողերն էնպես է սիրում, որ բոլորը հետը գերեզման է տանում։ Մեռնելիս՝ հրամայում է, որ դագաղի մեջը միայն մի բարձ դնեն։ Գլխի չեն ընկնում։ Էդպես էլ անում են։ Հետո որդիներն սկսում են փողը որոնել. բան չեն գտնում։ Տղաներից մինը գլխի յե ընկնում, թե, ով գիտի, փողը բարձի մեջ եր։ Բանը հասնում է թագավորին, իրավունք է տալիս գերեզմանը քանդեն։ Ինչ ես կարծում, ինչ լինի։ Քանդում են. բարձի մեջ բան չկա, բայց դագաղը լիքն է օձերով. էդպես էլ նորից թաղում են։ Այ թե ինչ է անում փողը։

— Հայտնի բան է, փողի մեղքը շատ է,— ասաց Դուտլովը, վեր կացավ և սկսեց աղոթել։

Աղոթքը վերջացնելով՝ նայեց յեղբոր աղին։ Նա քնած

եր։ Դուտլովը մոտեցավ, արձակեց նրա ձեռների կապն ու պառկեց։

IX

Հենց որ ամեն ինչ լռեց, Պոլիկեյը, մեղավորի պես, սուս ու փուս իջավ իր տեղից և սկսեց պատրաստվել գնալու։ Չգիտես ինչու, նա անհանգիստ եր զգում իրեն՝ գիշերել այստեղ՝ նորակոչների հետ։ Աքլորներն արդեն շուտ-շուտ կանչում եյին։ Բարաբանն առաջի ամբողջ վարսակը կերել եր և ձգվում եր դեպի ջրի տաշտը։ Իլիչը լծեց նրան և գյուղացոց սայլերի կողքով դուրս յեկավ փողոց։ Գլխարկի բովանդակությունն իր տեղն եր, և սայլակի անիվները նորից շխշխկացին Պոկրովսկու թեթևակի սառած ճանապարհին։ Պոլիկեյը թեթևություն զգաց այն ժամանակ միայն, յերբ քաղաքից դուրս յեկավ։ Թե չէ, չգիտես ինչու, բոլոր ժամանակ իրան թվում եր, թե ահա, ուր որ է, յետևից կլսվի հետապնդողների ձայնը, կգան կկանգնեցնեն իրեն, և Իլյայի փոխարեն իր ձեռները կըկապոտեն և վաղը կտանեն զինվորական վարչության հանձնելու։ Ցրտից թե վախից մի սառնություն անցավ նրա մեջքով, և նա շարունակ քշում եր հա քշում Բարաբանին։ Առաջին հանդիպող մարդը տերտեր եր՝ ձմեռային գլխարկով, մի կողը ծուռ բանվորի հետ։ Պոլիկեյն ավելի վախեցավ։ Բայց քաղաքից դուրս այդ վախը հետզհետե անցավ, Բարաբանը գնում է քայլով, առջևում յերևաց ճանապարհը. Իլիչը գլխարկը վերցրեց ու շոշափեց փողը. «Ծոցս դնեմ,— մտածեց նա,— դրա համար պետք է գոտիկս յետ անեմ. Թո՛ղ մի՛ ես դարիվարն անցնեմ, էնտեղ կիջնեմ, կարգի կբերեմ. փափախս վերևից ամուր կարված է, իսկ ներքևից, աստառի տակից չի ընկնի։ Մինչև տուն փափախս չեմ էլ վերցնելու»։ Հասնելով դարիվարի տակ՝ Բարաբանն առանց քշելու վազեց սարն ի վեր, և Պոլիկեյը, որ նույնպես, ինչպես և Բարաբանը, ցանկանում եր շու-

տով տուն հասնել, չարգելեց ձիուն։ Ամեն ինչ կարգին եր, գեթ այդպես եր թվում նրան, ու նա տարվեց յերազանքներով, թե ինչպես տիրուհին շնորհակալություն կհայտնի, թե ինչպես հինգ ռուբլի կտա և թե ինչպես իր տնեցիները կուրախանան։ Նա գլխարկը վերցրեց, մի անգամ ել շոշափեց նամակը, նորից գլխարկը խոր կոխեց գլուխն ու ժպտաց։ Գլխարկի պլիսը (բամբակե հաստարակ թավիշ) փռած եր և հենց այն պատճառով, վոր Ակուլինան առաջին օրը խնամքով կարել եր պատռած տեղը, նա ճղվել եր մի ուրիշ ծայրից, և հենց այն շարժումը, վորով Պոլիկեյը, գլխարկը վերցնելով, մտածեց մթան մեջ փողերով նամակն ավելի խոր կոխել բամբակների տակ, այդ իսկ շարժումը գլխարկը պատռեց և ծրարի մի անկյունը դուրս յեկավ պլիսի տակից։

Սկսեց լուսանալ, և Պոլիկեյը, վոր ամբողջ գիշեր չեր քնել, ննջեց։ Գլխարկն աչքերին քաշելով և դրանով նամակն ել ավելի դուրս մղելով Պոլիկեյը ննջի մեջ սկսեց գլուխը սայլի ճաղին դիպցնել։ Նա զարթնեց տան մոտ։ Առաջին շարժումը՝ գլխարկը բռնելն յեղավ, վոր պինդ նստած եր գլխին։ Պոլիկեյը գլխարկը չվերցրեց ել, համոզված լինելով, վոր ծրարն այնտեղ ե։ Նա շարժեց Բարաբանին, խոտը դրսեց, կրկին վաճառականի տեսք ընդունեց և ծանր ու մեծ շուրջը նայելով՝ քշեց առաջ։

Ահա խոհանոցը, ահա ծառայողների տունը, հրե գուրգարի կինը քաթան ե տանում, հրե տիրուհու տունը, ուր հիմա Պոլիկեյը ցույց կտա, վոր ինքը հավատարիմ ու ազնիվ մարդ ե, և տիրուհին կասի. «Դե, շնորհակալ եմ, Պոլիկեյ, առ քեզ յերեք...», բայց գուցե և տաս մանեթ և տալիս, և հրամայում գուցե թեյ տան իրեն, գուցե և օղի։ Ես ցրտին՝ չեր խանգարի։ Տասը մանեթով և՛ քեֆ կանենք տոներին և՛ կոշիկ կառնենք և՛ Նիկիտին ել իրա չորս մանեթ ու կեսը կտանք, թե չե շատ ե գանգատանում... Հարյուր քայլ եր մնում, վոր տուն հասնի, Պո-

լիկեյը մեկ ել ձեռը շարժեց, ուղղեց գոտին, վզկապը, գլխարկը վերցրեց, մազերը հարդարեց և առանց շտապելու, ձեռը կոխեց գլխարկի աստառի տակ։ Ձեռը շարժվեց գլխարկի մեջ արագ, ավելի արագ, մյուսը կոխեց նույն տեղը, դեմքը սպրդնեց, գունատվեց, մի ձեռը դուրս յեկավ գլխարկի մյուս կողմից։ Պոլիկեյը չոքեց, ձին կանգնեցրեց և սկսեց նայել սայլը, խոտը, գնումները, շոշափեց ծոցագրպանը, վարտիքի գրպանները. փողը չկար վոչ մի տեղ։

«Վա՜յ աստված. ես ի՞նչ բան եր։ Ի՞նչ ե, լինելու», գոռաց նա, մազերը բռնելով։

Բայց, իսկույն ևեթ հիշելով, վոր իրեն կարող են տեսնել, Բարաբանի գլուխը շուռ տվեց, գլխարկը դրեց և զարմացած ու դժգոհ Բարաբանին յետ քշեց յեկած ճանապարհով։

«Պոլիկեյի հետ տեղ գնալն անտանելի յե,— պիտի մտածեր Բարաբանը։—Կյանքում մի անգամ ժամանակին կերակրեց ու ջրեց ու այն ել նրա համար, վոր այսպես տհաճություն պատճառի ինձ։ Ինչպես եր աշխատում վազել-տուն հասնել։ Հոգնեցի, իսկ այստեղ, հենց վոր մեր խոտի հոտն յեկավ, նա ինձ քշում ե յետ»։

— Հե՛, անգյալ,— արցունքների միջից կանչեց Պոլիկեյը, սայլակում կանգնած և, ձիու յերասանները ձիգ տալով, մտրակով խփեց նրան։

X

Ամբողջ օրը Պոկրովսկում վոչ-վոք Պոլիկեյին չտեսավ։ Տիրուհին ճաշից հետո միքանի անգամ հարցրեց, և Ակսյուտկան վազեց Ակուլինայի մոտ. բայց Ակուլինան պատասխանեց, վոր չի յեկել, վոր, ինչպես յերևում ե, վաճառականը պահել-ուշացրել ե նրան, կամ թե ձիուն ե մի բան պատահել։ «Ինչ իմանամ, գուցե ձին կաղացել ե,— ասաց նա,— անցած անգամ Մաքսիմը որ ու գիշեր

ամբողջ ճամպեն կորել եր վատով»։ Անյուտկան ձեռներն առջևը ճոճելով գնում եր տուն, իսկ Ակուլինան մտածում եր մարդու ուշանալու պատճառների մասին ու աշխատում հանգստացնել իրեն, բայց չեր կարողանում։ Մի բան ճնշում եր նրա սիրտը, և չեր կարողանում վաղվա տոնի համար մի բան անել։ Նա ավելի յեր տանջվում, յերբ դուրգարի կինը հավատացնում եր, թե ինչպես ինքը տեսել ե «մի մարդ, վոր կարծես Իլիչը լիներ, մոտեցավ տանն ու նորից ձիու գլուխը շուռ տվեց»։ Յերեխաները նույնպես անհանգիստ և անհամբեր սպասում եյին հայրիկին, բայց այլ պատճառներով. Անյուտկան ու Մաշկան մնացել եյին առանց մուշտակի ու վերնազգեստի, վորոնք հնարավորություն եյին տալիս նրանց գոնե հերթով փողոց դուրս գալու, ուստի հարկադրված եյին պտտվել տան շուրջը միմիայն իրենց բարակ շորերով, այն էլ մեծ արագությամբ, վորով քիչ նեղություն չեյին պատճառում տան դուրս ու ներս անող բնակիչներին։ Մի անգամ Մաշկան դիպավ դուրգարի կնոջ վոտներին, վոր ջուր եր տանում, և թեև առաջուց լաց յեղավ նրա ծնկներին դիպչելով, սակայն այդ արագ վազքի համար սուր կերավ ու ավելի սաստիկ լաց յեղավ։ Յերբ Մաշկան մեկն ու մեկին չեր դիպչում, դռնից ուղիղ մտնում եր ներս և ջրի տակառի վրայով բարձրանում փեչի գլուխը։ Միայն տիրուհին ու Ակուլինան եյին իսկապես անհանգստանում հատկապես իրա Պոլիկեյի համար. իսկ յերեխաներն անհանգստանում եյին նրա հագի շորերի համար։ Իսկ Յեգոր Միխայլովիչը, տիրուհուն զեկուցում տալիս, նրա հարցին, թե «չի՞ յեկել արդյոք Պոլիկեյը, և ու՞ր կարող ե լինել»,—ժպտաց, պատասխանելով՝ «չեմ կարող իմանալ», ու ըստ յերևույթին գոհ եր, վոր իր յենթադրությունները արդարացել եյին։ «Պետք ե ճաշին գար», ասաց նա նշանակալից։ Այդ որը Պոկրովսկում վոչ-վոք վոչինչ չգիտեր Պոլիկեյի մասին. միայն հետո արդեն իմացվեց, թե հա-

րևան գյուղացիները տեսել են նրան, թե ինչպես առանց գլխարկի՝ վազում եր ճամպով ու բոլորին հարցնում. «Նամակ չե՞ք գտել»։ Մի ուրիշ մարդ տեսել եր նրան ճամպի յեզրին, սայլակին լծած ու վոտները կապած ձիու կողքին քնած։ «Կարծեցի,—ասում եր այդ մարդը,—հարբած ե, ու ձին յերկու որ ե վոչ կերել ե, վոչ խմել, ենպես եր փորը մեջքին կպած»։ Ակուլինան ամբողջ գիշեր չքնեց, շարունակ ականջ եր դնում, բայց Պոլիկեյը գիշերն էլ չեկավ։ Յեթե նա մենակ լիներ և խոհարար ու ադախին ունենար, նա իրեն ավելի դժբախտ կզգար. բայց հենց վոր աքլորները յերրորդ անգամ կանչեցին, և դուրգարի կինը վեր կացավ, Ակուլինան էլ ստիպված եր վեր կենալ ու փեչով զբաղվել։ Տոն եր. մինչև լույս հացը պետք ե թխեր-հաներ, կվաս պատրաստեր, կովը կթեր, շորերն ու շալիկները հարթուկեր, յերեխաների գլուխը լվար, ջուր բերեր և հարևանուհուն թույլ չտար ամբողջ փեչն զբաղեցնելու։ Ակուլինան, մի ականջը ձայնի, ձեռնարկեց այս բաներին։ Լուսացավ արդեն, ժամի զանգերը քաշեցին, յերեխաները վեր կացան, իսկ Պոլիկեյը դեռ չկար ու չկար։ Յերեկ առաջին ձյունը յեկավ, անհավասար ծածկեց դաշտերը, ճամպան ու տանիքները, և այժմ, կարծես տոնի պատճառով, որը պայծառ եր, արևոտ ու սառը, այնպես վոր հեռվից լսվում և տեսնվում եր ամեն ինչ։ Բայց Ակուլինան, փեչի առաջ կանգնած ու գլուխը հետ նրա մեջը մտած, այնպես եր զբաղված հաց թխելով, վոր չլսեց, թե Պոլիկեյն ինչպես յեկավ, և միայն յերեխաների ձայնից իմացավ, վոր մարդն յեկել ե։ Անյուտկան, իբրև մեծ, մազերը յուղեց ու հագնվեց։ Նա հագել եր նոր վարդագույն չթե, բայց ճմրթված շորը, վոր տիրուհին եր նվիրել և այդ պատճառով ծակում եր հարևանների աչքը. կոշիկները թեև նոր չեյին, բայց նուրբ եյին։ Մաշկան դեռ թիկնոցի մեջ եր ու կեղտոտ, և Անյուտկան նրան չեր թողնում իրեն մոտենա, վոր չկեղտոտվի։ Մաշ-

կան գտնն էր, յերբ հայրը յեկավ՝ պարկը ձեռին։ «Հայլիկը եկավ» ճղճղաց նա, գլխապատառ ներս վազելով և Անյուտկային դիպչելով՝ կեղտոտեց նրան։ Անյուտկան, այլևս կեղտոտվելուց չվախենալով, իսկույն ծեծեց Մաշկային. իսկ Ակուլինան չկարողացավ գործից կտրվել։ Նա յերեխաների վրա գոռաց միայն. «Հե՛ր. բոլորիդ կջարդեմ», ու նայեց դեպի դուռը։ Իլիչը պարկը ձեռին մտավ հաշտը և իսկույն անցավ իր անկյունը։ Ակուլինային թվաց, թե նա գունատ է, և դեմքն էլ այնպես էր, կարծես լաց էր լինում թե ծիծաղում. բայց նա ժամանակ չուներ ջոկելու։

— Հե՛. Իլիչ, բանդ հաջո՞ղ է,—հարցրեց Ակուլինան փեչի առջևից։

Իլիչն ինչ-վոր քրթմնջաց, վորից կինը բան չհասկացավ։

— Հը՞,—ձայն տվեց Ակուլինան,—տիրուհու մոտ յեղե՞լ ես։

Իլիչն իր անկյունում նստել էր մահճակալի վրա, վայրենու պես շուրջն էր նայում և ժպտում իր մեղավոր ու խորապես դժբախտ ժպիտով։ Նա յերկար վոչինչ չպատասխանեց։

— Հե՛, Իլիչ, ինչո՞ւ ուշացար, լսվեց Ակուլինայի ձայնը։

— Յես, Ակուլինա, փողը տիրուհուն տվի. ի՜նչպես շնորհակալ յեղավ.—ասաց նա հանկարծ ու սկսեց ավելի անհանգիստ շուրջը նայել ու ժպտալ։ Յերկու առարկա հատկապես իրենց վրա էյին բևեռում նրա անհանգիստ տենդագին-չռված աչքերի հայացքը. դրանք—օրորոցին կապված թոկերն էյին ու յերեխան։ Նա մոտեցավ օրորոցին և իր բարակ մատներով սկսեց արագորե՛ն թոկի հանգույցը բանալ։ Հետո նրա աչքերը կանգ առան յերեխայի վրա. բայց այդ ժամանակ Ակուլինան հացերը տախտակների վրա դրած մտավ անկյունը։ Իլիչը թոկն արագ թաքցրեց ծոցում ու նստեց մահճակալին։

— Ի՞նչ է պատահել, Իլիչ, քեփդ կարծես տեղը չի,—ասաց Ակուլինան։

— Անքուն եմ,—պատասխանեց Պոլիկեյը։

Հանկարծ լուսամուտի յետև ինչ-վոր բան յերևաց ու անցավ, և մի ակնթարթ հետո նետի պես ներս ընկավ տիրուհու աղախինը՝ Ակսյուտկան։

— Տիրուհին հրամայեց Պոլիկեյ Իլիչին՝ ես րոպեյին գալ,—ասաց նա։—Ես րոպեյին հրամայեց Ավդոտյա Միկոլավնան... ես րոպեյին։

Պոլիկեյը նայեց Ակուլինային, աղջկան։

— Հիմի յեկա. ինչ կա վոր,—ասաց նա այնպես հասարակ կերպով, վոր Ակուլինան հանգստացավ.—գուցե ուզում է պարգև տալ։ Ասա՝ հիմի գալիս եմ։

Նա վեր կացավ ու դուրս գնաց. իսկ Ակուլինան տաշտը վերցրեց, դրեց նստարանի վրա, մեջը ջուր լցրեց դռան մոտ դրված դույլերից, փեչի տաք կաթսայից, թևքերը քշտեց ու ջրի տաքությունը փորձեց։

— Մաշկա, արի լողացնեմ։

Բարկացկոտ, սվսվոցով խոսող աղջիկը լաց յեղավ։

— Արի, քոսոտ, մաքուր շապիկ կհագցնեմ։ Դե, նազ մի անի։ Արի, դեռ քրոջդ էլ պիտի լողացնեմ։

Մինչ այդ Պոլիկեյը, Ակսյուտկայի յետևից, գնաց վոչ թե տիրուհու մոտ, այլ բոլորովին ուրիշ տեղ։ Հաշտում, պատի կողքին կար մի դիք սանդուղք, վոր տանում է տանիքի տակը (чердак)։ Պոլիկեյը, հաշտը դուրս գալով, յետ նայեց և, մարդ չտեսնելով, կռացած, գրեթե վազելով, ճարպիկ ու արագ շարժումներով բարձրացավ սանդուղքով։

Ի՞նչ է նշանակում, ինչո՞ւ Պոլիկեյը չի գալիս,—ասաց տիրուհին անհամբեր, դիմելով Դունյաշկային, վոր քորում էր նրա գլուխը,—ո՞ւր է Պոլիկեյը։ Ինչո՞ւ չի գալիս։

Ակսյուտկան նորից սլացավ ծառայողների տունը և

կրկին հաշտը մտնելով՝ պահանջեց, որ Իլիչը գա տիրուհու մոտ։

— Նա վաղուց է գնացել,— պատասխանեց Ակուլինան, որ, Մաշկային լողացնելով, այդ ժամանակ հենց նոր տաշտի մեջ նստեցրել էր ծծկեր յերեխային ու թըրջում էր նրան, չնայած նրա ճղճղոցին։ Յերեխան ճչում էր, դեմքը կուչ ածում և աշխատում էր ինչ-որ մի բան բռնել իր անոգնական փոքրիկ ձեռներով։ Ակուլինան մի ձեռքով պահում էր նրա փափլիկ, փոսիկներով ծածկված կակուղ մեջքը, իսկ մյուսով լողացնում էր նրան։

— Մի տես հը՞ չի քնել մի տեղ,— ասաց նա անհանգիստ շուրջը նայելով։

Այդ ժամանակ դուրգարի կինը մազերը թափթըփած, կուրծքը բաց, շրջազգեստի փեշերը բռնած, բարձրանում էր տանիքի տակ չորացրած շորերը վերցնելու։ Հանկարծ սարսափի մի ճիչ լսվեց տանիքի տակից, և դուրգարի կինը, խելագարի պես, փակ աչքերով, չորեքթաթ, յետ-յետ գալով՝ թռավ սանդուղքից։

— Իլիչը՛,— ճչաց նա։

Ակուլինան յերեխան թողեց ձեռից։

— Իրան խեղդել է,— գոռաց դուրգարի կինը։

Ակուլինան չնկատելով որ յերեխան գլորվելով յերեսն ի վար ընկավ ջրի մեջ, դուրս վազեց հաշտը։

Գերանից...կախված է,— ասաց դուրգարի կինը, բայց Ակուլինային տեսնելով, կանգ առավ։

Ակուլինան նետվեց դեպի սանդուղքը և, նախքան նրան կհասնեյին, վեր բարձրացավ ու սարսափելի մի ճիչով, մեռելի պես, ընկավ սանդուղքի վրա ու կրնկներ յած, կմեռներ, յեթե բոլոր ա ն կ յ ու ն ն ե ր ի ց դուրս թափված մարդիկ չբռնեյին նրան։

XI

Մի քանի րոպե, ընդհանուր իրարանցման մեջ, ոչինչ չէր կարելի ջոկել։ Անթիվ մարդիկ յեկան, բոլորն էլ գոռում էյին, խոսում, յերեխաներն ու պառավները լալիս էյին, Ակուլինան պառկած էր՝ ուշաթափված։ Վերջապես տղամարդիկ՝ դուրգարը և շտապով յեկած կառավարիչը բարձրացան վերև, ու դուրգարի կինը քսաներորդ անգամը պատմեց, թե ինչպես ինքը, առանց մի բան մտածելու, գնաց շորերը բերելու. նայեց այսպես—«տեսնեմ — մարդ է կանգնած. նայեցի—փափախը շուռ տված ընկած է կողքին. նայեմ—տեսնեմ ոտները ճոճվում են։ Տեղն ու տեղը սառա։ Հեշտ բան չի, մարդը կախվել էր... Ինձ կորցրած՝ էնպես ցած յեկա, որ էլ բան չեմ հիշում։ Հրաշք է, թե ինչպես ազատվեցի. աստված փրկեց ուղղակի։ Հեշտ բան չի էս դիք սանդուղքով վեր գալը... Քիչ մնաց մեռնեյի»։

Վերև բարձրացած մարդիկ նույնպես պատմեցին, որ Իլիչը կախվել է տանիքի գերանից՝ միայն շապկանց և այն թոկով, որ վերցրել էր օրորոցից։ Նրա գլխարկը, շուռ տված, ընկած էր կողքին։ Վերնազգեստն ու մուշտակը հանել էր և կարգով դարսել կողքին։ Ոտները հասնում էյին մինչև կտուրի հողը, և այլևս կյանքի նշաններ չուներ։ Ակուլինան ուշքի յեկավ և նորից ուզեց նետվել դեպի սանդուղքը, բայց չթողին։

— Մայրիկ, Սեմկան խեղդվել է,— հանկարծ ճվճվաց ավախցով խառող աղջիկն ա ն կ յ ու ն ի ց։ Ակուլինան դուրս պրծավ նորից ու վազեց իր ա ն կ յ ու ն ը։ Յերեխան, անշարժ, յերեսնիվայր պառկած էր տաշտի մեջ. նրա ոտներն էլ չէյին շարժվում։ Ակուլինան վերցրեց նրան, բայց յերեխան ոչ շնչում էր, ոչ շարժվում։ Ակուլինան նետեց նրան մահճակալի վրա, ձեռներով հենվեց ու քրքջաց մի այնպիսի բարձր, հնչո՛ւն ու սարսափելի ծիծաղով, որ Մաշկան, որ նույնպես ծիծաղում էր սկզբում, ականջ-

ները փակեց ու լալով դուրս փախավ հաշտը: Մարդիկ գոռոցով ու լացով ներս թափվեցին անկյունը: Յերեխային դուրս տարան, սկսեցին շփել. բայց իզուր եր: Ակուլինան թավալվում եր անկողնի վրա և քրքջում, քրքջում եր այնպես, վոր բոլորը, ով լսում եր այդ քրքիջը, սարսափում եյին: Միայն այժմ, տեսնելով մարդկանց, կանանց, ծերերի ու յերեխաների այդ բազմատեսակ բազմությունը, կարելի յեր հասկանալ, թե ինչ շատ և ինչ մարդիկ եյին ապրում ծառայողների այդ տանը: Բոլորը գես ու գեն եյին անում, բոլորը խոսում եյին, շատերը լաց եյին լինում և վոչ-վոք վոչինչ չեր անում: Դուրգարի կինը դեռ ելի մարդիկ եր գտնում, վոր իր պատմությունը չեյին լսել, ու նորից պատմում եր, թե ինչպես ինքը զարմացել է անսպասելի տեսարանից, և թե ինչպես աստված փրկել է իրեն սանդուղքից ընկնելու վտանգից: Կանացի թիկնոց հագած ծեր բուֆետապանը պատմեց, թե ինչպես հանգուցյալ աղայի որով մի կին խեղդվել եր լճակի մեջ: Կառավարիչը մարդիկ ուղարկեց պրիստավի ու տերտերի յետևից և կախվածի մոտ պահապան նշանակեց: Տիրուհու տան սպասավոր Ակսյուտկան չռած աչքերով բոլոր ժամանակ նայում եր տանիքը տանող անցքին, և թեև բան չեր տեսնում այնտեղ, բայց չեր ել կարողանում տեղից պոկվել ու գալ տիրուհու մոտ: Ագաֆիա Միխայլովնան, առաջվա տիրուհու նախկին սենեկապահուհին, թեյ եր պահանջում իր նյարդերը հանգստացնելու համար ու լաց եր լինում: Աննա տատն իր գործնական, փափկիկ ու յուղոտ ձեռներով փոքրիկ ննջեցյալին դրեց սեղանի վրա: Կանայք կանգնել եյին Ակուլինայի մոտ և անխոս նայում եյին նրան: Յերեխաները, անկյուններում կուչ յեկած նայում եյին իրենց մորն ու սկսում լաց լինել, հետո լռում եյին, կրկին նայում և ելի կուչ գալիս: Փոքրիկ տղաներն ու տղամարդիկ խմբվել եյին մուտքի առաջ և վախեցած դեմքերով նայում եյին դռներին ու լուսամուտ-

ներին, և վոչինչ չտեսնելով ու հասկանալով, հարցնում եյին միմյանց, թե բանն ինչումն է: Մեկն ասում եր, թե դուրգարը կացնով կտրել է կնոջ վոտը: Մյուսը՝ թե լվացարար կինը միանգամից յերեք յերեխա յե բերել: Յերրորդն ասում եր, թե խոհարարի կատուն կատաղել է և մարդկանց կծոտել: Բայց իսկությունը տարածվեց կամաց-կամաց և հասավ տիրուհու ականջը: Յեվ, թվում է, մինչև անգամ չեյին կարողացել նրան նախապատրաստել. կոպիտ Յեգորն ուղղակի զեկուցել եր նրան և այնպես քայքայել նրա նյարդերը, վոր նա յերկար ժամանակ չեր կարողանում իրեն հավաքել: Բազմությունն սկսեց արդեն հանգստանալ. դուրգարի կինը սամովար դրեց և թեյ յեփեց, վորի ժամանակ կողմնակի մարդիկ, հրավեր չստանալով, անհարմար համարեցին այլևս անկյունում մնալ: Փոքրիկ տղաներն սկսեցին կռվել մուտքի առաջ: Բոլորը գիտեյին արդեն բանն ինչումն է, և, յերեսները խաչակնքելով, սկսեցին ցրվել, յերբ հանկարծ լսվեց. «տիրուհին, տիրուհին», և բոլորը նորից խմբվեցին ու իրար սեղմվեցին, վոր տիրուհուն ճանապարհ տան, բայց բոլորը նույնպես ուզում եյին տեսնել, թե նա ինչ է անելու: Տիրուհին, գունատ, արցունքոտ աչքերով, հաշտից մտավ Ակուլինայի անկյունը: Տասնյակ գլուխներ իրար կպան ու նայեցին դռների միջից: Մի հղի կնոջ այնպես սեղմեցին, վոր նա ճղճղաց ու իսկույն եեթ, այդ հանգամանքից ոգտվելով, առջևում տեղ շահեց իր համար: Յեվ ինչպես կարելի յեր չնայել Ակուլինայի անկյունն յեկած տիրուհուն: Դա ճորտ-սպասավորների համար նույնն եր, ինչ վոր բենգալյան կրակը ներկայացման վերջում: Ուրեմն լավ է, յեթե բենգալյան կրակ են վառում, և լավ է, ուրեմն, յեթե տիրուհին մետաքսի ու ժանյակների մեջ գալիս է Ակուլինայի անկյունը: Տիրուհին մոտեցավ Ակուլինային և նրա ձեռը բռնեց. բայց Ակուլինան ձեռը խլեց: Ծեր ճորտ ծառաները չհավանելով նրա վարմունքը, գլուխները շարժեցին:

— Ակուլինա, — ասաց տիրուհին, — յերեխաներ ունես, խղճա քեզ։

Ակուլինան քրքջաց ու վեր կացավ։

— Իմ յերեխաները բոլորն էլ արծաթե են, բոլորն էլ արծաթե... Յես թուղթ չեմ պահում, — քրթմնջաց նա արագախոսությամբ։ — Յես Իլիչին ասի՝ թուղթ մի վերցրնի. դե գնա, հիմի խայտառակեցին քեզ... — Ու ավելի սաստիկ քրքջաց։

Տիրուհին յետ դարձավ և պահանջեց, վոր բուժակին կանչեն։ «Սառը ջուր տվեք», ու ինքն սկսեց ջուր վորոնել. բայց մեռած յերեխային տեսնելով, տիրուհին յերեսը շուռ տվեց, և բոլորը տեսան, թե ինչպես նա յերեսը թաշկինակով ծածկեց ու լաց յեղավ։ Իսկ Աննա տատը (ափսոս, վոր տիրուհին չտեսավ. նա անպայման կգնահատեր այդ, — այդ բոլորը հենց նրա համար արվեց) յերեխային ծածկեց քաթանի կտորով, ուղղեց նրա փոքրիկ ձեռն իր փափլիկ ու ճարպոտ ձեռքով, և գլուխն այնպես ցնցեց, շուրթերն այնպես ձգեց ու աչքերը կկոցեց զգացված, այնպես հառաչեց, վոր ամեն մեկը կարող էր տեսնել նրա սքանչելի սիրտը։ Բայց տիրուհին չտեսավ այդ, և վոչինչ էլ չէր կարող տեսնել։ Նա լալիս էր, նյարդային հիստերիկայի մեջ ընկավ, և նրա թևերը բռնած դուրս տարան հաշտը և այնտեղից, թևերը մտած, հասցրին տուն։ Ակուլինան շարունակ քրքջում ու անհեթեթ բաներ էր ասում։ Նրան դուրս տարան մյուս սենյակը, արյուն առան և սառույց դրին գլխին. բայց նա շարունակ էլի վոչինչ չէր հասկանում, չէր լալիս, այլ քրքջում էր ու խոսում, և այնպիսի բաներ էր անում, վոր նրան խնամող մարդիկ չէյին կարողանում իրենց զսպել և նույնպես ծիծաղում էյին։

XII

Տոնը Պակրովկու ճորտ-սպասավորների համար անցավ տխուր։ Չնայած վոր օրը գեղեցիկ էր, բայց ժողովուրդը դուրս չեկավ զբոսնելու. աղջիկները չհավաքվեցին յերգեր ասելու, քաղաքից յեկած արհեստավոր տղերքը վոչ հարմոն նվագեցին, վոչ բալալայկա և վոչ էլ խաղացին աղջիկների հետ։ Բոլորը նստած էյին իրենց անկյուններում, և յեթե խոսում էյին, այն էլ շատ կամաց, կարծես այդտեղ մի չար վոգի կար և կարող էր նրանց լսել։ Ցերեկը դեռ վոչինչ, բայց յերեկոյան հենց վոր մթնեց, շները կաղկանձեցին, և, հակառակի պես, քամին բարձրացավ և ռռնաց ծխնելույզում. սպասավորների տան բնակիչներին այնպիսի սարսափ պատեց, վոր ով մոմ ուներ, վառեց սրբապատկերի առաջ. ով էր անկյունում մենակ էր՝ գնաց հարևանի մոտ գիշերելու, ուր մարդ շատ կար. իսկ ով պետք է գոմը մտներ, չգնաց և չխղճաց անասուններին այդ գիշեր թողնել առանց կերի։ Որհնած ջուրը, վոր ամեն մեկը փոքրիկ շշով պահում էր իր մոտ, բոլորն այդ գիշեր մսխեցին։ Շատերը մինչև անգամ լսեցին, թե ինչպես մեկն այդ գիշեր ծանր քայլերով ման էր գալիս տանիքում, իսկ դարբինը տեսել էր, թե ինչպես օձը թռած յեկել էր ուղիղ դեպի տանիքը։ Պոլիկեյի անկյունում վոչ-վոք չկար. յերեխաներին ու խենթացած կնոջը փոխադրել էյին այլ տեղեր։ Այնտեղ պառկած էր միայն փոքրիկ ննջեցյալը, կային նաև յերկու պառավ և մի ուխտավոր կին, վոր յեռանդով սաղմոս էր քաղում՝ վո՛չ թե յերեխայի վրա, այլ այնպես, այս բոլոր դժբախտության առիթով։ Այդպես էր ցանկացել տիրուհին։ Այդ պառավներն ու ուխտավոր կինը իրենք լսեցին, թե ինչպես, հենց վոր սաղմոսի մի գլուխը վերջանում էր, գերանները ճռճռում էյին և ինչ-վոր մեկը տնքում էր։ Բայց հենց վոր ասում էյին՝ «Հիսուս-Քրիստոս», կրկին լռում էր։ Դուրգարի կինը կանչեց քավորակնոջը և այդ գիշեր, առանց քնելու, նրա հետ միասին խմեց ամբողջ թեյը, վոր մի շաբաթվա պաշար էր լինելու։ Նրանք նույնպես լսեցին, թե ինչպես գերանները ճռճռացին, կարծես մի

բանով լեքը պարկեր էյին լցում վերևից։ Պահակ գյուղացիները արիություն էյին ներշնչում տնվորներին. Թե չէ այդ գիշեր նրանք վախից կմեռնեյին։ Այդ պահակները, վոր խոտի վրա պառկել էյին սրահում, հետո հավատացնում էյին, թե նույնպես հրաշք բաներ են լսել տանիքից. Թեև այդ իսկ գիշեր հանգիստ զրուցում էյին իրար հետ զինվորակոչության մասին, հաց էյին ծամում, քորվում էյին և մանավանդ սրահը լցրել էյին գյուղացիական մի այնպիսի առանձնահատուկ հոտով, վոր դուրգարի կինը, նրանց կողքով անցնելիս՝ թքեց և բիրտ մուժիկ անվանեց։ Բայց և այնպես ինքնասպանը դեռ կախված էր տանիքում, և կարծես չար վոգին ինքն այդ գիշեր իր հսկայական թևերը տարածել էր սպասավորների տան վրա, ու ավելի յեր մոտեցել նրանց, քան յերբևէ։ Գեթ բոլորն այդպես էյին զգում։ Չգիտեմ, դա արդարացի յեր արդյոք։ Յես մինչև անգամ կարծում եմ՝ ամենևին արդարացի չէր։ Յես կարծում եմ, յեթե համարձակի մեկն այդ սարսափելի գիշերը մոմ կամ լապտեր վերցներ և, յերեսը խաչակնքելով կամ բոլորովին չխաչակնքելով, տանիքը բարձրանար և, մոմի լուսով դանդաղորեն ցրեր գիշերվա սարսափն ու լուսավորեր գերանները, ավազը, փոստայնով ծածկված ծխնելույզի խողովակը, դուրգարի կնոջ փռած-մոռացած վերնազգեստը, ու մոտենար Իլյիչին, և յեթե, չվախենար ու լապտերը բռներ իր ուսերից վեր, նա կտեսներ ծանոթ նիհար մարմինը՝ վոտներով գետնին կանգնած (թոկն իջել էր), ինքն անկենդան կերպով մի կողմի վրա ծռված, շապկի վիզը բաց, գլուխը կրծքին իջեցրած, կտեսներ բարի դեմքը բաց, չտեսնող աչքերով, և հեզ, մեղավոր ժպիտը, և անծայր հանգստությունը։ Ինչպես, դուրգարի կինը, վոր իր մահճակալի անկյունին կպած, շաղ աված մազերով ու վախեցած աչքերով պատմում էր թե ինչ է լսում, ինչպես են պարկերն ընկնում, Իլյիչից ավելի սարսափելի յեր և ահարկու։

Վերևը, այսինքն տիրուհու մոտ, նույնպիսի սարսափ էր տիրում, ինչ վոր սպասավորների տանը։ Տիրուհու սենյակից օդեկոլոնի ու դեղերի հոտ էր գալիս։ Դունյաշան դեղին մոմ էր տաքացնում և մալհամ շինում։ Ինչի համար էր այդ մալհամը—չգիտեմ. բայց գիտեմ՝ մալհամը շինվում էր միշտ այն ժամանակ, յերբ տիրուհին հիվանդ էր լինում։ Իսկ նա հուզումից գրեթե սկարացել էր։ Դունյաշայի մոտ, նրան սիրտ տալու համար, գիշերելու յեր յեկել մորաքույրը։ Նրանք չորսով նստել էյին սպասավոր աղջիկների սենյակում և հանդարտ զրուցում էյին։

— Ո՞վ պիտի գնա յեղ բերելու ասաց Դունյաշան։

— Յես վոչ մի դեպքում, Ավդոտյա Միկոլաևնա, չեմ գնա։ Սպանեք էլ—չեմ գնա,—կտրականապես պատասխանեց յերկրորդ-սպասավոր աղջիկը։

— Հերիք է, Ակսյուտկայի հետ միասին գնա։

— Յես մենակ կերթամ. յես վոչ մի բանից էլ չեմ վախենում,—ասաց Ակսյուտկան, բայց իսկույն ևեթ վախեցավ։

— Դե գնա, աղջիկս, Աննա տատից խնդրիր. բաժակով բեր, չթափես, ասաց նրան Դունյաշան։

Ակսյուտկան մի ձեռով փեշը հավաքեց ու դուրս թռավ։ Նա սարսափում էր և զգում էր, վոր յեթե մի վորևէ բան տեսնի ու լսի, թեկուզ իր մորը, վախից կմեռնի։ Ու, աչքերը գրեթե կուչ ածած, վազում էր ծանոթ ճամփով։

XIII

«Տիրուհին քնած է թե չէ», հարցրեց հանկարծ Ակսյուտկայի տղամարդու մի թավ ձայն։ Ակսյուտկան բաց արավ կուչ ածած աչքերը և մոտիկ մի ինչ-վոր կերպարանք տեսավ, վորը սպասավորների տնից բարձր թվաց նրան. Նա ճչաց ու յետ փախավ, այնպես վոր նրա զգեստը չէր կարողանում իր յետևից թռչել։ Մի վոստյունով

հասավ տան մուտքի դուռը, մյուսով՝ աղջիկերանց սենյակը ու վայրենի աղաղակով ընկավ անկողնու վրա: Դունյաշան, նրա մորաքույրը և մյուս աղջիկը վախից սասան, բայց դեռ ուշքի չեկյին եկել, երբ ծանր, դանդաղ ու անվճռական քայլեր լսվեցին հաշտում ու դռների մոտ: Դունյաշան նետվեց տիրուհու սենյակը, մահլամբ ճամպլին վայր գցելով, երկրորդ սպասավոր աղջիկը թագնվեց պատից կախված շրջազգեստի յետև, մորաքույրը, որ ավելի անվախ էր, ուզեց դուռը պահել, բայց այն բացվեց, և ներս մտավ մի գյուղացի: Դա Դուտլովն էր իր նախկանման տրեխներով: Ուշ չդարձնելով աղջկերանց վախին, նա աչքերով փորձեց սրբապատկերը և, ձախ անկյունում կախված փոքրիկ սրբանկարը չտեսնելով, խաչակնքեց յերեսը ամանների պահարանին դարձրած, գլխարկը դրեց լուսամուտը և ձեռը կիսամուշտակի խոր գրպանը կոխելով, որ կարծես ուզում էր կռնատակը քորել, հանեց մի նամակ՝ հինգ դարչնագույն կնիքով կնքած, որոնք խաչիկներ եյին պատկերացնում: Դունյաշայի մորաքույրը կուրծքը բռնեց... Նա հազիվ կարողացավ ընդհատվող ձայնով ասել.

— Վախեցրիր ինձ, Նաումիչ. լեզուս կապ ընկավ... Կարծեցի վերջս յեկել է:

— Բա եդպես կարելի՞ յե,—ասաց յերկրորդ աղջիկը, գլուխը շրջազգեստի տակից հանելով:

— Մինչև անգամ տիրուհուն եք վախացրիք, — ասաց Դունյաշան, դռնից դուրս գալով.—ինչ ես առանց հարցնելու աղջկերանց սենյակին մտնում: Իսկական մուժիկ ես:

Դուտլովը, առանց ներողություն խնդրելու, կրկնեց, թե տիրուհուն պետք է տեսնի:

— Նա տկար է, ասաց Դունյաշան:

Այդ ժամանակ Ակսյուտկան փռթկացրեց մի այնպիսի անվայել-բարձր ծիծաղով, որ ստիպված էր գլուխը նորից թաքցնել անկողնի բարձերի մեջ, որոնցից մի ամբողջ ժամ, չնայած Դունյաշայի և նրա մորաքրոջ սպառնալիքներին, չէր կարողանում գլուխը բարձրացնել առանց ծիծաղի, կարծես ինչ-որ բան էր պատռվում նրա վարդագույն կրծքում ու կարմիր այտերին: Նա այնպես էր ծիծաղում, որ բոլորը վախեցան. իսկ նա գլուխը կրկին թաքցրեց ու կարծես ջղաձգության մեջ, կոշիկը դես ու դեն էր շարժում և ամբողջ մարմնով վեր թռչում:

Դուտլովը կանգ առավ, նայեց նրան ուշադիր, կարծես կամենալով հաշիվ տալ իրեն, թե ինչ է կատարվում այդ աղջկա հետ, բայց չհասկանալով բանն ինչումն է, յերեսը շուռ տվեց ու շարունակեց իր խոսքը:

— Նշանակում է՝ մի շատ կարևոր բան ունեմ,—ասաց նա,—մենակ ասեցեք, որ մի գյուղացի փողով նամակ է գտել:

— Ի՞նչ փող:

Դունյաշան, նախ քան տիրուհուն հայտնելը, նամակի հասցեն կարդաց ու հարցրեց Դուտլովից, թե որտեղ և ինչպես է գտել այս փողերը, որ Իլյիչը պետք է բերեր քաղաքից: Ամեն ինչ մանրամասն իմանալով և վարկան աղջկան հաշտը գցելով, որ չէր դադարում փռթկացնելուց, Դունյաշան գնաց տիրուհու մոտ, բայց ի զարմանս Դուտլովի, տիրուհին, այնուամենայնիվ, նրան չընդունեց և մի կարգին բան չասավ Դունյաշային:

— Ոչինչ չեմ իմանում և չեմ ուզում իմանալ —ասաց տիրուհին. ինչ գյուղացի, ի՞նչ փող: Ոչ-ոքի յես չեմ կարող և չեմ ուզում տեսնել: Թողեք ինձ հանգիստ:

— Բա ի՞նչ պիտի անեմ,—ասաց Դուտլովը ծրարը շուռ ու մուռ տալով.—քիչ փող չի: Իսկ ինչ է գրված սրա վրա,—հարցրեց նա Դունյաշային, որը նորից կարդաց հասցեն:

Դուտլովը կարծես թե այնքան էլ չէր հավատում: Նա հույս ուներ, թե, գուցե, փողը տիրուհունը չի և հասցեն

ճիշտ չեն կարդացել իրեն։ Բայց Դունյաշան էլ հաստատեց նույնը։ Դուտլովը հառաչեց, ծրարը ծոցը դրեց և պատրաստվեց դուրս գալու։

— Ուրեմն պետք է պրիստավին տալ,— ասաց նա։

— Սպասի՛ր, ես ելի կփորձեմ, կասեմ,— կանգնեցրեց նրան Դունյաշան, ուշադրությամբ հետևելով, թե ինչպես է ծրարն աներևութանում գյուղացու ծոցում։ Տո՛ւր ետեղ նամակը։

Դուտլովը նամակը հանեց կրկին, սակայն անմիջապես Դունյաշային չտվեց։

— Ասացեք, որ ճամպին գտել է Դուտլովը, Սիմոնը։

— Լավ, տո՛ւր ետեղ։

— Ես կարծում էի ինչպես նամակ է, բայց մի զինվոր կարդաց, թե մեջը փող կա։

— Դե լավ, տուր։

— Ես էլ չուզեցի տուն գնալ նրա համար...— կրկին խոսեց Դուտլովը, թանգագին ծրարից չբաժանվելով.— եղպես էլ ասեցեք։

Դունյաշան ծրարը վերցրեց և նորից գնաց տիրուհու մոտ։

— Ա՛խ, տեր աստված, Դունյաշա՛,— ասաց տիրուհին կշտամբող ձայնով,— ինձ մոտ այդ փողերի մասին մի խոսի։ Հենց որ այն փոքրիկ յերեխան միտս է ընկնում...

— Տիրուհի, գյուղացին չի իմանում, թե ինչ եք հրամայում՝ ո՞ւմ հանձնի,— ասաց Դունյաշան։

Տիրուհին ծրարը բաց արավ, ու հենց որ փողերը տեսավ՝ ցնցվեց և մտածմունքի մեջ ընկավ։

— Սարսափելի՛ փողեր, ինչքան չարիք են գործում սրանք,— ասաց նա։

— Դա Դուտլովն է գտել, տիրուհի։ Կհրամայե՞ք գնա, թե՞ կհաճեք դուրս գալ նրա մոտ։ Արդյոք լրի՞վ է փողը,— հարցրեց Դունյաշան։

— Ես այս փողը չեմ ուզում։ Սրանք սարսափելի

փողեր են։ Ի՜նչ արին սրանք։ Նրան ասա՝ թող վերցնի, իրեն լինի, յեթե ուզում է,— ասաց հանկարծ տիրուհին Դունյաշայի ձեռը փնտռելով։— Այո, այո, այո,— կրկնեց տիրուհին զարմացած Դունյաշայի յերեսին,— թող բոլորովին վերցնի իրեն ու ինչ ուզում է անի։

— Հազար վեց հարյուր մանեթ է ախր,— նկատեց Դունյաշան, թեթևակի ժպտալով, կարծես յերեխայի։

— Թող բոլորը վերցնի,— անհամբեր կրկնեց տիրուհին։— Ի՞նչ է, ասածս չե՞ս հասկանում։ Սրանք դժբախտ փողեր են. և սրանց մասին յերբեք մի խոսի ինձ հետ։ Թող այդ գտնող գյուղացին վերցնի իրեն։ Գնա՛, դե գնա ելի՛։

Դունյաշան դուրս յեկավ աղջկերանց սենյակը։

— Բոլո՞րն է,— հարցրեց Դուտլովը։

— Ուզում ես ինքդ համրի,— ասաց Դունյաշան, ծրարը նրան տալով.— տիրուհին կարգադրեց, որ քեզ տամ։

Դուտլովը գլխարկը դրեց կռնատակն ու, կռանալով, սկսեց համրել։

— Զոտկ (համրիչ) չունե՞ք։

Դուտլովը հասկացավ, թե տիրուհին ինքը չկարողանալով հաշվել՝ հրամայել է, որ այդ բանն ինքը Դուտլովն անի։

— Տանը կհամրես։ Քեզ...քու փողերն են,— ասաց Դունյաշան զայրացած։— Չեմ ուզում, ասում է, սրանց յերեսը տեսնել. տուր նրան, ով բերել է։

Դուտլովն, առանց ուղղվելու, աչքերը սևեռեց Դունյաշայի վրա։

Դունյաշայի մորաքույրը զարմանքից ձեռներն իրար խփեց։

— Վա՜յ տեր աստված։ Ա՛յ քեզ բախտ...

Յերկրորդ սպասուհին չեր հավատում։

— Ի՞նչ է, Ավդոտյա Նիկոլայևնա, հանա՞ք եք անում։

— Ինչպես թե համաք։ Կարգադրեց տալ սրան...Դե, վերցրու փողդ ու գնա,—ասաց Դունյաշան, գայրույթը չըթագցնելով։—Մեկին զարդ, մյուսին բախտ։

— Համաք բան չի, հազար վեց հարուր մանեթ,— ասաց մորաքույրը։

— Իհարկե,--ասաց Դունյաշան։—Դե, սուրբ Միկոլի տաշ տասը կոպեկանոց մոմ կվառես, ավելացրեց նա հեգնանքով։—Ի՞նչ է, դեռ շշմած ես։

Դուտլովը, վերջապես, հասկացավ, որ համաք չէին անում, և սկսեց փողերը հավաքել ու ծրարի մեջ դնել, որ ցած էր դրել և ուզում էր համրել. բայց նրա ձեռները դողում էին, և նա շարունակ աղջիկներին էր նայում, համոզվելու, թե հո չեն ծիծաղում իր վրա։

— Տես, ուրախությունից շշմել է,—ասաց Դունյաշան,ցույց տալով, թե ինքն, այնուամենայնիվ արհամարհում է և՛ գյուղացուն և՛ փողը։—Տո՛ւր յես տեղը դնեմ։

Յեվ Դունյաշան ուզեց վերցնել։ Բայց Դուտլովը չտվեց. նա փողերը, ճմռթելով, ծոցը կոխեց ու գլխարկը ձեռն առավ։

— Ուրա՞խ ես։

— Չգիտեմ ինչ ասեմ։ Այ քեզ...

Նա խոսքը չվերջացրեց, ձեռը թափ տվեց, ժպտաց, քիչ մնաց արտասվեր ու դուրս յեկավ։

Զանգակը զնգզնգաց տիրուհու սենյակում։

— Հը, տվի՞ր։

— Տվի։

— Ի՞նչ է, շատ ուրախացա՞վ։

— Ուրախությունից բոլորովին խենթացավ։

— Ա՛խ, կանչիր նրան։ Մի հարցնեմ ինչպես է գտել։ Կանչիր նրան այստեղ, յես չեմ կարող դուրս գալ։

Դունյաշան դուրս վազեց. գյուղացին դեռ հաշտում էր։ Նա, դեռ գլխարկը չդրած, ֆիսեն հանել էր և կռացած, բաց էր անում, իսկ փողերը բռնել էր ատամներով։

Նրան, դուցե, թվում էր, թե քանի փողերն իր ֆիսի մեջ չեն, իրենը չեն։ Յերբ Դունյաշան կանչեց, նա վախեցավ։

— Հը՛, Ավդոտյա...Ավդոտյա Միկոլաե՞վնա։ Ուզում է յետ առնի՞։ Դու գոնե բարեխոսիր, աստված վկա, մեղր կբերեմ ձեզ համար։

— Վո՛նց չէ։ Բերիր։

Դուռը կրկին բացվեց, Դուտլովին տարան տիրուհու մոտ։ Նա ուրախ չէր։ «Ե՛հ, յետ է վերցնելու», մտածում էր նա, աշխատելով ոտներովը ձայն չհանել, յերբ անցնում էր սենյակներից։ Նա ոչինչ չէր հասկանում և չէր տեսնում,թե ինչ կա շուրջը։Նա անցավ հայելու կողքով,տեսավ ինչ-որ ծաղիկներ, ինչ-որ ոտնաւոր գյուղացի, որ քայլում էր ոտները բարձրացնելով, տեսավ մի ինչ-որ կանաչ թաղար և ինչ-որ սպիտակ բան... Նայեց, այդ սպիտակ բանը խոսում էր. դա տիրուհին էր։ Դուտլովը բան չէր ջոկում, աչքերն էր չռել միայն։ Նա չէր իմանում ուր է ինքը, ու ամեն ինչ նրան պատկերանում էր մշուշի մեջ։

— Դուտլովը դո՞ւ յես։

— Յես եմ, տիրուհի։ Ինչպես կար, էնպես էլ բերել եմ, ձեռ չեմ տվել,—ասաց նա։—Ուրախ չեմ, որ գտել եմ, աստված վկա։

— Ե, քու բախտն է,—ասաց տիրուհին արհամարհական-բարի ժպիտով։—Վերցրու, վերցրու քեզ։—

Դուտլովն աչքերը չռեց միայն։

— Ուրախ եմ, որ դու յես գտել։ Տա աստված, որ բարով վայելես։ Հը՞, ուրա՞խ ես։

— Ինչպես թե ուրախ չեմ։ Էնպե՜ս եմ ուրախ։ Միշտ պիտի որհնեմ ձեզ։ Ուրախ եմ, որ, փառք աստծու, մեր տիրուհին ողջ-առողջ է։

— Ինչպե՞ս գտար։

— Նշանակում է, մենք տիրուհու համար միշտ կարող էինք պատվով աշխատել ու ոչ թե...

— Նա բոլորովին արդեն շփոթվել է, տիրուհի,— ասաց Դունյաշան։

— Ախպորս զինվոր տղին տարել էյի քաղաք. յետ գալիս, ճամփին գտա։ Ով գիտի Պոլիկեյը պատահմամբ վեր է քցել։

— Դե, գնա, գնա, սիրելիս։ Ես ուրախ եմ։

— Ես էլ ուրախ եմ, տիրուհի...— ասաց Դուտլովը։

Հետո նա հիշեց, որ շնորհակալություն չհայտնեց ու չկարողացավ վարվել ինչպես հարկն է։ Տիրուհին ու Դունյաշան ժպտացին, իսկ նա մեծ-մեծ քայլերով գնաց դեպի դուռը և հազիվ զսպեց իրեն, որ չվազի։ Թե չէ նրան թվում էր շարունակ, թե ուր որ է կկանգնեցնեն ու փողը ձեռից կառնեն...

XIV

Դուրս գալով, Դուտլովը ճանապարհը ծռեց դեպի լորիները, մինչև անգամ գոտին արձակեց, որ քսակն ավելի հեշտ հանի ծոցից, ու սկսեց փողերը տեղավորել։ Նրա շրթները շարժվում էին ձգվելով ու կուչ գալով, թեև ոչ մի բառ չէր արտասանում։ Փողերը քսակը դնելով ու գոտեպնդվելով, խաչակնքեց ու գնաց, ոտները հարբածի պես քաշ տալով, այնպես էր զբաղված իր մտքերով։ Հանկարծ նա տեսավ իր դեմն յեկող մի գյուղացու կերպարանք։ Ձայն տվեց. Յեֆիմն էր, որ մահակը ձեռին, իբրև պահակ, շրջում էր տանու-ճորտերի տան շուրջը։

— Ա՜, քեռի Սիմոն,— ուրախացած խոսեց Յեֆիմը նրան մոտենալով։ (Յեֆիմը մենակ վախենում էր)։ - Հը՛, զինվոր տղաներին տարա՞ք, քեռի։

— Տարանք։ Դու ի՞նչ ես անում էստեղ։

— Իլյիչը կախվել ա, ղարաուլ են նշանակել։

— Բա ո՞ւր է։

— Հրե, ասում են, վերև կախված ա,— պատասխանեց Յեֆիմը, մահակով դեպի մութ տանիքը ցույց տալով։

Դուտլովը նայեց նրա ձեռի ուղղությամբ և, թեև ոչինչ չէր տեսնում, դեմքը կուչ ածավ, աչքերը կկոցեց ու գլուխն օրորեց։

— Պրիստավն յեկել ա,— ասաց Յեֆիմը,— կառապանն ասավ։ Հրես վերցնելու յեն։ Էն էլ ես գիշերվա կխփեն։ Ինչ ուզում ա ըլի, յես գիշերը վերև չեմ բարձրանա։ Սպանեն էլ՝ չեմ գնա։

— Ի՛նչ մեղք բան, այ քե՜զ մեղք բան,— կրկնեց Դուտլովը յերևի քաղաքավարության համար, բայց բնավ չմտածելով այն մասին, ինչ ասում էր, և ուզեց ճանապարհը շարունակել։ Բայց Յեգոր Միխայլովիչի ձայնը կանգնեցրեց նրան։

— Է՛յ, ղարաուլ, արի այստեղ,— ձայն տվեց Յեգոր Միխայլովիչը տան շեմքից։

Յեֆիմը ձայն տվեց ու առաջ գնաց։

— Էն ի՞նչ մարդ էր քեզ մոտ կանգնած։

— Դուտլովն էր։

— Դու յել արի, Սիմոն։

Մոտենալով՝ Դուտլովը կառապանի ձեռի լապտերի լուսով նայեց Յեգոր Միխայլովիչին և վերարկու հագած, գլխարկի վրա կակարդ ունեցող կարճահասակ աստիճանավորին. դա պրիստավն էր։

— Հրես ծերունին էլ կգա մեզ հետ,— ասաց Յեգոր Միխայլովիչը։

Ծերունուն դուր չեկավ այդ, բայց ինչ արած։

— Իսկ դու, Յեֆիմ, ջահել տղա յես, վազի մի տանիքը, ուր կախվել է, սանդուղը դրստի, որ նորին ազնվությունը բարձրանա։

Յեֆիմը, որ ոչ մի կերպ չէր ուզում այդ տանը մոտենալ, վազեվազ առաջ գնաց, տրեխները փայտերի պես թփթփացնելով։

Պրիստավը կայծաքարը վառեց ու ծխամորճ ծխեց։ Նա ապրում էր յերկու վերստ հեռու, գավառական վա-

տիկնապետը հենց նոր սաստիկ հանդիմանել էր նրան հարբեցողության համար, այդ պատճառով մեծ յեռանդ էր ցույց տալիս. յերեկոյան ժամը տասին գալով՝ նա ուզեց անմիջապես կախվածին տեսնել։ Յեգոր Միխայլովիչը հարցրեց Դուտլովին, թե ինչ գործ ունի այստեղ։ Ճանապարհին Դուտլովը կառավարչին պատմեց գտած փողի և տիրուհու արածի մասին։

Դուտլովն ասաց, թե ինքն յեկել է Յեգոր Միխայլովիչի թույլտվությունը խնդրելու։ Կառավարիչը, Դուտլովին սարսափ պատճառելով, պահանջեց ծրարն ու նայեց։ Պրիստավն էլ ծրարը ձեռն առավ և կարճ ու չոր խոսքերով հարցուփորձ արավ մանրամասնությունների մասին։

«Ե, փողերս կորան», մտածեց Դուտլովը և սկսեց արդեն ներողություն խնդրել։ Բայց պրիստավը փողերը վերադարձրեց։

— Անտաշի բախտին տեսեք,—ասաց նա։

— Բախտը բանել է,—ասաց Յեգոր Միխայլովիչը,— դա հենց նոր յեղբոր տղին տարավ զինվորական վարչությանը հանձնելու. հիմի կարող է ազատել։

— Հը՛մ, - ասաց պրիստավն ու առաջ անցավ։

— Ազատելո՞ւ յես Իլյային, թե չէ, - ասաց Յեգոր Միխայլովիչը։

— Վո՛նց ազատեմ։ Փողը կհերքի՞ վոր։ Գուցե արդեն ուշ է։

— Ինչպես գիտես,—ասաց կառավարիչը, և յերկուսն էլ գնացին պրիստավի յետևից։

Նրանք մտեցան տանը, վորի հաշտում լապտերը ձեռներին սպասում էին պահակները։ Դուտլովը գնաց նրանց յետևից։ Պահակները մեղավորի տեսք ունեին, վորի պատճառը կարող էր լինել իրենց արտադրած գարշահոտությունը, վորովհետև նրանք ուրիշ վատ բան չէին արել։ Բոլորը լուռ էին։

— Ո՞ւր է, - հարցրեց պրիստավը։

— Այստեղ է,—շշնջալով ասաց Յեգոր Միխայլովիչը։ — Յեֆիմ.—ավելացրեց նա,—ջահել տղա յես, լապտերը բռնի՝ առաջ գնա։

Յեֆիմը վերև տախտակն ուղղել էր արդեն և, թվում է, վախը մոռացել։ Վոտը յերկու-յերեք աստիճան փոխելով, նա ուրախ-ուրախ վեր բարձրացավ, մեկ-մեկ յետ նայելով և պրիստավի ճանապարհը լապտերով լուսավորելով։ Պրիստավի յետևից գնում էր Յեգոր Միխայլովիչը։ Յերբ նրանք աչքից ծածկվեցին, Դուտլովը, մի վոտն արդեն սանդուղքի աստիճանին դրած, հառաչեց ու կանգ առավ։ Անցավ մի յերկու րոպե, նրանց վոտնաձայնը խլացավ տանիքում. ըստ յերևույթին մոտեցան կախվածի մարմնին։

— Քեռի՛, քեզ կանչում ա,—ձայն տվեց Յեֆիմը ծակից։

Դուտլովը բարձրացավ։ Պրիստավն ու Յեգոր Միխայլովիչը լապտերի լուսով յերևում էին իրենց մարմնի վերին մասերով. նրանց այն կողմը, թիկունքը նրանց արած կանգնած էր ելի մեկը։ Դա Պոլիկեյն էր։ Դուտլովը մոտեցավ և, խաչակնքելով, կանգ առավ։

— Հապա մի շուռ տվեք, տղերք,—ասաց պրիստավը։

Վոչ-վոք չշարժվեց։

— Յեֆիմ, դու ջահել տղա յես,—ասաց Յեգոր Միխայլովիչը։

Ջահել տղան առաջ անցավ և, Իլիչին շուռ տալով, կանգնեց նրա կողքին, ամենաուրախ հայացքով նայելով մերթ Իլիչին, մերթ իշխանավորներին, պատրաստ վերջիններիս հրամանները կատարելու։

— Ելի՛ շուռ տուր։

Իլիչը նորից շուռ յեկավ, ձեռները շարժեց թեթևակի և վոտը քաշ տվեց ավազի վրայով։

— Իջեցրե՛ք։

— Կհրամայե՞ք թոկը կտրել, Վասիլի Բորիսովիչ,— ասաց Յեգոր Միխայլովիչը։ - Կացինը բերեք, տղերք։

Հարկ յեղավ պահակներին ու Դուտլովին մի յերկու անգամ հրամայել, վոր մոտենան իջեցնելու։ Իսկ ջահել տղան՝ Յեֆիմը՝ Իլիչի հետ վարվում եր այնպես, ինչպես մորթած վոչխարի հետ։ Վերջապես թոկը կտրեցին, մարմինն իջեցրին ու ծածկեցին։ Գրագիրն ասաց, վոր վաղը բժիշկը կգա քննելու, ու արձակեց մարդկանց։

XV

Դուտլովը, շրթները շարժելով, գնաց տուն։ Սկզբում նա ծանր եր զգում, բայց, քանի մոտենում եր գյուղին, այդ զգացումը տեղի յեր տալիս ուրախության զգացմանը, վոր հետզհետե թափանցում եր նրա սիրտը։ Գյուղում լսվում եյին յերգեր և հարբած ձայներ։ Դուտլովը յերբեք չեր խմում և այժմ ուղիղ գնաց տուն։ Ուշ եր արդեն, յերբ նա խրճիթ մտավ։ Նրա պառավը քնած եր։ Մեծ վորդին ու թոռները քնել եյին փեչի վրա, յերկրորդ վորդին՝ մութ սենյակում։ Մենակ Իլյայի կինը չեր քնել և կեղտոտ, վոչ տոնական զգեստով, մազերը չսանրած, նստել եր նստարանին ու վողբում եր։ Նա դուրս չեկավ հորեղբոր առաջ դուռը բանալու, այլ ավելի լաց ու կոծ սկսեց ամուսնու արժանիքները թվելով, յերբ նա խրճիթ մտավ։ Պառավի կարծիքով, Իլյայի կինը շատ լավ վողբ եր ասում, չնայած վոր ջահել եր և փորձառություն չուներ։

Պառավը վեր կացավ և մարդու համար ընթրիք պատրաստեց։ Դուտլովն Իլյայի կնոջը հեռացրեց սեղանից։ «Հերիք ե, հերիք»,—ասաց նա։ Ակսինյան վերկացավ և նստարանին պառկելով, վողբը շարունակեց։ Պառավն անխոս սեղանը սարքեց, հետո հավաքեց։ Ծերունին ել վոչ մի խոսք չասաց։ Աստծուն աղոթելով, նա ձեռները լվաց և, մեխից կախված համրիչը վերցնելով, գնաց փոքրիկ

սենյակը։ Այնտեղ նա սկզբում փսփսաց պառավի հետ, հետո պառավը դուրս յեկավ, իսկ նա սկսեց համրիչը գցել, վերջապես, սնդուկի կափարիչը թրխկացրեց ու մտավ նկուղը։ Յերկար նա քարշ յեկավ փոքր սենյակում ու նկուղում։ Յերբ ներս մտավ, խրճիթն արդեն մութն եր, մարխը չեր վառվում։ Պառավը, ցերեկը սովորաբար լուռ ու անտրտունջ, այժմ տախտի վրա փռված՝ խռմփացնում եր սենյակովը մեկ։ Իլյայի աղմկարար կինը նույնպես քնել եր և հանդարտ շնչում եր։ Նա ինչպես կար, առանց հանվելու քնել եր նստարանի վրա, առանց գլխատակը բան դնելու։ Դուտլովն սկսեց աղոթել, հետո նայեց Իլյայի կնոջը, գլուխն օրորեց, վառած մարխը հանգցրեց, բարձրացավ փեչի գլուխն ու պառկեց փոքրիկ տղա-թոռան կողքին։ Մթան մեջ նա տրեխները վերևից գցեց ցած և պառկեց մեջքի վրա, նայելով ձկնորսական թառին, վոր հազիվ յերևում եր իր գլխավերև և ականջ դնելով բզզոցներին (վոր ման եյին գալիս պատի վրա), տնքոցներին, խռմփոցներին, վոտով վոտը քորելուն և դրսից լսվող տավարի ձայներին։ Նա յերկար չկարողացավ քնել. լուսինը դուրս յեկավ, խրճիթը լուսավորվեց. Նա տեսավ անկյունում պառկած Ակսինյային և ինչ-վոր մի բան, վոր չկարողացավ ջոկել. վորդին եր վերնազգեստը մոռացել, կանայք եյին տակառ դրել թե՞ կանգնել եր այնտեղ մեկը։ Աչքը կպել եր թե վոչ, բայց նորից սկսեց նայել... Յերևի այն մռայլ վոգին, վորն Իլիչին մղեց սարսափելի գործի և վորի մոտիկությունն զգում եյին տանու ճորտերն այդ գիշեր, յերևի այդ վոգին եր իր թևը տարածել մինչև գյուղ, մինչև Դուտլովի խրճիթը, ուր գտնվում եյին այն փողերը, վոր գործադրեց նա Իլիչին կործանելու համար։ Գոնե Դուտլովը տեսնում եր նրա ներկայությունն այստեղ և իրեն վատ եր զգում։ Վոչ կարողանում եր քնել, վոչ վեր կենալ։ Տեսնելով այդ ինչ-վորը, վորի ինչ լինելը նա չեր կարողանում վորոշել, Դուտլովը հիշեց ձեռները

կապած Իլյային, հիշեց Ակսինյայի դեմքն ու նրա վողբասացությունը, հիշեց Պոլիկեյին, նրա ճոճվող ձեռները։ Հանկարծ ծերունուն թվաց, թե մեկն անցավ լուսամուտի առջևից։ «Սա ի՞նչ բան է, թե՞ տանուտերն է գալիս բան հայտնելու».—մտածեց նա։ «Եդ վո՞նց բաց արավ,—մտածեց ծերունին, հաշտից քայլերի ձայն լսելով.— թե՞ պառավը դուռը չփակեց, յերբ դուրս յեկավ հաշտը»։ Շունն ոռնաց տան յետև, իսկ նա քայլում էր հաշտում, ինչպես հետո պատմում էր ծերունին, կարծես փնտռում էր դուռը, անցավ, սկսեց նորից ձեռները պատերին քսել, սայթաքեց, վոտը դիպավ տակառին, և տակառը թրխկաց։ Նա նորից սկսեց ձեռներով պատերը շոշափել, կարծես փակն էր վորոնում։ Ահա փակը բռնեց։ Ծերունու մարմնով մի դող անցավ։ Ահա փակը քաշեց ու ներս մտավ մարդկային կերպ մտած։ Դուտլովը գիտեր արդեն, վոր դա նա յե։ Ուզեց յերեսը խաչակնքել, բայց չկարողացավ։ Նա մոտեցավ սեղանին, նրա վրա փռված սփռոցը թափ տվեց, նետեց հատակին ու բարձրացավ փեչի գլուխը։ Ծերունին ճանաչեց, վոր նա Պոլիկեյի կերպարանքով էր։ Նա ատամները ցույց տվեց. ձեռները ճոճվում էին։ Նա փեչը բարձրացավ, ընկավ ուղղակի ծերունու վրա և սկսեց խեղդել։

— Փողերս,—ասաց Պոլիկեյը։

— Թող, չեմ վերցնի,—ուզում էր ու չէր կարողանում ասել Սիմոնը։

Պոլիկեյը խեղդում էր նրան քարաժայռի ծանրությամբ, սեղմելով նրա կուրծքը։ Դուտլովը գիտեր, վոր յեթե ինքն աղոթք ասի, նա կթողնի իրեն, և գիտեր էլ, թե ինչ աղոթք պիտի ասել, բայց չէր կարողանում այդ աղոթքի խոսքերն արտասանել։ Կողքին պառկած տղաթոռը հանկարծ սուր ճիչ հանեց ու լաց յեղավ. պապը նրան սեղմել էր պատին։ Յերեխայի ճիչը բաց արավ ծերունու փակ բերանը։ «Հիսուս-Քրիստոս», ասաց Դուտլովը։ Նա միքիչ բաց թողեց։ «Անժամ քարի տակին ըլես», շուրթերը չպպացրեց Դուտլովը։ Նա իջավ փեչից։ Դուտլովը լսեց, թե ինչպես նա յերկու վոտն էլ թխկացրեց հատակին։ Դուտլովը շարունակ ասում էր գիտցած աղոթքները, ասում էր բոլորն իրար յետևից։ Նա գնաց դեպի դուռը առանց սեղանին մոտենալու, և դուռն այնպես շրխկացրեց, վոր խրճիթը ցնցվեց։ Բոլորը քնած էին, սակայն բացի պապից ու թոռից։ Պապն աղոթք էր ասում ու ամբողջ մարմնով դողում, իսկ թոռը, քունը տանելով, լալիս էր և սեղմվում պապին։ Նորից ամեն բան լռեց։ Պապը պառկած էր անշարժ։ Աքաղաղը կանչեց պատի յետև, հենց Դուտլովի ականջի տակ։ Նա լսեց, թե ինչպես հավերը շարժվեցին, ինչպես ջահել աքլորը փորձեց կանչել ու չկարաց։ Ինչ-վոր մի բան անցավ ծերունու վոտների վրայով։ Կատուն էր. նա փեչից փափուկ վոտներով թըռավ-կանգնեց հողի վրա ու սկսեց մլավել դռան մոտ։ Պապը վեր կացավ, լուսամուտը բաց արավ. փողոցը մութն էր. սայլի առջևի մասն ընկած էր հենց այդտեղ լուսամուտի տակ։ Նա բոբիկ, յերեսը խաչակնքելով դուրս յեկավ բակը՝ ձիերի մոտ. և նկատվեց, վոր յեկողը տերն է։ Ծածքի տակ կանգնած մաղյանը, վոր վոտը դցել էր սանձի փոկի մեջ, դարմանի մլեղը թափել, վոտը բարձրացրած, գլուխը թեքած սպասում էր տիրոջը։ Քուռակն ընկել մնացել էր թրքի մեջ։ Դուտլովը նրան վոտքի կանգնեցրեց, ձիու վոտն ազատեց սանձափոկից, կեր տվեց ու գնաց խրճիթ։ Պառավը վերկացավ և մարխը վառեց։ «Տղերանցը զարթեցրու,—ասաց Սիմոնը,—քաղաք եմ գնալու», և սրբապատկերի համար գործածվող մեղրամոմը վառելով, իջավ նկուղը։ Արդեն վոչ միայն Դուտլովի, այլ բոլոր հարևանների տներում էլ կրակներ էին վառվում, յերբ նա դուրս յեկավ այնտեղից։ Տղերքը վեր էին կացել և հագնվել։ Կանայք ներս ու դուրս էին անում. դույլերն ու կովկիթները ձեռներին։ Իգնատը սայլը լծեց։ Յերկրորդ վորդին մազութում էր մյուս սայլը։ Իլյայի կինն էլ չէր վողբում,

բայց վրան-գլուխը հավաքած, գլխաշորը կապած, նստել էր խրճիթում՝ նստարանի վրա, սպասելով, վոր ժամանակը գա քաղաք գնալու, ուր պետք է հրաժեշտ տար մարդուն։

Ծերունին առանձնապես խիստ էր յերևում։ Նա վոչ մեկին վոչ մի խոսք չասավ, նոր կաֆտանը հագավ, գոտեպնդվեց և Պոլիկեյի ամբողջ փողը ծոցը դրած՝ գնաց Յեգոր Միխայլովիչի մոտ։

— Շատ մյուլ մի անիլ,—գոռաց նա Իգնատի վրա, վոր պտտում էր անիվը բարձրացրած ու մազութած սռնու մոտ։—Հիմի գալիս եմ։ Մինչև գալս ամեն ինչ պատրաստ ըլի։

Կառավարիչը, հենց նոր վերկացած, թեյ էր խմում և ինքն էլ պատրաստվում էր գնալ քաղաք՝ նորակոչներին հանձնելու։

— Ի՞նչ կա, - հարցրեց նա։

— Յես, Յեգոր Միխայլիչ, ձեր տղին ուզում եմ ազատեմ։ Ոգնեցեք ինձ։ Մի յերկու որ առաջ դուք ասում եյիք, թե քաղաքումը մեկին գիտեք, վոր ուզում է զինվոր գնալ։ Մի խելք սովորեցրեք, խավար մարդիկ ենք։

— Հը, փոշմանե՞լ ես։

— Փոշմանել եմ, Յեգոր Միխայլիչ, ափսոս է, ախպորս տղեն է։ Ինչ էլ լինի, ափսոս է։ Դրանից մեղքը շատ է, եդ փողերի։ Մի լավություն արա, բան հասկացրու,—ասաց նա մեջքիցը հետ կռանալով ու գլուխ տալով։

Յեգոր Միխայլովիչը, ինչպես միշտ այդպիսի դեպքերում, խորիմաստ կերպով ու լուռ յերկար չպպացրեց շրթները և, բանը կշռադատելով, յերկու գրություն տվեց ու պատմեց, թե ինչ և ինչպես պիտի անել քաղաքում։

Յերբ Դուտլովը տուն վերադարձավ, Իլյայի կինն արդեն Իգնատի հետ քաղաք էր գնացել և չալ մեծ փորանի մադյանը բոլորովին լծված պատրաստ կանգնած էր դռանը։ Նա ցանկապատից մի փայտ կտրեց, փեշերը հավաքեց,

սայլակ նստեց ու ձին քշեց։ Դուտլովն այնպես արագ էր քշում ձին, վոր նրա փորն իսկույն նստեց և Դուտլովն էլ չէր նայում նրան, վոր չմեղքանա։ Նրան տանջում էր այն միտքը, թե կուշանա զինվորական վարչությունից, թե Իլյան զինվոր կերթա, և սատանայական փողերը կմնան իր ձեռքին։

Մանրամասն չեմ նկարագրելու Դուտլովի այդ առավոտվա բոլոր արկածները, կասեմ միայն, վոր նրա բախտը բանեց։ Այն մարդը, վորի անունով Յեգոր Միխայլովիչը գրություն էր տվել, ուներ բոլորովին պատրաստի մեկը, վոր ցանկանում էր զինվոր գնացողի տեղ վարձվել։ Գրությունն ստացող մարդը չորս հարյուր մանեթ էր ուզում նրա համար, իսկ մի քաղաքացի, վոր արդեն յերկրորդ շաբաթն էր գնում գալիս, շարունակ խնդրում էր յերեք հարյուրով զիջել։ Դուտլովը բանն իսկույն վերջացրեց։ «Յերեք հարյուր քսանհինգով կտա՞ս», ասաց նա, ձեռը մեկնելով, բայց այնպիսի արտահայտությամբ, վոր անմիջապես յերևաց, թե պատրաստ է ավելացնելու։ Մարդը ձեռը յետ քաշեց և շարունակեց իրենը՝ չորսհարյուր։ «Յերեք հարյուր քսանհինգ չես վերցնո՞ւմ», կրկնեց Դուտլովը, ձախ ձեռով մարդու աջը բռնելով ու սպառնալով իր աջով խփել նրան. «Չես վերցնո՞ւմ։ Դե, աստված քեզ հետ»,—հանկարծ ասաց նա, մարդու ձեռին խփելով և թափից ամբողջ մարմնով շուռ յեկավ։ «Տղին բեր ու բեհն առ»։

Յեվ Դուտլովը գոտին արձակեց ու փողերը հանեց։ Մարդը թեև ձեռը չէր հեռացնում, բայց թե կարծես բոլորովին չէր համաձայնում և բեհը չվերցնելով, պայման էր դնում մաղարիչ անելու և զինվորացուին հյուրասիրելու։

—Հոգուդ մեղք մի անիլ,—կրկնեց Դուտլովը փողը նրան մեկնելով,—մեռնելու յենք,—կրկնեց նա այնպիսի հեզ, խրատական ու համոզված յեղանակով, վոր մարդն ասաց.

—Լավ, վոչինչ,—մի անգամ էլ ձեռ խփեց ու սկսեց աղոթել։ – Աստված հաջողի,—ասաց նա։

Զարթեցրին զինվորացուին, վոր դեռ յերեկվանից հարբած քնել եր. չգիտես ինչու վոտից գլուխ նայեցին նրան ու բոլորը միասին գնացին զինվորական վարչություն։ Զինվորացուն ուրախ եր, պահանջեց, խելքը գլուխը հավաքելու համար, ռոմ, վորի համար Դուտլովը նրան փող տվեց, և նա յերկյուղ զգաց այն րոպեյին միայն, յերբ զինվորական վարչության շենքն եյին մտնում։ Յերկար այդտեղ հաշտում կանգնեցին կապույտ կապա հագած ծեր-մարդը և նրա կարճլիկ մուշտակով զինվորացուն, վոր հոնքերը բարձրացրել եր ու աչքերը չռել. Նրանք յերկար փսփսում եյին այդտեղ, փնտռեցին ինչ-վոր մեկին, չգիտես ինչու ամեն մի գրագրի առաջ գլխարկ եյին վերցնում ու գլուխ տալիս և խորիմաստ կերպով լսեցին ծեր մարդուն ծանոթ գրագրի հանած վորոշումը։ Գործն այսոր վերջացնելու ամեն հույս թողել եյին, և զինվորացուն նորից ուզում եր ուրախանալ և լեզուն բանալ, յերբ Դուտլովը Յեգոր Միխայլովիչին տեսավ, իսկույն բռնեց նրան և սկսեց խնդրել։ Յեգոր Միխայլովիչն այնպես լավ օգնեց, վոր ժամը յերեքին զինվորացուին, ի մեծ դժգոհություն ու զարմանս նրա, տարան նիստի սենյակը, կանգնեցրին յերես առ յերես և, չգիտես ինչու, մի ընդհանուր ուրախությամբ, վոր անցնում եր սպասավորից մինչև նախագահը, նրա շորերը հանեցին, ածիլեցին, հագցրին ու տարան, իսկ հինգ րոպե անց Դուտլովը փողը տվեց, ստացական առավ և, ծեր մարդուն ու զինվորացուին մնաս բարով ասելով, գնաց վաճառականի տունը, ուր իջևանել եյին Պոկրովկույց յեկած նորակոչները։ Իլյան ու կինը նստել եյին վաճառականի խոհանոցի անկյունում, և հենց վոր ծեր-Դուտլովը ներս մտավ, նրանք խոսելը թողին և աչքերը հնազանդ ու անբարյացակամ արտահայտությամբ հառեցին նրա վրա։ Ինչպես միշտ, ծե-

րունին աղոթեց, գոտին արձակեց, ինչ-վոր թուղթ հանեց և խրճիթ կանչեց մեծ վորդուն՝ Իգնատին ու Իլյայի մորը, վոր բակումն եր։

— Դու քեզ լավ պահի, Իլյուշա,—ասաց նա յեղբոր տղին մոտենալով։—Յերեկ դու ինձ ենպես մի խոսք ասիր վոր...Միթե յես քեզ չեմ ափսոսում։ Յես հիշում եմ, թե հերդ ինչպես քեզ կտակեց ինձ։ Յեթե ուժս պատեր, մի՞թե քեզ կտայի։ Հիմի աստված հասցրեց, յես էլ չխնայեցի։ Թուղթը հրես,—ասաց նա ստացականը սեղանին դնելով։

Բակից խրճիթ մտան բոլոր պոկրովսկեցի գյուղացիք, վաճառականի մշակները և մինչև անգամ կողմնակի մարդիկ։ Բոլորը հասկանում եյին բանն ինչումն է, ու-վոչ-վոք չընդհատեց ծերունու հանդիսավոր խոսքը։

—Թուղթը հրես։ Չորս հարյուր մանեթ տվի։ Հորեղբորիցդ գանգատավոր մի լինի։

Իլյան վեր կացավ, բայց լռեց, չիմանալով ինչ ասել։ Նրա շրթները դողում եյին հուզումից. Նրա պառավ մայրը հեծկլտալով մոտեցավ և ուզեց նրա վզովն ընկնել, բայց ծերունին, դանդաղորեն ու հրամայաբար, ձեռով հեռացրեց պառավին և շարունակեց.

—Յերեկ դու ինձ մի խոսք ասիր,-կրկնեց նորից ծերունին,—դու քու եդ խոսքով վոնց վոր դանակը սիրտս խրես։ Հերդ մեռնելիս՝ քեզ կտակեց ինձ, դու իմ հարազատ վորդու տեղն ես յեղել, իսկ յեթե մի բանով վիրավորել եմ քեզ, մենք բոլորս մեղավոր մարդիկ ենք։ Եդպես չի, ա՛յ քրիստոնեք,—դիմեց նա շուրջը կանգնած գյուղացիներին։-- Հրես քու հարազատ մերն էլ եստեղ է, կնիկդ էլ, հրես եմ էլ ձեզ ստացականը։ Իսկ ինձ ներեցեք, ի սեր Քրիստոսի։

Յեվ նա, վերնազգեստի փեշը յետ տանելով, դանդաղորեն ծունկի իջավ և խոր գլուխ տվեց Իլյային ու նրա կնոջը։ Իզուր ջահելները բռնեցին նրան. նա մինչև վոր

գլուխը գետնին չդիպցրեց, վեր չկացավ. և վեր կենալով, շորերը թափ տվեց ու նստեց նստարանին։ Իլյայի մայրն ու կինը ուրախությունից լալիս էին. բազմության մեջ հավանության ձայներ լսվեցին. «Այ արդար, աստծու որենքով բան է. եդպես», ասում էր մեկը։ «Փողն ինչ է։ Փողով ադա չես առնի», ասում էր մյուսը։ «Ինչ ուրախություն է,— ասում էր յերրորդը,— արդար մարդ է, մի խոսքով»։ Միայն զինվոր գրվածները վոչինչ չասին և սուսուփուս դուրս յեկան բակը։

Յերկու ժամ հետո Դուլոմեների յերկու սայլը դուրս յեկան քաղաքի արվարձանից։ Առաջինում, վորին լծված էր չոլ մաղյանը, նստել էին ծերունին ու Իգնատը։ Սայլի յետևի մասում ցնցվում, ծուլուծուլ էին լինում կապոցները, կաթսան ու սպիտակ հացերը։ Յերկրորդ սայլում լուրջ ու բախտավոր նստել էին հարս ու կեսուր՝ գլխաշորեր կապած։ Ջահել հարսը ձեռին ծածկոցի տակ բռնել էր մի չափ ողի։ Իլյան մեջքը ձիուն արած, կարմր-րած դեմքով հաց էր ուտում ու անդադար խոսում։ Թե ձայները, թե սայլերի քարած ճամփին հանած աղմուկը, թե ձիերի փնչոցը— բոլորը խառնվել, ուրախ աղմուկ էին կազմել։ Ձիերը, պոչները թափ տալով, արագացնում էին քայլերը, տան ուղղության հոտն առած։ Անցորդները և ձիով, սայլով գնացողներն ակամա նայում էին այդ ուրախ ընտանիքին։

Քաղաքից դուրս գալիս՝ Դուլոմները հասան նորակոչների մի խմբի, վոր շրջան կազմած կանգնել էին խը-միչքեղենի խանութի մոտ։ Մի նորակոչ դեմքի անբնական արտահայտությամբ, վոր տալիս է մարդուն ածիլված ճակատը, մոխրագույն գլխարկը դեպի ծոծրակը թեքած, աշխուժորեն բալալայկա յեր նվագում. մյուսը, անգլխարկ, մի չափ ողի ձեռին, պարում յեր շրջանի մեջտեղը։ Իգնատը ձին կանգնեցրեց և իջավ, վորպեսզի ձիու փոկն ամրացնի։ Դուլոմները հետաքրքիր, հավանության նշաններ անելով և ուրախ նայում էին պար յեկողին։ Նորակոչը, թվում էր, մարդ չի տեսնում, բայց զգում էր, վոր իր վրա զարմացող մարդիկ ավելացել են, և այդ բանը նրան ուժ ու ճարպկություն էր տալիս։ Նորակոչն աշխույժ պարում էր. նա հոնքերը կիտել էր. կարմիր դեմքն անշարժ էր. բերանը մնացել էր բաց մի ժպիտով, վոր արտահայտությունը վաղուց կորցրել էր։ Թվում էր, նրա ամբողջ յեռանդը, հոգու կարողությունն ուղղված էր այն բանին, վորպեսզի վորքան կարելի յե արագությամբ մի վոտը դնի մյուսի յետևը, մերթ կոշիկի կրունկի, մերթ նրա քթի վրա։ Յերբեմն նա հանկարծ կանգ էր առնում ու բալալայկա նվագողին աչքով անում, և նա ավելի յեռանդով ծնգծնգացնում էր բոլոր լարերը միասին և մինչև անգամ մատների վոսկորով խփում էր նվագարանի յերեսին։ Նորակոչը կանգ առավ, բայց անշարժ կանգնած էլ, թվում էր, պարում է էլի։ Հանկարծ սկսեց դանդաղ շարժվել, ուսերը թափ տալով, ու մեկեն վեր թռավ, ապա իջնելով՝ պպզեց ու վայրենի ճիչով սկսեց պարել պպզած։ Փոքրիկ տղաները ծիծաղում էին, կանայք գլուխներն օրորում, տղամարդիկ, հավանության նշաններ անելով՝ ժպտում։ Հաստավոր յենթասպան հանգիստ կանգնել էր պարողի կողքին մի այնպիսի դեմքով, վոր կարծես ասում էր. «սա ձեզ համար զարմանալի յե, բայց մեզ վաղուց արդեն ծանոթ է»։ Նվագողն, ըստ յերևույթին, հոգնեց, ծուլորեն շուրջը նայեց, մի ինչ-վոր կեղծ ակկորդ տվեց, հանկարծ մատները խփեց նվագարանի յերեսին, և պարը վերջացավ։

— Է՛, Ալյոխա,— ասաց նվագողը պարողին, Դուլոմին ցույց տալով.— հրե՛ քավորդ։

— Ո՞ւր է, Ա՛, սիրելի բարեկամ,— բացականչեց Ալյոխան (նույն այն նորակոչը, վորին գնել էր Դուլոմը) և հոգնած վոտներով, դեպ առաջ թեքված ու ողու չափը գլխին բարձրացնելով, յեկավ դեպի սայլը։— Միշկա, բա-

ժակը բեր,—ձայն տվեց նա։—Իմ սերն է։ Սիրելի բարեկամ։ Այ քեզ ուրախություն,—բացականչեց նա, հարբած սայլն ընկնելով, ու սկսեց տղամարդկանց ու կանանց հյուրասիրել ողիով։ Տղամարդիկ խմեցին, կանայք հրաժարվեցին։—Հարազատներս, ինչ նվիրեմ յես ձեզ,—գոչեց նա, պառավին գրկելով։

Առևտրական կինն իր ակոտով կանգնել էր բազմության մեջ, Ալյոխան նկատեց նրան, թաբաղը խլեց նրա ձեռից ու միջի բաներն ածավ սայլը։

--Մի վախի, կվճարեմ, քավթառ,—գոռաց նա լացկան ձայնով և խլուլյն, վարտիկի գրպանից փողով լի քսակը հանելով, նետեց Միշկային։

Նա հենվել էր սայլին և խոնավ աչքերով նայում էր նրա մեջ նստողներին։

—Մերն ո՞վ է,—հարցրեց նա։—Դու յես հո՞։ Սրան էլ եմ բան նվիրելու։

Նա մտածեց մի ակնթարթ և ձեռը գրպանը կոխեց, հանեց նոր ծալած թաշկինակը, յերեսսրբիչը, վոր մեջքին էր կապել շինելի տակից, շտապով վզից արձակեց կարմիր թաշկինակը, ճմրթեց գունդ արավ ու կոխեց պառավի գոգը։

—Առ, քեզ ըլի նվիրում եմ,—ասաց հետզհետե նվաղող ձայնով։

—Ինչո՞ւ։ Շնորհակալ եմ, վորդիս։ Տե՛ս, ինչ պարզանկեղծ տղա յե,—ասում էր պառավը, դիմելով ծերունի Դուսլովին, վոր մոտեցել էր նրանց սայլին։

Ալյոխան բոլորովին լռեց և, պղտորված աչքերով, կարծես ննջելով, գլուխը ցած էր իջեցնում հետզհետե։

—Ձեզ համար եմ գնում, ձեզ համար եմ կորչում,—ասաց նա։—Դրա համար էլ ձեզ եմ նվիրում։

--Կարծեմ, ինքն էլ մեր ունի,—ասաց մեկը բազմության միջից։—Ի՞նչ պարզասիրտ տղա յե…

Ալյոխան գլուխը բարձրացրեց։

—Մե՛ր՝ ունեմ,—ասաց նա։—Հարազատ հեր էլ ունեմ։ Բոլորն ինձանից յերես են թեքել։—Ականջ արա, պառավ,—ավելացրեց նա, Իլյայի մոր ձեռը բռնելով։—Յես էս բաները քեզ նվիրեցի. հիմի լսիր ինձ, ի սեր Քրիստոսի։ Գնա դու Վոզնոյե գյուղը, հարցրու էնտեղ Նիկոնով պառավին, նա հենց ինքն իմ մերն է, հարազատ մերս, հասկանո՞ւմ ես. գնա էդ Նիկոնով պառավին ասա… մեր տունը գեղի ծերին է, վրա յերեք խրճիթն է, նոր էլ ջրհոր կա կողքին… ասա նրան, թե քու Ալյոխան, քու վորդին… նշանակում է… էյ, մուզիկանտ, *ածա,—գոռաց նա։*

Յեվ նորից սկսեց պարել, ու հանկարծ ձեռի չափը, մեջը մնացած ողիով, շպրտեց գետին։

Իգնատը սայլը բարձրացավ և ուզեց քշել։

—Մնաս բարով, աստված քեզ բարի տա,—ասաց պառավը, մուշտակը վրա բերելով։

Ալյոխան հանկարծ կանգ առավ։

—Կորե՛ք-գնացեք գրողի ծոցը,—ձայն տվեց նա, սեղմած բռունցքով սպառնալով։—Ձեր էն…

—Ո՛հ, տեր աստված,—խոսեց Իլյայի մայրը, յերեսը խաչակնքելով։

Իգնատը մադյանին շարժեց, և սայլերը նորից թխթըխկացին։ Նորակոչ Ալյոխան կանգնել էր ճանապարհի մեջտեղը և, բռունցքները սեղմած, կատաղության արտահայտությունը դեմքին, հայհոյում էր գյուղացիներին վորքան կարող էր։

—Ի՞նչ եք կանգնել։ Կորե՛ք։ Սատանաներ, մարդակերներ,—գոռում էր նա։—Ձեռիցս չեք պրծնի։ Սատանանե՛ր։

Այս խոսքի վրա նրա ձայնը կտրվեց, և նա, ինչպես կանգնած էր, այնպես էլ ամբողջ հասակով փռվեց գետին։

Շուտով Դուսլովները դուրս յեկան դաշտը և, յետ նայելով, չտեսան այլևս նորակոչների բազմությունը։ Հինգ վերստ գնալուց հետո Իգնատն իջավ հոր սայլից, ուր ծերունին քնել էր, և սկսեց քայլել Իլյայի սայլի կողքից։

Յերկուսով խմեցին նրանք քաղաքում առած ոգին։ Քիչ հետո Իլյան յերգեց, կանայք ձայնակցեցին, Իգնատն ուրախ խրախուսում եր ձիերին՝ ձայնը ներդաշնակելով յերգին։ Արագընթաց նրանց դեմ յեկավ մի ուրախ կառք։ Կառապանը, յերկու ուրախ սայլերին հավասարվելով, աշխույժ ձայն տվեց ձիերին. պոստատարը յետ նայեց և աչքով արավ տղամարդկանց ու կանանց, վոր զվարթ յերգով ցնցվում-ծուլուծուլ եյին լինում սայլում։

ԼՅՈՒՑԵՐՆ

(1857)

ԼՅՈՒՑԵՐՆ

(Իշխան Դ. Նեխլյուդովի հիշատակարանից)

8 հուլիսի

Յերեկ յերեկո յեկա Լյուցերն և իջևանեցի այստեղի ամենալավ հյուրանոցում՝ Շվեյցերհոֆում։

«Լյուցերնը հին կանտոնային քաղաք է, ընկած չորս կանտոնների լճի ափին,— ասում է Murray.— Շվեյցարիայի ամենառոմանտիկ վայրերից մեկն է. Նրանում խաչաձևվում են յերեք գլխավոր ճանապարհներ. Նավով՝ մի ժամվա ճանապարհի վրա գտնվում է Ռիգի լեռը, վորից բացվում է աշխարհի ամենասքանչելի տեսարաններից մեկը»։

Ճիշտ է թե վոչ, մյուս գիդերը նույնն են ասում, և այդ պատճառով բոլոր ազգի ճամփորդները և մանավանդ անգլիացիներ Լյուցերնում—անթիվ են։

Շվեյցերհոֆի հինգհարկանի սքանչելի տունը վերջերըս է շինվել լճի ափին, հենց այն տեղում, ուր հնումը յեղել է փայտե, ծածկված, ծուռ ու մուռ մի կամուրջ՝ անկյուններում փոքրիկ աղոթատներ և ձեղունակալների վրա սրբի պատկերներ։ Այժմ, շնորհիվ մեծ թվով այստեղ յեկող անգլիացիների, նրանց պահանջների, նրանց ճաշակի և նրանց փողի, հին կամուրջը քանդել են և նրա տեղը շինել փայտի պես ուղիղ լճափնյա մի փողոց, վորի վրա կառուցել են ուղիղ քառանկյունի հինգհարկանի տներ, իսկ տների առաջ յերկշարք տնկել են լորիներ, նեցուկներ են տվել, իսկ լորիների արանքում, ինչպես ընդունված է, դրել են կանաչ նստարաններ։ Սա—զբոսավայր է. և այստեղ յետ ու առաջ են անում անգլուհիներ՝ շվեյցարական ծղոտե գլխարկներով և անգլիացիները՝ դի-

մացկուն ու հարմար հագուստներով և ուրախանում իրենց արած գործի վրա։ Գուցե և այս առափնյա փողոցներն ու տները, և լորդները, և անգլիացիք շատ լավ են վորևէ մի տեղ, բայց միայն վոչ այստեղ, այս տարօրեն վեհ և դրա հետ միաժամանակ անասելի ներդաշնակ ու մեղմ բնության մեջ։

Յերբ յես բարձրացա վեր՝ իմ սենյակը և բաց արի լճին նայող լուսամուտը — այս ջրի, այս լեռների ու այս յերկնքի գեղեցկությունը մի ակնթարթ բառացի կուրացրեց ու ցնցեց ինձ։ Յես ներքին անհանգստություն ու պահանջ զգացի մի կերպ արտահայտել զգացմունքի այն առատությունը, վոր հանկարծ լցրեց սիրտս։ Այդ րոպեյին յես ուզում եյի գրկել մեկին, պինդ գրկել, խուտուտ ածել, կմշտել նրան, առհասարակ ինչ-վոր անսովոր բան անել նրան և ինձ։

Յերեկոյան ժամի յոթն եր։ Ամբողջ որն անձրև եր գալիս, և այժմ միայն յեղանակը պարզեց։ Յերկնագույն լիճը, ինչպես այրվող ծծումբ, նավակների կետերով ու նրանց կորչող հետքերով, անշարժ, հարթ, կարծես ուռուցիկ փռվել է լուսամուտներիս առջև՝ բազմազան կանաչ ափերի արանքում, ձգվում է առաջ, սեղմվելով յերկու հսկայական սանդղաձև լեռնակողերի միջև և, մթին գույն ստանալով, կոթնում ու չքանում է իրար վրա կուտակված լեռների, ամպերի ու սառցարանների մեջ։ Առաջին պլանում — թաց լուսա-կանաչ հեռացող ափերն են՝ յեղեգներով, մարգագետիններով, այգիներով ու ամառանոցներով. դենը — մուգ-կանաչով ծածկված սանդղաձև սարավանդները՝ ավերակ ամրոցներով. հատակում կարծես սեղմված ճերմակ-մանիշակագույն լեռների հեռուն՝ տարօրինակ ժայռոտ և ճերմակ-կաթնագույն ձյունագագաթներով. և բոլորը վողողված օդի մեղմ, թափանցիկ լազուրով և լուսավորված վերջալուսի՝ պատռված ամպերից ցայտող քարկ ճառագայթներով։ Վոչ լճի վրա, վոչ լեռներում,

վոչ յերկնքում վոչ մի ամբողջական գիծ, վոչ մի ամբողջական գույն, վոչ մի իրար նման մոմենտ. ամենուրեք շարժում է, անհամաչափություն, անհեթեթ, անվերջ խառնուրդ և ստվերների ու գծերի բազմազանություն, և ամեն բանի վրա հանգստություն կա, մեղմություն և գեղեցկի միասնության անհրաժեշտություն։ Յեվ այստեղ, հենց այս անորոշ, անհեթեթ, վայրի գեղեցկության մեջ, իմ լուսամուտի առջև, անմտորեն, փոկուսաձև տնկված եր առափնյա փողոցի սպիտակ փայտը, նեցուկավոր լորեներն ու կանաչ նստարանները, մարդկային խեղճ ու գռեհիկ գործեր, վորոնք, ինչպես հեռավոր ամառանոցները ու ավերակները, չեն ձուլվում-միանում գեղեցկի ներդաշնակության մեջ, այլ, ընդհակառակը, կոպտորեն հակասում են նրան։ Իմ հայացքն անդադար ու ակամա հանդիպում եր առափնյա փողոցի այդ սարսափելի ուղիղ գծին, և յես մտովին կամենում եյի վանել, վոչնչացնել դրան, ինչպես մի սև բիծ, վոր նստել է քթիդ վրա, աչքիդ առաջ. բայց առափնյա փողոցն՝ զբոսնող անգլիացիներով մնում եր իր տեղում, ու յես ակամա աշխատում եյի գտնել մի տեսանկյուն, վորից այլևս նա չերևար ինձ։ Յես սովորեցի այդպես նայել և մինչև ճաշ մեն-մենակ վայելում եյի վորքան էլ վոչ լիակատար, բայց այդպիսով ավելի տանջող զգացմունքը, վոր ունենում ես մեն-մենակ բնության գեղեցկությունը դիտելիս։

Յոթ և կեսին ինձ կանչեցին ճաշելու։ Ներքին հարկի մեծ, սքանչելիորեն կահավորված սենյակում սարքված են յերկու յերկար սեղան մոտ հարյուր մարդու համար։ Յերեք րոպե տևեց հյուրերի հավաքվելու անխոս շարժումը. կանացի զգեստների շրշյուն, թեթև քայլեր և կամացուկ խոսակցություն հարգալիր ու գեղեցկատես կելներների հետ. և բոլոր ճաշի պարագաների առաջ նստոտեցին տղամարդիկ ու կանայք, վոր հագնված եյին ըստ ամենայնի գեղեցիկ, մինչև անգամ հարուստ և առհասարակ

անսովոր մաքուր։ Ինչպես առհասարակ Շվեյցարիայում, հյուրերի մեծ մասն – անգլիացիներ են, այդ պատճառով էլ ընդհանուր սեղանի տիրող գիծը – խիստ, օրենքով սրբագործված պատշաճավորությունն է, անհաղորդ բնավորությունը, որ հիմնված է ոչ թե հպարտության, այլ մարդկանց մերձենալու զգացմունքի բացակայության վրա, նաև սեփական պահանջները հարմար ու հաճելի կերպով բավարարելու մեկուսի բավականությունը։ Ամեն կողմ փայլում են ճեպ-ճերմակ ժանյակներ, ճեպ-ճերմակ օձիքներ, ճեպ-ճերմակ իսկական ու դնովի ատամներ, ճերմակ դեմքեր ու ձեռներ։ Բայց այդ դեմքերը, որոնցից շատերը շատ գեղեցիկ են, արտահայտում են միայն սեփական բարեկեցության գիտակցությունը և ուշադրության կատարյալ բացակայություն դեպի շրջապատը, որ ուղղակի չի վերաբերում իրենց անձին, ուստի և ճերմակ մատանեզարդ ձեռները շարժվում են օձիքներ ուղղելու, տավարի միսը կտրտելու և գինին բաժակները լցնելու համար. հոգեկան ոչ մի հուզում չի արտահայտվում նրանց շարժումների մեջ։ Ընտանիքները յերբեմն խոսք են փոխանակում ինչ-որ կերակրի կամ գինու դուրեկան համի և Ռիգի սարի գեղեցիկ տեսարանի մասին։ Մենավոր ճամփորդներն ու ճամփորդուհիներն անխոս նստել են իրար կողքի, մինչև անգամ չեն նայում միմյանց։ Յեթե յերբեմն այդ հարյուր մարդուց յերկուսը խոսում են իրար հետ, դա հավանորեն յեղանակի և Ռիգի սարը բարձրանալու մասին է։ Դանակներն ու պատառաքաղները հազիվ լսելի շարժվում են ափսեների վրա, ուտելիքը վերցնում են քիչ-քիչ. սիսեռն ու կանաչեղենն ուտում են անպայման պատառաքաղով. կելներները, ակամա ընդհանուր լռությանը յենթարկվելով, շշուկով հարցնում են, թե ինչ գինի կհրամայեն։ Այսպիսի ճաշերին յես ինձ միշտ ծանր եմ զգում, անախորժ ու վերջն էլ տխրություն է գալիս վրաս։ Ինձ շարունակ թվում է, որ յես ինչ-որ բանում

մեղավոր եմ, որ պատժված եմ, ինչպես մանկության օրերին, յերբ չարության համար ինձ նստացնում էին աթոռին և հեգնանքով ասում. «հանգստացիր, սիրելիս», այն ժամանակ, յերբ ջահել արյունը խաղում էր յերակներումս և մյուս սենյակից լսվում էին յեղբայրներիս ուրախ կանչերը։ Յես առաջ աշխատում էի ըմբոստանալ ճնշվածության այդ զգացմունքի դեմ, որն ունենում էի այդպիսի ճաշերի ժամանակ, բայց իզուր. բոլոր այդ մեռյալ դեմքերն անդիմադրելի ազդեցություն են անում ինձ վրա, և յես դառնում եմ նույնպիսի մեռյալ։ Յես ոչինչ չեմ ցանկանում, չեմ մտածում, անգամ չեմ դիտում։ Սկզբում յես փորձեցի խոսել հարևաններիս հետ. բայց, ֆրազներից բացի, որոնք, յերևի, կրկնվել են հարյուր հազար անգամ նույն տեղում և հարյուր հազար անգամ նույն մարդկանց կողմից, յես ուրիշ պատասխաններ չստացա։ Իսկ բոլոր այդ մարդիկ չէ որ ոչ հիմար են, ոչ էլ անզգա, և յերևի այս սառած մարդկանց շատերի մեջ կա նույնպիսի ներքին կյանք, ինչ որ ինձանում, շատերինը գուցե ավելի բարդ ու հետաքրքրական։ Հապա ինչու յեն զրկում նրանք իրենց կյանքի լավագույն բավականությունից – միմյանց վայելելուց, մարդուն վայելելուց։

Սովորական բան էր Պարիզի մեր պանսիոնում, ուր մենք, ամենատարբեր ազգի, արհեստի, բնավորության քսան մարդս, ֆրանսիական դյուրահաղորդ բնավորության ազդեցության տակ, հավաքվում էինք ընդհանուր սեղանի շուրջը, կարծես զվարճանալու։ Այնտեղ իսկույն սեղանի մի ծայրից մինչև մյուսը խոսակցությունը՝ հանաքներով ու բառախաղերով համեմված, հաճախ թեև կոտրտված լեզվով, դառնում էր ընդհանուր։ Այնտեղ ամեն ոք, հոգ չտանելով այն մասին, թե ինչ կստացվի, ասում էր, ինչ գլուխն էր գալիս. այնտեղ մենք ունեինք մեր փիլիսոփան, մեր վիճաբանը, մեր bel esprit, մեր պլաստրոնը, ամեն ինչ ընդհանուր էր։ Այնտեղ ճաշից անմիջապես

հետո սեղանները մի կողմ էինք քաշում և տակտով թե առանց տակտի սկսում էինք փոշոտ գորգի վրա պոլկա պարել մինչ յերեկո։ Այնտեղ մենք թեկուզ և կոկետություն անող, վոչ շատ խելացի ու հարգելի մարդիկ էինք, բայց մարդիկ էինք։ Յեվ սպանացի կոմսուհին՝ իր վիպական արկածներով, և իտալացի աբբատը, վոր ճաշից հետո արտասանում էր Աստվածային կատակերգությունը, և ամերիկացի բժիշկը, վոր մուտք ուներ Տյուլըրի, և յերկար մազերով ջահել դրամատուրգը, և դաշնակահարը, վորն, իր ասելով, հորինել էր աշխարհի ամենալավ պոլկան, և յուրաքանչյուր մատին յերեք մատանի ունեցող դժբախտ գեղեցկուհի-այրին, — մենք բոլորս մարդավայել, թեև մակերեսաբար, բայց հաճությամբ էինք վերաբերվում միմյանց և՝ իրարից տարանք վորը թեթև, վորը և անկեղծ, սրտագին հիշողություններ։ Իսկ անգլիացի table d'hot-երի մոտ յես հաճախ մտածում եմ, նայելով այդ ժանյակներին, ժապավեններին, մատանիներին, ներկված մազերին ու մետաքսե զգեստներին, թե վորքան կանայք բախտավոր կլինեյին և մյուսներին էլ կբախտավորեցնեյին այդ զարդարանքներով։ Տարորինակ է մտածել, թե վորքան բարեկամներ ու սիրահարներ, ամենայերջանիկ բարեկամներ ու սիրահարներ նստած են այստեղ կողք-կողքի, գուցե, առանց այդ իմանալու։ Յեվ, աստված գիտի, թե ինչու, յերբեք էլ չեն իմանա այդ և յերբեք միմյանց չեն տա այն յերջանկությունը, վոր այնպես հեշտությամբ կարող են տալ և վոր այնպես սրտով ցանկանում են իրենք։

Ինձ, ինչպես միշտ այդպիսի ճաշերից հետո, տխրություն պատեց, և, դեսսերտը թողած, ամենաանուրախ տրամադրությամբ գնացի քաղաք՝ շրջելու։ Նեղ, կեղտոտ, անլույս փողոցները, փակվող խանութները, հանդիպումը՝ հարբած աշխատավորների ու կանանց հետ, վոր ջրի էին գնում, կամ գլխարկները դրած, շուրջները նայելով արագ անցնում էին նրբափողոցները, վոչ միայն չցրեցին, այլ

ավելի սաստկացրին իմ տխուր տրամադրությունը։ Փողոցներում արդեն բոլորովին մութն էր, յերբ յես, առանց շուրջս նայելու, առանց վորևե բանի մասին մտածելու, գնացի տուն, հույս ունենալով քնելով ազատվել մռայլ տրամադրությունից։ Յես զգում էի հոգեկան սարսափելի սառնություն, մենակություն և ծանրություն, ինչպես դա պատահում է յերբեմն առանց ակնհայտ պատճառի՝ նոր վայր տեղափոխվելու ժամանակ։

Յես, գլուխս կախ, առափնյա փողոցով գնում էի դեպի Շվեյցերհոֆ, յերբ հանկարծ ինձ զարմացրին ոտարոտի, բայց չափազանց հաճելի ու դուրեկան յերաժշտության հնչյուններ։ Այդ հնչյունները մի ակնթարթում կենդանարար ազդեցություն արին ինձ վրա։ Կարծես մի պայծառ, ուրախ լույս թափանցեց իմ սիրտը։ Յես ինձ զգացի լավ և ուրախ։ Իմ նիրհած ուշադրությունը նորից դարձավ ինձ շրջապատող առարկաներին։ Յեվ գիշերվա ու լճի գեղեցկությունը, վորոնց հանդեպ անտարբեր էի առաջ, հանկարծ, վորպես նորություն, հաճելի զարմանք պատճառեց ինձ։ Յես ակամա մի ակնթարթում կարողացա նկատել և՛ մառախլապատ, մութ կապույտի վրա գորշ ձորձեր ունեցող յերկինքը, վոր լուսավորված էր բարձրացող լուսնով, և՛ մութ-կանաչ հարթ լիճը՝ նրա մեջ անդրադարձած կրակներով, և՛ մշուշոտ լեռները հեռվում, և՛ Ֆրեշենբուրգից յեկող գորտերի կռկռոցը, և՛ լորերի զվարթագին սուլոցը մյուս ափից։ Իսկ ուղիղ իմ առջև՝ այն տեղից, վորտեղից հնչյուններ լսվեցին և ուր առավելապես ուղղված էր իմ ուշադրությունը, յես տեսա կիսամութի մեջ, փողոցի մեջտեղը կիսաշրջան կազմած մարդկանց բազմություն, իսկ բազմության առջև, վորոշ տարածության վրա — մի շատ փոքրիկ մարդ՝ սև շորերով։ Բազմության և փոքրիկ մարդու յետևը մութ, գորշ, տեղ-տեղ կապույտ, պատառոտուն յերկնքի ֆոնի վրա համաչափորեն զատվում էին այգու միքանի մութ կաղամախ-

ները, և հին տաճարի յերկու կողքից վեհորեն բարձրանում եյին աշտարակների յերկու խաստագույն շպիցներ։

Յես ավելի մոտեցա, հնչյունները դարձան ավելի վորոշ։ Յես պարզ ջոկում եյի կիթառի հեռավոր, յերեկոյան ոդում քաղցրորեն որորվող լիահնչյուն ակկորդները և միքանի ձայներ, վորոնք, միմյանց ընդհատելով, չեյին յերգում թեման, այլ այս կամ այն տեղը. ու յերգելով ամենաաչքի ընկնող տեղերը - զգացնել եյին տալիս այն։ Թեման մի տեսակ նման եր դուրեկան ու նազելի մազուրկայի։ Ձայները մերթ մոտ եյին թվում, մերթ հեռու, մերթ տենոր եր լսվում, մերթ բաս, մերթ ել կոկորդային ճխ-տուլա՝ տիրոլյան կղկղուն գեղգեղանքով։ Դա յերգ չեր, այլ յերգի թեթև վարպետ եսքիզ։ Յես չեյի կարողանում հասկանալ, թե դա ինչ ե. բայց դա սքանչելի յեր։ Կիթառի այդ հեշտալից, թույլ ակկորդները։ այդ դուրեկան թեթև մեղեդին և սևազգեստ մարդու այդ մթին կերպարանքը մութ լճի՞ ամպի միջից նայող լուսնի, աշտարակների լուռ բարձրացող յերկու հսկայական սուր շպիցների և այգու սև կաղամախների ֆանտաստիկ միջավայրում,— բոլորը տարորինակ եր, բայց անասելի գեղ'ցիկ, կամ գուցե այդպես եր թվում ինձ։

Կյանքի բոլոր խճճված, ակամա տպավորությունները հանկարծ իմ աչքում նշանակություն ու հրապույր ստացան։ Սրտումս բացվեց կարծես մի թարմ ու անուշաբույր ծաղիկ։ Հոգնածության, ցրվածության և աշխարհի բոլոր բաների նկատմամբ ունեցած անտարբերության (վոր յես զգում եյի դրանից մի րոպե առաջ) փոխարեն յես հանկարծ զգացի սիրո պահանջ, հույսերի փթթում և կյանքի անառիթ ուրախություն։ Ել ինչ ես ուզում, ինչ ես ցանկանում,— մտածեցի ակամա, ահա՝ ամեն կողմից քեզ շրջապատում են գեղեցկությունն ու պոեզիան։ Վայելիր լիառատ, վորքան ուժ ունես—ել ինչ ես ուզում։ Բոլորը քոնն ե, բոլոր այս բարիքը...

Յես ավելի մոտեցա։ Փոքրիկ մարդն, ինչպես պարզվեց, թափառական տիրոլցի յեր։ Նա կանգնել եր հյուրանոցի լուսամուտների առջև, մի վոտը դրել առաջ, գլուխը բարձրացրել և, կիթառը ծնգծնգացնելով, տարբեր ձայներով յերգում եր մի գրավիչ յերգ։ Յես իսկույն եեթ մի քնքշանք զգացի դեպի այդ մարդը և մի շնորհակալություն այն հեղաշրջման համար, վոր առաջ բերեց նա իմ մեջ։ Յերգիչը, վորքան կարողացա դիտել, հագել եր մի հին սև սյուրթուկ. մազերը սև եյին, կարճ և գլխին կար ամենաքաղքենի, հասարակ, հնոտի գլխարկ։ Հագուստների մեջ վոչ մի արիստոկրատություն, բայց ժիր, գրեթե մանկական ուրախ կեցվածքն ու շարժումները, իր կարճլիկ հասակով, կազմում եյին հուզիչ և դրա հետ միասին զվարճալի տեսարան։ Փառահեղ լուսավորված հյուրանոցի մուտքի առաջ, լուսամուտներում ու պատշգամբներում կանգնած եյին փայլուն զարդերով. լայն շրջազգեստներով տիկիններ, ճեպ ճերմակ ոձիքներով պարոններ, և վոսկեկար լիվրեներով շվեյցարն ու լաքեյը. փողոցում՝ բազմության կիսաշրջանի մեջ և դենը՝ բուլվարում լորիների արանքում հավաքված կանգնել եյին գեղեցիկ հագնված կելներները, խոհարարը՝ ձյունի պես ճերմակ գլխանոցով ու կուրտկայով, իրար փաթաթված աղջիկներ ու գրոսնոգներ։ Բոլորն ել, թվում ե, զգում եյին նույնը, ինչ վոր յես։ Բոլորն անխոս կանգնել եյին յերգչի շուրջը և լսում եյին ուշադիր։ Ամեն ինչ լուռ եր, միայն յերգի ընդմիջումներին ինչ-վոր հեռու մի տեղից՝ ջրի վրայով գալիս եյին մուրճի համաչափ զարկի ձայներ և Ֆրեշենբուրգից լսելի եյին լինում գորտերի կռկռոցը, վոր ընդհատվում ե-լորերի զվարթ միապաղաղ սուլոցով։

Փոքրիկ մարդը մթան մեջ, փողոցի մեջտեղում սոխակի պես գեղգեղում եր տուն-տնի և յերգ-յերգի յետևից։ Չնայած վոր յես կից եյի մոտեցել նրան, նրա յերգն, այնուամենայնիվ, շարունակում եր մեծ բավականու-

թյուն պատճառել ինձ։ Նրա փոքրիկ ձայնն անչափ գուրեկան էր, իսկ այն քնքշությունը, ճաշակը և չափի զգացումը, որով նա տիրում էր այդ ձայնին, անսովոր էին և ցույց էին տալիս նրա բնական մեծ շնորհքը։ Յուրաքանչյուր տան հանկերգը ամեն անգամ յերգում էր տարբեր, և նկատելի յեր, որ այդ գրավիչ փոփոխությունը կատարվում է իրեն-իրեն, ազատորեն, մի ակնթարթում։

Բազմության մեջ, թե վերև՝ Շվեյցերհոֆում, թե ներքև՝ բուլվարում, հաճախ հավանության շշունջներ էյին լսվում, և տիրում էր հարգալից լռություն։ Պատշգամբներում ու լուսամուտներում հետզհետե ավելանում էր լավ հագնված մարդկանց ու կանանց թիվը։ Իմ կողքին, սիգար ծխելով, բազմությունից փոքր ինչ առանձնացած, կանգնել էյին արիստոկրատիկ լաքեյն ու խոհարարը։ Խոհարարը խորապես զգում էր յերաժշտության հրապույրը և, յուրաքանչյուր անգամ, յերբ յերգիչը ձայնը գլուխն էր գցում — նա հիացմունքով տարակուսած աչքով էր անում լաքեյին և արմունկով հրում նրան մի արտահայտությամբ, որ կարծես ասում էր. «ինչպես է յերգում, հը՞»։ Լաքեյը, որի փայլող ժպիտից նկատում էյի նրա զգացած ամբողջ բավականությունը, խոհարարի հրումներին պատասխանում էր ուսերը թոթվելով, որ ցույց էր տալիս, թե նրան զարմացնելը բավական դժվար բան է, և որ նա դրանից շատ ավելի լավ բաներ է լսել։

Յերգի ընդմիջումին, յերբ յերգիչը հազաց, յես հարցրի լաքեյից, թե ով է նա և արդյոք հաճախ է գալիս այստեղ։

— Այո, ամառը մի յերկու անգամ գալիս է, — պատասխանեց լաքեյը, — արգովեցի յե։ Այնպես, մուրացկանություն է անում։

— Ի՞նչ է, այսպիսի մուրացկաններ շա՞տ կան, — հարցրի յես։

— Այո, այո, — պատասխանեց լաքեյը, իսկույն չհաս-

կանալով այն, ինչ հարցնում եմ, բայց հետո արդեն հարցս ըմբռնելով, ավելացրեց. — Ո՛չ, չէ։ Այստեղ միայն սրան եմ տեսնում։ Ուրիշը չկա։

Այդ ժամանակ փոքրիկ մարդն ավարտեց առաջին յերգը, աշխույժ շուռ տվեց կիթառը և ինչ-որ բան ասաց իր գերմանական patois-ով*), որ յես չհասկացա, բայց որը քրքիջ առաջ բերեց շրջապատող բազմության մեջ։

— Այդ ինչ է ասում, — հարցրի յես։

— Ասում է, թե կոկորդս չորացել է, որ գինի լիներ կխմեյի, — թարգմանեց կողքիս կանգնած լաքեյը։

— Բայց նա, յերևի, սիրո՞ւմ է խմել։

— Այո, սրանք բոլորն այդպես մարդիկ են, — պատասխանեց լաքեյը, ժպտաց և ձեռը թափ տվեց։

Յերգիչը գլխարկը վերցրեց և, կիթառը թափահարելով, մոտեցավ հյուրանոցին։ Գլուխը յետ գցելով՝ նա դիմեց լուսամուտների մոտ և պատշգամբներում կանգնած պարոններին. «Messieurs et mesdames (պարոններ և տիկիններ) — ասաց նա կիսաիտալական, կիսագերմանական առոգանությամբ և այնպիսի ինտոնացիաներով, որոնցով ֆոկուսաքանները դիմում են հասարակությանը, — si vous cruyez, que je gagne quelque chose, vous tronpes; je ne suis qn'un pauvre tiaple**)։ Նա կանգ առավ ու լռեց մի փոքր. բայց որովհետև ոչ-ոք ոչինչ չտվեց, նա նորից կիթառը բարձրացրեց և ասաց. «A présent, messieurs et mesdames, je vous chanterai lair du Righi***)»։ Հասարակությունը վերև լռում էր, բայց շարունակում էր կանգնել, հետագա յերգին սպասելով. ներքև

---

*) Կոպիտ բարբառով։

**) Յեթե դուք կարծում եք, որ յես դրանով մի բան կարող եմ շահել, դուք սխալվում եք. յես ոչ այլ ինչ եմ, յեթե ոչ մի խեղճ յերգիչ։

***) Իսկ այժմ յես կերգեմ ձեզ, պարոններ և տիկիններ, Ռիգի սարի յերգը։

բազմության մեջ ծիծաղեցին, յերևի նրա համար, վոր նա արտահայտվում եր այնպես տարօրինակ, և նրա համար, վոր նրան վոչինչ չտվին։ Յես նրան միքանի սանտիմ տվի, նա ճարպկությամբ փողը մի ձեռից մյուսը գցեց, ապա դրեց ժիլետի գրպանը և, գլխարկը դնելով, նորից սկսեց յերգել տիրոլյան այն նազելի, դուրեկան յերգը, վորը նա անվանում եր lair du Righi (Ռիգի սարի յերգը)։ Այդ յերգը, վոր նա թողել եր վերջում յերգելու, առաջին բոլոր յերգերից շատ լավ եր, և ամեն կողմից ավելացած բազմության միջից լսվեցին հավանության բացականչություններ։ Նա վերջացրեց։ Կիթառը դարձյալ շարժեց, գլխարկը վերցրեց, բռնեց իր առջև, մոտեցավ լուսամուտներին և դարձյալ կրկնեց իր անհասկանալի ֆրազը. «Messieurs et mesdames, si vous croyez que je gagne quelque chose»*), վորը նա համարում եր, յերևի, ճարտար ու սրամիտ, բայց նրա ձայնի ու շարժումների մեջ յես այժմ նկատեցի վորոշ անվճռականություն ու մանկական ամաչկոտություն, վոր հատկապես զարմանալի չեր նրա փոքր հասակի համար։ Շքեղատես հասարակությունը, նույն նկարչական գեղեցկությամբ շարունակում եր կանգնել պատշգամբներում ու լուսամուտների մոտ, փայլելով իր փարթամ հագուստների մեջ. վոմանք չափավոր-քաղաքավար ձայնով խոսում եյին միմյանց հետ, ըստ յերևույթին յերգչի մասին, վոր ձեռը մեկնած կանգնել եր նրանց առջև. մյուսներն ուշադիր, հետաքրքրությամբ նայում եյին ցած՝ այս փոքրիկ սև կերպարանքին. պատշգամբներից մեկում լսվեց մի ջահել աղջկա ուրախ ու հնչուն ծիծաղը։ Ներքև բազմության մեջ հետզհետե ավելի բարձրաձայն խոսակցություն ու ծաղր եր լսվում։ Յերգիչը յերրորդ անգամը կրկնեց իր ֆրազը, բայց արդեն թուլա-

*) Պարոններ և տիկիններ, յեթե դուք կարծում եք, թե յես շահում եմ մի վորևիցե բան»։

ցած ձայնով, և մինչև անգամ չվերջացրեց այն, նորից մեկնեց գլխարկը, բայց իսկույն էլ իջեցրեց։ Յեվ յերկրորդ անգամն էլ, նրան լսելու համար խմբված, փառահեղ հագնված այդ հարյուր մարդուց և վոչ մեկը մի կոպեկ չնետեց նրան։ Ամբոխն անգութ կերպով քրքջաց։ Փոքրիկ յերգիչն, ինձ թվաց, ավելի փոքրացավ, կիթառը մյուս ձեռն առավ, գլխարկը բարձրացրեց գլխից վեր և ասաց. «Messieurs et mesdames, je vous remercie et je vous souhaite une bonne nuit»,*), և գլխարկը դրեց։ Ամբոխը հռհռաց։ Գեղեցիկ տղամարդիկ ու կանայք, միմյանց հետ հանգիստ զրուցելով, հետզհետե հեռացան պատշգամբներից։ Բուլվարում զբոսանքը վերսկսվեց։ Փողոցը, վոր յերգի ժամանակ լռել եր, կենդանացավ. միքանի մարդ միայն, առանց նրան մոտենալու, հեռվից նայում եյին յերգչին ու ծիծաղում։ Յես լսեցի, թե ինչպես փոքրիկ մարդը ինչ-վոր բան ասաց քթի տակ, շուռ յեկավ և, կարծես ավելի փոքրանալով, արագ քայլելով գնաց դեպի քաղաք։ Նրան նայող ուրախ զբոսամոլները շարունակում եյին նույն վորոշ հեռավորության վրա հետևել նրան ու ծիծաղել։

Յես բոլորովին ինձ կորցրի. չեյի հասկանում, թե այս բոլորն ինչ ե նշանակում և, մի տեղ կանգնած, անիմաստ նայում եյի մթության մեջ հեռացող փոքրիկ մարդուն, վոր մեծ-մեծ քայլեր անելով, արագ գնում եր դեպի քաղաք, և ծիծաղող զբոսամոլներին, վոր հետևում եյին նրան։ Յես ցավ, վիշտ զգացի և, վոր գլխավորն ե, ամաչեցի փոքրիկ մարդու համար, ամբոխի համար, ինձ համար. կարծես յես ինքս եյի փող խնդրել, ինձ վոչինչ չեյին տվել և վրաս ծիծաղել եյին։ Յես առանց շուրջս նայելու, ճմլվող սրտով, արագ քայլերով գնացի դեպի իմ սենյակը։ Յես դեռ ինձ հաշիվ չեյի տալիս, թե ինչ եմ զգում. միայն

*) Պարոններ և տիկիններ, յես շնորհակալ եմ ձեզանից և ցանկանում եմ ձեզ բարի գիշեր։

ինչ-վոր ծանր ու անլուծելի մի բան ծանրացել եր սրտիս և ճնշում եր ինձ։

Հոյակապ, լուսավորված մուտքի առաջ յես հանդիպեցի հարգանքով մի կողմ քաշվող շվեյցարին ու անգլիական մի ընտանիքի։ Լեցուն, գեղեցիկ ու բարձրահասակ մի տղամարդ, վոր սև անգլիական այտամորուք ուներ, սև գլխարկը գլխին և պլեդը ձեռին, ծույլ-ծույլ, ինքնավստահ քայլում եր մետաքսազգեստ կնոջ թևը մտած։ Նրանց կողքից գնում եր մի սիրունիկ, թարմ ջահել աղջիկ՝ շվեյցարական գրավիչ փետրազարդ գլխարկով, վորի տակից նրա ճերմակ դեմքի շուրջը կախվել եյին նրա մազերի փափուկ, յերկար ու բաց-շեկ խոպոպները։ Առջևը թռչկոտում եր մի տասը տարեկան կարմրադեմ աղջիկ՝ լեցուն, ճերմակ ծնկներով, վոր յերևում եյին շատ նուրբ ժանյակների տակից։

— Սքանչելի գիշեր ե,—ասաց կինը քաղցր, բախտավոր ձայնով, այն ժամանակ, յերբ յես անցնում եյի նրանց մոտով։

— Ohe!—մզզաց ծույլ անգլիացին, վորն, ըստ յերևույթին, այնքան լավ եր զգում իրեն, վոր խոսել անգամ չեր ուզում։ Ու բոլորն ել, թվում եր, այնպես հանգիստ, հարմար եյին զգում և աշխարհում ապրելն այնքան հեշտ, նրանց շարժումներն ու դեմքն արտահայտում եյին այնպիսի անտարբերություն դեպի մի ուրիշը և այնպիսի վստահություն,—թե շվեյցարը միշտ մի կողմ կքաշվի և գլուխ կտա իրենց, և թե վերադարձին նրանք կունենան մաքուր, հանգիստ անկողին ու սենյակներ, և թե այդ բոլորը պիտի լինի, և թե իրենք իրավունք ունեն այդ բոլորն ունենալու,—վոր յես հանկարծ ակամա նրանց հակադրեցի թափառական յերգչին, վոր հոգնած, գուցե և քաղցած, ամոթով փախչում եր այժմ իր վրա ծիծաղող ամբոխից,—հասկացա, թե ինչն եր ծանր քարի պես ճնշում իմ սիրտը, և անսպասելի զայրույթ զգացի դեպի այդ մարդիկ։

Յես յերկու անգամ յետ ու առաջ արի անգլիացու կողքով, ու անասելի բավականությամբ յերկու անգամն ել, ճանապարհ տալու համար մի կողմ չքաշվելով, արմունկս դիպցրի նրան և, մուտքի սանդուղքից իջնելով, վազեցի մըթան մեջ դեպի քաղաք, այն ուղղությամբ, ուր գնաց փոքրիկ մարդը։

Հասնելով յերեք՝ իրար հետ գնացող մարդի, յես հարցրի, թե ուր ե յերգիչը. նրանք, ծիծաղելով, ցույց տվին դեպի առաջ։ Յերգիչը գնում եր մենակ, արագ քայլերով։ Վոչվոք չեր մոտենում նրան, և նա շարունակ ինչ-վոր, ինչպես ինձ թվաց, զայրացած քրթմնջում եր քթի տակ։ Յես հավասարվեցի նրան և առաջարկեցի մի վորևե տեղ գնալ՝ մի շիշ գինի խմելու։ Նա ելի նույն արագությամբ քայլելով՝ դժգոհ նայեց ինձ, բայց հասկանալով բանն ինչումն ե, կանգ առավ։

— Ինչ կա վոր, չեմ հրաժարվի, յեթե այդքան բարի յեք,—ասաց նա։—Այստեղ ահա մի փոքրիկ կաֆե կա, կարելի յե մտնել—հասարակ տեղ ե,—ավելացրեց նա, ցույց տալով մի գարեջրատուն, վոր տակավին բաց եր։

Նրա «հասարակ տեղ» խոսքերն ինձ ակամա մտածել տվին—չգնալ այդ հասարակ կաֆեն, այլ գնալ Շվեյցերհոֆ, այնտեղ, ուր գտնվում եյին սրան լսողները։ Չնայած վոր նա միքանի անգամ ամաչկոտ հուզումով հրաժարվեց Շվեյցերհոֆ գալուց, ասելով, թե այնտեղ շատ շքեղ ե, յես պնդեցի իմը, և նա, ձևացնելով արդեն, թե բնավ շըփոթված չի, կիթառն ուրախ թափահարելով՝ յետ դարձավ ինձ հետ առափնյա փողոցով։ Միքանի պարապ զբոսամոլներ, հենց վոր յես մոտեցա յերգչին, առաջ յեկան, ականջ դրին, թե ինչ եմ ասում, և այժմ, իրենց մեջ խոսելով, յեկան մեր յետևից մինչև հյուրանոցի մուտքը, սպասելով, յերևի, վոր տիրոլցին ինչ-վոր բան կերգի։

Յես նախասրահում հանդիպող կելներից խնդրեցի մի շիշ գինի։ Կելները, ժպտալով, նայեց մեզ և վոչինչ չը-

պատասխանելով, վազելով անցավ մեր կողքով։ Ավագ կել-ները, վորին դիմեցի նույն խնդրանքով, լրջորեն լսեց ինձ և վոտից գլուխ նայելով յերգչի փոքրիկ յերկչոտ կերպարանքին, խստությամբ կարգադրեց շվեյցարին, վոր մեզ տանի ձախ կողմի դահլիճը։ Ձախ կողմի դահլիճը հասարակ մարդկանց համար ուտել-խմելու տեղ եր։ Այդ սենյակի մի անկյունում կուզիկ սպասուհին ամաններ եր լվանում. այդտեղ ամբողջ կահ-կարասին կազմված եր փայտե մերկ սեղաններից ու նստարաններից։ Կելները, վոր յեկավ մեզ սպասավորելու, հեգ հեգնական ժպիտով նայեց մեզ և ձեռները գրպանները կոխելով, սկսեց ինչ-վոր բաների մասին խոսել աման լվացող կուզիկ կնոջ հետ։ Նա, ըստ յերևույթին, աշխատում եր մեզ նկատել տալ, թե ինքն իր հասարակական դիրքով ու արժանիքներով իրեն անհամեմատ բարձր համարելով յերգչից, մեզ սպասավորելն իր համար վոչ միայն վիրավորական չե, այլ կատարյալ զվարճություն ե։

— Հասարակ գինի կհրամայեք,—ասաց աչքով անելով ինձ խոսակցիս կողմը և անձեռոցիկը մի ձեռից մյուսի վրա գցելով։

—Շամպայն և ամենալավ տեսակի,—ասի յես աշխատելով ընդունել շատ հպարտ և վեհ տեսք։ Բայց վոչ շամպայնը, վոչ իմ իբր թե հպարտ ու վեհ տեսքը չազդեցին լաքեյի վրա. Նա ժպտաց, կանգնեց մի փոքր մեզ նայելով, առանց շտապելու նայեց վոսկե ժամացույցին և հանդարտ քայլերով, կարծես զբոսնելով, դուրս յեկավ սենյակից։ Շուտով նա վերադարձավ, հետը բերելով գինի և ուրիշ յերկու լաքեյ։ Այդ յերկուսը նստեցին աման լվացողի մոտ և ուրախ ուշադրությամբ ու հեզ ժպիտը դեմքերին սքանչանում եյին մեզ նայելով, ինչպես սքանչանում են ծնողներն իրենց յերեխաների վրա, յերբ նրանք սիրով խաղում են։ Միայն աման լվացող կուզիկ կինը, թվում եր, վոչ թե հեգնանքով, այլ համակրանքով եր նայում մեզ։ Յես թեև ինձ շատ ծանր ու անհարմար եյի

զգում այդ լաքեյների հայացքների կրակի տակ զրուցել յերգչի հետ և հյուրասիրել նրան, բայց աշխատում եյի իմ գործն անել վորքան կարելի յե անկախ։ Լամպերի լուսով յես նրան ավելի լավ դիտեցի։ Դա մի փոքրիկ, համաչափ կազմվածքի տեր, ջղուտ մարդ եր, գրեթե թզուկ, սև բիզբիզ մազերով, միշտ արտասվող մեծ սև աչքերով, վոր թերթերունքներ չունեյին, և անչափ դուրեկան, խանդաղատալից արտահայտություն ունեցող բերանով։ Նա ուներ փոքրիկ այտամորուքներ, մազերը յերկար չեյին, հագուստը շատ հասարակ ու աղքատիկ եր։ Նա մաքուր չեր, պատառոտված եր, արևառ եր և առհասարակ աշխատավոր մարդու տեսք ուներ։ Ավելի շուտ նման եր աղքատ առևտրականի, քան արտիստի։ Միայն մշտապես խոնավ, փայլուն աչքերում և կուչ ածած բերանի մեջ ինչ-վոր յուրորինակ ու հուզիչ բան կար։ Արտաքինին նայելով, նրան կարելի յեր համարել քսանուհինգից քառասուն տարեկան. բայց իսկապես յերեսուն ութ տարեկան եր։

Ահա թե նա, բարեսիրտ պատրաստակամությամբ ու ակնհայտ անկեղծությամբ, ինչ պատմեց իր կյանքի մասին։ Նա Արգովից ե։ Դեռ մանկության որերին զրկվել ե հորից ու մորից. ուրիշ հարազատներ չունի։ Յերբեք վոչ մի կարողություն չի ունեցել։ Սովորել ե ատաղձագործություն, բայց քսաներկու տարի առաջ ձեռի վոսկրը հիվանդացավ վոսկրախտով և զրկեց նրան աշխատելու հնարավորությունից։ Նա մանկությունից սիրում եր յերգել, ու սկսեց յերգել։ Ոտարերկրացիները յերբեմն նրան փող եյին տալիս։ Ուստի և նա յերգելը դարձրեց արհեստ, կիթառ գնեց, և ահա տասնութ տարի յե թափառում ե Շվեյցարիայում ու Իտալիայում և յերգում հյուրանոցների առաջ։ Նրա ամբողջ բեռը—կիթառն ե ու քսակը, վորի մեջ այժմ կա միայն ֆրանկ ու կես, վորով պետք ե քնելու տեղ գտնի և ընթրի։ Նա յուրաքանչյուր տարի, արդեն տասութերորդ անգամը, անցնում ե Շվեյցարիայի ամենալավ,

ամենահաճախվող վայրերը—Ցյուրիխ, Լյուցերն, Ինտերլակեն, Շամունի և այլն. St.-Bernard-ով անցնում է Իտալիա և վերադառնում է St.-Gotard-ով կամ Սավոյայով։ Այժմ քայլելիս ծանրություն է զգում, վորովհետև մրսել է և ցավ է զգում վոտքերում. այդ ցավը նա անվանում է գլիդերգուխտ, վոր յուրաքանչյուր տարի սաստկանում է, և հետո հետզհետե պակասում են աչքերի լույսն ու նվազում է ձայնը։ Չնայած դրան, նա այժմ գնում է Ինտերլակեն, Aix-les-Bains և փոքր St.-Bernard-ով Իտալիա, վորը նա առանձնապես սիրում է, առհասարակ, ինչպես յերևում է, նա շատ գոհ է իր կյանքից։ Յերբ յես նրան հարցրի, թե ինչու չե տուն վերադառնում, արդյոք այնտեղ հարազատներ կամ տուն ու հող ունի, նրա կուչ յեկած բերանը ժպիտ կազմեց ու պատասխանեց ինձ.—Oui, le sucre est bon, il est doux pour les enfants!*)—և աչքով արավ դեպի լաքեյները։

Յես բան չհասկացա, բայց լաքեյները ծիծաղեցին.—վոչինչ չունեմ, յեթե վոչ կշրջեյի այսպես,—բացատրեց նա ինձ,—իսկ տուն գնում եմ նրա համար, վորովհետև հայրենիքը մի տեսակ քաշում է։

Յեվ նա մի անգամ ևս խորամանկ-ինքնագոհ ժպիտով կրկնեց իր ֆրազը. «Oui, le sucre est bon» *), ու բարեսրտությամբ ծիծաղեց։ Լաքեյները գոհ եյին և քրքջում եյին, մենակ աման լվացող կուզիկ կինը խոշոր բարի աչքերով լրջորեն նայեց փոքրիկ մարդուն ու հատակից վերցրեց նրա գլխարկը, վորը նա զրույցի ժամանակ գցել եր նստարանից։ Յես նկատել եմ, վոր թափառական յերգիչները, լարախաղացները, մինչև անգամ ֆոկուսաբանները սիրում են իրենց արտիստ անվանել, ուստի և մի քանի անգամ իմ խոսակցին ակնարկեցի այդ մասին, թե

*) Այո, շաքարը լավն է. նա քաղցր է յերեխաների համար։

*) Այո, շաքարը լավն է։

ինքն արտիստ է, բայց նա բնավ իրեն այդպիսին չեր համարում, այլ, պարզ կերպով, իր գործի վրա նայում եր, վորպես ապրուստի միջոցի։ Յերբ յես հարցրի նրան, թե ինքը չի՞ հորինում արդյոք իր յերգած յերգերը, նա զարմացավ այդ օտարոտի հարցի վրա և պատասխանեց, թե դա իր խելքի բանը չե, այդ բոլորը հին տիրոլյան յերգեր են։

— Բայց Ռիգի յե՛րգը, յես կարծում եմ հին չի,—ասի յես։

— Այո, դա սրանից տասնուհինգ տարի առաջ է հորինված։ Բազելում մի գերմանացի կար, շատ խելոք մարդ եր, նա յե հորինել։ Հիանալի յերգ է։ Գիտեք, նա հորինել է դա ճանապարհորդների համար։

Յեվ նա սկսեց, ֆրանսերեն թարգմանելով, պատմել Ռիգի յերգի բովանդակությունը, վորը նրան շատ եր դուր գալիս։

Յեթե ուզում ես գնալ Ռիգի
Մինչև Վեգիս կոշիկներ հարկավոր չեն
(վորովհետև գնում են նավով),
Իսկ Վեգիսից ձեռդ առ մի մեծ փայտ,
Ու հետո թևը մտի մի աղջկա,
Յեվ մոտ մի թաս գինի խմելու,
Բայց վոչ չափից ավելի,
Վորովհետև նա, ով ուզում է խմել,
Պետք է նախ արժանի լինի...

— Ո՜, հիանալի յերգ է,—վերջացրեց նա։ Այդ յերգը, հավանորեն, լաքեյներին շատ դուր յեկավ, ուստի մոտեցան մեզ։

—Ե՛, իսկ յեղանակն ո՞վ է հորինել,—հարցրի յես։

—Վոչ-վոք. դա, գիտեք, այսպես է, օտարականների մոտ յերգելու համար պետք է մի վորևե նոր բան։

Յերբ մեզ համար սառույց բերին, և յես իմ խոսակցի բաժակը շամպայն լցրի, նա, ըստ յերևույթին, անհարմար

զգաց իրեն և լաքեյներին նայելով, շրջվեց իր նստարանի վրա։ Մենք բաժակները չխկացնելով՝ խմեցինք արտիստների կենացը. նա կես բաժակ խմեց և հարկ համարեց մըտածել ու հոնքերը բարձրացնել խորիմաստ կերպով։

—Վաղուց յես այսպիսի գինի չէյի խմել, je ne vous dis que ça. *) Իտալիայում d'Asti-ի գինին է լավը, բայց սա ավելի լավն է։ Ա՜խ, Իտալիա. լավ է մարդ այնտեղ լինի,—ավելացրեց նա։

—Այո, այնտեղ գիտեն գնահատել յերաժշտությունն ու արտիստներին,—ասի յես, կամենալով խոսք բանալ իրիկվա անհաջողության մասին։

—Ձե,—պատասխանեց նա,—ինչ վերաբերում է յերաժշտության, յես այնտեղ ոչ-ոքի չեմ կարող բավականություն պատճառել։ Իտալացիներն իրենք յերաժիշտներ են, նրանց նմանը աշխարհում չկա. յես միայն տիրոլյան յերգեր եմ յերգում։ Դա նրանց համար համենայն դեպս նորություն է։

—Իսկ մարդիկ այնտեղ ավելի առատաձեռն են,—շարունակեցի յես, կամենալով հարկադրել նրան, որ մասնակից լինի Շվեյցերհոֆի բնակիչների նկատմամբ ունեցած իմ զայրույթին։—Այնտեղ չի՞ պատահում այնպես, ինչպես այստեղ, որ հարուստներով լիքը մի ահագին հյուրանոցից հարյուր մարդ լսեն արտիստին և ոչինչ չտան նրան։

Իմ հարցը բոլորովին այն ազդեցությունը չարավ, ինչ սպասում եյի։ Նա միտք էլ չուներ նրանց վրա զայրանալու. ընդհակառակը, իմ ակնարկի մեջ նա հանդիմանություն նկատեց իր տաղանդին, որ չկարողացավ վարձատրության արժանանալ, ու սկսեց արդարանալ իմ առաջ։

— Ամեն անգամ շատ չի կարելի ստանալ,—պատասխանեց նա.—Յերբեմն ձայնդ է կտրվում, հոգնում ես, չէ՞ որ յես այսօր ինը ժամ շրջել եմ և ամբողջ օրը գրեթե

*) Յես չեմ ուզում ասել այստեղինը։

յերգել։ Այդպես դժվար է։ Իսկ արիստոկրատ պարոնները յերբեմն չեն էլ ուզում տիրոլյան յերգեր լսել։

— Բայց և այնպես ինչպես կարելի յե ոչինչ չտալ,—կրկնեցի յես։

Նա իմ ակնարկը չհասկացավ։

-- Բանն այն չէ,—ասաց նա,—գլխավորն այստեղ en est très serré pour la police*), այ ինչ։ Այստեղ հանրապետական օրենքների համաձայն թույլ չեն տալիս յերգել, իսկ Իտալիայում կարող եք շրջել ինչքան ուզում եք, ոչ-որ ձեզ մի խոսք չի ասի։ Այստեղ յեթե կամենան թույլ տալ, թույլ կտան, իսկ յեթե չկամենան, կարող են ձեզ բանտ նստեցնել։

—Ինչպես, մի՞թե։

—Այո։ Յեթե մի անգամ նկատեն ձեզ, բայց դուք էլի յերգեք, ձեզ կարող են բանտ նստեցնել։ Յես յերեք ամիս նստել եմ արդեն,—ասաց նա, ծիծաղելով, կարծես դա նրա քաղցր հիշողություններից մեկն էր։

— Ա, դա սարսափելի յե,—ասի յես։—Ինչո՞ւ համար են այդպես անում։

— Այդպես է սրանց մոտ, հանրապետության նոր օրենքների համաձայն,—շարունակեց նա, ոգևորվելով։—Նրանք չեն ուզում մտածել, որ աղքատն էլ մի կերպ ապրի։ Յեթե յես փչացած չլինեյի, կաշխատեյի։ Իսկ որ յերգում եմ, դրանով մի՞թե որևէ մեկին վնաս եմ հասցընում։ Սա ի՞նչ բան է։ Հարուստները կարող են ապրել, ինչպես ուզում են, իսկ un pauvre tiaple (խեղճ յերգիչը), ինչպես յես, ապրե՞լ էլ չի կարող։ Սա ի՞նչ հանրապետական օրենքներ են։ Յեթե այդպես է, մենք հանրապետություն չենք ուզում, այդպե՞ս չի, պարոն։ Մենք հանրապետություն չենք ուզում, այլ ուզում ենք... մենք ուզում ենք ուղղակի... մենք ուզում ենք...—նա կակազեց մի փոքր.—մենք ուզում ենք բնական օրենքներ։

*) Ոստիկանության նեղելն է։

Ես նրա բաժակը նորից լցրի։

— Դուք չեք խմում,— ասի նրան։

Նա բաժակը ձեռն առավ ու գլուխ տվեց ինձ։

— Ես գիտեմ, դուք ինչ եք ուզում,— ասաց նա, աչքերը կկոցելով ու մատով ինձ սպառնալով.— դուք ուզում եք ինձ հարբեցնել ու նայել, թե ինչ եմ անելու. բայց չէ, այդ բանը ձեզ չի աջողի։

— Իսկ ինչու՞ պիտի հարբեցնեմ ձեզ,— ասի յես,— ուզում եմ միայն ձեզ բավականություն պատճառել։

Նա, յերևի, ցավեց, վոր վիրավորեց ինձ, վատ կողմից բացատրելով իմ մտադրությունը, շփոթվեց, վեր կացավ ու արմունկս սեղմեց։

— Վոչ, վոչ,— ասաց նա, խոնավ աչքերի աղերսուն հայացքով ինձ նայելով,— յես հանաք արի միայն։

Յեվ դրանից հետո նա արտասանեց մի սարսափելի խճճված խորամանկ ֆրազ, վոր պիտի նշանակեր, թե յես այնուամենայնիվ լավ մարդ եմ։

— Je ne vous dis que ça *— յեզրափակեց նա։

Այսպիսով յես շարունակեցի խմել ու զրուցել յերգչի հետ, իսկ լաքեյները, առանց քաշվելու, շարունակ նայում եյին մեզ և, կարծեմ, ծաղրում։ Չնայած իմ զրույցի շահագրգռության, յես չեյի կարող չնկատել նրանց և, խոստովանում եմ, ավելի ու ավելի զայրանում եյի։ Նրանցից մեկը վեր կացավ, մոտեցավ փոքրիկ մարդուն և, նրա գագաթին նայելով՝ սկսեց ժպտալ։ Յես Շվեյցերհոֆի բնակիչների վրա չարության պատրաստի պաշար ունեյի դեռ, վոր չեյի կարողացել թափել մեկի գլխին, և այժմ, խոստովանում եմ, այս լաքեյները գրգռում եյին ինձ։ Շվեյցարը, գլխարկն առանց վերցնելու, մտավ սենյակ և, սեղանին հենվելով, նստեց իմ կողքին։ Այս վերջին հանգամանքը, իմ ինքնասիրությանը կամ փառասիրությանը դիպչելով, վերջնականապես պայթեցրեց ինձ և ընթացք տվեց

*) Յես չեմ ուզում ասել, վոր այստեղ...

այն ճնշող զայրույթին, վոր ամբողջ յերեկոն կուտակվել եր մեջս։ Ինչու՞ մուտքի առաջ, յերբ յես մենակ եմ լինում, սա, այս շվեյցարը խորը գլուխ ե տալիս ինձ, իսկ այժմ, վորովհետև նստած եմ թափառական յերգչի հետ, նա կոպտորեն նստում ե կողքիս։ Յես բոլորովին չարացա զայրույթի այն բուռն կատաղությամբ, վորը սիրում եմ իմ մեջ, անգամ գրգռում եմ պատահած ժամանակ, վորովհետև հանգստացող ազդեցություն ե անում վրաս և գեթ մի կարճ ժամանակով տալիս ե ինձ մի տեսակ անսովոր ճկունություն և ֆիզիկական ու բարոյական ընդունակությունների՝ ուժ ու յեռանդ։

Յես տեղիցս վեր թռա։

— Ինչի՞ վրա յեք ծիծաղում,— գոռացի լաքեյի վրա, զգալով վոր դեմքս գունատվում ե և շրթներս դողում են ակամա։

— Յես չեմ ծիծաղում, յես այնպես,— յետ քաշվելով ասաց լաքեյը։

— Վոչ, դուք ծիծաղում եք այս պարոնի վրա։ Յեվ ինչ իրավունք ունեք դուք այստեղ լինելու և նստելու, յերբ հյուրեր կան այստեղ։ Չհամարձակվեք նստել,— գոռացի յես։

Շվեյցարը, ինչ-վոր քրթմնջալով, վեր կացավ և շարժվեց դեպի դուռը։

— Դուք ինչ իրավունք ունեք ծիծաղել այս պարոնի վրա և նստել նրա կողքին, յերբ նա հյուր ե, իսկ դուք լաքեյ։ Ինչու՞ դուք այսոր ճաշի ժամանակ չծիծաղեցիք ինձ վրա և չնստեցիք իմ կողքին։ Նրա՞ համար, վոր աղքատ ե հագնված ու յերգում ե փողոցում։ Դրա համա՞ր։ Իսկ իմ հագինը լավ շորե՞ր են։ Նա աղքատ ե, բայց հազար անգամ ձեզնից լավն ե, յես համոզված եմ դրանում, վորովհետև նա վոչվոքի չի վիրավորել, իսկ դուք վիրավորում եք նրան։

— Յես, դե, վոչինչ, ինչ եք ասում,— յերկչոտ պա-

տասխանեց իմ թշնամի լաքեյը։—Մի՞թե խանգարում եմ նրան նստելու։

Լաքեյն ինձ չեր հասկանում, և իմ գերմաներեն խոսքերը կորչում եյին իզուր։ Կոպիտ շվեյցարն ուզեց լաքեյին պաշտպանի, բայց յես այնպիսի թափով հարձակվեցի նրա վրա, վոր շվեյցարը ձևացրեց, թե նույնպես չի հասկանում ինձ, ու ձեռը թափ տվեց։ Աման լվացող կուզիկ կինը, նկատելով արդյոք իմ բորբոքված դրությունը և սկանդալից վախենալով, թե՞ համամիտ լինելով ինձ, բռնեց իմ կողմը և, աշխատելով կանգնել իմ և շվեյցարի արանքում, համոզում եր նրան՝ լռել, ասելով թե յես իրավացի յեմ, իսկ ինձ խնդրում եր հանգստանալ. «Der Herr hat Recht; Sie haben Recht!» կրկնեց նա։ Յերգչի դեմքն ստացել եր բոլորովին խղճալի և վախեցած տեսք. նա, ըստ յերևույթին, չհասկանալով ինչու համար եմ տաքանում և ինչ եմ ուզում, խնդրեց ինձ, վոր շուտով հեռանամ այստեղից։ Բայց իմ մեջ կատաղությունն ավելի բռնկվեց։ Յես բոլորը հիշեցի. և ամբոխին, վոր ծիծաղում եր նրա վրա, և ունկնդիրներին, վոր վոչինչ չտվին նրան, ու վոչ մի դեպքում չեյի ուզում հանգստանալ։ Յես կարծում եմ, վոր յեթե կելներներն ու շվեյցարն այդպես գիջող չլինեյին, յես ուրախությամբ կկռվեյի նրանց հետ կամ թե փայտով կջարդեյի անպաշտպան անգլիացի որիորդի գլուխը։ Այդ րոպեյին յեթե յես Սևաստոպոլում լինեյի, ուրախությամբ կնետվեյի անգլիական խրամատը՝ թրատելու և սրախողխողանելու։

— Յեվ ինչու՞ ինձ այս պարոնի հետ բերիք այս, այլ վոչ այն դահլիճը. հը՞,—հարցրի յես շվեյցարին, նրա ձեռը բռնելով, վորպեսզի չհեռանա։—Ի՞նչ իրավունք ունեյիք դուք արտաքինով վորոշել, թե այս պարոնը պետք ե այս, և վոչ այն դահլիճում լինի։ Մի՞թե վճար տվողները՝ բոլորը հավասար չեն հյուրանոցներում։ Վոչ միայն հանրապետության մեջ, այլև ամբողջ աշխարհում։ Ձեր քսոտ հան-

րապետությունը... Ահավասիկ ձեր հավասարությունը։ Անգլիացիներին դուք չեյիք համարձակվի բերել այս սենյակը, հենց այն անգլիացիներին, վոր ձրի լսեցին այս պարոնին, այսինքն յուրաքանչյուրը սրանից գողացավ միքանի սանտիմ, վոր պարտավոր եյին տալ սրան։ Ի՞նչպես համարձակվեցիք այս դահլիճը ցույց տալ։

— Այն դահլիճը փակ ե,—պատասխանեց շվեյցարը։

— Վո՛չ,—գոռացի յես,—սուտ ե, դահլիճը փակ չե։

— Ուրեմն դուք ավելի լավ գիտեք։

— Գիտեմ, գիտեմ, վոր դուք ստում եք։

Շվեյցարը շուռ յեկավ ինձնից հեռանալու։

— Ե՛, ինչ ասեմ,—ասաց նա։

— Վոչ, վոչ թե «ինչ ասեմ»,—գոռացի յես,—այլ տարեք ինձ այս րոպեյին դահլիճ։

Չնայած կուզի հորդորներին և յերգչի խնդրանքին, թե ավելի լավ ե տուն գնալ, յես պահանջեցի ավագ կելներին և իմ խոսակցի հետ միասին գնացի դահլիճ։ Ավագ կելները, լսելով իմ չարացած ձայնը և տեսնելով իմ հուզված դեմքը, չվիճեց և արհամարհական քաղաքավարությամբ ասաց, թե կարող եմ գնալ, ուր ինձ հաճելի ե։ Յես չկարողացա շվեյցարի սուտն ապացուցել, վորովհետև նա թագնվեց ավելի շուտ, քան յես դահլիճ կմտնեյի։

Դահլիճն, իրոք, բաց եր, լուսավորված, և սեղաններից մեկի մոտ ընթրում եր մի անգլիացի մի տիկնոջ հետ։ Չնայած վոր մեզ առանձին սեղան ցույց տվին, բայց յես կեղտոտ յերգչի հետ նստեցի հենց անգլիացու մոտ և հրամայեցի մեր կիսատ մնացած շիշը բերեն այստեղ։

Անգլիացիներն սկզբում զարմացան, հետո զայրացած նայեցին փոքրիկ մարդուն, վոր իրեն կորցրած նստել եր կողքիս. նա վոչ կենդանի յեր, վոչ մեռած. անգլիացիներն ինչ-վոր բան ասին իրար, տիկինը հրեց առաջի ափսեն, մետաքսե շորերը խշխշացրեց, և յերկուսն ել դուրս գնացին։ Ապակեպատ դռների յետև նկատեցի, թե ինչպես ան-

գլխացին չարացած ինչ-որ բան եր ասում կելներին, ձեռով անդադար մեր կողմը ցույց տալով։ Կելները գլուխը դռնից ներս կոխեց ու նայեց։ Յես ուրախությամբ սպասում եյի, թե կգան մեզ դուրս անելու և կարելի կլինի, վերջապես, իմ ամբողջ զայրույթը թափել նրանց գլխին։ Բայց, բարեբախտաբար, թեև դա այն ժամանակ հաճելի չեր ինձ, մեզ հանգիստ թողին։

Յերգիչը, որ առաջ հրաժարվում եր գինուց, այժմ շտապով խմեց բոլորը, ինչ մնացել եր շշում, այն նկատումով, որպեսզի որքան կարելի յե շուտ դուրս գա այստեղից։ Սակայն նա զգացված, ինչպես ինձ թվաց, շնորհակալություն հայտնեց ինձ հյուրասիրության համար։ Նրա արտասվող աչքերը դարձան ավելի արտասվալից ու փայլուն, և նա ասաց շնորհակալության ամենատարօրինակ ու խճճված մի ֆրազ։ Նա ասում եր, թե յեթե ամենքն այսպես հարգեին արտիստներին, ինչպես յես, այդ դեպքում նա իրեն լավ կզգար, և թե ցանկանում ե ինձ ամեն տեսակի բախտավորություն.—այդ ֆրազն ինձ շատ դուր յեկավ։ Մենք նրա հետ միասին դուրս յեկանք նախասենյակը։ Այդտեղ կանգնած եյին լաքեյներն ու իմ թշնամի շվեյցարը, որ, կարծեմ, նրանց գանգատվում եր ինձանից։ Նրանք բոլորը նայեցին ինձ, ինչպես մի խենթի։ Յես փոքրիկ մարդուն հավասարեցրի այս բոլոր մարդկանց հետ և այստեղ էլ ամենայն հարգանքով, որքան կարող եյի, գլխարկս վերցրի ու սեղմեցի նրա ձեռքը, որի մի մատը չորացած եր։ Լաքեյները ցույց տվին, որ իբր թե ամենափոքրիկ ուշադրություն անգամ չեն դարձնում ինձ վրա։ Նրանցից մեկը միայն ծիծաղեց հեգնական ծիծաղով։

Յերբ յերգիչը, գլուխ տալով, թաքնվեց մթության մեջ, յես գնացի վեր՝ իմ սենյակը, կամենալով գրի առնել բոլոր այս տպավորությունները և անմիտ մանկական չարությունը, որ անսպասելի տիրեց ինձ։ Բայց քնելու համար բավական հուզված զգալով ինձ, կրկին գնացի փո-

ղոց, նպատակ ունենալով քայլել այնքան, մինչև որ կհանգստանամ և, խոստովանում եմ, աղոտ հույս ունենալով, թե առիթ կգտնվի շվեյցարի, լաքեյի կամ անգլիացու հետ կպչելու և ապացուցելու նրանց՝ իրենց խստասրտությունը և, որ գլխավորն ե, անարդարությունը։ Բայց, շվեյցարից բացի, որն ինձ տեսնելով, թիկունքը դարձրեց, ոչ-ոքի չհանդիպեցի և սկսեցի մեն-մենակ յետ ու առաջ անել առափնյա փողոցով։

—Ահավասիկ պոեզիայի տարօրինակ բախտը,—խորհրդածում եյի յես փոքր ինչ հանգստացած։—Բոլորը սիրում, փնտրում են այդ պոեզիան, կյանքում միայն նրան են ցանկանում ու որոնում, բայց ոչ-ոք չի ընդունում նրա ուժը, ոչ-ոք չի գնահատում աշխարհի այդ լավագույն բարիքը, չի գնահատում և շնորհակալ չի լինում նրանց, ովքեր այդ պոեզիան տալիս են մարդկանց։ Հարցրեք ում ուզում եք, հարցրեք Շվեյցերհոֆի այդ բոլոր բնակիչներին, թե ինչն ե աշխարհի ամենալավ բարիքը։ Յեվ բոլորը, կամ հարյուրին իննսունինը, հեգնանքով կասեն, թե աշխարհի լավագույն բարիքը—փողն ե։ «Գուցե այս միտքը դուր չի գալիս ձեզ և չի համաձայնում ձեր բարձր գաղափարներին,—կասի նա,—բայց ինչ արած, յերբ մարդկային կյանքը դասավորվել ե այնպես, որ մենակ փողն ե կազմում մարդու յերջանկությունը։ Յես չեմ կարող իմ մտքին արգելել աշխարհը չտեսնել այնպես, ինչպես կա,—կավելացնի նա,—այսինքն՝ տեսնել ճշմարտությունը»։ Ողորմելի յե քո միտքը, ողորմելի յե այն յերջանկությունը, որ կամենում ես, և դժբախտ արարած ես դու, որ ինքդ ել չգիտես, թե ինչ ե քեզ պետք... Ինչո՞ւ համար եք դուք թողել ձեր հայրենիքը, հարազատներին, զբաղմունքներն ու դրամական գործերը և հավաքվել շվեյցարական այս փոքրիկ քաղաքում՝ Լյուցերնում։ Ինչո՞ւ այս յերեկո դուք դուրս թափվեցիք պատշգամբները և հարգալից լռությամբ լսեցիք փոքրիկ մուրացկանի յեր-

գը։ Յեվ յեթե ցանկանար ելի յերգել, դարձյալ կլսեյիք ու կլսեյիք։ Ի՞նչ, փողի համար, թեկուզ միլիոնների համար, կարելի՞ չեր ձեզ բոլորիդ դուրս քշել հայրենիքից և հավաքել այս փոքրիկ Լյուցերնում։ Փողի համար արդյոք կարելի՞ չեր ձեզ հավաքել պատշգամբներում և հարկադրել կես ժամի չափ լուռ ու անշարժ կանգնել։ Վո՛չ։ Բայց ձեզ այդպես անելու հարկադրում ե մի բան, վոր հավիտենապես շարժելու յե ձեզ կյանքի մյուս շարժիչներից ավելի,— պոեզիայի պահանջը, վորը չեք գիտակցում, բայց զգում եք, և հավիտյան պիտի զգաք, քանի ձեր մեջ կմնա մարդկային վորևե բան։ «Պոեզիա» խոսքը ծիծաղելի յե ձեզ համար, դուք այդ բառը գործ եք ածում իբրև հեգնական հանդիմանություն, դուք բանաստեղծությունը սիրելու իրավունք տալիս եք յերեխաներին ու հիմար որիորդներին և այն ել ծիծաղում եք նրանց վրա. իսկ ձեզ պետք ե դրական բան։ Յերեխաները—լուրջ են նայում կյանքին. նրանք սիրում են ու գիտեն այն, ինչ պետք ե մարդ սիրի, և այն, ինչ յերջանկություն ե տալիս, իսկ ձեզ կյանքն այն աստիճան ե խճճել ու անբարոյացրել, վոր ծիծաղում եք այն բանի վրա, վորը միայն սիրում եք, ու վորոնում եք միայն այն, ինչ ատում եք և ինչ դժբախտացնում ե ձեզ։ Դուք այնպես եք խճճվել, վոր չեք ըմբռնում այն պարտավորությունը, ինչ ունեք խեղճ տիրոլցու հանդեպ, վորը ձեզ պատճառեց անխառն բավականություն, մինչդեռ ձեզ պարտավոր եք համարում ձրիաբար, առանց ոգուտի ու բավականության ստորանալ լորդի առաջ և, չգիտես ինչու, ձեր հանգիստն ու հարմարությունը զոհաբերել նրան։ Ի՞նչ հիմարություն, ի՞նչ անմտություն։ Բայց դա չեր, վոր ամենից ավելի զարմացրեց ինձ այս յերեկո։ Այլ անհասկացողությունը այն բանի, ինչ յերջանկություն ե տալիս. պոետիկական վայելքների այդ անգիտակցականությունը յես գրեթե հասկանում եմ և ընտելացել եմ դրան, վորովհետև կյանքում հաճախ եմ հանդիպել։ Ամբոխի կոպիտ, ան-

գիտակից դաժանությունը նույնպես նորություն չե ինձ համար... Բայց ինչպես դուք, ազատ ժողովրդի զավակներդ, դուք պարզապես մարդիկդ այն անխառն վայելքին, վոր պատճառեց ձեզ թշվառ, մուրացիկ մարդը, պատասխանեցիք սառնությամբ ու հեգնանքով։ Բայց՝ վոչ, ձեր հայրենիքում մուրացկանների համար կան ապաստարաններ։ Մուրացկաններ չկան, դրանք չպետք ե լինեն, չպետք ե լինի և կարեկցությունը, վորի վրա հիմնված ե մուրացկանությունը։— Բայց նա աշխատեց, ուրախացրեց ձեզ, նա աղերսեց ձեզ իր աշխատանքի համար մի վորևե բան տալ իրեն ձեր ավելցուկից. Իսկ դուք սառը ժպիտով ձեր բարձր փայլուն պալատներից նայեցիք նրան վորպես հազվագյուտ մի բանի, և ձեր յերջանիկ, հարուստ հարյուր հոգու մեջ չգտնվեց մեկը մի մարդ, մի կին,—վոր վորևե բան ներեր նրան։ Յեվ նա ամոթահար հեռացավ ձեզնից, և անմիտ ամբոխը, ծիծաղելով հետևեց ու վիրավորեց վոչ թե ձեզ, այլ նրան, նրա համար, վոր դուք սառն եք, դաժան և անազնիվ. նրա համար, վոր դուք գողացաք այն վայելքը, վոր նա պատճառեց ձեզ, և դրա համար վիրավորեցին նրան։

«1857 թ. հուլիսի յոթին Լյուցերնում Շվեյցերհոֆ հյուրանոցի առաջ, ուր իջեվանում են ամենահարուստ մարդիկ, թափառական մուրացիկ-յերգիչը կես ժամ յերգեր յերգեց յեվ կիթառ նվագեց։ Նրան լսում եյին մոտ հարյուր մարդ։ Յերգիչը յերեք անգամ խնդրեց բոլորին մի բան տալ իրեն։ Վոչ-վոք վոչինչ չտվեց, յեվ շատերը ծիծաղեցին նրա վրա։

Սա մտացածին բան չի, այլ հաստատուն փաստ, վորը կարող են հետազոտել, ովքեր ուզում են, Շվեյցերհոֆի մշտական բնակիչների մոտ, տեղեկանալով լրագրերի միջոցով, թե հուլիսի 7-ին ովքեր են յեղել Շվեյցերհոֆում ապրող ոտարերկրացիները։

Ահա մի դեպք, վոր մեր ժամանակի պատմագիրները

պետք է գրի ամենն հրեղեն անջնջելի տառերով։ Այս դեպքն ավելի նշանակալից է, ավելի լուրջ և ունի ավելի խոր իմաստ, քան այն բոլորը, ինչ գրվում է լրագրներում ու պատմության գրքերում։ Թե անգլիացիներն սպանել են դարձյալ մի հազար չինացի նրա համար, որ չինացիները փողով ոչինչ չեն գնում, իսկ իրենց երկիրը կլանում է հնչուն դրամ. թե ֆրանսիացիներն սպանել են դարձյալ մի հազար կաբիլ նրա համար, որ հացը լավ է բուսնում Աֆրիկայում և որ մշտական պատերազմն օգտակար է զորք կազմելու համար. թե թյուրքական դեսպանը Նեապոլում չի կարող հրեա լինել, և թե Նապոլեոն կայսրը ոտով զբոսնում է Plombières-ով և տպագրված խոսքով հավատացնում է ժողովրդին, թե ինքը թագավորում է միայն ամբողջ ժողովրդի կամքով,—սրանք բոլորը խոսքեր են, որ թաքցնում կամ ցույց են տալիս այն, ինչ որ վաղուց հայտնի է. բայց հուլիսի 7-ին Լյուցեռնում տեղի ունեցածն, ինձ թվում է բոլորովին նոր, տարօրինակ բան և վերաբերում է մարդկային բնավորության հավիտենական վատ կողմերին, բայց հասարակության զարգացման որոշ դարաշրջանի։ Այս փաստը մարդկային գործերի պատմության համար չէ, այլ առաջադիմության և քաղաքակրթության պատմության համար։

Ինչու այս տմարդի փաստը, որ անհնարին է գերմանական, իտալական կամ ֆրանսիական որևէ գյուղում, հնարավոր է այստեղ, ուր քաղաքակրթությունը, ազատությունը և հավասարությունը հասցված են բարձրագույն աստիճանի, ուր հավաքվում են ճանապարհորդող՝ ամենա քաղաքակիրթ մարդիկ։ Ինչու այս զարգացած մարդասեր մարդիկ, որ ընդհանրապես ընդունակ են ամեն մի ազնիվ, մարդաշահ գործի, մարդկային սրտագին զգացմունք չունեն անձնական բարի գործի համար։ Ինչու այդ մարդիկ իրենց պալատներում, միտինգներում և ընկերություններում ջերմորեն հոգ են տանում Հնդկաստանում գտնվող ան-

կնիկ չինացիների մասին, Աֆրիկայում քրիստոնեություն տարածելու, ամբողջ մարդկությունն ուղղելու համար ընկերություններ կազմելու մասին, բայց իրենց սրտում չեն գտնում մարդու դեպի մարդն ունեցած նախնական զգացմունք։ Մի՞թե այդ զգացմունքը չկա, և նրա տեղը բռնել են սնափառությունը, փառասիրությունն ու շահամոլությունը, որոնք ղեկավարում են այդ մարդկանց իրենց պալատներում, միտինգներում ու ընկերությունների մեջ։ Մի՞թե խելացի, մարդկային անձնասեր ընկերակցության, (որին քաղաքակրթություն են անվանում) տարածումը ոչնչացնում ու հակասում է բնազդական ու սիրո ընկերակցության պահանջին։ Եվ մի՞թե դա է այն հավասարությունը, որի համար այնքան անմեղ արյուն է թափված, այնքան հանցագործություններ են կատարված։ Մի՞թե ժողովուրդները, ինչպես երեխաներ, կարող են բախտավոր լինել հավասարություն խոսքի մի հնչյունով։

Հավասարություն օրենքի՞ առաջ։ Բայց մի՞թե մարդկանց կյանքն անցնում է օրենքի շրջանակում։ Օրենքին չենթակա է նրա մի հազարերորդ մասը միայն, մնացած մասն ընթանում է նրանից դուրս, հասարակության բարքերի ու հայացքների շրջանակում։ Իսկ հասարակության մեջ լաքեյը երգչից լավ է հագնված և անպատիժ վիրավորում է նրան։ Ես լաքեյից ավելի լավ եմ հագնված և անպատիժ վիրավորում եմ լաքեյին։ Շվեյցարն ինձ իրենից բարձր է համարում, իսկ երգչին ցածր. երբ ես միացա երգչին, նա իրեն մեզ հավասար համարեց և դարձավ կոպիտ։ Ես շվեյցարի հետ լրբաբար վարվեցի,—և շվեյցարն իրեն ստոր համարեց ինձնից։ Լաքեյը լիրբ վարվեց երգչի հետ—և երգիչն իրեն ստոր համարեց նրանից։ Եվ մի՞թե սա չէ այն ազատ պետությունը, ուր կա գեթ մի քաղաքացի, որին բանտ են նստեցնում նրա համար, որ նա ոչ-ոքին չվնասելով, ոչ-ոքին չխանգարելով, անում է այն, ինչ կարող է, որպեսզի սովամահ չլինի։

. . . .

Քաղաքակրթությունը — բարիք է, բարբարոսությունը՝ չարիք, ազատությունը — բարիք է, ստրկությունը — չարիք...

Ո՞վ է ավելի մարդ և ո՞վ ավելի բարբարոս. այն լո՞րդն արդյոք, վոր յերգչի մաշված շորերը տեսնելով, չարասրտությամբ փախավ սեղանի մոտից, նրա աշխատանքի համար չտվեց նրան իր կարողության մի միլիոներորդ մասը և այժմ կուշտ, լուսավոր հանգիստ սենյակում նստած, հանգստորեն դատում է Չինաստանի գործերի մասին, գտնելով այնտեղ կատարված սպանություններն արդարացի, թե՞ փոքրիկ մարդը՝ յերգիչը, վորը, իրեն յենթարկելով բանտի վտանգին, գրպանումը մի ֆրանկ, քսան տարի, վոչ-վոքի չվնասելով, անցնում է սար ու ձոր ու մխիթարում մարդկանց իր յերգով, վորին վիրավորեցին և քիչ մնաց դուրս անեին այսօր, և վորը հոգնած, քաղցած ու ամոթահար գնաց մի վորևե տեղ փտած ծղոտի վրա քնելու:

Այդ ժամանակ քաղաքից, գիշերվա խորին լռության միջից, հեռու-հեռվից լսեցի փոքրիկ մարդու կիթառի նըվագն ու իր ձայնը:

Վոչ, մտածեցի յես ակամա, դու իրավունք չունես խղճալու նրան և զայրանալու լորդի բարեկեցության վրա: Ո՞վ է կշռել այն ներքին յերջանկությունը, վոր կա այդ մարդկանցից յուրաքանչյուրի հոգում: Ահա նա այժմ մի վորևե կեղտոտ շեմքի նստած, նայում է պայծառ լուսնազարդ յերկնքին և յընդագին յերգ է ասում խաղաղ, անուշաբույր գիշերվա մեջ. նրա հոգում չկա վոչ հանդիմանություն, վոչ չարություն, վոչ զղջումի զգացում: Իսկ ո՞վ է իմանում, թե ինչ է կատարվում այժմ այն բոլոր մարդկանց հոգում, վոր գտնվում են այս շքեղ, բարձր պատերի յետև: Ո՞վ է իմանում՝ կա՞ արդյոք նրանց հոգում կյանքի այնքան անհոգ, հեզ խնդություն ու հաշտություն աշխարհի հետ, վորքան այդ փոքրիկ մարդու հոգում...

ՀՍՍՌ Арм.ССР

ՑԱՆԿ

Եջ

1. Սևաստոպոլ 3
2. Պոլիկուշկա 55
3. Լյուցեռն 133

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
9	5 վարից	Պրասկուխինի	Պրասկուխինը
9	4 »	Միխայլովը	Միխայլովի
11	6 վերից	Վերջինս	Վերջինիս
14	14 »	վայվա՜ն	հայվա՜ն
14	10 վարից	ազգենություն	ազգեցություն
15	5—4 »	նստած եր	նստած էր
19	9 վերից	բասնագետ	մասնագետ
39	13 վարից	Պրասկուխինից	Պրասկուխինի
54	12 վերից	չղջում	գղջում
54	12 վարից	Կալուգինն էր	Կալուգինն եր
58	4 »	մխաստը	իմաստը
58	1 »	յետ ում	յետեում
64	6 »	չի կարողանում	չեր կարողանում
87	12 վերից	Ոդեսա	Ոդեսա
104	11 վարից	ու գալ	ու գնալ
109	19 վերից	աջղիկս	աղջիկս
125	8 վարից	բայց թե կարծես	բայց կարծես թե
142	17 »	մութ լճի՞	մութ լճի,
143	6 »	ընդհատվում է	ընդհատվում էր

ՀՀ Ազգային գրադարան
NL0322008

14.249